

# ԱՆԱՀԻՏ ՅԱՀՅԱՄԱՍԻԴԻ

Նին  
گیلان



کوچ  
اوپرای

ՍԱՂԵԼ ԿԵԴՎԱՅԱՐ  
ԿՅԱՋՔԸ ԵՎ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ  
ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ







ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՅԱՐՅԱԿԱԿԻՐԻ ԱՆԱՐԻՏ

ՍՊԵՇ ՀԵՂԱՎԱԾ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ  
ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2020



Հ2066664

ՀՏԴ 821.222.1.0

ԳՄԴ 83.3(5Իրան)

Յ 269

Տպագրվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի  
արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝  
Պրոֆեսոր Արմանուշ Կողմոյան

Յահյամասիհի Անահիտ

Յ 269 Սադեղ Հեղայաթ. կյանքը և գիտագրական ժառանգությունը: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2020, 256 էջ:

20-րդ դարի պարսից գրականության խոշորագույն դեմքերից մեկը Սադեղ Հեղայաթն է: Արձակագիր, բանագետ և ազգագրագետ Ս. Հեղայաթի անխոնջ ու ջանադիր աշխատանքի շնորհիվ իրանի ժողովրդական բանահյուսությունը և ազգագրությունը գեղարվեստական գրականության մեջ նոր շունչ և կենդանություն ստացան:

Սույն աշխատության մեջ ներկայացվում են Ս. Հեղայաթի կյանքը, բազմաժանր ստեղծագործական ժառանգությունը, ժողովածուները, ժողովրդական բանահյուսական և ազգագրական հետազոտությունները՝ դրանց գիտական ուսումնասիրության մեթոդաբանական ծրագրեր և այլն: Աշխատության մեջ զետեղված են նաև Ս. Հեղայաթի երեք պատմվածքներ՝ մեր թարգմանությամբ:

Աշխատությունը նախատեսված է արևելագետների, հայագետների, բուհերի ուսանողների և ընթերցող հասարակության համար:

ՀՏԴ 821.222.1.0

ԳՄԴ 83.3(5Իրան)

ISBN 978-5-8080-1430-5

© Յահյամասիհի Անահիտ, 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ .....	5
ՄՈՒՏՔ .....	7
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ</b>	
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿԱՆԱՐԿ .....	10
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b>	
<b>ՍԱՂԵԴ ՀԵՂԱՅԱԾՈՅ՝ ԱՐՁԱԿԱԳԻՐ</b>	
ա) Սաղեդ Հեղայաթի փոքր արձակը (ականարկ) .....	33
բ) Սաղեդ Հեղայաթի գեղարվեստական արձակի բանահյուսական հենքը .....	58
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ</b>	
<b>ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ 19-20-ՐԴ</b>	
ԴԱՐԵՐՈՒՄ .....	73
ա) Բանագիտության զարգացման հեղայաթական հայեցակարգը .....	82
բ) Սաղեդ Հեղայաթը՝ բանահավաքչական գործի նախաձեռնող .....	89
<b>ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ</b>	
<b>ՍԱՂԵԴ ՀԵՂԱՅԱԾՈԻ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ</b>	
ա) «ՆԵՐԱՆԳԵՍՏԱՆ» .....	94
բ) «Օսանե» .....	129
գ) Սաղեդ Հեղայաթը՝ բանագիտության կայացման ջատագով .	142
դ) Անտիպ աշխատանքներ .....	153
ՎԵՐՁԱԲԱՆ .....	159
<b>ՀԱՎԵԼՎԱԾ Ա</b>	
<b>ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
ա) Օմար Խայամի քառյակները՝ Սաղեդ Հեղայաթի մեկնությամբ .....	162
բ) Կոմիտասի մշակած ժողովրդական մի երգի արձագանքը պարսից բանագիտության մեջ .....	182
գ) Գարեգին Մրվանձոյանց և Սաղեդ Հեղայաթ (համեմատական վերլուծություն) .....	189

<b>ՀԱՎԵԼՎԱԾ Բ</b>	
<b>Պատմվածքներ</b>	
ա) Անիջյալ ամրոցը (Գոջասթե դեժ) .....	198
բ) Կրակապաշտը (Աթաշփարասթ) .....	208
գ) Աբու Նասրի գահը (Թախտե Աբու Նասր) .....	212
<b>ԿԵՆՍԱՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b> .....	234
<b>Մաղեղ Հեղայաթի ստեղծագործության տարեգրությունը</b>	
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b> .....	244
<b>ՏԱՐԱԿԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ</b> .....	250
<b>ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ</b> .....	252

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն աշխատությունը նվիրված է 20-րդ դարի պարսիկ արձակագիր, գիտական և հասարակական մտքի ջատագով, հոգեբանական նովելի մեծ վարպետ Սադեղ Շեղայաթի կյանքին և գործին, հատկապես իրանի բանահյուսությանը և ազգագրական խնդիրներին նվիրված նրա ժառանգությանը: Շեղայաթը ժամանակակից գրականության այն մեջություններից մեկն է, ով նպաստեց պարսիկ արձակում նովելի՝ որպես առաջատար ժանրի կայացմանը:

Սադեղ Շեղայաթը Եվրոպայում կրթված, լայն ընդգրկման մտավորական էր, ով իր կարծ և դրամատիկ կյանքի ընթացքում, բացի համաշխարհային գրականության անթոլոգիա-ծաղկաքաղերը հարստացնող արձակից, լրջորեն զբաղվել է նաև պարսիկ ֆոլկլորով և ազգագրությամբ՝ մանկական երգերով, ժողովրդական հավատալիքներով, ծեսերով, թարանե-ռոբայիններով, էթնիկ սովորույթների հավաքմամբ, արժեորմամբ և վերլուծությամբ:

Սադեղ Շեղայաթի՝ ազգային բարձր ինքնագիտակցության արդյունք հանդիսացող բանագիտական ժառանգությանը նվիրված Ա. Յահյամասիհիի աշխատությունը նորույթ է հայ իրանագիտական ուսումնասիրությունների ծիրում, չնայած հայ ընթերցողը ծանոթ է առանձին գրքույկներով և հատընտիր ժողովածուներում իրատարակված Շեղայաթի բազմաթիվ թարգմանությունների: Այս համատեքստում հասկանալի են դառնում նրա պոետիկայի առանձնահատկությունները՝ հագեցած պարսիկ բանահյուսական նյութով: Բարբառային լեզվի, դարձվածքների, կենցաղի, սոցիալական տարբեր խավերի ենթամշակույթի իմացությունն է անհատականացրել նրա հերոսների խոսքը, հատկապես երգիծանքը, որը նաև գործիք էր ժամանակի խիստ գրաքննության պայմաններում՝ քննադատելու հասարակական կարգերն ու բարքերը:

Աշխատությունը տեսանելի է դարձնում Շեղայաթի ստեղծագործական ժառանգության լայնույթը՝ գրադաշտական «Զաշնե Սադե» տոնից մինչև իսլամական արվեստի ծնունդ

հանդիսացող «Խայամյան քառյակներ», ինագույն «Նոուռության» ծեսերի լուսաբանումից մինչև Եվրոպական ավանդարդի ազդեցությունը կրող, սակայն խորապես ազգային գեղարվեստական արձակ: Այս ընդգրկումն ուրվագծում է պատմականության հեղայաթյան ընկալումը: Օրինակ՝ անվանելով «Խայամյան» ռոբային թարանե՝ Յեղայաթը հաստատում է անհիշելի ժամանակներից եկող ժողովրդական երգի և ռոբայիի կապը, չնայած քառյակը Խայամի արվեստում և հանգավորմամբ, և բովանդակությամբ հեռացել էր ժողովրդական զգացմունքային և անմիջական երգ-թարանեից և կայացել որպես պարսից փիլիսոփայական և ազատախոհական մտքի բարձրագույն որակ:

Յեղայաթը, ով իր հայրենիքի և ժողովրդի ճշմարիտ նվիրյալն էր, կարծում ենք, ջանում էր ժամանակակից սովորութներում հնարավորինս վերականգնել հին հավատքի հետքերը, հաստատել պարսից քաղաքակրթությունների կապը, մշակութային մտքի հավատարմությունը անցյալից եկող ավանդույթներին: Ֆենոմեններ, որոնք իրանի էթնոմշակութային անընդհատության հավաստի փաստն են և մեկ անգամ ևս հաստատում են Փահլավիների օրոք գերակայող «Միրասե ֆարհանգի» («Քաղաքակրթական ժառանգություն») սկզբունքը:

Այսօր ժանոթությունը Սադեղ Յեղայաթի բանագիտական և ազգագրական հետազոտությունների, այդ թվում՝ պարսիկ մասնագետների և վերլուծաբանների տեսակետների հետ, կարող է նոր հարցադրումների և եզրահանգումների նյութ դառնալ, հատկապես հարեւան ժողովրդի հետ տիպաբանական զուգահեռների, գուցե նաև հեռավոր ծագումնաբանական ընդհանրությունների և փոխազդեցությունների որոնումներում, որի առաջին փորձը ներկայացվում է մասնագետների և ընթերցող հասարակության ուշադրությանը:

Ա. Կոզմոյան

## ՄՈՒՏՔ

Սադեղ Հեղայաթը 20-րդ դարի իրանական մշակույթի նշանավոր դեմքերից է, մեծանուն գրող, բանագետ և ազգագրագետ, որի գիտագրական ժառանգությանը հայ ընթերցողը քիչ է ծանոթ: Այսօր, երբ երկու ժողովուրդների մշակութային փոխհարաբերությունները փոխադարձաբար առավել լայն ճանաչման ու գնահատման հնարավորություն են ստացել, սույն աշխատությամբ փորձել ենք լուսաբանել երկու երկրների մշակույթներում առկա որոշ խնդիրներ՝ լրացնելով այդ ոլորտում առկա բացը:

Ս. Հեղայաթը ներկայումս սիրված և ճանաչված գրող է, սակայն նրա գրական բազմաբնույթ ժառանգության մեջ ոչ պակաս կարևոր են նաև նրա բանագիտական և ազգագրական ուսումնասիրությունները: Այս ուսումնասիրության շրջանակներում մեր առջև նպատակ ենք դրել ներկայացնելու Հեղայաթ բանագետին:

Դայ գիտագրական շրջանակներին հայտնի են հեղինակի հայերեն բազմաթիվ թարգմանություններ<sup>1</sup>, որոնք, ճիշտ են, թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել Հեղայաթ մտավորականի մասին, սակայն չեն ներկայացնում նրա ստեղծագործության այլևայլ կողմերը:

Սույն գրքում ներկայացվում են Ս. Հեղայաթի կյանքը, նրա գրական-գեղարվեստական ժառանգությունը, ներդրումը իրանում և ազգագրության՝ որպես համակարգված գիտության ձևավորման գործում: Նրա ստեղծագործական և բանագիտական

<sup>1</sup> Տե՛ս «Աբջի խանում», թարգմանությունը՝ Նունե Շովիաննիսյանի, «Նարցիս» գրական-գեղարվեստական մշակութային հանդես, Եր., 2006, N 1, էջ 69-73, «Սագե Վելգարդ» («Թափառաշրջիկ շունը»), թարգմանությունը՝ Զավահեր, Թեհրան, «Ալիք» տպարան, 1967, էջ 5-22, «Զենդե քե գուռ» («Ողջ-ողջ թաղվածը»), Թեհրան, 2005, էջ 87, 88, «Ֆարդա» («Վաղը»), «Մետաքսի ծամփան» ժողովածուից, թարգմանությունը՝ Խաչիկ Խաչերի, Թեհրան, 1996, 282 էջ, «Սանգե սաբուր» («Դամբերանքի քար»), «Իրանական հեքիաթներ» ժողովածուից, թարգմանությունը՝ Խաչիկ Խաչերի, Եր., 2016, 286 էջ, «Դաջի Աղա» վիպակը, Եր., «Դայաստան» իրատ., 1974, 133 էջ, «Լալե», «Դաշ Աքոլ», «Թալաբե ամորգեց» («Թողություն աղերսողները»), «Զանի քե մարդաշ րա գոմ քարդ» («Թե ինչպես կորցրեց ամուսնուն»), «Իրանական պատմվածքներ» ժողովածուից, թարգմանությունը՝ Ռ. Շովիաննիսյանի և Ռ. Փահլեանյանի, Եր., 1963, 169 էջ:

աշխատանքները հաճախ միահյուսված են: Յեղայաթն այն ստեղծագործողներից է, որոնք ժողովրդի մտածողության տարրերը լավագույնս ներմուծել են գեղարվեստական գրականության դաշտ:

Աշխատության մեջ անդրադարձ է կատարվել նաև Ս. Յեղայաթի և Եվրոպացի մտավորականների հարաբերություններին ու գիտագրական առնչություններին: Գրքի վերջում գետեղված են Ս. Յեղայաթի մի քանի ստեղծագործություններ՝ մեր թարգմանությամբ:

Գրողի նկարագրի ու հոգեկերտվածքի վրա, անկասկած, իրենց հետքն են թողել ժամանակաշրջանն ու միջավայրը, տնտեսական ու քաղաքական պայմանները, որոնք բախտորոշ դեր են կատարել նաև նրա աշխարհայացքի և աշխարհընկալման ձևավորման մեջ: Պակաս կարևոր չեն ընտանիքի և մերձավորների հետ ունեցած հարաբերությունները: Սույն աշխատության մեջ փորձել ենք վեր հանել նաև այդ գործոնները:

Կարևորելով Սադեղ Յեղայաթի ստեղծագործական ատաղձի և իհմնական աղբյուրների վճռորոշ դերը նրա գեղարվեստական ըմբռնումների հարցում՝ փորձել ենք համակողմանիորեն ներկայացնել այն սոցիալական և գրական-մշակութային միջավայրը, որում ձևավորվել է նրա արվեստը:

Յարկ է ընդգծել, որ բանագիտությունը՝ որպես գիտություն, իրանում ձևավորվել է ինց Ս. Յեղայաթի ջանքերի շնորհիվ: Այս առումով կարևոր նշանակություն ունեն նրա «*Ousānē*<sup>2</sup>» և «*Նեյրանգեստան*<sup>3</sup>» ուսումնասիրությունները:

<sup>2</sup> «*Ӯսանէ*», այսինքն՝ «հեքիաթ», բարբառային դարձած «*Afsānē*»-ն, որը նշանակում է «հեքիաթ, ավանդավեպ, առասպել կամ գրույց»:

<sup>3</sup> «*Nēyrangēstān*», այսինքն՝ «հրաշքների աշխարհ-երկիր»: Պահլավերեն «*Nēyrang*» նշանակում է «զրադաշտականների կրոնական և պաշտամունքային արարողություն»: Մեր օրերում զրադաշտ պարսիկները Յնդկաստանում այս բառի փոխարեն օգտագործում են Գոջարաթի բարբառով «*Kāgya*» (սանսկրիտերեն «*Kryā-Kāāgyā*») բառը: Յետևաբար՝ «Նեյրանգեստան» նշանակում է «ծիսակատարությունների գիրք»: «Ավեստա»-ի հատվածներից մեկը պահլավերեն մեկնաբանությամբ (զանդ) «Նեյրանգեստան» է կոչվում, որն այսօր հասանելի է և իրանցի զրադաշտների արարողակարգի գիրքն է: «Նեյրանգ» բառը Սասանյաններից և նրանց օտարանալուց հետո սկսեց կիրառվել «կախարդել», «նենգություն», «թալիսման», «խարեւություն» և «խորանանկություն» իմաստներով (տե՛ս Հաշիմարտ Ջ., *Dānēšnātēyē Mazdīsnā*, Tehran, ուժ-է Մարկազ, 1383, 458 էջ):

Անշուշտ, մինչև Ս. Հեղայաթը իրանում կային բանագիտության դերն ըմբռնող մտածողներ և գրողներ, սակայն նա է գիտական այդ ճյուղի հիմնադիրը և զարգացնողը: Նրա նախորդներից Ռաշիդ Յասամին կարող էր առաջամարտիկ դառնալ այս գործում, սակայն վաղաժամ մահը նրան թույլ չտվեց դա անել:

Ս. Հեղայաթի գրական ժառանգությանն անդրադարձել են թե՝ պարսիկ և թե՝ արտասահմանցի արևելագետներ ու մշակույթի գործիչներ՝ Յահյա Արյանփուր, Աբոլղասեմ Էնջավի Շիրազի, Մուհամմադ Զաֆար Մահջութ, Մուհամմադ Քաթուզյան, Իրաջ Աֆշար, Մուհամմադ Ղասեմզադե, Յասան Ղաեմյան, Մուհամմադ Ռեզա Սարշար, Փաքսիմա Մոջավեզի, Նիկոլայ Կիսյակով, Ղանիել Կոմիսարով, Աննա Ռոգենֆելդ, Իոսիֆ Օրանսկի, Շելմութ Շումարիս, Յանրի Մասսե, Վանսան Մոնտի և այլք:

Ս. Հեղայաթի ժառանգությանը մասամբ անդրադարձել են նաև հայ արևելագետները՝ Յրայր Մովսիսյանը, Լաուրա Շեխոյանը, Արամ Բուդառյանը և ուրիշներ:

Սույն ուսումնասիրությամբ փորձել ենք հնարավորինս ամբողջական ներկայացնել Ս. Հեղայաթ քաղաքացուն, գրողին և գիտնականին:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յամաշխարհային մշակույթի պատմության մեջ իր ակնառու հետագիծն ունի պարսից գրականությունը, որը, ինչպես ամեն մի երկրի գրականություն, զերծ չի մնացել պատմության անցանկալի շրջապտույտներից և վայրիվերումներից (պատերազմներ, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ոչ այնքան բարենպատ պայմաններ, օտար պետությունների կողմից երկրի ներքին կյանքին անհարկի միջամտություններ և այլն):

19-րդ դարի սկզբին իրանը գտնվում էր բարդ ու հակասական պայմաններում: Բավական է նշել, որ այդ շրջանում շարունակում էր աներեր մնալ ավատատիրական հասարակարգը, որն իր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակով երկիրը զգալիորեն հետ էր պահել Արևմուտքից, ընդ որում զարգացման մակարդակների տարբերությունը ոչ թե նվազում, այլ աճում էր:

Իրանում հասարակական մտքի զարգացման և լուսավորչական գաղափարների տարածման գործում դերակատարություն ունեցած առաջնորդներից էին Նոր Զուղայի հայ Մալքոն Խանը (1833-1908), Աբդոլ Ռահիմը Թալեբով (1834-1910), Զեյն օլ-Աբեդին Մարաղեին (1837-1910) և ուրիշներ: Նրանք նկատում են, որ հասարակության մեջ համատարած են դառնում կամայականությունները, անօրինականությունը, կաշառակերությունը և տնտեսական քայլայումն ու հետամնացությունը: Նշված անհատների ջանքերը նպատակառողության էին արթնացնելու իրանցիների ազգային ինքնագիտակցությունը, հայրենասիրական և մարդասիրական զգացումները:

Այն ժամանակաշրջանում, երբ սկիզբ են առնում հակաբռնապետական, մշակութային, լուսավորչական շարժումները, ժողովրդական զանգվածներից ասպարեզ են իջնում առաջնորդությունը իր դեմ պայքար ծավալելու կոչերով: Պայքար, որի սաղմերը երևան էին եկել դեռևս Սեֆյանների իշխանության շրջանում և ուղղվել Ղաջարական թագավորության Նասեր էդ Ղին բռնակալ շահի քաղաքականության դեմ, որը երկիրը հասցրել էր ծայրահեղ աղքատության և տնտեսական քայլայման:

Նասեր էդ Դին շահը, լինելով փառասեր, արկածախնդիր և ճամփորդությունների սիրահար, հասունանալով ձգտում էր ուղիներ բացել դեպի Եվրոպական զարգացած երկրներ: Այդ նպատակով երեք անգամ մեկնել է Եվրոպա: Դաղորդակից լինելով Եվրոպական մշակույթի և կենցաղավարության առաջընթացին, խորապես տպավորվելով Եվրոպայի պատկերով՝ ցանկանում էր իր երկիրը ևս տանել նույն ուղիով: Սկսում է մի շարք բարեփոխումներ կատարել, սակայն երկրի արդիականացմանն ուղղված այդ ձեռնարկումները դանդաղ և սահմանափակ միջոցներով էին իրականացվում, ուստի չեն կարող երկրում արմատական տեղաշարժեր առաջ բերել:

Կրթամշակութային կյանքը, այնուամենայնիվ, աշխուժանում է: 1851 թ. երկրի «մեծ» վարչապետի կողմից հիմնադրվում է որակյալ մասնագետներով հարուստ «Դարոլֆոննո» («Dārolfōnū») պոլիտեխնիկական քոլեջը, որը շուտով տալիս է առաջադիմական գաղափարներով դաստիարակված և կրթված կադրեր, որոնցից շատերը հետագայում իրանի մշակութային կյանքում աչքի են ընկնում իրենց՝ նորագույն ժամանակաշրջանին համապատասխանող երկերով և դիրքորոշումներով: Շահի հրամանով բազմաթիվ ուսանողներ էին ուղարկվում Եվրոպա՝ կրթություն ստանալու, ապա իրան վերադառնալու և իրենց հայրենիքին ծառայելու համար:

Այդ տարիներին բարգմանություններ են կատարվում համաշխարհային գրականությունից, ուշադրության առանցքում են հայտնվում արտասահմանյան գիտական հայտնագործություններն ու հետազոտությունները: Երկրում և երկրից դուրս իրատարակվում են նոր օրաթերթեր և ամսագրեր:

Այդուհանդերձ, իրանում սոցիալական կացությունը շարունակում էր մնալ չափազանց ծանր, և ժողովուրդն ավելի ու ավելի էր տնտեսապես քայլայվում ու աղքատանում, իսկ առաջադեմ մտածողության տեր մարդիկ բարեփոխումներ կատարելու ծրագրեր էին մշակում: 1905 թվականին սկզբնավորվեց իրանական սահմանադրական կարգերի և օրինականության արմատավորման շարժումը, որն իր ավարտին հասավ 1905-1911 թթ.: «1905 թ. տարերային ժողովուրդական դժգոհությունը սկսեց կազմակերպչական ձևեր ընդունել: Յյուսիսային Իրանի քաղաքներում սկսեցին ստեղծվել մոժահեղների («մարտիկներ» արդար,

հեղափոխական գործի համար») կազմակերպություններ»<sup>4</sup>: Յայերն այս հեղափոխությանն իրենց գործուն մասնակցությունն են բերել, և այդ հեղափոխության հաղթանակի փառքը վերագրվում է Եփրեմ Խանին: «Եվրոպական դիվանագիտական շրջանակներն ու մամուլը այդ հաղթանակի առթիվ Եփրեմ Խանին անվանեցին «Պարսկաստանի Գարիբալդի», «արևելյան Նապոլեոն», «բացառիկ ռազմավար» և այլն»<sup>5</sup>, - գրում է Վ. Բայբուրդյանը:

20-րդ դարեսկզբին հեղափոխական խմբումներ էին տեղի ունենում նաև Ռուսաստանում և Անդրկովկասում, որոնց անմասն չեր մնացել նաև Հայաստանը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ Իրանը ոչ միայն մշակութային զարգացման նոր շրջափուլ է թևակոխում, այլև մուտք է գործում առևտրաարդյունաբերական ոլորտ, հաճախակի են դառնում քաղաքական ու պետական գործիչների գործուղումները Եվրոպական երկրներ, հատկապես Ֆրանսիա: Իրանը, զբաղեցնելով ռազմավարական կարևոր դիրք, ունենալով հարուստ բնական պաշարներ, հայտնվում է հզոր պետությունների ուշադրության կենտրոնում: Չնայած ստեղծված բարենպաստ պայմաններին՝ իշխանության վարած սխալ քաղաքականության հետևանքով երկիրը հայտնվում է ծանր կացության մեջ: Ամեն մի առաջադեմ գաղափար և պայքարի դրսերում հանդիպում են համառ դիմադրության: Իրավիճակն անփոփոխ է մնում մինչև Ղաջարական արքայատոհմի վերջին շահի գահակալության տարիները:

Հրապարակ են իշնում մշակույթի ազգային գործիչներ: Նրանք իրենց տագնապներն ու ընդդիմադիր վերաբերմունքն արտահայտում են գրականության միջոցով, իրապարակախոսական հոդվածներով և քաղաքական ելույթներով: Դրանք ուղղված են այն շրջանակների ու անձանց դեմ, որոնք խոչընդոտում են երկրի առաջընթացը: Մշակութային զարգացման այս ժամանակաշրջանում մտավոր խավը հնարավորություն է ստանում ծեռնամուխ լինելու գրական լեզվի բարեկարգմանը և այն մաքրելու արաբականությունից, խրթին ոճերից ու մոտեցնելու ժողովրդականին: Գրականության մեջ, թեև զգուշությամբ, սկսում

<sup>4</sup> Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (Ղնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., «Զանգակ» իրատ., 2005, էջ 510:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 530:

Են օգտագործվել խոսակցական լեզվի արտահայտչածներ: Զեռնարկված քայլերը դանդաղ, բայց անշեղորեն տանում են դեպի գրական լեզվի զարգացում ու հղկում:

20-րդ դարի առաջին տասնամյակներին նպաստավոր պայմաններ են ստեղծվում գրականության զարգացման համար. հեղինակների կողմից ընտրվում են ժողովրդի առօրյա կյանքն ու կենցաղն արտացոլող, նրա հոգուն հարազատ թեմաներ, բացահայտվում կամ նորովի են լուսաբանվում անցյալի պատմությանը վերաբերող բազմաթիվ իրադարձություններ:

Իրանում կատարվող տեղաշարժերը մի կողմից, Արևմուտքի հետ մշակութային կապերը մյուս կողմից հող են նախապատրաստում գեղարվեստական արձակի զարգացման համար:

Քաղաքական և մտավոր կյանքում տեղի ունեցած այս վերընթաց փոփոխությունների պայմաններում էլ ծևավորվել է Սահեղ Շեղայաթ արվեստագետը՝ հասնելով գաղափարական հասունության և գեղարվեստական կատարելության, դրսենորելով ուրույն մտածելակերպ և աշխարհայացք:

\*\*\*

Ս. Շեղայաթն իրանական ազնվատոհմ ընտանիքի զավակ է: Ծնվել է 1903 թ.՝ Ղաջարական հարստության նախավերջին բազավոր Մուհամմադ Ալի շահի գահակալության օրոք: Հայրը Շեղայաթ Ղոլի խանն էր (Եթեզադ օլ-Մոլք), մայրը՝ Զիվար Մոլուք Շեղայաթը: Ուներ երկու եղբայր, երեք քույր: Ս. Շեղայաթի նախնիները Ղամղան<sup>6</sup> քաղաքում են ապրել: Նրա մեծ պապը՝ Մուհամմադ Շահին, Աղա Մուհամմադ խան Ղաջարի սպասավորն է եղել: Նրանք ունեցել են տոհմածառ, և, ինչպես Ս. Շեղայաթի եղբայրն է պատմում. «Սահեղ Շեղայաթի մեծ նախնին հանգուցյալ Ռեզա Ղոլի խանն էր՝ իմաստասեր, արձակագիր, բարեկիրք ուսուցիչ և գիտուն ու բանիմաց պատմաբան: Նա Մուհամմադ շահի երկրորդ որդու՝ Մալեք Արայի ուսուցիչն էր և տա-

<sup>6</sup> Ղամղանը Պարսկաստանի Սեմնան նահանգի (Ելբրուս լեռան հարավային ստորոտում) գլխավոր քաղաքն է: 1987 թ. մարդահամարի տվյալներով, ուներ 84.680 բնակիչ: Քաղաքը բաղկացած է երկու մասից՝ Կենտրոնական (Մարգագի) և Ամիրաբադ: Շյուսիսից այն սահմանակից է Մազանդարանին, հարավից՝ Սպահանին, արևելքից՝ Շահրուդ, իսկ արևմուտքից՝ Սեմնան քաղաքներին: Ղամղան քաղաքի նշանավոր բերքը պիտի պահպան է:

ոիներ շարունակ կրթել ու դաստիարակել է Սովաֆար եղ Շին շահին»<sup>7</sup>:



Ա. Քեղայաքի հայրական տունը

Ա. Քեղայաքն ընդունակություններն ու տաղանդը նախնիներից է ժառանգել: Նրան մեծ պապը՝ Զաֆար Շոլի խանն է անվանակոչել: Նորածնին, ըստ իրանական ավանդական պատկերացումների, Սադեղ են անվանակոչում, որպեսզի նա ազնվության ու ճշմարտության հետևորդ դառնա: Ռուս արևելագետ Դ. Ա. Կոմիսարովն այս մասին գրում է. «Իրանում հնուց ի վեր գոյություն ունի սովորույթ, համաձայն որի, նորածնին անուն տալով, ծնողները փորձում են նրա մեջ տեսնել այն հատկությունները, որոնք կցանկանային: Քեղայաքի ծնողներն իրենց որդուն կոչեցին Սադեղ (ազնիվ), և, իսկապես, նրանց ցանկությունն իրականացավ: Ա. Քեղայաքը հենց այդպես էլ ապրեց իր կյանքը՝ ազնվորեն ծառայելով իր հայրենիքին և ողջ տաղանդը նվիրելով ժողովրդին»<sup>8</sup>:

Ա. Քեղայաքի մասին, մանկության և պատանեկության տարիներից սկսած, հուշեր և տեղեկություններ են պահպանվել: Հարազատների հիշողությամբ՝ Սադեղն ինքնամփոփ, առանձնություն սիրող և օրինապահ երեխա էր: Եվ քանի որ երեխաներից ամենափոքրն էր, սիրո և գուրգուրանքի պակաս չի զգացել: Նրա եղբայրը՝ Մահմուդը, հիշում է. «Մեր տան սիրասուն երեխան էր. նա չորս քույր-եղբայրներից հետո ծնվեց... Բոլորս նրան սիրում և գուրգուրում էինք... Տարբերվում էր կապույտ աչքերով, շեկ

<sup>7</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no 13, p. 8.

<sup>8</sup> Комиссаров Д. С., О жизни и творчестве Садека Хедаята, «Советское востоковедение», М., 1956, № 4, с. 56.



Սադեղ Հեղայաթը (աջից երկրորդը)  
քույրերի, եղբայրների և հորեղբոր երեխաների հետ

մազերով, սպիտակ և նուրբ մաշկով: Նա գրավել էր բոլորին  
սրտերը: Այդ փոքր տարիքում շատ մեղրալեզու և հաճոյախոս էր,  
բայց որքան մեծանում, սակավախոս էր դառնում և լրջանում»<sup>9</sup>:



Սադեղ Հեղայաթը հայրական տանը.  
աջից՝ մեծ եղբայրը՝ Իսան, մեջտեղում  
Սադեղ Հեղայաթը, իսկ ձախից  
Հեղայաթի մյուս եղբայրը՝ Մահմուդը

<sup>9</sup> «Majalēyē Sēpīd o sīyāh», 1346, vol. 15, no. 14, p. 10.

Մանկուց Սադեղը մեծ սեր ուներ կենդանիների նկատմամբ, որոնց միշտ պաշտպանում էր: Նրա ներկայությամբ ոչ ոք չէր համարձակվում վճասել որևէ կենդանու:



Սադեղ Ռեդայարը հոր հետ



Ս. Ռեդայարը ավագ եղբոր հետ

Ս. Ռեդայարը դայակի խնամակալությամբ է մեծացել: Դայակը բարկացկուտ և կամակոր կին էր, շարունակ մյուս աղախինների հետ վիճաբանությունների մեջ էր մտնում և աչքի էր ընկնում անհաշտ բնավորությամբ: «Սեփիդ օ սյահ» («Սպիտակ ու սև»)<sup>10</sup> ամսագրում հրատարակված իր հետաքրքրական հուշերում Ս. Ռեդայարի եղբայրը պատմել է նաև դայակի մասին. «Հանգուցյալ մայրս միշտ այդ կնոջը կաշառքով և քաղցր խոսքերով էր հաշտեցնում, որպեսզի չհեռանա. Վախենում էր՝ նրա հեռանալու պատճառով Սադեղը կվշտանա: Եվ այսպիսի վերաբերմունքը դայակին ավելի էր տրամադրում անկախ և քնահաճ լինելու: Զբոսանքի պատրվակով փոքրիկին տանում էր ծնողներիս աչքից հեռու, ուր ինքն էր ցանկանում: Այդ շրջագայությունների ժամանակ Սադեղը, ինարավոր է, արյունոտ դիակ տեսած լինի, որը խորապես տպավորվել է մանուկի հոգում: Ի՞նչ գի-

<sup>10</sup> «Տերի օ սիյահ».

տենք, թե այս անկաշկանդ թափառումները փոքրիկի հոգեկանի վրա ինչ ազդեցություն են թողել («Դիակը», «Ոսկեգույն մեղուն»): Նրա մանկությունից շատ բան չգիտենք. գիտենք այն, որ նրա դայակը կամակոր և չարակամ է եղել»<sup>11</sup>:

Ա. Շեղայաթը, մտավորական ընտանիքի զավակ լինելով, յոթ տարեկանից սկսել է կրթություն ստանալ: 1914 թ., երբ ընդամենը վեցերորդ դասարանի աշակերտ էր, դպրոցական ընկերների համար իրատարակում է «Սեղայե ամվաթ»<sup>12</sup> («Սեղայալների ծայնը») թերթը: Փափկասուն կյանքով ապրած երեխան տասներկու տարեկան հասակում ինչո՞ւ պետք է մտածեր և գրեր մահվան, հոգեառ հրեշտակի և կյանքի վախճանի մասին: Այս գրվածքը և եղբոր պատմածներն իրապես մտածելու տեղիք են տալիս դայակի դաստիարակության վերաբերյալ: Միաժամանակ չմոռանանք, որ այս գրվածքներում բացահայտվում են նաև Ա. Շեղայաթի գրական տաղանդի առաջին ծիլերը: 1917 թ. «Օմիդ» շաբաթաթերթում իրատարակվում է նրա առաջին հոդվածը:

«Ելմիե» դպրոցում տարրական կրթություն ստանալուց հետո փոխադրվում է իր ժամանակի լավագույն միջնակարգ դպրոց՝ «Դարոլֆոնուն», որտեղ կրթություն էին ստացել նաև իր պապերը՝ զբաղեցնելով նաև տնօրենի պաշտոնը: Այստեղ Շեղայաթը սովորում է երեք տարի, բայց տկար տեսողության պատճառով կարծ ժամանակով հեռանում է դպրոցից և մեկ տարի հետ մնում իր դասընկերներից: Դաջորդ տարի տեղափոխվում է «Սենթ Լուիս»<sup>13</sup> միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է ֆրանսերեն: Այստեղ Սադեղի ուսուցիչը մի քահանա էր, որը նրան ծանոթացնում է եվրոպական ժամանակակից գրականությանը, առաջադեմ կենցաղին և մշակույթին, որն իրանականի հակադիր բներում էր: Պատանեկան տարիներից Ա. Շեղայաթն իր ողջ ազատ ժամանակը նվիրում էր ընթերցանությանը և եվրոպական, ուսական ու ամերիկյան գրականության վերաբերյալ ձեռք բերում բավականին խոր գիտելիքներ:

Այդ տարիներին իրանում տիրում էր քաղաքական քառային վիճակ: Անգլիայի հովանավորությամբ և Սահմանադիր ժո-

<sup>11</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», 1346, vol. 15, no. 15, p. 8.

<sup>12</sup> «Sēdāyē amvāt».

<sup>13</sup> Արական տարրական և միջնակարգ դպրոց, որը հիմնադրվել էր 1862 թ. Թերանում կաթոլիկ միսիոներների կողմից, որտեղ դասավանդում էին պարսկերեն և ֆրանսերեն:

ղովի<sup>14</sup> որոշմամբ Ղաջարական հարստության իշխանությանը վերջ է տրվում, և վարչապետ Ռեզա խանը հոչակվում է Իրանի շահ: Ակիզը է առնում Փահլավի հարստության հաղթարշավը:



Աջից՝ Անդրեյ Սերուգին, Մոջթաքա Մինովի, Ղոլամհոսեյն Մինբաշյան,  
Մասուդ Ֆարզադ և Սադեղ Ջեդայար

Ռեզա շահը սկզբում հանդես էր գալիս իբրև հայրենասեր, բարենորոգող և հակակայսերապաշտ, սակայն, ոիրքերն ամրապնդելով, սկսում է միանձնյա որոշումներ կայացնել և իրագործել իր իսկ նպատակները: Յոգնորականներին դեմ դուրս գալով՝ բորբոքում է նրանց զայրույթը, և նրան փորձում են ներկայացնել որպես հավատի իիմքերը խարխլող: Ռեզա շահի իշխանությունն իր էությամբ բուրժուակալվածատիրական էր, իսկ ինքն ամենամեծ ունեցվածքի տերն էր: Կամայականությունների, անօրինականության և հափշտակությունների հետևանքով սկսվում են գյուղացիական շարժումներ, որոնց, բնականաբար, հակահարվածներ են տրվում: Դրանք հաճախ դրսենորվում են սոցիալական ճնշումներով՝ հարկերի տարբեր տեսակների կիրառմամբ: Այս ամենին ավելանում է նաև վախի ու սարսափի մթնոլորտը: Սա-

<sup>14</sup> Սահմանադիր ժողովը շատ կարևոր օրենքների ընդունման կամ դրանց մեկնաբանության և Սահմանադրության փոփոխման դեպքում էր իրավիրվում.

կայն անպաշտպան ժողովրդի կողքին կանգնած էր Իրանի առաջադեմ մտավորականությունը:

20-րդ դարի 20-ական թվականներին ստեղծվում են գեղարվեստական գրականության նոր ժանրեր՝ վեպ, պատմվածք, վիպակ, նորավեպ (նովել), որոնք հնարավորություն են ընձեռում պատկերելու Իրանի սոցիալական կյանքի արատները: Նոր գրական ժանրերով զբաղվող լուսավորիչները հայրենասիրական գաղափարների քարոզներով բացահայտում են երկրում տիրող իրավիճակը, լուսաբանում ժողովրդին հուզող, բայց և քողարկվող քաղաքական և ազգային խնդիրները, արթնացնում իրանցիների ազգասիրական ոգին և նրանց մեջ բորբոքում պայքարելու գաղափարը:

Ամենից արագ և անմիջական արձագանքի հնարավորություն տալիս էր կարծ պատմվածքի՝ նովելի ժանրը: Իրանական նորավեպի սկզբնավորող Սեյեդ Մուհամմադ Ալի Զամալզադեն (1892-1997) արժանանում է «նովելի հայր» կոչմանը և դառնում ռեալիստական գրականության հիմնադիրը: Գեղարվեստական արձակի ժանրերից ամենատարածվածը Իրանում նորավեպը կամ կարծ պատմվածքն է, որն իրականության արտացոլման «ամենաթերև» ձևն է և կոչված է հող նախապատրաստելու վիպակների և վեպերի ստեղծման ու տարածման համար: Վերջին երկուսն արդեն ժամանակային որոշ հեռավորություն են պահում իրադարձություններից, ինչը պայմանավորված է թե՛ ծավալով, թե՛ ընդգրկման հնարավորություններով:

Իր ստեղծագործություններով պարսկական գրականության զարթոնքին մեծապես նպաստեց Ս. Ջեղայաթը:

1924 թ. տպագրվում է Ս. Ջեղայաթի առաջին՝ «Զաքանե հալե յեք օլաղ բե վաղթե մարգ»<sup>15</sup> («Ավանակը մահվան պահին») պատմվածքը: Այդ նույն ժամանակահատվածում լույս են տեսնում նաև «Էնսան վա հեյվան» («Մարդ և կենդանի») և «Շորայթե Խայամ» («Խայամի քայակները») ուսումնասիրությունները:

1925 թ. Ջեղայաթն ավարտում է «Սենթ Լուիս» դպրոցը՝ շատ լավ տիրապետելով ֆրանսերենին, ապա՝ մեկ տարի անց, մասնակցելով արտասահման մեկնող ուսանողների ընդունե-

<sup>15</sup> «Zabān-e hāl-e yēk olāq bē vaqt-e marg».

լության քննությանը, ուղևորվում է Բելօհա, այստեղից՝ իր երազանքների երկիր՝ Ֆրանսիա:

Այսպես Եվրոպայի դռները բացվում են նրա առաջ: Առաջադեմ և զարգացած Ֆրանսիայում ընտանեկան հոգսերից ազատ, անկախ ապրելը նրան ինարավորություն է տալիս իրանի և Եվրոպայի միջև համեմատություն անցկացնելու: Ս. Յեղայաթին ավելի շատ հետաքրքրում էր Արևմուտքի առաջադիմության, քաղաքակրթության և տնտեսական հաջողությունների գաղտնիքների բացահայտումը: Նա հետամուտ է լինում պարզելու, թե որն է պատճառը, որ իրանի նման հազարամյա պատմություն ունեցող պետությունը հասարակական-տնտեսական ծանր և անմիտքար պայմաններում է գտնվում:

Գրականության նկատմամբ ունեցած ուժգին սերը նրան ստիպում է իրաժարվել ճարտարապետ դառնալու մտադրությունից, ինչը ծնողների վաղեմի ցանկությունն էր: Իր ժամանակն ազահաբար և ամբողջությամբ նվիրում է ընթերցանությանն ու ճանապարհորդությանը, մոտիկից դիտում և ծանոթանում Եվրոպայի բարձրաշխարհիկ կենցաղին: Այս մասին վկայում է Ս. Յեղայաթի ընկեր և աշակերտ, գրող Մ. Ֆ. Ֆարզանեն, ով Յեղայաթի կյանքի վերջին տարիներին գրեթե միշտ նրա կողքին է եղել: Ըստ Մ. Ֆ. Ֆարզանեի. «Յեղայաթի ապրած այդ չորս տարիները Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում, համարվում են նրա գրական ստեղծագործության ծաղկման շրջանը: Այդ տարիներին է, որ նա հմտանում և ծեռք է բերում գրելու արվեստը, ընթանում քաղաքական, փիլիսոփայական և գեղարվեստական խնդիրները և, փաստորեն, կերտում իր իսկական անհատականությունը»<sup>16</sup>:

1928 թ. Ս. Յեղայաթն անհայտ պատճառներով ինքնասպանության փորձ է անում և բարեբախտաբար փրկվում է: Արդեն իսկ պարզ էր, որ մահվան գաղափարը և դրանից բխող ինքնասպանության միտքը պետք է ուղեկցեին նրան: Եղբորը գրած նամակներից մեկում կարդում ենք. «Դիմարություն եմ արել: Բախտս բերեց (փրկվեցի – Ա. Յ.)»<sup>17</sup>:

<sup>16</sup> Farzānē M., *Āshnāyī bā Sādēq Hēdāyat*, 7<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Markaz, 1387, p. 329.

<sup>17</sup> Kātūzyān M., *Sādēq Hēdāyat va marg-e nēvīsandē*, 5<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Markaz, 1384, p. 50.



Եվրոպայում միայնակ, ընտանիքից ու հայրենիքից հեռու ապրելն առիթ է դառնում Ս. Շեղայաթի համար նվիրվելու գրականությանը: Այս բարդ ժամանակաշրջանի պատմվածքներում արտահայտվում են նրա ներքին զգացումները, օտարվածությունն ու ճնշվածությունը, որոնք բեռ էին դարձել նրա հոգու վրա:

Փարիզում ապրած տարիները, որոնք լի էին հոգեկան գերլարված վիճակներով, միաժամանակ տալիս են իրենց դրական պտուղները և նրա գրական աշխարհը դարձնում առավել արգասավոր:

1929 թ. Ս. Շեղայաթը գրում է «Ասիր ֆարանսավի» («Ֆրանսիացի գերին»), «Աֆսանեյե աֆարինեշ» («Արարչագործության առասպելը»), «Դաջի աղա» («Դաջի աղա»), «Ալ բարսիաթ օլ-էսլամիաթ ֆել բելադ օլ-ֆարանջիե» («Իսլամի առաքելությունը Եվրոպական երկրներում») ստեղծագործությունները և «Բուլֆե քուո»<sup>18</sup> («Բոռ քուն») պատմվածքը, որ մի յուրօրինակ գլուխգործոց է:

<sup>18</sup> «Asīr-e farānsavī», «Afsānēyē āfarīnēš», «Al b'asīat ol īslāmīat fīl bēlād ol faranjīyē», «Būf-e kūr».

Եվրոպայից վերադառնալուն պես, տեսնելով երկրի տնտեսական և քաղաքական ծանրագույն պայմանները, բռնակալ իշխանության անտարբերությունը, բռնկվում է հակահշխանական պայքարի կրակով:

1930 թ. իրատարակում է «Զենդե թե գուռ»<sup>19</sup> («Կենդանի թաղվածը») ժողովածուն: Քսանվեց-քսանյոթ տարեկան հասակում Ա. Շեղայաթն իր «Զենդե թե գուռ» պատմվածքում պատկերում է Ֆրանսիայում ապրող պարսիկ մի երիտասարդի, որը, չունենալով ապագայի հեռանկար, կյանքի ծաղկուն տարիներին միայն մահվան մասին է խորհում ու խոսում: Երիտասարդն անգամ ինքնասպանության փորձեր է անում և ի վերջո ինքնասպանություն գործում: Այս պատմվածքը Ա. Շեղայաթի հոգեվիճակի ամենավառ արտացոլումն է:



Սադեղ Շեղայաթ և Ղոլամհոսեյն Մինբաշյան

Անկասկած, Ա. Շեղայաթի՝ ինքնասպանությանը հակվածությունը նպաստել է պատմվածքների անցքերի ծավալմանը: Նրա

<sup>19</sup> «Zēndē bē gūr».

բոլոր արտահայտությունները կապված են կյանքի և մահվան, հաջողության և անհաջողության, իասարակական արժեքների ուժնահարման, չարիքի տարածման և ճակատագրի անշրջելիության հետ: Ակնհայտ է այդ ժամանակաշրջանի ամենաազդեցիկ իմաստասիրական ուղղություններից մեկի՝ Եկզիստենցիալիզմի խոր ազդեցությունը Սադեղ Շեղայաթի հոգեկան աշխարհի վրա: Ի տարբերություն փիլիսոփայության առարկայապաշտ (օբյեկտիվիստական) ուղղությունների, որոնք խարսխվում են առավելապես բնագիտության, ձևական տրամաբանության և լեզվի իմաստասիրության վրա, կյանքի փիլիսոփայությունը մեծ ուշադրություն է դարձնում մարդու ներաշխարհի կտրուկ տեղաշարժերին, այսպես կոչված «սահմանային վիճակներին», կյանքի և մահվան սահմանային իրողություններին, որոնցում անմիջականորեն դրսևորվում են մարդու էությունը, նրա իսկական դեմքն ու բնավորությունը, նրա վեհությունն ու թուլությունը:

Ս. Շեղայաթը, Շին Փարթով Ազամը և Բոզորգ Ալավին 1931 թ. երեք առանձին պատմվածքներ են գրում և կազմում «Անիրան» («Ոչ իրան, ոչ իրանցի») ժողովածուն: Շին Փարթով Ազամը գրում է «Ֆաթհե Էսքանդար» («Ալեքսանդրի նվաճումը»), Բ. Ալավին՝ «Շոջումե արար» («Արաբների արշավանքը»), իսկ Ս. Շեղայաթը՝ «Սայեյե մողոլ»<sup>20</sup> («Մոնղոլի ստվերը») պատմվածքները:

1932-1934 թթ. Ս. Շեղայաթը իրատարակում է մի շարք երկեր՝ «Սե ղաթոն իսուն» («Երեք կաթիլ արյուն»), «Սայե ռոշան» («Լուսաստվեր»), «Ալավիե իսանում» («Իսանում Ալավիե»), «Սեյրանգեստան», «Մազյար», «Վաղ-վաղ սահար»<sup>21</sup>, նաև «Էսքահան նեսֆե ջահան»<sup>22</sup> («Սպահանը՝ աշխարհի կեսը»), որոնք գրել էր Ֆրանսիայից վերադառնալուց հետո: Վերջինը համարվում է նրա միակ ճամփորդական ուղեգրությունը: Ենթադրվում է,

<sup>20</sup> «Anīrān», «Fath-e Īskandar», «Hojūm-e ’arab», «Sāyēyē moqol».

<sup>21</sup> «Վաղ-վաղ սահար» – Ղաջարական դինաստիայի ժամանակաշրջանում օգտագործվող մանկական խաղալիքի անուն է: Այն նման է փոքրիկ թմբուկի, որն ամրացնում էին փայտիկի վրա և երկու կողմերից թել էին կախում: Այդ թելերի ծայրերին գնդիկներ կային: Երբ թմբուկը շարժում էին, այդ գնդիկները դիպչում էին թմբուկին և ծայն հանում: Երեխաներն այդ թմբուկը վաճառողին անվանում էին «վաղ-վաղ սահարի»:

<sup>22</sup> «Sē qatrē xūn», «Sāyē rošan», «’Alavīyē xānom», «Māzyār», «Vaq-vaq sāhāb», «Ēsfahān nēsf-e jahān».

որ գոյություն ունեն երկու ուղեգրություններ և, որոնցից մեկը վերնագրված է «Ռույե ջադեյե նամնաք» («Թաց ճանապարհի վրա»)<sup>23</sup>, իսկ մյուսը, ցավոք, այդպես էլ չի գտնվել: 1934 թ. հրատարակում է «Թարանեհայե հայամ» ուսումնասիրությունը:

20-րդ դարի առաջին կեսին հրատարակում է «Օսանե» և «Նեյրանգեստան» բանահյուսական և ազգագրագիտական ուսումնասիրությունները: Ս. Յեղայաթը իրանի ժամանակակից գրական աշխարհում առաջիններից մեկն էր, որ ստեղծագործեց այս ժանրով և դարձավ առաջնորդ-ուսուցիչ: Քաջատեղյակ լինելով իր ազգի մշակույթին և առասպելաբանությանը՝ նա սկսում է գոյի առնել իր ժողովրդի սովորույթները, ծեսերը, վարքութարքը, նաև ներկայացնում բանահյուսական նյութերի հավաքման ձևը, աշխատանքի ծրագիրն ու ուղղվածությունը:

Քաղաքական-հասարակական նոր տեղաշարժերը, սոցիալ-տնտեսական բարդ իրադրությունը համախմբում են Եվրոպայից վերադարձած ուսույալ երիտասարդներին՝ նպատակադրված նվիրվելու հասարակական և գրական գործունեության: Եթե զարթոնքի շոշանի նախկին գրողները քննադատում էին անհատներին, առանձին գործիչների, ապա նորերը չեն սահմանափակվում միայն գեղարվեստական կերպարների ստեղծմամբ, այլ արվեստի միջոցով իրենց քննադատությունն ուղղում են իշխող դասակարգի դեմ:

Չորս համախոհ ընկերներ սկսում են հաճախակի հանդիպել Թեհրանի Լալեզար փողոցում գտնվող «Ռոզ նուար» («Rose noir») հյուրանոցում: Ս. Յեղայաթը և Մասուդ Ֆարզադը ծանոթացել են Արտաքին գործերի նախարարությունում: Մոջբարա Մինովին խորհրդարանի աշխատակից էր, իսկ Բոզորգ Ալավին՝ գերմաններնի դասախոս: Նրանք իրենց խումբն անվանեցին «Ռոբե» («Քառյակ»)<sup>24</sup>: Չորս հիմնադիր անդամներին երբեմն միանում էին Աբդուլ Ջոսեյն Նուշինը, Մինբաշյան Ազամը, Մուհամմադ Մողադամը, Ղոլամ Ջոսեյն Շին Փարթովը և ուրիշներ: Նրանց են միանում այլ համախոհներ և արվեստագետներ ևս, այդ թվում՝ Փ. Նաթել Խանլարին, որը հիմնադրում է «Սոխան»

<sup>23</sup> «Rūyē jādēyē nāmnpāk».

<sup>24</sup> «Rob'ē»-ն արաբերեն բառ է և կազմվել է «rob» արմատից, որը նշանակում է «մեկ չորրորդ, չորս»: Ս. Յեղայաթը և իր երեք ընկերները, հակադրվելով «Սաբե» («Sab'ē») դասական գրականության խմբակին, իրենց խմբակը միտումնավոր անվանեցին «Ռաբե»:

ամսագիրը, որտեղ Ս. Շեղայաթը և իր ընկերները տպագրում են իրենց հոդվածներն ու պատմվածքները:



Սարեղ Շեղայաթ



Բոգորգ Ալավի



Արշակ Մանուկյան



Սովորաբա Մինովի

«Ոռե» խմբի անդամներ

«Ոռե» խմբից առաջ դասական գրականության ներկայացուցիչների՝ «Սաբե» («Յոթնյակ»)<sup>25</sup> անվամբ մեկ այլ խումբ

<sup>25</sup> «Sab'ē» արաբերեն նշանակում է «յոթ»: Այսպես էր կոչվում դասական գրա-

զբաղվում էր գոական աշխատանքներով: Այս խմբերը, ձգտելով ամրապնդել իրենց ոհոքերը, մրցակցության մեջ են մտնում մեկը մյուսի դեմ:

Երեկոյան՝ աշխատանքային ժամերից հետո, «Ռոբե»-ի անդամները հանդիպում էին իրենց ավանդական վայրում, ժամերով խոսում ու քննարկում իրանի և Եվրոպական դասական ու նորագույն գրականության բազմաբնույթ հարցեր, նաև վերլուծում Եվրոպացի նշանավոր գրողների ստեղծագործությունները: Նրանք հայտնվում են մտավորականների և գրական դեմքերի ուշադրության կենտրոնում:

Ցավոք, «Ռոբե» խմբակի գործունեությունը երկար չտևեց: 1932 թ. միավորված անդամները, անկախ իրենց կամքից, 1935թ. հեռացան ու ցրվեցին: 1936 թ. U. Ջեղայաթը մեկնում է Ղնդկաստան, Մինովին և Ֆարզադ՝ Եվրոպա, իսկ Ալավին քաղաքական դեպքերի բերումով բանտ է նետվում: Ժամանակակից գրողներից մեկը՝ Ղոմայուն Քաթուզյանը, տարիներ անց Լոնդոնում պատահաբար հանդիպում է Ֆարզադին, որն այսպես է արտահայտվում իրենց խմբակի մասին.

«Ղեղայաթը մահացավ, և Ֆարզադը դիակ դարձավ:

Ալավին ոչ շիտակ ճանապարհ ընտրեց ու ձերբակալվեց:

Մինովին ճիշտ ուղով գնաց ու հարստացավ»<sup>26</sup>.

U. Ջեղայաթը (1936 թ.) Ղնդկաստանում առիթ է ունենում սովորելու պահլավերեն: Ղնդկաստանի կենցաղը, արվեստը, կրոնը և փիլիսոփայությունը չափազանց գրավում են նրան: Նա իր հետազոտական ծրագրերի իրագործման նպատակով ձեռնամուխ է լինում նախախորհական շրջանի իրանական հուշարձանների ուսումնասիրությանը: Ընդ որում թարգմանում է դրանցից մի քանիսը՝ «Քարնամեյե Արդաշիրե Բաբաքան»<sup>27</sup> («Արդա-

---

կանության ներկայացուցիչներ Մ. Բահարի, Ռ. Յասամիի, Ա. Էլբալ, Ս. Նաֆիսիի, Բ. Ֆորուզանֆարի, Ն. Ֆալսաֆիի և ուրիշներ խմբակը:

<sup>26</sup> «Hēdāyat mord o Farzād mordār šod, ’Alavī zad bē kūcēyē čap o gērēftār šod, Mīnovī raft bē rāh-e rāst o pūldār šod» (Qāsēmzādē M., Rūyē jādēyē namnāk, 2<sup>nd</sup> print, Tehran, Շնորհ. Կարս, 1387, p. 258).

<sup>27</sup> «Kārnāmēyē Ardešir-e Bābakān» – Պահլավերեն պատմական միակ երկը, որը հավանաբար Սասանյան թագավորության առաջին թագավոր Արտաշիրի մասին է և հիմնված է Ֆարս նահանգի (Իրանի հարավում) հնագույն պատմվածքների վրա: Իրականում այն պատմավեպ է (տես Tafazolī A., Amāzgār J., Tārīx adabyāt-e Irān pīš az Eslām, 4<sup>th</sup> print, Tehran, Շնորհ. Maharat, 1383, էջ 260):

շիր Բաբաքանի վարքագրությունը»), «Գոջասթե Աբալիշ»<sup>28</sup> («Անիծյալ Աբալիշը») պատմական երկերը, «Շահրեսթանիայէ Իրանշահր»<sup>29</sup> («Իրանշահրի քաղաքները»), «Յաղեգարե Զամասր»<sup>30</sup> («Զամասրի հիշատակարանը»), «Գոզարեշե գոմանշեքան»<sup>31</sup> («Կասկածանքը փարատող զեկույց»), «Զանդե Վահման յասն»<sup>32</sup> («Բահման յասնի մեկնություն») և այլն: Յնդկաստանում նա հնարավորություն է ստանում 50 օրինակով տպագրելու նաև «Բուֆե քուռ»-ը («Քոռ բուռ»):

1937 թ. Յնդայաթը վերադառնում է Իրան և անմիջապես գործի անցնում: Տարբեր պաշտոններ է վարում, սակայն իր տոհմի մյուս անդամների նման չի կարողանում պատասխանատու դիրքեր գրավել:

20-րդ դարի 30-ական թթ. Երկրորդ կեսին ֆաշիստական Գերմանիան փորձեր արեց միջամտելու Իրանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին, իսկ 1941 թ. հարձակվեց Խորհրդային Միության վրա: Իրանը, ելնելով իր շահերից, չեզոք դիրք գրավեց: Խորհրդային Միության կառավարությունն Իրա-

<sup>28</sup> «Gojastē Abālīš» – Աբալիշը դավանափոխ գրադաշտ հոգևորական էր: Գրքի հիմքում արաք խալիֆա Մամունի ներկայությամբ և գրադաշտական առաջնորդ Ազար-Ֆարանբաղի բանավեճն է (տե՛ս նույն տեղում, էջ 164):

<sup>29</sup> «Šahrēstānhāyē Īrānšahr» – Իրանի պատմական աշխարհագրության մասին պահլավերեն գրքույկ (տե՛ս նույն տեղում, էջ 264):

<sup>30</sup> «Yādēgār-e Jāmāsb» – Այս գրքի պահլավերեն բնօրինակն անհետացել է, միայն հատվածները պահլավերեն և պարսկերեն օրինակներից վերականգնում են գրքի բովանդակությունը: Գրքում ներկայացվում են Զամասրի բանիմացության, առաջին Երկնային և Երկրային էակների ստեղծումը Ահուրամազդայի կողմից, որն առաջին տիրակալն էր, տիրակալների ուղիները և բազմազան այլ նյութեր (տե՛ս նույն տեղում, էջ 174):

<sup>31</sup> «Gozārēš-e goṭānšēkan» – Թարգմանաբար նշանակում է «լուսաբանությամբ կասկածանքը և տարակուսանքը փարատել»: Այս գիրքը կազմված է նախաբանից (1-ին գլուխ) և երկու մասից: Առաջին մասը (2-10-րդ գլուխներ) գրադաշտական կրոնի սկզբունքների մասին է, իսկ 2-րդ մասը (11-16-րդ գլուխներ) վիճաբանության վրա է կառուցված, որտեղ իսլամը, քրիստոնեությունը, մանիքեությունը և իրեականությունը հերքվում են: Գրքի պահլավերեն բնօրինակն անհետացել է, կան միայն փազանդը (ավեստայերեն մեկնաբանություն) և սանսկրիտերեն թարգմանությունը (տե՛ս նույն տեղում, էջ 161):

<sup>32</sup> «Zand-e Vahman Yasn» – Այս գիրքը սովորաբար «Բահման Յաշտ» («Բահմանի փառաբանություն») են անվանում, որն Իրանի և Մազդայական կրոնի մասին կանխագուշակություններ է պարունակում: «Զանդե Վահման յասնի»-ից կան փազանդ և պարսկերեն տարբեր հատորներ, բայց այս գրքի պահլավերեն օրինակն ավելի հարազատ է (տե՛ս Հնշեմարտ Յ., նշվ. աշխ., էջ 307):

Այս երեք անգամ նոտա ներկայացրեց՝ պարտավորեցնելով հարգել 1921 թ. խորհրդա-իրանական պայմանագրի կետերը, մասնավորապես 6-րդ կետը, որի համաձայն՝ Իրանում վտանգավոր իրավիճակ ստեղծվելու պարագայում խորհրդային Միությունն իր անվտանգությունն ապահովելու համար իրավազոր է գործեր մտցնելու այդ երկրի տարածք<sup>33</sup>:

1941 թ. սեպտեմբերին խորհրդային գործերն անցան սահմանը և մտան Իրան: Միաժամանակ հարավից երկիր թափանցեցին անգլիական գործերը: Նույն ամսին՝ դաշնակիցների մուտքից հետո, Ռեզա շահը իրաժարվեց գահից՝ հօգուտ գահաժառանգ Մուհամմադ Ռեզա Փահլավիի:

Ստեղծվեց քաղաքական նոր իրավիճակ, որը նշանավորեց նոր ժամանակաշրջանի սկիզբը: Շահը և նորաստեղծ պետությունը դաշնակիցների հետ համագործակցության պայմանագիր կնքեցին: Իրանը պատերազմի ընթացքում հուսալի կապ եղավ նրանց համար՝ ընդդեմ Գերմանիայի: Երեք պետությունները՝ Անգլիան, ԱՄՆ-ը և խորհրդային Միությունը, խոստացան Իրանին տնտեսական օգնություն ցուցաբերել: Պատերազմի վերջնափուլում ԱՄՆ-ը շարունակում էր իր քաղաքական և տնտեսական միջամտությունը: Խորհրդային Միությունն իր հերթին փորձում էր խառնվել Իրանի ներքին գործերին: Որպես արդյունք՝ «1941 թ. աշնանը ստեղծվեց «Հեզբե թուղեյե Իրան»<sup>34</sup> (Իրանի ժողովրդական կուսակցություն) կոմունիստական տիպի կուսակցությունը, որը պատերազմի տարիներին դարձավ երկրի ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը: Հիմնականում գործելով Մոսկվայի հրահանգներով՝ այն դարձավ ազդու լծակ խորհրդային Միության ձեռքերում Իրանի նկատմամբ «ստվերային» քաղաքականություն իրագործելու գործում»<sup>35</sup>, - գրում է Վահան Բայբուրդյանը: Կուսակցության անդամները քաղաքական ակտիվ գործունեություն են ծավալում: Նրանց դրոշի տակ հավաքվում են երկրի բանվորները, առաջադեմ մտավորականները, արվեստագետներ և գրողներ:

Ակսվում է հասարակական գարթոնքի շրջան: Հնարավորություն է ստեղծվում ծանոթանալու և ուսումնասիրելու արտասահ-

<sup>33</sup> Ավելի մանրամասն տես՝ Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 631-638:

<sup>34</sup> «Հեզբե տնդեյե Իրան».

<sup>35</sup> Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 637, 638:

մանյան և ոուս գրականությունը: Ընդլայնվում ու զարգանում են մշակութային և գրական փոխադարձ կապերը: «40-ական թթ. Իրանում տեղի ունեցած դեմոկրատական շարժումների շնորհիվ բարենպաստ պայմաններ են ստեղծվում նաև պարսկական գրականության զարգացման համար: Մեծանում են այլ երկրներից նշանավոր գրողների երկերի՝ Իրան ներթափանցելու հնարավորությունները»<sup>36</sup>: Ոուս գրողների, հատկապես Անտոն Չեխովի, Մաքսիմ Գորկու, Լև Տոլստոյի լավագույն ստեղծագործությունները թարգմանվում են պարսկերեն: Այս նախաձեռնությունները դրական ներգործություն են ունենում ամբողջ պարսկական գրականության և մասնավորապես նովելի ժանրի վրա:

Ս. Շեղայաթի համար բացվում են աշխատելու և պայքարելու նոր հորիզոններ: 1944 թ. Ոուսաստանի մշակույթի տան նախաձեռնությամբ Իրանում ստեղծվում է Գրողների կոնգրեսը<sup>37</sup>: Շենց առաջին նիստում Շեղայաթն ընտրվում է նախագահական խորհրդի անդամ, իսկ նախագահ դառնում է Մուհամմադ Թաղի Բահարը: Սակայն Ս. Բահարին և նրա համախոհներին հնարավորություն չի տրվում զարգացնելու իրենց նախկին նպատակներն ու գաղափարները: Կազմակերպությունը հիմնականում կարևորում էր երիտասարդների ու ժամանակակից ստեղծագործողների երկերը և դրանց բացահայտումը համարում առաջնային: Այս աշխատանքներին զուգահեռ՝ Շեղայաթն իր պաշտպանության տակ է առնում մարդկային իրավունքները, որն էլ համարում էր իր հիմնական գաղափարախոսությունը:

Այս ամենը Ս. Շեղայաթին մղում է ակտիվ գործունեություն ծավալելու, ինչի մասին միշտ փափագել էր և ձգտել: Նա փորձում էր աշխուժացնել հայրենակիցների քաղաքական միտքը, վերացնել հասարակական հակասություններն ու արատները, հայտնաբերել մարդկանց բնականոն զարգացման հնարավորությունները: Նա համոզված էր, որ կկարողանա նոր շարժում ստեղծել գեղարվեստական գրականության մեջ, թեկուզ ու դեկապարելուն և դեկապար դերում լինելուն չէր ձգտում: Եվ նա, մի խումբ տաղանդավոր երիտասարդների գլուխ անցած, պայքարում է հանուն իրենց ստեղծագործ նպատակների իրագործման:

<sup>36</sup> Բուդայյան Ա., Մովսիսյան Ռ., Շեխոյան Լ., *Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ իրատ., 1970, էջ 197:

<sup>37</sup> Տե՛ս «Majalēyē Sērēd o sīyāh», 1346, vol. 15, no. 5, էջ 16:

Ա. Յեղայաթի ջանքերը կազմակերպությունը բարձր է գնահատում: Նրա գրական արժեքներն ու արժանիքները փութաջանորեն ներկայացվում են ժամանակակից մտավոր շոշաններին, նոր սերնդին: «Յեղայաթին այսպիսին ներկայացնելիս ծախակողմյանները, բնականաբար, առավել օգուտ էին քաղում և նրան գրավում իրենց կողմը »<sup>38</sup>, - գրում է Փարվիզ Նաբել Խանլարին:

Իրավիճակն աստիճանաբար փոխվում էր: Մի կողմից Իրանում տեղի ունեցած ժողովրդավարական շարժումները և դրանց նպատակները, մյուս կողմից կոնգրեսի կանոնագրի թելադրանքները հակասում էին Ա. Յեղայաթի՝ որպես պարզ հայրենասերի և իրատես արվեստագետի մտածելակերպին ու գաղափարներին: Այս մասին Փ. Նաբել Խանլարին «Սեփիդ օ սյահ» («Սպիտակ ու սև») ամսագրում գրում է. «Կարևորագույն խնդիրն այն էր, որ առաջին անգամ մի խումբ քաղաքական գործիչներ, ոգեշնչված իրենց կուսակցության տեսլականներից, ուզում էին հասրակության մեջ ամեն ինչի համար սահմանված կաղապարներ ստեղծել, այլ խոսքով՝ մի կաղապար էին պատրաստել, որի չափերով պետք է լիներ ամեն ինչ: Եվ սա մի բան էր, որը հակասում էր Յեղայաթի ազատ ոգուն: Այդ օրերի ծախակողմյանների տեսանկյունից արվեստ էր համարվում այն, ինչը ծառայում էր մարքսիզմի փիլիսոփայությանը: Դրանից դուրս ոչինչ արվեստ չէր համարվում: Այդ նպատակով ծախակողմյանների՝ ժամանակի մեջ քննադատ, Բեռլինում բնակվող եկան Թաքարին վերլուծել է Յեղայաթի այն ստեղծագործությունները, որոնք այդ օրերի համաշխարհային կոմունիզմին քիչ էին աղերսվում»<sup>39</sup>:

Ա. Յեղայաթը սկզբում կուսակցության քաղաքական պայքարի շարժումներին էր մասնակցում, նույնիսկ համագործակցում էր: 1945 թ. Դ. Ա. Կոմիսարովի հրավերով մեկնում է Ուզբեկստան՝ Միջին Ասիայի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակի հոբելյանական միջոցառմանը մասնակցելու<sup>40</sup>: Նա ազնիվ և միաժամանակ պատվասեր նարդ էր, և դա նրան թույլ չէր տալիս ուտնահարել իր գաղափարներն ու համոզմունքները: Ազնվությունը նրան արգելում էր իր հին ընկերներին թշնամի համարել: Կուսակցության քայլերը նրա մեջ կասկածներ

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Տե՛ս Qāsēmzādē M., նշվ. աշխ., էջ 14:

Եին առաջացնում: Հետզհետե նաև նրան համախոհ երիտասարդները գիտակցում են իրականությունը, իիասթափված իրաժարվում կուսակցության հետ որևէ համագործակցությունից և հեռանում: Փ. Նաթել Խանլարին այս մասին գրում է. «Անկասկած, հեռանալ Բողոք Ալավիից և Աբդուլ Շուեյն Նուշինից<sup>41</sup> շատ դժվար էր, բայց ավելի դաժան էր այն, որ ինչին տարիներով հավատացել և նվիրվել էր, ի դերև եղավ: Այդ պատճառով նրա մեջ անվստահությունը և հորետեսությունը ծիլեր են տալիս, և երբ ես Թեհրան վերադարձա, այդ ծիլերն արդեն հսկա ծառեր էին դարձել»<sup>42</sup>:

Կուսակցությունն ուզում էր գրողին դարձնել այն, ինչ որ իր գաղափարախոսությունն էր թելադրում:

Դայ իրականության մեջ նույն իիասթափությունն ապրեց Եղիշե Չարենցը՝ «Կարմիր գալիքին» երգեր ձոնած բանաստեղծը, ով հետագայում պիտի կյանքով հատուցեր պատմությամբ դատապարտված համակարգի նկատմամբ տածած անհիմն հավատի համար:

Կատարված իրադարձություններից հետո Ս. Հեղայաթն իրեն խիստ ճնշված և մերժված էր զգում: Եվ դա երկրից վերջնականապես հեռանալու որոշման պատճառ դարձավ: Նա զգում էր, որ ստեղծված պայմաններում ոչ միայն ստեղծագործել, այլև ապրել անգամ հնարավոր չէ: Արդեն ապագայի ոչ մի հեռանկար չէր նշմարվում:



Ս. Հեղայաթի շիրիմը Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը

<sup>41</sup>Ի դեպ, նա մինչև կյանքի վերջն ապրել է Մոսկվայում:

<sup>42</sup>«Majalēyē Sērīd o sīyāh», 1346, vol. 15, no. 5, p. 17.

1950 թ. նա վերադառնում է իր «հոգևոր հայրենիք»՝ Ֆրանսիա: Կարճ ժամանակ անց՝ 1951 թ., տարածվում է նրա մահվան բոթը: Ա. Շեղայաթը մահկանացուն կնքում է Փարիզում՝ իր բնակարանում, գաղով ինքնաթունավորման հետևանքով: Շուղարկավորությունը կատարվում է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը շատ համեստ պայմաններում, ինչպիսին իր ապրած ողջ կյանքն էր:

«Շեղայաթը ժամանակակից իրանի խորագետ և առինքնող գրողներից մեկն է: Նա թողել է նշանակալից գրական ժառանգություն: Շրաշալի գիտակ էր իրանի ժողովրդական կենցաղին, բանահյուսությանը, ազատորեն տիրապետում էր ֆրանսերենին և անգլերենին: Բազմակողմանի կրթված մարդ էր՝ գրող, երաժիշտ, արվեստագետ և գիտնական: Շեղայաթը ստեղծեց իր ոճը և իրականության պատկերման գեղարվեստական եղանակը, որին սկսեցին հետևել ժամանակակից գրողներից շատերը»<sup>43</sup>, - գրում է ռուս արևելագետ Ա. Զ. Ռոգենֆելդը:

Ա. Շեղայաթն իրանի գրական ասպարեզից հեռացավ իր ուժերի ծաղկման շրջանում, երբ արդեն ուներ իրականության խորքային ըմբռնումների և արվեստագիտական հարուստ փորձառություն, ի զորու էր ստեղծելու համամարդկային ինչեղության հանճարեղ երկեր, լի էր ստեղծագործ ավյունով և նոր մտահղացումներով: Ա. Շեղայաթի գրական երկերը, ուղեգրական հուշերը և հատկապես ազգագրական ու բանահյուսական ուսումնասիրություններն ըստ արժանվույն են գնահատվել ժամանակակից ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրացի գիտնականների ու հետազոտողների կողմից:

<sup>43</sup> Розенфельд А., Садек Хедаят, «Восточный альманах», Сборник, Выпуск первый, М., 1957, с. 237.

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ  
ՍԱԴԵԴ ՀԵՂԱՅԱԹԸ ԱՐՁԱԿԱԳԻՐ**

**Ա) ՍԱԴԵԴ ՀԵՂԱՅԱԹԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ  
(ԱԿՆԱՐԿ)**

Գրական ստեղծագործությունը հաղորդակցության միջոց է հեղինակի և ընթերցողի միջև: Դրա հիմնորոշ գաղափարները պայմանավորված են հեղինակի ներաշխարհով, գեղարվեստական արժեքը և արժանիքները՝ նրա տաղանդով, կարողություններով, ժամանակաշրջանը, պատմական իրադարձությունները, հասարակական գործոնները, մշակութային և գրական միջավայրը կերպավորելու, իմաստավորելու նրա բնական ձիրքով: Բացի արտաքին ազդակներից, հեղինակի լեզվաոճական ու ժանրային նախասիրություններն են ձևավորում տվյալ ստեղծագործողի անհատականությունը՝ ինքնատիպ դարձնելով նրա ստեղծագործությունը:

Գեղարվեստական արձակը մարդու ներաշխարհի, նրա զգացմունքների, հույզերի ներքին ալեկոծությունների արտացոլանքն ու գեղարվեստական իմաստավորումն է: Արևմուտքի մշակութային արժեքների և արևելյան խառնվածքի ու ինքնատիպության համադրմամբ Հեղայաթը ստեղծել է մի յուրահատուկ և անկրկնելի ստեղծագործություն, իանձարի և իմաստության մի համաձուլվածք, որով. մտել է համաշխարհային հռչակ վայելող մշակութային դեմքերի շարքը:

Մեր ուսումնասիրության շրջանակում հետաքրքրական խնդիր է գիտության և գեղարվեստական գրականության հարաբերակցությունը, օրինակ՝ 9-12-րդ դդ. գիտական, փիլիսոփայական, պատմական, կրոնական և այլ թեմատիկայով ստեղծագործությունները, որոնք հանգ ու չափ չունեին, չեին ընդունվում որպես գեղարվեստական երկեր և պարզապես դիտվում էին որպես արձակ, ինչպես հանրահայտ «Գոլեստան»-ը, իբն Սինայի արձակ երկերը և այլն:

Այսպիսով, գիտական գրականությունը գեղարվեստական արձակից չի սահմանազատվել: «Պարսկական գրականության մեջ արձակը՝ եվրոպական ըմբռնումով, այն էլ՝ գեղարվեստա-

կանը, անկախ բարոյախոսական միտումներից, հազվագյուտ երևույթ է»<sup>44</sup>:

Ժամանակի ընթացքում արձակը զարգացման նոր աստիճանի է հասնում: Գիտական մոտեցմանը զուգահեռ երևան են գալիս ստեղծագործության փոքր ձևեր՝ պատմվածք, հեքիաթ, առակ: Բազմապիսի դժվարություններ հաղթահարելով՝ նախապատրաստվում է այն կենսահողը, որի վրա հետագայում պետք է սկզբնավորվեին և զարգանային ավելի լայն կտավի գործերը՝ նովելը, պատմվածքը, վիպակը և վեպը: Անկասկած, պարսիկ մտավորականներն այդ դժվարությունների հաղթահարման ուղիներն արտասահմանյան նովելիստների ստեղծագործությունների յուրացման մեջ էին փնտրում. «Ժամրի զարգացման վաղ շրջանում արտասահմանյան նովելագրության լավագույն երկերին ծանոթանալը վարպետության դպրոց դարձավ պարսիկ սկսնակ ստեղծագործողների համար»<sup>45</sup>:

Օտար լեզուների տիրապետող մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ թարգմանվում են արտասահմանյան հեղինակների՝ Վիկտոր Շյուգոյի, Ալֆոնս Ռուեի, Ալեքսանդր Դյումայի, Վոլտերի, Անատոլ Ֆրանսի, Մաքսիմ Գորկու, Ալեքսանդր Պուշկինի, Լև Տոլստոյի, Անտոն Չեխովի և այլոց՝ համաշխարհային հոչակ վայելող երկերը: Ուշագրավ է այն փաստը, որ պարսիկ թարգմանիչներն ընտրում են այնպիսի գործեր, որոնցում ներկայացվում են պարսկական հասարակությանը հոգեհարազատ և համահունչ թեմաներ: Թարգմանություններից բացի, գրականության զարգացման ասպարեզում դրական դերակատարություն է ունենում հրապարակախոսությունը:

Գեղարվեստական գրականության ասպարեզում լայնահուն և խորքային ըմբռնումների հասած Ս. Շեղայարն իր ժամանակի լավագույն արձակագիրներից մեկն է, ով համեմատաբար կարծ ժամանակահատվածում համաշխարհային ճանաչում ձեռք բերեց: Նրա աշխատասիրության և մտավոր բարձր թրիչքի վառ ապացույցն իր ստեղծագործություններն են:

Նա առաջատարներից էր կարծ պատմվածքի՝ նովելի ժանրում և իր երկերը ստեղծում էր հասարակությանը հասկանալի ու մատչելի, պարզ լեզվով, ժողովրդական բառ ու բանի,

<sup>44</sup> Մահյūb M. J., *Adabyāt-e Irān*, 3<sup>rd</sup> print, Tehran, ēntēš. Čēšmē, 1386, p. 50.

<sup>45</sup> Բուդաղյան Ա., Մովսիսյան Ր., Շեխոյան Լ., նշվ. աշխ., էջ 194:

ոճերի օգտագործմամբ: Եվրոպայում անցկացրած տարիները նրան հնարավորություն են տվել առավել համակողմանիորեն յուրացնելու արևմտյան արժեքները և դրանք ներառելու իր ստեղծագործության մեջ: Չնայած այս հանգամանքին՝ նրա երկերում կենտրոնական տեղ են գրավում հայրենի երկիրը, իրանի հասարակ ժողովուրդն ու նրա կենցաղը, որոնց էլ նվիրել է իր լավագույն պատմվածքները: Յեղինակի ուշադրության կենտրոնում են նաև իրանի նախահալամական շրջանի պատմությունը և մշակույթը, որոնց նա անդրադառնում է բարեխաղությամբ և բարձր պատասխանատվությամբ:

Անհուն սերը գրականության հանդեպ Յեղայաթին մղում է ավելի շատ զբաղվելու ընթերցանությամբ: Նա առավելապես նախընտրում էր արտասահմանյան գրողներ Էդգար Ալան Պոյի, Գի դը Սոպասանի, Ֆրանց Կաֆկայի և այլ դասականների ստեղծագործությունները: Յեղայաթն առաջինն էր, որ Ֆ. Կաֆկայի և Ա. Չեխովի փոքր պատմվածքները կամ նովելները թարգմանեց պարսկերեն: Ս. Յեղայաթը և նրա ժամանակակից մոդեռնիստներ Մ. Զամալզադեն, Բ. Ալավին, Շին Փարթով Ազամը և ուրիշներ սկսում են իրենց ստեղծագործությունները և թարգմանությունները տպագրել պարբերական մամուլում:

1920-ական թթ. երկրում ստեղծված ճնշող, բռնակալ տիրական և ռեակցիոն հետադիմական պայմաններում, սակայն, հասարակական մտքի զարգացման գրեթե բոլոր ոլորտներում լճացում է տեղի ունենում, ինչը բացասաբար է ազդում գրական կյանքի նոր վերելքի վրա: Պետք է նկատել, որ, այնուամենայնիվ, ստեղծված իրադրությունը երկար չի տևում:

1930-ական թվականներին արդեն գրականության մեջ գերիշխող ժանրերը՝ վեպը, նովելը և պատմվածքը, զգալի զարգացում ապրելով, հասարակությանը հուզող խնդիրներն արծարծելու և լուծելու նոր հնարավորություն են ընձեռում: Գեղարվեստական գրականությունը, հատկապես երիտասարդ հեղինակների ստեղծագործությունները, առաջընթացի ճանապարհն է կերտում: «Այդ տարիներին գրականության ասպարեզ իջան Ս. Յեղայաթը, Բ. Ալավին, պարսից արձակի համընդհանուր ճանաչում ստացած վարպետները: Նովելը, պատմվածքը ելք են բա-

ցում դեպի ժամանակի սոցիալ-քաղաքական խնդիրները»<sup>46</sup>: Ս. Յեղայաթը պատկանում էր այն սերնդին, որի ներկայացուցիչներն առաջին անգամ փորձ են անում ստեղծագործելու կարծ պատմվածքի ժանրում:

Ս. Յեղայաթը Ֆրանսիայում իր ուսանողական տարիներին՝ ինքնասպանության անհաջող փորձից հետո (1929 թ.), գրում է իր առաջին կարճ պատմվածքը՝ «Զենդե բե գուռ»-ը, ապա՝ «Դաջի աղա», «Ալ բարսիաթ օլ-էսլամիաթ ֆել բելադ օլ-ֆարանցիե» ստեղծագործությունները և իր գլուխգործոցը՝ «Բուժե քուռ»-ը:

«Զենդե բե գուռ»-ը առաջին ժողովածուն (1930) բաղկացած է ութ պատմվածքներից՝ «Աբզի խանում», «Դավուդե գուժփոշթ» («Սապատավոր Դավուդը»), «Ասիրե ֆարանսավի» («Ֆրանսիացի գերին»), «Սաղեն», «Աթաշ փարասթ» («Կրակապաշտը»), «Մորդեխարիա» («Գիշակերները»), «Աբե զենդեգի»<sup>47</sup> («Կենարար ջուրը») և «Զենդե բե գուռ»:

Ժողովածուի խորագիրը կրող «Զենդե բե գուռ» պատմվածքում Յեղայաթը նկարագրում է պարսիկ մի երիտասարդի, ով ապրում է Ֆրանսիայում և, չունենալով ապագայի հեռանկար, կյանքի ծաղկուն շրջանում միայն մահվան մասին է խորհում: Տղան անհիմն պատճառաբանություններով ինքնասպանության մի քանի անհաջող փորձերից հետո վերջ է տալիս իր կյանքին:

Այս պատմությունը որոշ չափով ինքնակենսագրական է: Պատմվածքի սկզբում կարդում ենք «Մի խենթի հուշագրություն»<sup>48</sup>, իսկ ավարտին հեղինակն իր մտահոգությունն է հայտնում, որ հուշագրությունները կարող են ընկնել մարդկանց ձեռքը. «Խենթ, գնա՛, թուղթ ու մատիտը դեն նետի՛ր... պատրի՛: Չլինի՞ թե այս դատարկությունները մեկի ձեռքը ընկնեն, ի՞նչ կմտածեն քո մասին.... Այդ հուշագրությունները մի շարք թղթերի հետ նրա սեղանի գզրոցում են գտնում: Բայց ինքն անշունչ ընկած էր անկողնում»<sup>49</sup>:

<sup>46</sup> Մովսիսյան Ր., Շեխոյան Լ., ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ (1941-1978), Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 56, 57:

<sup>47</sup> «Ābjī xānūm», «Hājī Morād», «Dāvūd-e gūžrošt», «Asīr-e farānsavī», «Mādlēn», «Ātaš parast», «Mordēxārhā», «Āb-e zēndēgī».

<sup>48</sup> Hēdāyat S., Majmū’ēyī az āsār-e Sādēq Hēdāyat, gērdāvarandē Bahārlū M., 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Tarh-e nōw, 1372, p. 43.

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 64:

Ս. Քաքուզյանի գրքում կարդում ենք, որ Ս. Յեղայաթն իր ընկերոջը՝ Թ. Ռազավին, գրած նամակում ցանկություն է հայտնում, որ վերջինս գրի առնի «Զենդե բե գուռ»ի հուշերը, որը մի խենթության բացատրություն է<sup>50</sup>:

«Զենդե բե գուռ» պատմվածքում հեղինակը խոստովանություն է անում. «Մահից չեմ վախենում, ընդհակառակը՝ մի տեսակ հիվանդություն, յուրահատուկ խենթություն է իմ մեջ առաջացել, որը մագնիսի նման ձգում է մահվան... Ո՞չ, ոչ ոք չի որոշում ինքնասպան լինել. ինքնասպանության գաղափարը ոմանց խառնվածքի և էռթյան մեջ կա ի սկզբանե: Այո՛, յուրաքանչյուր մարդու ճակատագիրն իր ճակատին է գրված. ինքնասպանության հակումն էլ դրա հետ է ծնվում»<sup>51</sup>:

Նշված ժողովածուի պատմվածքներից մեկը կոչվում է իր հերոսուհու անվամբ՝ «Աբքի խանում», որը նույնպես դրամատիկ ավարտ է ունենում: Պատմությունը հյուսվում է երկու քույրերի ճակատագրի շուրջ: Աբքի խանումն ամուսնանալու ոչ մի հույս չի փայփայում, որովհետև կանացի գեղեցկությունից գուրկ, անչափ տգեղ աղջիկ է: Ընտանիքի բոլոր մտածմունքները նրա մասին են, քանի որ նրա փոքր քույրն ամուսնացել է, իսկ ինքը տանն է մնացել: Պատմվածքը Աբքի խանումի ողբերգական ինքնասպանությամբ է ավարտվում: Այսպես քանի՛ անգամ է Ս. Յեղայաթը կնոջ ճնշված վիճակի վրա հասարակության ուշադրությունը իրավիրել: Այստեղ Ս. Յեղայաթը ներկայացնում է քաղաքական, բարոյական, կրոնական, նաև կանանց ազատության սահմանափակման խնդիրները:

Ս. Յեղայաթի պատմվածքներում կանայք տոգորված են ապրելու, սիրվելու ցանկությամբ: Սակայն սոցիալական և հասարակական դաժան ու ծանր ճնշումները նրանցից շատերին գրկում են այդ հաճույքից:

Այդ ժամանակի գրողների մեծ մասի ուշադրության կենտրոնում կանանց բարոյահոգեբանական խնդիրներն էին: Նման ստեղծագործություններում դատապարտվում են այն սովորույթներն ու ավանդույթները, որոնք կանանց գրկում են իրենց իրավունքներից: Ս. Յեղայաթի ստեղծագործություններում կանայք տարբեր խավերի ներկայացուցիչներ են: Գրողը՝ իբրև իրակա-

<sup>50</sup> Տե՛ս Կատուզյան Մ., նշվ. աշխ., էջ 50:

<sup>51</sup> Hēdāyat S., Majmū'ēyī az āsār-e Sādēq Hēdāyat, p. 54.

նությունը գեղարվեստորեն պատկերող արվեստագետ, նախ՝ բժախնդրությամբ և խորությամբ դիտարկում, ուսումնասիրում է այդ իրականությունը, հստակորեն պատկերացում է կազմում նրա մասին, ապա՝ արվեստի օրենքներով ստեղծում գեղարվեստական մի նոր իրականություն։ Նա ոչ միայն կանանց ստրկացումը, նվաստացումը և դժբախտությունն է նկարագրում, այլև հետաքրքրում է նրանց ցոփ ու շվայտ կյանքով, ամուսնական դավաճանությամբ։ Կանայք պատկերվում են իրենց քարի (պարկեշտ) և չար (անպարկեշտ) կերպարներով։ Նրանք հաճախ օտար և չճանաչված են մնում. հերոսներն իրենց իդեալների կնոջը փնտրում և այդպես էլ չեն գտնում։ Ս. Շեղայաթի՝ կանացի հաջողված կերպարներով աչքի ընկնող պատմվածքներից են՝ «Լալե», «Ալավիե խանում», «Աբջի խանում», «Քաթիա», «Մաղլեն», «Սամփինգե» (Փրանսերեն), «Զանի քե մարդաշ րա գոմ քարդ» («Ամուսնուն կորցրած կինը»), «Բոնբասթ»<sup>52</sup> («Փակուղի») և այլն։

«Զենդե քե գուռ» ժողովածուի մյուս պատմվածքներում՝ «Դավուդե գումփիոշթ» և «Մորդեխարիա», քննվում են հասարակության, մարդկային իրավունքներին վերաբերող խնդիրներ, կանանց ճնշված վիճակը պարզաբանող հարցեր։ Ս. Շեղայաթի որոշ ստեղծագործություններ դրամատիկ իրավիճակներ ստեղծելու վարպետության օրինակներ են, որոնք դրանց բեմականացման մեջ հնարավորություններ են ընձեռում։ Դրանք, ըստ Էության, դրամաներ են և հեշտությամբ վերածվում են բեմադրության սցենարների։

Ս. Շեղայաթի ամենից արհամարիված ու դժբախտ հերոսներից է «Դավուդե գումփիոշթ» նորավեպի գլխավոր հերոս Դավուդը։ Շեղինակն այստեղ ներկայացնում է հասարակության մեջ տեղ գտած մեկ այլ խնդիր՝ ֆիզիկական անլիարժեքության պատճառած ցավը։

Ս. Շեղայաթը նկարագրում է Դավուդի անբարետես կերպարանքն ու անհամաշափ մարմնամասերը, տալիս նրա անատոմիական ուրվապատկերը՝ խոշոր գլուխ, բարակ շրթունքներ, բարակ, աղեղնածև հոնքեր, ներս ընկած կոպեր, գունատ դեմք, ցցված այտոսկրեր, ուռած ու բարձրացած կրծքի և նիհար ուսերի

<sup>52</sup> «Lälē», «'Alavīyē xānūm», «Ābjī xānūm», «Kātīyā», «Mādlēn», «Sāmpīngē», «Zanī kē mardaš rā gom kard», «Bonbast».

Վրա վիզը չէր երևում, իսկ երկար ձեռքերն ու վերև բարձրացած թիկունքը տեսանելի էին հեռվից: Քաղաքի փողոցներով Դավուդը քայլում ու մտածում է իր ճակատագրի մասին, թե ինչպես փոքր հասակից շարունակ մարդկանց խղճահարության կամ ծաղրի առարկա է դարձել: Նա երազում է մի այնպիսի օրենքի հռչակում, որը կարգելեր արատավոր մարդկանց ամուսնությունը, որպեսզի նրանք ծնունդ չտան արատավոր զավակների: Իր քույր-Եղբայրներից, որոնք բոլորն էլ ֆիզիկական արատներով էին ծնվել՝ կույր, համր կամ անդամալույծ, և ոչ մեկը ողջ չէր մնացել:

Նա դասընկերների հետ խաղալ ու զվարճանալ չէր կարող, բայց մյուսներից տարբերվելու համար ուսուցիչների հանձնարարությունները լավ էր կատարում, անգամ մի քանի ծույլ աշակերտներ նրանից էին օգտվում: Նա նույնիսկ ամուսնանալու հույսեր էր փայփայում, թեև սիրած աղջիկը հեգնում էր. «Ի՞նչ է, աշխարհում էլ մարդ չկա»<sup>53</sup>, որ էս կուզիկին առնեմ»<sup>53</sup>: Կանայք նրա հետևից ծաղրալից խոսքեր էին ասում. «Կուզիկին տեսե՛ք»<sup>54</sup>:

Նրան հանդիպած միակ անկեղծ բանը հիվանդ ու մահամերձ շան պարզ ու շիտակ նայվածքն էր: Երկուսն էլ իրենց դժբախտ ու ավելորդ էին զգում:

«Մորդեխարիա» պատմվածքում Յեղայաթը նկարագրում է այնպիսի տեսարաններ, որոնք հիշեցնում են զազանային բնագդները: Դեռ ամուսնուն՝ Յաջիին, հողին չհանձնած՝ նրա երկու կանայք վիճում են կտակի, ունեցվածքի և դրան տիրանալու շուրջ: Այդ պահին հանկարծ Յաջին պատանքով դռնից ներս է մտնում: Նա սրտի կաթված էր ստացել և մեռած էր համարվում, սակայն հողին հանձնելուց առաջ դագաղի մեջ ուշքի է գալիս և վերադարնում տուն: Շփոթված կանանցից Նարգեսը Յաջիի բանալիների խուրձը և գանձանակից վերցրած հարյուր թումանը նետում է նրա կողմը՝ բացականչելով. «Ո՛չ, ո՛չ, ինձ մոտ չգաս»<sup>55</sup>: Մյուսը՝ Մանիժեն, ամուսնու արհեստական ատամներն ու հինգ թումանն է փորձում վերադարձնել նրան: Մանիժեն դժգոհում է, թե ինչու գերեզման փորողները ժամանակին մահացածին չեն քաղում:

<sup>53</sup> Hēdāyat S., *Majmū'ēyī az āsār-e Sādēq Hēdāyat*, p. 75.

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 97:

Պատմվածքը հագեցած է պարսկական ժողովրդական բառ ու բանով, ասացվածքներով և այլաբանական արտահայտություններով: Չնայած Յեղայաթի պատմվածքներում դրանք շատ են, սակայն իեղինակը կարողանում է այնքան վարպետորեն ներկայացնել պատմվածքների կառուցվածքն ու սյուժեն, որ խուսափում է միապաղաղությունից:

«Ասիրե ֆարանսավի» նորավեպում Յեղայաթը գերությունից ազատված մի երիտասարդի հուշերն է պատմում, իսկ «Աթաշ փարասթ»-ը Ս. Յեղայաթի՝ նախահսլամական ժամանակաշրջանի նկատմամբ նախասիրության դրսեորումն է: «Մաղլեն»-ը առանձնանում է իեղինակի առաջին սիրո մարմնացյալի ներկայացմամբ: Այն գովել է մի ժամանակահատվածում, երբ Յեղայաթը Ֆրանսիայում ծանոթացել էր այդ աղջկա հետ:

Ս. Յեղայաթի այս ժողովածուի պատմվածքներից միայն «Արե զենդեզի»-ն է, որ հեքիաթի ժանրին է պատկանում: Եվ ինչպես դասական հեքիաթի սկզբունքն է հուշում, այն ներկայանում է չարի և բարու պայքարը, որում միշտ բարին է հաղթում. «Շղթաները քանդեցին, զորքի հրամանատարին սպանեցին, Յամիշեբահար<sup>56</sup> (Մշտագարուն) երկրի հետ բարեկամության դաշինք կնքեցին և իրենց երկրները վերադարձան»<sup>57</sup>: Այս մասին կարդում ենք նաև «Ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ (1941-1978)» գրքում. «Յեղայաթը իր ստեղծագործությունը զարգացրել է հեքիաթին բնորոշ ֆարուլային կանոնով: Այս գործում կենարար ջուրը ճշմարտության խորհրդանիշն է: Նրա օգնությամբ հեքիաթի ավանդական դրական հերոսը՝ կրտսեր Եղբայր Ահմադաքը, օգնում է ժողովրդին գիտակցել իր վիճակը, դրդում նրան պայքարել ազատության, լավագույն կյանքի համար»<sup>58</sup>:

Ի տարբերություն ավանդական հեքիաթի՝ հերոսն այստեղ հաղթանակից հետո ընտանիքի հետ իր քաղաքն է վերադառնում:

Ս. Յեղայաթի՝ խորհրդավոր, առեղծվածային իմաստներ պարունակող պատմվածքներից է «Մե ղաթրե խում»-ը («Երեք կաթիլ արյուն»), որը 1932 թ. իրատարակվել է որպես ժողովածու

<sup>56</sup> Hamīšēbahār.

<sup>57</sup> Hēdāyat S., *Nēvēštēhāyē parākandē*, ed. H. Qāēmyān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Āzādmēhr, 1385, p. 230.

<sup>58</sup> Մովսիսյան Յ., Շեխոյան Լ., Աշվ. աշխ., էջ 62:

և բաղկացած է տասնմեկ կարճ պատմվածքներից՝ «Գերդար» («Զրապտույտ»), «Դաշ Աքոլ», «Այնեյե շեքասթե» («Կոտրված հայելի»), «Սուրաթաքհա» («Դիմակներ»), «Թալարե ամորգեշ» («Թողություն հայցողները»), «Լալե», «Չանգալ» («Մագիլ»), «Մարդի քե նաֆսաշ րա քոշթ» («Եռթյունը սպանած մարդը»), «Մոհալել» («Միջնորդ ամուսին»), «Գոջասթե դեժ»<sup>59</sup> («Անիծյալ ամրոցը») և «Սե դաթրե խուն» («Երեք կաթիլ արյուն»):

«Սե դաթրե խուն» պատմվածքում ներկայացվում է հեղինակի անկումային և խորհրդապաշտական տրամադրությունը: Միջավայրը՝ խորհրդավոր, և խնդիրները բարդ ու անլուծելի են, իսկ պատմվածքի վերջն ինչ-որ մեկի կյանքի ավարտն է խորհրդանշում:

«Սե դաթրե խուն»-ը ևս առեղծվածային պատում է: Ինչպես Յեղայաթի մյուս ստեղծագործությունները (օրինակ՝ «Բուժե քուռ»-ը), այս երկը ևս մի քանի անգամ կարդալուց հետո միայն կարելի է հասկանալ հեղինակի քուն մտահղացումները... «Ենթադրենք կարդացիր և մի քան էլ հասկացար, քայց գործը դրանով չի ավարտվում: Ժամանակի ընթացքում թե՛ դու ես փոխվում, թե՛ քո ընթանումներն ու ընկալումները, այնպես որ «հաճախ», ինչպես գիտնականներն են ասում, պետք է նորից սկզբից սկսել»<sup>60</sup>, - գրում է գրականագետ Մահմուդ Ենայաթը:

«Բուժե քուռ» պատմվածքը համանման երկու մասից է բաղկացած: Առաջին մասում դեպքերը զարգանում են ներկաժամանակում, իսկ երկրորդում հեղինակն իր անցյալն է վերհիշում: Պատմվածքի հերոսներն ընդամենը մի քանի «վրձնահարվածով» են նկարագրվում, և նրանց կերպարանքի, բնավորության և վարքագծի մասին ոչ մի խոսք չի ասվում:

«Սե դաթրե խուն» պատմվածքում հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Նազի կոչվող կատվին և նրան առնչվող անցքերն է նկարագրում, քանի որ կատուն այս պատմվածքում առանցքային դեր և նշանակություն ունի: Նմանօրինակ բոլոր պատմվածքներում Ս. Յեղայաթի հեղինակային ենթակայական մոտեցումներն անժիստելի են:

<sup>59</sup> «Sē qatrē xūn», «Gērdāb», «Dāš Ākol», «Āynēyē šēkastē», «Sūratakħā», «Talab-e āmorzēš», «Lālē», «Čangāl», «Mardī kē nafsaš rā košt», «Mohalēl», «Gojastē dēž».

<sup>60</sup> Qāsēmzādē M., op. cit., p. 224.

«Գերդաբ»-ը տիսուր և հուզիչ մի պատմություն է, որը տեղ է գտել այս ժողովածուում: Յոմայունը և Բահրամը մանկության ընկերներ էին: Յոմայունը չի հավատում, որ իր ընկերը մահացել է: «Բայց այն, ինչ ամենից շատ է նրան տանջում, այն միտքն է, որ իրենք այնքան մտերիմ ու անկեղծ էին, որ ոչինչ իրարից չէին թաքցնում, սակայն Բահրամն ինքնասպանության որոշումն իրենից գաղտնի է պահել, իր հետ չի կիսվել: Ի՞նչն էր պատճառը. խենթացե՞լ էր, թե՝ ընտանեկան գաղտնիք ուներ»<sup>61</sup>: Բահրամն իր ամբողջ ունեցվածքը կտակում է Յոմայունի աղջկան: Յոմայունը շատ ուշ գտնում է ծրարում եղած մի ուրիշ նամակ, որում Բահրամը խոստովանում է, որ սիրել է նրա կնոջը՝ Բադրիին, և որ պեսզի չդավաճանի ընկերոջը, որոշել է ինքնասպան լինել: Այս դեպքը Յոմայունի ընտանիքի քայլայման և փոքրիկ աղջկա մահվան պատճառ է դառնում:

Նշված ժողովածուի գլուխգործոցը «Դաշ Աքոլ» պատմվածքն է: Դաշ Աքոլը վեհանձն, առնական և խորաթափանց մարդու կերպար է, ով ապրում է այնպիսի միջավայրում, որտեղ չկան մարդասիրություն, առողջ բանականություն: Շրջապատի անտարբերության և սառնասրտության հետևանքով ի վերջո տեղի է ունենում ողբերգություն, որովհետև ոչ ոք ժամանակ չուներ ուշադրություն դարձնելու Դաշ Աքոլի զգացմունքներին և իրական սիրուն: Պատմվածքում խտացված են հեղինակի գեղարվեստական ոճի, մտքի, բարձր ճաշակի այն գծերը, որոնցով մի նովել կարող է անմահանալ:

Ս. Յեղայաբի՝ դրամատիկ իրադարձություններով լի երկերում, ինչպիսին է «Թալարե ամորգեշ»-ը, բացահայտվում են մարդկային թշվառության և դժբախտության պատճառները: Խոսքը վերաբերում է հոգեկան այն վերքերին, որոնք անբուժելի են թվում և տակնուվուա են անում մարդու սիրտը: Յեղինակը փորձում է ելքեր ցույց տալ: Մի խումբ հանցագործներ մեղքերի թողության համար որոշում են ուխտի գնալ սրբերի շիրիմներին: Այստեղ հեղինակը քննադատում է նաև իսլամիստ հոգևորականներին, որոնք իսլամական օրենքների իրագործողներն են: Նրանք, առաջնորդվելով իրենց շահերով, անտեսելով հանցագործների և մարդասպանների մեղքերը, թողություն են տալիս նրանց մեղքերին:

<sup>61</sup> Hēdāyat S., Majmū'ēyī az āsār-e Sādēq Hēdāyat, p. 123-124.

1933 թ. լույս է տեսնում Ս. Շեղայաթի մեկ այլ ժողովածու՝ «Ասյե ռոշան»-ը («Լուսաստվեր»), որում ներառված է յոթ պատմվածք՝ «S. G. L. L.», «Արուսաքե փոշթե փարողե» («Տիկնիկը վարագույրի հետևում»), «Զանի քե մարդաշ րա գոմ քարդ» («Ամուսնուն կորցրած կինը»), «Աֆարինգան»<sup>62</sup> («Աղոթքներ»), «Շաբհայե Վարամին» («Վարամինի գիշերները»), «Ախարին լարխանդ» («Վերջին ժամ»), «Փեղարանե Աղամ»<sup>63</sup> («Աղամի հայրերը»):

Դրանցից հատկանշական են «S. G. L. L.» և «Արուսաքե փոշթե փարողե» պատմվածքները: «S. G. L. L.»-ն գիտաֆանտաստիկ ժանրային հատկանիշներ ունեցող պատմվածք է: Անցքը տեղի է ունենում ապագայում՝ ներկա ժամանակահատվածից երկու հազար տարի հետո: Մի ժամանակաշրջան, որտեղ կյանքն անսահման մոդեռնացած է, և բավարարված են մարդու կենցաղային բոլոր կարիքները: Բնության բոլոր բարիքները մարդու տրամադրության տակ են, երջանիկ ապրելու բոլոր պայմաններն ապահովված են: Սակայն միաժամանակ կա նաև դժգոհություն աննպատակ և անիմաստ կյանքից: Իդեալական կյանքը և տեխնիկական գերհագեցածությունը մարդուն չեն երջանկացնում. նա ապրում է միայն գոյատևելու համար և ի վերջո փրկությունը մահվան մեջ է փնտրում: Շեղինակը նկարագրում է մի ժամանակաշրջան, որտեղ չկա կարիք, բայց և չկա ապրելու դրդապատճառ, իսկ ինքը տվյալ պայմաններում տեսնում է մարդկանց, ովքեր տառապում են ընչազրկությունից և կյանքի ծանր պայմաններից. ծայրահեղությունից ծայրահեղություն:

«Արուսաքե փոշթե փարողե» պատմվածքի հերոսը հեղինակի հոգեբանության կրողն է: Ընտանիքը Միհրդատի ուղեղը լցնում է խրատներով և բարոյականության դասեր տալիս, ապա՝ ուղարկում արտասահման: Ֆրանսիայում նա միջնակարգ դպրոց

<sup>62</sup> «Āfarīngān» / «Āfarīn»-ը կազմված է «farī» արմատից ու հիմքից, որ նշանակում է «սիրել, գովերգել, գոհություն հայտնել»: «Āfarīngān»-ը զրադաշտականների այն աղոթքներից է, որ կարդում են տարվա ընթացքում և տարբեր առիթների՝ թե՛ տոններին և ուրախ առիթներին, թե՛ սգո հանդեսներին: Աղոթողը Ահուրամազդայից խնդրում է ողջերին երջանկություն, խաղաղություն և ուրախություն, իսկ մահացածներին՝ մեղքերի թողություն և հոգու խաղաղություն (տե՛ս ՀԱՌԻԴԱՐԻ J., նշվ. աշխ., էջ 117-118):

<sup>63</sup> «Sāyē rošan», «S. G. L. L.», «'Arūsak-e pōšt-e pardē», «Zanī kē mardaš rā gom kard», «Āfarīngān», «Šabhāyē Varāmīn», «Āxarīn labxand», «Pēdarān-e Ādam».

է հաճախում: Ամոթխածության համար տղան ծաղրի է ենթարկվում դասընկերների կողմից: «....քսանչորս տարեկան էր, բայց տասնչորս տարեկան եվրոպացու չափ փորձառություն, դաստիարակություն և ճարպկություն չուներ, միշտ տխուր էր»<sup>64</sup>:

Յայրենիքում մոր միջամտությամբ մի աղջկա հետ է նշանվում, որին, սակայն, երբեք չէր տեսել: Ոչ մի կնոջ հետ բնավսերտ շփում չէր ունեցել: Մի օր փողոցով անցնելիս խանութում շատ գեղեցիկ տիկնիկ է տեսնում, սիրահարվում և գնում է այն: Տիկնիկն արձանի չափ մեծ է լինում և գրավում է այն կնոջ տեղը, որին երազում էր ինքը: Տիկնիկը չի բողոքում, չի խոսում, և Միհրդատը նրա ներկայությունից չի ամաչում: Իրան վերադառնալիս նա տիկնիկը վերցնում է իր հետ: Նշանածը բացահայտում է տիկնիկի հետ կապված գաղտնիքը: Փորձում է նրան նմանվել, որպեսզի գրավի տղայի ուշադրությունը: Ի վերջո Միհրդատը որոշում է ընտրություն անել տիկնիկի և նշանածի միջև: «....պետք է տիկնիկից խռովել և նրան սպանել, ինչպես մարդ են սպանում»<sup>65</sup>: Աղջիկը, օգտվելով տղայի բացակայությունից, անտեղյակ նշանածի մտադրությունից, գալիս և տիկնիկի տեղն է զբաղեցնում. «....սա արձանը չէ, Դերախշանդեն է՝ արյան մեջ թաթախված»<sup>66</sup>:

Ս. Յեղայաթը իրանի զարթոնքի շրջանի գեղարվեստական գրականության նորարար, եզակի և բացառիկ հզոր հեղինակ-ներից է, որը փայլատակում է իր նախասիրած գրական ժանրի՝ կատակերգության և զավեշտի անմար օրինակներով: Նրա զվարճաբանությունն իր բնականությամբ զարմանք էր պատճառում դեռևս մանկության տարիներից: Ս. Ֆարզադը՝ Ս. Յեղայաթի շատ մտերիմ ընկերներից և «Ոոբե» խմբակի անդամներից մեկը, նրա մասին այսպես է արտահայտվում. «Յեղայաթն այնքան խորաթափանց, սրամիտ, կատակաբան և վայելչախոս է, որ, իմ կարծիքով, ամենահումորային և երգիծական պարսից գրականությունն ինքն է ստեղծել»<sup>67</sup>: Երգիծելու կարողությունը և հումորի զգացումը Յեղայաթի խառնվածքի և բնավորության գծերից են: Դեռևս «Ոոբե» խմբակի գոյության շրջանում Ս. Ֆարզադի

<sup>64</sup> Hēdāyat S., *Majmū'ēyī az āsār-e Sādēq Hēdāyat*, p. 247.

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 257:

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», 1346, vol. 15, no. 32, p. 8.

համագործակցությամբ նա գրում է «Վաղ-վաղ սահար» պամֆլետը և հրատարակում է 1934 թ.: Գրքի հրատարակությունից հետո՝ 1935 թ., Ս. Շեղայաթին կանչում են կենտրոնական ոստիկանություն<sup>68</sup>: «Վաղ-վաղ սահար»-ը գրված է գրույցի ձևով և բաղկացած է 35 «ղազիե»<sup>69</sup>-ից (դրվագ), որոնցում անդրադարձ է կատարվում տվյալ ժամանակի գրական կամ պետական գործիչներին, բացահայտվում են նրանց բարոյական կերպարը և խեղված էռթյունը: Մ. Ֆարզադն այս երկի առնչությամբ «Սեփիդ օ սյահ» ամսագրում գրում է. «Որոշ ժամանակ անց սկսեցինք երկուսով գրել: Ավելի ճիշտ՝ չենք գրում, այլ զվարճանում էինք: Շետզինետե մեր աշխատանքն ավելի լրջացավ, այսինքն՝ որևէ մեկին ծաղրուծանակի ենթարկելու փոխարեն, այդ մարդու առանձնահատկությունները զուգադրելով մեկ ուրիշի հետ, ի հայտ բերելով ընդհանուր գծերը, այդ ամենը երգիծանքի վերածեցինք: Այս գործն այնքան շարունակվեց, մինչև որ մի օր Շեղայաթն առաջարկեց դուանք հրատարակել»<sup>70</sup>: Նրանց գրական խմբակն առհասարակ խիստ հակադրվում էր դասական գրականագիտության ներկայացուցիչներին, որոնք պահը բաց չեն թողնում նորերի ճանապարհը խոչընդոտելու համար: Այս իրադարձությունների բերումով ստեղծվում է «Վաղ-վաղ սահար» պամֆլետը:

Բերենք մի քանի հատված Ս. Շեղայաթի և Մ. Ֆարզադի վերոնշյալ երկի «Եխթելաթե Նոմչե»<sup>71</sup> («Նոմչեի գրույցը») դրվագից: Շինծու և իրականությունն աղավաղող երկերով հայտնի հեղինակների մասին հանդես եկող գիտնականների հասցեին այսպես են արտահայտվում. «Պատմությունը գիտական ուսումնասիրության ճյուղերից մեկն է և խորքային մտածողություն է պահանջում: Լավ է՝ մի քիչ օտար լեզվին տիրապետես ... Եթե ստեղծելու և հայտնաբերելու շնորհք չունես, ապա կարող ես մի անկյուն քաշվել, նստել հանգիստ և այլոց մտքերն ու խոսքերը վերագրել քեզ»<sup>72</sup>:

Ահա թարգմանիչներին ուղղված մեկ այլ հատված. «Եթե մի քանի ամիս որևէ դպրոցում, անկախ կրոնական դավանանքից,

<sup>68</sup> Տես Qāsēmzādē M., նշվ. աշխ., էջ 13:

<sup>69</sup> «Qazīyē».

<sup>70</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», 1346, vol. 15, no. 32, p. 9.

<sup>71</sup> «Ēxtēlāt-e Nomčē».

<sup>72</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», 1346, vol. 15, no. 33, p. 18.

մի քանի օտար լեզու սովորես... կարող ես հայտնի թարգմանիչ դառնալ... և ինչ որ գտնես, վերագրես քեզ, գրավիչ ոճով ներկայացնես իբրև քո սեփականը և հրատարակես: Միայն թե չմոռանաս էջերդ լցնել «ախ-ուխ», «ջերմ սեր», «քնքուշ հոգի» արտահայտություններով»<sup>73</sup>: «Եթե այն, ինչ որ ասացի, չես կարող անել, ապա փիլիսոփա և բարոյագետ դարձի՛ր: Շարունակ բարդ ու անհասկանալի թեմաներից խոսի՛ր, որպեսզի ունկնդրի, և քո աղիքները որովայնում խառնվեն, և նրանք մտածեն, թե գիտության ծով ես, գիտես երևելի և աներևույթ խնդիրների լուծումը... Երբեք չմոռանաս խոսքերիդ և գրելաձևիդ մեջ ճռոռմախոս և դատարկաբան լինել, քանի որ մոտ ապագայում կճանաչվես որպես փիլիսոփա, գիտնական և հասարակական բարենորոգիչ»<sup>74</sup>:

Նման դատողությունները ցույց են տալիս Յեղայաթի՝ գրականության դերի ու նշանակության մասին ըմբռնումները և ևս մեկ անգամ փաստում նրա ստեղծագործության պարզությունն ու անմիջականությունը:

1937 թ. Ս. Յեղայաթը Յնդկաստանից վերադառնում է Իրան: 1937-1941 թթ. համարվում են նրա լրության տարիները: Գրականագետը, մտավորականը դարձել էին դատապարտյալներ: Մթնոլորտը երկրում քաղաքական առումով խիստ ծանր և ճնշող էր: Ս. Յեղայաթի ընկերներ Ա. Յ. Նուշինը և Բ. Ալավին ձերբակալվում են, գրական «Ոորե» խմբակը՝ կազմալուծվում: Ս. Յեղայաթն այդ տարիներին ոչ քաղաքական գրականությամբ էր զբաղվում: Յրատարակում է «Դար փիրամունե լողաթե ֆորսե Ասաղի»<sup>75</sup> («Ասաղիի հանրագիտարանի մասին») հոդվածը, որում մեկ անգամ ևս բացահայտվում են նրա հարուստ գիտելիքները գրականության, լեզվաբանության և բառագիտության ոլորտներում:

Ս. Յեղայաթը խորապես տառապում էր ստեղծված իրավիճակից և փրկության միակ միջոցն ազգային գիտակցության արթնացումն էր համարում: Միակ գենքը, որով նա կարող էր օգտակար լինել, իր լեզուն էր և գոիչը: Արտասահմանյան լուսավորիչների գաղափարներից օգտվելով և նրանց փորձից դասեր քաղելով՝ նա աշխատում էր խավարի մեջ լույսի նշույլ գտնել: Ս. Յեղայաթն իր մտքերով ու գաղափարներով նոր և

<sup>73</sup> Նույն տեղում:

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> «Dar pīrāmūn-e loqat-e fors-e asadī».

առաջադեմ երիտասարդ գրողների մեջ հանուն արժանավոր և բարեպաշտ կյանքի պայքարի ոգի էր ներարկում:

Քաղաքական հորիզոնը 1940-1941 թթ. արդեն լուսավոր էր: Երբ Ռեզա շահը հասնում է իր իշխանության մայրամուտին, երկրի ազատամիտ գրողների համար նոր արշալույս է բացվում: Երկրի քաղաքական և տնտեսական կյանքում նույնպես ակնհայտ փոփոխություններ են տեղի ունենում: Ստեղծված պայմանները ժողովրդավարական շարժումների աշխատացման հնարավորություն են ընձեռում: Բազմաթիվ թերթեր և ամսագրեր են լույս տեսնում: Մի շարք առաջադեմ երիտասարդ մտավորականներ են ասպարեզ գալիս: Ա. Հեղայաթը կարճ դադարից հետո վերստին սկսում է գեղարվեստական ստեղծագործություններ հրապարակել, բայց արդեն ավելի սուր և քննադատական ոճով:

Նախկին բռնակալ պետության շղթաներից ազատված, բայց այնուհետև օտարների գերիշխանության տակ հայտնված, այսպես կոչված, «ազատ» իրանում Ա. Հեղայաթը հրատարակում է «Սագե Վելգարդ»<sup>76</sup> («Թափառող շունը») և «Հաջի աղա» պատմվածքները:

Ա. Հեղայաթի մյուս ժողովածուն՝ «Սագե Վելգարդ»-ը (1942), կազմված է հետևյալ պատմվածքներից՝ «Դոնժուանե Քարաջ» («Քարաջի Դոն Ժուանը»), «Բոնբասթ» («Փակուղի»), «Քարիա», «Թախթե Արու Նասր» («Արու Նասրի գահը»), «Թաջալի» («Փայլատակում»), «Թարիքխանե» («Մթասենյակ»), «Միհան փարասթ»<sup>77</sup> («Հայրենասերը»): Դրանցից հատկանշական են «Սագե Վելգարդ»-ը և «Միհան փարասթ»-ը:

Փաթը մի շուն է, որին տերերը կորցրել էին: Նա թափառում է վայրից վայր, երազում է գեթ մեկ անգամ հանդիպել տերերին, որպեսզի գլուխը շոյեն, իրամաններ տան, բայց նրա այդ երազանքը չի իրականանում: Բոզորգ Ալավին այս պատմվածքի մասին գրում է. «Այս պատմվածքը նրա [Հեղայաթի] ամենալավ գործերից մեկն եմ համարում: Ենթադրում եմ, որ այն ողբերգությունը, որ այս շանս է պատահել, տեղի է ունեցել նաև հեղինակի կյանքում: Անլեզու կենդանուն ծաղկաստանից քշել են մի վայր, որտեղ նրան բաժին են հասել նվաստացում, ծեծ, քարկոծում: Կեղտոտ է և

<sup>76</sup> «Sag-e vēlgard».

<sup>77</sup> «Donjūan-e Karaj», «Bonbast», «Kātīā», «Taxt-e Abū Nasr», «Tajalī», «Tārīkxānē», «Mīhanparast».

չպետք է որևէ ափսե լիզի. պետք է նրանից հեռու մնալ: Մի անգամ Ս. Շեղայաթի նման մի մարդ շանը կաթնապուր է տալիս, սիրալիր և բարեհաճ է գտնվում նրա նկատմամբ: Կենդանին վազում է մարդու հետևից այնքան, մինչև հոգնածությունից ընկնում է: Շունչը դեռ չփշած՝ ագռավներն աչքերը հանում են: Ս. Շեղայաթի ճակատագիրն արդյոք այս շան պատմությամբ չէ՝ պատկերված: Մահով Ս. Շեղայաթը կենդանացավ»<sup>78</sup>:

Ս. Շեղայաթի՝ դեպի Հնդկաստան ուղևորության արդյունք է հայրենասիրական, բայց միաժամանակ երգիծախառն «Միհան լիարասթ» պատմվածքը, որը տպագրվել է 1941 թ. և տեղ գտել «Մագե վելգարդ» ժողովածուում: Ստեղծագործության մեջ նկարագրված դեպքերն առնչվում են իշխանության քաղաքականության մերկացմանը, պետական պաշտոնյաների տգիտությանը, ծախու մտավորականների և գրականությամբ զբաղվող մարդկանց անհատականության բացահայտմանը:

Պատմվածքում Հաքիմ Բաշի Փուրը ստանձնում է Ս. Շեղայաթի ժամանակի մշակույթի նախարարի դերը, իսկ կեղծ գիտնական-գրականագետի դերում հանդես է գալիս Սեյեդ Նասրուլահին: Վերջինիս հանձնարարվում է ուղևորվել Հնդկաստան և այնտեղ ներկայացնել Իրանի մշակութային ձեռքբերումը՝ նոր ստեղծված հանրագիտական բառարանը: Նա երբեք երկար ուղևորություն չեր կատարել, այն էլ՝ արտասահման, ծովային ճանապարհով: ճանապարհորդության գաղափարը մտավորականի մեջ տագնապ է առաջացնում, քանի որ նա չեր ցանկանում իր խաղաղ կյանքը փոխարինել նման փոթորկալի իրադարձություններով: Ծեր, ինքնազոհ, բայց միաժամանակ վախկոտ Նասրուլահը ողջ ճամփորդության ընթացքում սարսափում էր այն մտքից, որ նավը կսուզվի, և ինքը կխեղդվի: Տագնապի և վախի մթնոլորտում նա ի վերջո կաթվածահար է լինում՝ չկարողանալով ավարտին հասցնել իրեն հանձնարարված ծանր ու կարևոր առաքելությունը: Սեյեդ Նասրուլահն այս ընթացքում հնարավորություն է ունենում մտածելու և քննելու ստեղծված իրավիճակը: Իրանում տիրող իրադրությունն ինքը չէ, որ որպես իր երկրի դեսպան-ներկայացուցիչ պետք է ներկայացներ: Ամեն բան իհմնված էր խաբեության և շողոքորթության վրա: Իր շոջապատի գրականագետները և մտավորականները Եվրոպայում էին կրու-

<sup>78</sup> Qāsēmzādē M., op. cit., p. 221.

թյուն ստացել, սակայն ոչ մի բանով անցյալի անկիրթ մտավորականներից չէին տարբերվում. միայն պաշտոններն ու կոչումներն էին փոխվել: Լեզվի և բառապաշտի մեջ ոչ մի արմատական փոփոխություն տեղի չէր ունեցել: Նման մտքերի մեջ խորասուզվելը մի կողմից, ճանապարհորդության տագնապը մյուս կողմից զարգացնում են պատմվածքի դեպքերը: Ահա մի հատված. «Հայրենիք, այսինքն՝ ես: Նպատակը միայն այն մեծարգ առաջնորդի (խոսքը Ռեզա շահի մասին է – Ա. Յ.) փառաբանությունն է, ով իր արյունաբրու եղջյուրով ժողովրդի արյունը թափեց: Ժողովրդին պարտադիր ուսում տալը միայն նրան կրթելու նպատակով չէր, այլ որպեսզի կարողանար օրաթերթերում առաջնորդի և ի վերջո Հաքիմ Բաշի Փուրի մասին գովասանքներ կարդալ, օրաթերթի լեզվով մտածել և խոսել: Տեղական բարբառերը, որոնք պարսկերենի հիմքն էին, և որոնցից էին վերցված նրա արտահայտությունները, պետք է մոռացության ենթարկվեին. այն, ինչ որ արաբները և մոնղոլները չկարողացան իրականացնել՝ ժողովրդին պարտադրելով սովորել մի բառակազմ, որը ո՞չ Քսերքսեսի և ո՞չ մաշդի<sup>79</sup> Հոսեյնի լեզվում գոյություն չունի, այդ ամենն իրենց հորինածն է»<sup>80</sup>:

Արվեստն իրականության հայելին է: Գեղարվեստական գրականությունը նույնպես տվյալ ժամանակաշրջանի քողարկված հարաբերությունների և գաղտնիքների բացահայտման բանալին է: Ս. Հեղայաթի գլուխգործոց «Բուֆե քուռ»-ը, որի հատվածները միայն հեղինակի կենդանության օրոք՝ 1943 թ., իրատարակվեցին, այն ստեղծագործություններից է, որոնք հասկանալու համար ընթերցողն անպայման պետք է քաջատեյակ լինի դրա ստեղծման ժամանակին: «Բուֆե քուռ»-ը ոչ միայն հեղինակի ներքին աշխարհի և իր ժամանակաշրջանի հակասությունների, այլև մարդկային ողբերգության և արվեստագետի անզորության արտահայտությունն է: Հասարակության բարդույթները գալիս են անցյալից և ագուցվում ներկային, մի զարգացում, որ մարդիկ ընդհանուր առմանք ո՞չ գիտակցում են, ո՞չ էլ կարողանում են արտահայտել: Այն, ինչ մարդը տեսնում և չի կարողանում արտահայտել, Ս. Հեղայաթն ի ցույց է դնում «Բուֆե

<sup>79</sup> Մաշդի, մեշհեդի, Մեշհեդի բնակիչ: «Մաշդի կոչումը տրվում է Իմամ Ռեզայի դամբարանին ուխտի գնացողներին» (Մանսուրեան Յ., «Պարսկերէն-հայերէն բառարան», հ. Բ, Թեհրան, 2005, էջ 1001):

<sup>80</sup> Hēdāyat S., Majmū'ēyī az āsār-e Sādēq Hēdāyat, p. 385.

*քուռ»* պատմվածքում: «Բուժե քուռ»-ը իրավամբ համարվում է անկումապաշտ-մոդեռնիստական ոճի պատմվածք: Դրանում առկա են և՝ գիտակցության հոսք, և՝ գրոտեսկային-հիպերբոլիկ բնույթի մտակառուցում, նաև միստիկ իռացիոնալիստական ոգեսուզումներ և այլնայլ գեղարվեստական ինարքներ, ինչպես Կաֆկայի, Բուլգակովի և այլոց երկերում<sup>81</sup>:

Ի տարբերություն պարսկական գրականության մեջ տիրապետող մտայնությունների, որոնք քարոզչական դաստիարակչական բնույթ ունեն, «Բուժե քուռ»-ը այն եզակի արձակ ստեղծագործություններից է, որը կենտրոնանում է մարդկային ներաշխարհի արժեքների բացահայտման վրա: Նովելն ամբողջական տեսքով և ամփոփ ներկայացնելը բարդ ու դժվար է: Իրադարձությունների կենտրոնացնում մարդկությունից հիասթափված, մեկուսացած մի նկարիչ է, որի միակ և հավատարիմ ընկերը սեփական ստվերն է: Միայն ստվերն է նրան դրդում գործողությունների և օգնում բացահայտվելու: Ս. Շեղայաբն իր ընկերոց՝ Ս. Ֆարզանեի գրքում այս պատմվածքի մասին ասում է. «Շատերն այն կարծիքին են, որ ես գիրքն ափիոնացված վիճակում եմ գրել, մինչդեռ այն սառնախոհ շարադրանքի արդյունք է և այնպիսին, որ իմ թույնը կաթիլ-կաթիլ եմ թղթի վրա լցրել: Այնպես որ երբեմն գրելու պահին ծիծաղում էի ինքս ինձ վրա»<sup>82</sup>: «Շեղայաբի ստեղծագործությունների մեջ «Բուժե քուռ»-ը բացառություն է: Իհարկե, այն համաշխարհային հնչեղության գլուխգործոց է: Երբ գիրքը կարդում ես, գգում ես Զ. Չոյսի և Ֆ. Կաֆկայի ազդեցությունը: Այդուհանդերձ, այստեղ կա մի նորարարություն, որը միայն Շեղայաբինն է»<sup>83</sup>, - նկատում է արձակագիր Ֆերեյդուն Շովեյդան:

Նովելի գրության վայրի մասին տարբեր վարկածներ կան, բայց հայտնի է, որ Ս. Շեղայաբը Շնորհաստանում իր ձեռքով է արտագրել գիրքը և տպագրել 1936 թ.: Նովելը բարձր գնահատականի է արժանացել աշխարհի տարբեր երկրների նշանավոր արվեստագետների կողմից: Այն թարգմանվել է մի քանի օտար լեզուներով: Առաջին թարգմանությունը կատարել է Փրանսիացի արևելագետ Ռոժե Լեսպոն դեռևս հեղինակի կենդանության օրոք

<sup>81</sup>Տե՛ս Բուլգակով Ա., Մովսիսյան Ր., Շեխոյան Լ., Աշվ. աշխ., էջ 243:

<sup>82</sup>Farzānē M., *Sādēq Hēdāyat dar tār-e 'ankabūt*, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Markaz, 1384, p. 201.

<sup>83</sup>Qāsēmzādē M., op. cit., p. 293.

և նրա հետ խորհրդակցելով, բայց այն իրատարակվել է Ս. Շեղայարի մահից հետո՝ 1953 թ. Ֆրանսիայում:

1943 թ. իրատարակվում է «Ալավիե խանում» պատմվածքը: Այստեղ դրսևորվում են հեղինակի իրատեսությունը, նրբանկատությունը և վարպետությունը: Նա հմտորեն օգտագործում է ժողովրդական խոսակցական լեզուն, պարզ ու հասկանալի նկարագրում հերոսներին: «Ալավիե խանում» պատմվածքն իրական կյանքի երգիծական պատումներից է բաղկացած: Հեղինակը վարպետորեն նկարագրում է հերոսների կյանքում արմատացած ավանդույթները և սովորույթները, նրանց հասարակական և տնտեսական անմիտար պայմանները, կենցաղավարությունը, որտեղ բացակայում են պատիվը և հարգանքը:

Ալավիե խանումի շրջապատը նրա վարած կյանքից գլուխ չի հանում: Աղա Մուչուլը և Ալավիեն երեք երեխա են ունենում: Երեխաներն իրար բոլորովին նման չեն: Ալավիե խանումն Աղա Մուչուլին երբեմն իր որդի, երբեմն փեսա և երբեմն էլ եղբայր է անվանում: Ուխտագնացության օրերին՝ մի գիշեր, Սաք Սուլթանը՝ սայլապան Քարամ Ալիի կինը, լեզվակովի մեջ է մտնում ապաշնորհ կնոջ հետ և գոռում. «Հե՞յ, Ալավիե, ամոթը կերել ես, պատիվը փսխել: Անցյալ գիշեր Սուրադ Ալիի սայլի մեջ ի՞նչ գործ ունեիր... Դու ինքո յոթ գլուխ ընտանիք ունես, ուզում ես մարդուս ձեռքից տանել... Դու ուխտի՝ ես գնում: Սուրբը մեջքդ կոտրի»<sup>84</sup>: Իսկ Ալավիեն պատասխանում է. «...Անխիղճ կախարդ, անզգան կին, ի՞նչ բոշություն ես անում, ո՞վ է մարդուդ ձեռքիցդ առել. այդ քո աղբը և չալիկը քեզ է արժանի.... Ով որ ինձ վարկաբեկի.... հորը շան աղբով կրակի կտամ... Փանջե բաշին վկա է՝ ես անցյալ գիշեր սենյակից դուրս չեմ եկել»<sup>85</sup>:

«Ալավիե խանում» պատմվածքն ընթերցողի հետաքրքրությունը գրավում է նաև երկխոսությունների շնորհիվ: Պատումը շատ կարևոր թեմա չի ներկայացնում, բայց լի է հիշոցներով, գուհիկաբանությամբ և անպարկեշտ արտահայտություններով, առածներով ու ասացվածքներով և Ս. Շեղայարի ժամանակաշրջանի ցածր խավի առօրյա կենցաղը, հոգեբանությունն ու մտածելակերպն է պատկերում:

1933 թ. իրատարակվում է Ս. Շեղայարի՝ «Ալավիե խանում

<sup>84</sup> Hēdāyat S., 'Alavīyē xānom, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Jāvīdān, 2536 šāhanšāhī, p. 32.

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 33:

վա վելենգարի»<sup>86</sup> («Ալավին խանում և շվայտություն») կամ «Վելենգարի» («Շվայտություն») վերնագրով ժողովածուն: Ժողովածուում ընդգրկված պատմվածքներն են՝ «Խարե դաջալ» («Ների ավանակը»), «Ֆարհանզե ֆարհանզեսթան» («Ակադեմիայի բառարանը»), «Ղազիեյէ զիրե բոթե» («Թուփի տակ դրվագը»), «Ղազիեյէ նամաքե թորթի» («Թուրքական աղի դրվագը»), «Ղազիեյէ դասթե բար դազա»<sup>87</sup> («Ըստ ճակատագրի դրվագը»):

«Խարե դաջալ» հեքիաթը առակ հիշեցնող շատ հետաքրքիր պատմվածք է, պատկանում է Ս. Յեղայարի՝ 40-ական թթ. ստեղծագործությունների շարքին: Գրողն ակտիվորեն մասնակցում է Իրանում տեղի ունեցող ազգային-ազատագրական, ժողովրդավարական շարժումներին և եռանդուն գործունեություն ծավալում: «Խարե դաջալ» պատմվածքում հեղինակը դատապարտում է Իրանի իշխանության և իմաստիալիստական տերությունների դավերը և գործադրած ճնշումները: Վարպետ գրչով նա այլաբանորեն (կենդանիների կերպարների միջոցով) մերկացնում է այդ բոլոր արատները: Այս պատմվածքը, անկասկած, մեզ հիշեցնում է ժողովրդական բանահյուսությամբ ներծծված դասական գրականության մեջ փառաբանված «Քալիլե վա Ղեմնե»<sup>88</sup> ժողովածուն:

1945 թ. իրատարակվում է Ս. Յեղայարի «Ղաջի աղա» պատմվածքը: Դրանում բացահայտվում է ժամանակի առևտրավաշխառուական խավին բնորոշ սոցիալական հոգեբանությունը: Ղաջի աղան բարերարի դիմակի տակ թաքցնում է իր երեսապաշտությունը, բարեպաշտ հավատացյալ է ծեանում, սակայն ընտանիքի նկատմամբ ժլատ ու բռնակալ է: Ղարկ եղած դեպքում նա կարող է հանդես գալ քաղաքագետի, մտավորականի, առևտրականի, իրավաբանի, ամոթիսած, անպատկառ մարդու, աղ-

<sup>86</sup> «'Alavīyē xānom va vēlēngārī», «Vēlēngārī».

<sup>87</sup> «Xar-e dajāl», «Farhang-e farhangēstān», «Qazīyē zīr-e botē», «Qazīyē namak-e torkī», «Qazīyē dast-e bar qazā».

<sup>88</sup> «Kēlīlē va dēmne» – Գրական-դիդակտիկ հուշարձան՝ արաբերենով և պարսկերենով: Յիմքը հկդ. «Պանչատանտրա» գիրքն է, որը 6-րդ դ. թարգմանվել է միջին պարսկերենով՝ ստանալով «Քալիլա և Ղիմնա» վերնագիրը (առաջին գլխում գործող երկու շնագայլերի անունով): Արաբերեն փոխադրությունը կատարել է պարսիկ իբն ալ-Մուկաֆֆան 8-րդ դ., իսկ պարսկերեն չափածո փոխադրությունը՝ Ռուդաքին 10-րդ դ. (պահպանվել է միայն մի քանի ոտանավոր), Նասրալլահ Աբու-ալ-Մաալին՝ 1144 թ., Յուսեյն Վահզ Կաշիֆին («Կանոաի լուսատուները»)՝ 16-րդ դ. և այլն (տես ՀՍՀ, ի. XII, Եր., 1986, էջ 386):

քատի, հիմարի և շատ ուրիշ կերպարներով: Հաճախ դրանք այնպիսի կերպարներ են, որոնց հետ ոչ ոք չի ցանկանա բարեկամանալ:

Արձակագիր Ս. Ֆ. Ֆարզանեն պատմվածքի լեզվի մասին այսպես է գրում. «Դաջի աղայի կենսապատումի մեջ Շեղայաթն անխղճորեն իր հայրենակիցներին մեծից փոքր հայիոյում է, անգամ «Ալավիե խանում» ի հայիոյանքներից առավել ուժգին»<sup>89</sup>: Պատմությունը Ս. Շեղայաթն այնպես է շարադրել, որ հեշտությամբ բեմականացվի, քանի որ բոլոր դեպքերը տեղի են ունենում հաշթիում<sup>90</sup>:

1930-ական թթ. «Մոհալել» («Մե դարրե խում» ժողովածուից), «Մորդեխարիա» («Զենդե բե գուո» ժողովածուից), «Փարվին դոխթարե Սասան»<sup>91</sup> («Սասանի դուստր Փարվինը») և «Մազյար» պատմվածքներն իրենց բովանդակությամբ, դեպքերը և մարդկանց բացահայտելու յուրահատկությամբ նույնպես արժանանում են հասարակության գնահատանքին և ուշադրությանը: Այս պատմվածքների բեմականացման հաջողությունը նույնպես պայմանավորված է այն բանով, որ դրանցում արտացոլվում են հայրենասիրական զգացումներ, ընտանեկան և մարդկային հասարակ վարքութարք: Այդ ժամանակաշրջանում միայն նման բեմաներով բեմադրություններ էին թույլատրվում ներկայացնել հանդիսատեսին: Ս. Շեղայաթի՝ 1940-ական թթ. հրատարակված պատմվածքներից «Աֆսանեյե աֆարինեշ»-ը («Արարշագործության առասպելը»), որը, բնականաբար, Ադամի և Եվայի մասին է, երգիծական բնույթ ունի և դարձյալ հարմար է բեմականացման համար:

Ս. Շեղայաթի պատմվածքները հագեցած են ժողովրդական պարզ և հասկանալի արտահայտություններով, ասացվածքներով, ինչն էլ յուրահատուկ երանգ է հաղորդում դրանց:

Ս. Շեղայաթը հմուտ երգիծաբան է: Նրա հեգմանքը դաժան է և կտրուկ: Երգիծանքի քողի տակ է ներկայացնում իր կյանքի վերջին հրաշալիքներից «Թուփե մորվարի»<sup>92</sup> («Մարգարտե

<sup>89</sup> Farzānē M., Āšnāyī bā Sādēq Hēdāyat, p. 420.

<sup>90</sup> Հաշթի – «Նախամուտք՝ շենքի մուտքի մաս կազմող՝ բազմանկյուն կառուցված միջանցք, որը գտնվում է փողոցի դռան և բակի մուտքի միջև» (Մանսուրեան Ռ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1168):

<sup>91</sup> «Parvīn doxtar-e Sāsān».

<sup>92</sup> «Tūr-e mognātī».

թնդանոթը») պատմվածքը: Այն գրվել է 1948 թ., բայց իրատարակվել է նրա մահից հետո:

20-րդ դարի 40-ական թվականներին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Ս. Հեղայաթն ավելի ազատ, պարզ ու համարձակ է ներկայացնում իր ասելիքը: Տարբեր նյութեր պարունակող այս պատմվածքը հիշեցնում է արաբական զարդանախչ: Պատմվածքում ներառված են իրանական մշակույթի զանազան տարրեր՝ բանահյուսական, կրոնական, պատմական: Երբեմն ոճի շեշտակիությունն այնքան ուժեղ է, որ թվում է՝ անհետանում են այդ գեղեցիկ զարդանախչերը:

Մ. Ֆ. Ֆարզանեն այս պատմվածքի ստեղծման և անվան մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում: Նա գրում է. «Երկու խնդիր եմ մտաբերել, որոնց մասին այստեղ կիշատակեմ: Հեղայաթը մի օր ձեռագիր և չափարտված «Թուփե մորվարի»-ն պահարանից հանեց և ասաց. «Ուզում եմ այս դրվագները, որոնք նոր եմ գրել, քեզ համար կարդալ»: Իր գրած կառուցվածքով և ոճով «դրվագ» անվանեց: Երկրորդ խնդիրն այն է, որ գիրքն անվանել էր «Թուփե մորվարիդ»<sup>93</sup>, ոչ թե «Թուփե մորվարի»<sup>94</sup>: Նա 1949 թ. հոկտեմբերի 19-ին իր գրած նամակում, որը հասցեագրված էր Շահիդ Նուրայիհին, գիրքը կոչել էր «Թուփե մորվարիդ», իսկ մյուս նամակում՝ 1949 թ. հոկտեմբերի 29-ին, այսպես է գրում. «Վերջապես «Թուփե մորվարի»-ն Խանլարիի միջոցով ուղարկեցի»<sup>95</sup>:

Պատմվածքը մի թնդանոթի մասին է, սակայն դրանում անդրադարձ է կատարվում նաև քաղաքական և հասարակական խնդիրներին: Թնդանոթը մեծն շահ Աբասը 1622 թ. Պորտուգալիայից որպես ավար թեհրան էր բերել: Ուզա շահի թագավորության տարիներին այն թագավորական միջնաբերդից տեղափոխում են սպաների ակումբի դռան մոտ: Սնոտիապաշտ և նախապաշտումներով լի հասարակությունը հավատում էր, որ եթե երիտասարդ չամուսնացած աղջիկներն ու չբեր կանայք մոտենան թնդանոթին և շոշափեն այն, նրանց երազանքները կիրականանան: Ս. Հեղայաթը «Թուփե մորվարի»-ն գրելու համար

<sup>93</sup> «Tūp-e morvārīd».

<sup>94</sup> Գրական պարսկերենում մարգարիտը «morvārīd», իսկ խոսակցականում «morvārī» են անվանում:

<sup>95</sup> Farzānē M., Āšnāyī bā Sādēq Hēdāyat, pp. 440-441.

օգտագործել է իր ստեղծագործական ողջ տաղանդը՝ միաժամանակ էջերը լցնելով հեզմական արտահայտություններով։ Նա ծաղր ու ծանակի է ենթարկում երկրի կառավարիչներին, թերուս հասարակությանը և բննապետ օտար կողոպտիչներին։

Ս. Ֆ. Ֆարզանեն, որը Ս. Շեղայաթի հետ շատ ժամանակ է անցկացրել և նույնիսկ կյանքի վերջին ամիսներին նրա կողքին է եղել, այսպես է արտահայտվում. «Շեղայաթը «իրանական Դոն Քիշոտ»-ն է։ Նա այդ հսկա վիշապի (Ուզա շահի – Ա. Յ.) իրական ուժն անտեսեց և կրկին ընթռստացավ, ուզեց այդ միահեծան, արձանիկ իրանակատարի դեմ պայքարել։ Շեղայաթի ճակատագիրը բացառիկ չէ. այն իրանցիների ճակատագիրն է։ Իր ապրած ժամանակահատվածում միայն ինքն էր, որ արվեստի նուրբ գենքով տգիտության վիշապի դղրդյունների և գաղութարարների դեմ գնաց։ Իրանի համայնքն այդ գաղտնիքներին անդրադարձե՞լ է արդյոք »<sup>96</sup>։

Ս. Շեղայաթի հեզմանքից գերծ չեն մնում նաև հոգևորականները։ Նա խոր ատելությամբ և արհամարհանքով է նկարգում նրանց կենսակերպը՝ ընդգծելով նրանց հոգու աղքատությունը, ազահությունը և կաշառակերության նոլուցքը։ Այդուհանդերձ, հոգևորականների քննադատությունը Ս. Շեղայաթի գրվածքներում կրոնի քննադատության չի վերաճում։

Ս. Շեղայաթի վերջին ստեղծագործություններից է «Արացսիաթ օլ-Էսլամիաթ ֆել բելադ օլ-ֆարանջիե» («Իսլամի առաքելությունը Եվրոպական երկրներում») հոդվածաշարը։ Այն 1930 թ. ներկայացվում է երեք օրաթերթային գեկույցների տեսքով, իսկ 1970 թ.՝ առանձին գրքով։ Գիրքը գրաքննության է ենթարկվում, ապա՝ արգելվում<sup>97</sup>։ Գրքում նկարագրվում է մի խումբ խաբերականների ճամփորդությունը դեպի Եվրոպա, որոնք ցանկանում էին տեղի անհավատներին (քրիստոնյաներին) մուսուլման դարձնել։

Ս. Ֆ. Ֆարզանեն այս վերջին երկու ստեղծագործությունների մասին գրում է. «Գիտակցելով ու կշռադատելով եղածը, Շեղայաթն իր երկու ձեռագիր պատմվածքները չի ոչնչացրել, այն հուշագրի նման, որ սուզվող նավում գտնվողները, հուսահատորեն շշի մեջ դնելով, ծովի ալիքներին են հանձնում։ Առաջինը՝

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 453։

<sup>97</sup> Տե՛ս Qāsēmzādē M., նշվ. աշխ., էջ 19։

«Թուփե մորվարի»-ն, նա ժննում հանձնում է մի ընկերոջ, իսկ երկրորդը՝ «Ալ բազսիաթ օլ-Էսլամիաթ ֆել բելադ օլ-Փարանցիե»-ն՝ ինձ, որը Փարիզում եմ պահում: Երկու ստեղծագործություններ, որոնք, իր կարծիքով, շարադրանքի և իմաստի առումով շատ կարևոր են... Յեղայաթը հենց այս երկու գրքով թողնում է իր վերջին պատգամը և արդեն իր ինքնասպանության համար բացատրություն չունի»<sup>98</sup>:

Ս. Յեղայաթն ունի նաև քննադատական հոդվածներ և թարգմանություններ, որոնք իրանի գրական աշխարհում նոր սերնդի ներկայացուցիչների համար ուղեկից փառու են եղել: Նա պահպանել է թարգմանական արվեստի բոլոր սկզբունքները և մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի ստեղծագործությունները պարզ և նոր պարսկերենով մատուցի ընթերցողին: Նա օգտվել է նաև ժամանակի հայտնի օտարազգի լեզվաբաններ Վեստի, Բարտոլոմեի, Բենվենիստի, Մարկվարտի և ուրիշների ուսումնասիրություններից:

Ս. Յեղայաթի գրաքննադատական հոդվածների լավագույն նմուշներից են «Թարանեհայե Խայամ»-ը («Խայամի քառյակները»), «Չանդ նոքթե դարբարեյե Վիս վա Ռամին»-ը («Մի քանի դիտարկում Վիս ու Ռամինի մասին»), «Փայամե Քաֆքա»-ն<sup>99</sup> («Կաֆկայի պատգամը»), որոնցում բացահայտվում են գրականագետի բարեխողությունը և տաղանդը՝ հասարակությանը ճանաչելի դարձնելու նորարար և ժամանակակից արվեստագետներին: «...Մութ կերպարների գաղտնիքների բացահայտման տեսանկյունից Կաֆկայի ստեղծագործությունները վարպետորեն կատարված գրաքննադատական ուսումնասիրություններ են, որոնք՝ որպես արժանի հուշանվեր, կարող ենք տեղադրել իրանի ժամանակակից գրական քննադատական պատմության մեջ»<sup>100</sup>:

Ս. Յեղայաթի ապրած ժամանակահատվածի իրադարձությունները, նրա բնավորության գծերը, հոգեբանության առանձնահատկությունները դրսենորվել են նաև նրա մի շարք նամակներում, որոնք տարբեր վայրերից գրում եր իր ընկերներին, ընտանիքի անդամներին: Նրանք ընթերցելուց և ուսումնասիրելուց հետո ամբողջանում է նրա մարդկային և գրական կերպարը՝ թե՝

<sup>98</sup> Farzānē M., *Sādēq Hēdāyat dar tār-e ’ankabūt*, p. 276.

<sup>99</sup> «Tarānēhāyē Xayām», «Čand noktē darbārēyē Vīs va Rāmīn», «Payām-e Kāfkā».

<sup>100</sup> Ēttēhād H., *Pažūhēšgarān-e mo’asēr-e Īrān*, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Farhang-e Mo’āsēr, 1387, p. 272.

առարկայորեն, թե՛ ներքին հոգեբանական տեսանկյունից: Մեծ թվով նամակներ իր շատ մտերիմ ընկեր Յասան Շահիդ Նուրայիին են հասցեագրված, որոնք հետագայում գրքի տեսքով են հրատարակվում: Գրքի նախաբանում նաև Փաքդամանը Ս. Յեղայաթի նամակների մասին գրում է. «Ոմանց կարծիքով Յեղայաթի՝ Շահիդ Նուրայիին հասցեագրած նամակները կարևորագույն գրական ստեղծագործություններ են, որոնց գրական բարձր արժանիքներն անտարակուսելի փաստ են»<sup>101</sup>:

Ս. Յեղայաթի առաջին նամակը թվագրված է 1925 թ. հոկտեմբերի 5-ով: Այն ուղղված է իր ընկեր Թաղի Ռազավիին, ով ապրում էր Փարիզում: Նամակում Յեղայաթը գրում է. «Դաժան կյանքը և ոչ բարենպաստ պայմանները, ազոխ չեղած, ինձ չամիչ են դարձրել»: «Եթե ցանկանաս բացիկ ուղարկել, նախընտրելի է, որ այն մթաստվեր, տխուր, սարսափելի լինի... Ինչևէ, իրանը և ինձ շուտ եք մոռացել. Եթե կարողանաք, այս սարսափելի երազը և դառնաղետ մղձավանջը մի՛ հիշեք»<sup>102</sup>:

Պատմվածքներից, թարգմանություններից, գրաքննադատական հոդվածներից և նամակներից բացի, մեզ են հասել նաև Ս. Յեղայաթի մի շարք կարծ պատմվածքներ, որոնք ցաքուցրիվ են եղել, բայց Յասան Ղաեմյանի ջանքերով այդ բոլորն ի մի են բերվել և 2006 թ. «Սեվերեհայե փարաքանդե»<sup>103</sup> («Ցիրուցան էջեր») խորագրով տպագրվել: Գիրքը բաղկացած է երեք գլխից. առաջինում ընդգրկված են պատմվածքները, երկրորդում՝ հոդվածները և գրառումները, երրորդում՝ Ս. Յեղայաթի ֆրանսալեզու ժառանգությունը (ֆրանսերեն պատմվածքները): Դրանք սփուզած են ժամանակի այնպիսի ամսաթերթերում, ինչպիսիք են՝ «Սոխան», «Մուսիղի», «Աֆսանե», «Փայամն նո» և «Իրանշահր»<sup>104</sup>:

Ս. Յեղայաթն իր ստեղծագործությամբ, արժարժած գեղագիտական և հասարակական խնդիրներով ջանացել է հնարավորինս ամբողջական ու համակողմանիորեն ներկայացնել այն ժամանակաշրջանը, որում ինքն է ապրել: Ցավոք, նրա կյանքը բարեհաջող ընթացք և ավարտ չունեցավ: Յամոզված ենք, որ այլ

<sup>101</sup> Hēdāyat S., *Haštād o do nāmē bē Šahīd Nūrāyī*, Moqadamēyē Nāsēr Pākdāman, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Čēšmandāz, 1379, p. 27.

<sup>102</sup> Kātūzyān M., op. cit., p. 56.

<sup>103</sup> «Nēvēštēhāyē parākandē».

<sup>104</sup> «Soxan», «Mūsīqī», «Afsānē», «Payām-e nōw», «Īrān šahr».

պայմաններում պարսից գրականությունը կհարստանար նոր և գլուխգործոց ստեղծագործություններով:

## Բ) ՍԱԴԵՂ ՀԵՂԱՅԱԹԻ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ԱՌՋԱԿԻ ԲԱՆԱԳՅՈՒՍԱԿԱՆ ՀԵՆՔԸ

20-րդ դարի պարսից գրականության ամենախոշոր դեմքերից մեկը՝ Սադեղ Հեղայաթը, ընթերցող լայն հասարակայնությանը<sup>105</sup> հայտնի է միայն որպես պատմվածքի, նորավեպի վարպետ, ով մեծ դեր է ունեցել հայրենի նոր բնույթի արձակի ծևավորման, նրանով ժողովրդին հուզող խնդիրներին ծանոթացնելու գործում: Մինչդեռ նա նշանակալի վաստակ ունի նաև որպես բանահավաք, որպես իրանում գիտության այս ոլորտի հիմնադիր և կազմակերպիչ: Հեղայաթ հետազոտողին հատկապես սրտամոտ և հոգեհարազատ է բանահյուսությունը, որը նա համարում է անժամանցելի արժեք: «Ժողովրդական բանահյուսության ակունքը շատ հին է և համընկնում է մարդկային ոգեղեն առաջին ծիրերին, բայց պետք է վկայել, որ այս տարրական արվեստն այնքան ուժեղ է և այնքան կենսունակ, որ չի անհետացել»<sup>106</sup>, - գրում է նա:

Արժենորելով բանահյուսությունը որպես իր ժողովրդի աշխարհնկալման և խոսքարվեստի համաձուլվածք՝ Հեղայաթը չեղարող հայրենի բանահյուսության արտահայտչական հնարավորությունները չօգտագործել իր գեղարվեստական երկերը ստեղծելիս:

Ս. Հեղայաթի՝ ժողովրդական բանահյուսության այսպիսի կարևորումը հիշեցնում է Հովհաննես Թումանյանի՝ հայ գրականության զարգացման մեջ ժողովրդական բանահյուսության դերի պատշաճ արժենորումը. «Ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ զորանա»<sup>107</sup>:

<sup>105</sup> Նրա ստեղծագործությունները թարգմանված են հայերեն, ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն:

<sup>106</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, 6<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Čēšmē, 1385, p 201.

<sup>107</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6, քննադատություն և հրապարակախոսություն (1887-1912), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն»

Հեղայաթի ստեղծագործության մեջ նրա գիտական և բանավոր խոսքարվեստի արտահայտչական հնարավորությունները և բանահյուսության՝ որպես սեփական ժողովրդի հոգևոր մշակույթի ճյուղի տարրերը ծավալվում են զուգահեռաբար: Նրա հետաքրքրությունների շրջանակում էին գրեթե բոլոր ժանրերը՝ հեքիաթ, երգ-խաղիկներ, ասացվածքներ: Ընդ որում նա կարողանում է բանարվեստից քաղված նյութը համահունչ դարձնել հասարակ ժողովրդի կենցաղին, սովորույթներին և հանդիսածեսերին:

Մտերիմները վկայում են, որ ապագա գրողը դեռևս մանկության տարիներին մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ լսում էր ընտանիքի անդամների և այցելուների պատմած գրույցները, հեքիաթներն ու առասպելները, ունկնդրում երգերը, որոնք, անշուշտ, մեծ ազդեցություն պիտի ունենային նրա աշխարհընկալման ձևավորման վրա: Դասուն տարիքում նա, ժողովրդի կենսակերպն ու աշխարհընկալումն առավել մոտիկից ուսումնասիրելու համար, շրջում է գյուղերում ու ավաններում: Նա հաճախ է իր պատմվածքներում ներկայացնում այս կամ այն բարբառով գրված երգեր, որոնց մասին այսպես է արտահայտվում. «Ժողովրդական երգերն ունեն առանձնահատկություններ, որոնցից զուրկ է գիտական երաժշտարվեստը... դրանցում ապրեցնող ուժ կա... ժողովրդական երգերը պատկանում են ազգին և հասարակ ժողովրդին, բայց և արվեստի լիարժեք գործեր են, ենթարկվում են արվեստի ընդհանուր պայմաններին»<sup>108</sup>:

Ժողովրդական ստեղծագործության այդ բեկորներն այնքան մեծ կենսական նշանակություն են ունեցել, խորիմաստ գաղափարներ պարունակել, որ դրանց ամենափայլուն օրինակները կարելի է տեսնել գրադաշտականների «Ավեստա» սուրբ գոքի էջերում, ինչպես նաև գրական այնպիսի մեծությունների գործերում, ինչպիսիք են Ֆախրեդդին Գորգանին («Վիս օ Ռամին»), Աբու Ղասեն Ֆիրդուսին («Շահնամե»), Օմար Խայամը, Մուլեհեդին Սաադին («Գոլեսրամ», «Բուսրամ»), Զալալ ադ Ղին Ռումին և Հաֆեզ Շիրազին:

Ս. Հեղայաթը, տիրապետելով արդի պարսկերենի նրբություններին, ժողովրդական բանահյուսության հիմքի վրա գրա-

Իրատ., 1994, էջ 42:

<sup>108</sup> Hēdāyat S., *Farhang-e 'amayānēyē mardom-e Irān*, pp. 202-203.

կան գանձեր հյուսեց: Թեկուզ դրանք ընթերցելու պահին ընկալման որոշ դժվարություններ են առաջացնում, այնուամենայնիվ արժեք են ներկայացնում: Ս. Հեղայաթի պատմվածքների հերոսներն ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ են՝ արվարձանների բնակիչներ, գյուղացիներ, թափառաշրջիկներ, հանցագործներ, թերուս, երբեմն նաև կրթված մարդիկ:

Ժողովրդական բառ ու բանը բարձր գնահատող գրողը մարդկայնության բարձր արժանիքները պետք է որոներ և գտներ հասարակ մարդկանց միջավայրում՝ այդ միջավայրի վառ անհատականությունների մեջ: Այդպիսին է Դաշ Աքոլը՝ համանուն պատմվածքի հերոսը: Պատմվածքում վարպետորեն գուգակցված են երգիծական, հոգեբանական և ռոմանտիկ մոտիվները:

Դաշ Աքոլը, հավատարիմ մնալով ազնվության ու վեհանձնության իր ըմբռնումներին, դեմ է դուրս գալիս հանգամանքներին և մոլլանների դրդումով մարդկային տարրական նորմերը ուժնատակ տվող Քաքա Ռոստամին:

Պատմվածքի սկզբում պատկերվում են Դաշ Աքոլի և Քաքա Ռոստամի վեճերը. նրանց ջուրը մի առվով չի հոսում: Դաշ Աքոլը թեյարանում Քաքա Ռոստամին այսպես է դիմում. «Քաքա՛, վրայից տղամարդու հոտ չի գալիս<sup>109</sup>, կարծես մի քիչ շատ ես ծխել, լավ զվարճացել ես.... քեզ դրել ես շրջնոլիկի (Լաթ/Iāt) տեղ.... սա մուրացկանություն է, որը քեզ աշխատանք ես դարձրել, ամեն Աստծո գիշեր մարդկանց ճանապարհը կտրում ես: Եթե մի անգամ էլ հարթես, բեղերդ<sup>110</sup> կվառեմ»<sup>111</sup>:

Հեղինակն ընդամենը մեկ այլաբանությամբ ու մեկ դարձվածքով կարողացել է պատկերացում տալ միջավայրում հերոսի ունեցած բարձր հեղինակության մասին:

Դաշ Աքոլն իր շրջապատում ճանաչված է որպես «սպիտակ ճակատով ցուլ», և բոլոր լութինները<sup>112</sup> նրա «բազկի ուժը»<sup>113</sup> ճա-

<sup>109</sup> «Mardat xānē nīst».

<sup>110</sup> Բեղը վառել, այսինքն՝ «մեկին դաս տալ, պատժել» (Մանսուրեան Յ., Աշվ. աշխ., հ. Ա, Թեհրան, 2005, էջ 585):

<sup>111</sup> Mojavēzī P., *Rūyē dīgar-e sēkē Hēdāyat*, 6<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Hēzārēyē sēvom andīšē, 1386, pp. 48-49.

<sup>112</sup> Լորի (լութի), այսինքն՝ «կերուխում սիրող, սրտաբաց, բույլերին օգնական հանդիսացող և երիտասարդների դասին պատկանող անձ» (Մանսուրեան Յ., Աշվ. աշխ., հ. Բ, էջ 920):

<sup>113</sup> «Gāv-e pīshānī sēfīd», «Zarbē šat» (Mojavēzī P., op., cit., pp. 48-49).

շակել էին: Քաքա Ռոստամը, իմանալով նրա այդ համարման մասին, խուսափում է նրա հետ անմիջական ընդհարումից և հեռանում է թեյարանից: Ս. Յեղայաթն այդ հատվածն այսպես է ներկայացնում. «...Այդ պահին Քաքա Ռոստամը պոչը քաշեց գնաց՝ Դաշ Աքոլի հանդեպ թշնամանքը սրտում թաքցրած: Նա առիթ էր փնտրում վրեժ լուծելու համար»<sup>114</sup>: Իսկ Քաքա Ռոստամի բարկությունն այսպես է նկարագրվում. «....սեացել, մռութը կախել էր», «....դանակ խփեիր սրտին, արյուն չեր կաթի»<sup>115</sup>:

Մասնավորապես երկխոսությունների ժամանակ գործածվող ժողովրդական բառ ու բանի, ասացվածքների միջոցով Ս. Յեղայաթը կարողանում է տպավորիչ դարձնել, ամբողջացնել իր հերոսի մարդկային նկարագիրը: Դաշ Աքոլը քաջ, բռնություն և ստորություն չհանդուրժող, տաքարյուն անձնավորություն է: Ի հակադրություն ներքին այդ արժանիքների՝ Դաշ Աքոլի արտաքինը գոավչություն չուներ՝ սև աչքեր, սև թափ հոնքեր, կարմրավուն, խոր սպիով ակոսված դեմք:

Կամային այդ հատկանիշներով Դաշ Աքոլն աչքի էր ընկել, երբ շատ երիտասարդ էր. «Նրա հայրը Ֆարսի<sup>116</sup> խոշոր կալվածատերերից էր: Իր ունեցվածքը կտակել էր իր միակ որդուն: Բայց Դաշ Աքոլն առատաձեռն, շռայլ, փողի և ունեցվածքի արժեքը չգնահատող անձնավորություն էր: Ողջ կյանքն ազատ և վեհանձն էր ապրել.... ունեցվածքը նվիրում էր չքավորներին, իսկ ինքը, թունդ օդի խմելով, աղմկում էր փողոցներում... Ահա նրա թերություններն ու առավելությունները: Բայց զարմանալին այն էր, որ կյանքում դեռևս չեր հասցրել սիրել կամ սիրահարվել...»<sup>117</sup>:

Դաշ Աքոլն այնքան մեծ վստահություն էր ներշնչում իր շրջապատին, որ նրա բարեկամներից մեկը՝ Յաջի Սամադը, հոգեվարքի ժամանակ նրան է հանձնում իր ողջ ունեցվածքի տնօրինման իրավունքը և ընտանիքի խնամակալությունը: Դաշ Աքոլը ստանձնում է մի պարտականություն, որը իհմնովին փոխում է նրա կյանքի ուղին, ստեղծում նոր խնդիրներ և կանգնեցնում նոր իրադարձությունների առջև: Կյանքն ասես փորձության

<sup>114</sup> «Domaš rā gozšāt rū kūlaš va raft» (նույն տեղում):

<sup>115</sup> «Mēsl-e borj-e zahr-e mār», «Agar kārdaš mīzadand xūnaš dar nēmīāmad» (նույն տեղում):

<sup>116</sup> Ֆարսն իրանի հարավային նահանգներից է, որի կենտրոնը Շիրազ քաղաքն է:

<sup>117</sup> Mojavezī P., op. cit., p. 53.

Է Ենթարկում Աքոլին՝ ստուգելու տված խոստմանը նրա հավատարմությունն ու ազնվությունը: Նա սիրահարվում է Հաջի Սամադի աղջկան՝ Մարջանին: Չնայած իր ուժեղ զգացմունքին՝ Դաշ Աքոլը հրաժարվում է վճռական քայլի դիմելուց՝ մտածելով, որ ինքը տարեց է և չի կարող երջանկացնել մանկամարդ Մարջանին, իրեն վերապահված չէ Մարջանին երջանկացնելու իրավունքը: Բայց պարզվում է, որ նրա անձնազոհությունն ապարոյուն էր, քանի որ երիտասարդ աղջկան ամուսնացնում են Դաշ Աքոլից տարիքով ավելի մեծ և անհրապույր անձնավորության հետ: Այս ամենից հետո նրա համար կյանքը դառնում է անիմաստ: Անտարբերությունն էր այլևս նրա ուղեկիցը: Դեպքերի նման զարգացումը հանգեցնում է անխուսափելի մահվան: Նրա վերջին խոսքերն էին. «Մարջա՛ն, դու ինձ սպանեցիր»:

Դմտորեն օգտագործելով մտահղացած սյուժեի հնարավորությունները՝ Հեղայաթը մի պատմվածքի սահմաններում բանահյուսական բազմաժանր նյութը (ասացվածք, անեծք, երգ, օրինանք) գուգակցում է որևէ ծեսի, հանդիսանքի պատկերման հետ: Դրա շնորհիվ ստեղծագործությունը, գրական-գեղարվեստական արժեքից զատ, ձեռք է բերում ազգագրական ճանաչողական արժեք: ճիշտ այդպիսին է «Աքջի խանում» պատմվածքը, որն ամուսնության տարիքն անցած մի աղջկա անձնական ողբերգության պատմություն է: Նույնիսկ հարազատների կողմից տգեղության պատճառով քամահրանքի արժանացած Աքջին, ավելորդության խորացած զգացումից դրդված, ինքնասպան է լինում:

Ընթերցողի առջև հասարակ, ավանդապաշտ մի ընտանիք է: Նրա միօրինակ առօրյան խախտված է: Հարսնախոսները եկել են Աքջի խանումի կրտսեր քրոջ ձեռքը խնդրելու: Փեսացուի ծնողները եկել են ներկայացնելու ամուսնության նախապայմանները՝ շիրբահա<sup>118</sup>, մահրիե<sup>119</sup> և այլն: Աքջի խանումը դրան հետևից լսում է այդ ամենը: Ս. Հեղայաթն այսպես է բնութագրում նրա հոգեվիճակը. «Արյունը գլխին է տալիս»: Նախանձից դառնացած՝ նա վարկաբեկում է քրոջը և մեղադրում անբարոյա-

<sup>118</sup> Šīrbahā – «Կաթնագին, դրամական նվեր, որ աղջկա ձեռքը խնդրողը նվիրում է նրա ծնողներին» (Մանսուրեան 3., նշվ. աշխ., հ. Բ, էջ 663):

<sup>119</sup> Mahrīyē – «Տայր՝ գումար կամ գույք, որ փեսան վճարում կամ հանձնառու է լինում վճարել հարսնացուին» (Նույն տեղում, էջ 1065):

կանության մեջ՝ արժանանալով մոր նախատինքին՝ «Լեզուդ չորանա», «Մեռել լողացնողի բաժին դառնաս», «Մահդ տեսնեմ»<sup>120</sup> և այլն:

Ս. Յեղայաթը շատ գունեղ է նկարագրում տան կրտսեր աղջկա հարսանեկան ծեսը: Պատմվածքում սկեսրոջ դիմումը նորահարսին բանահյուսական գեղեցիկ հատված է հիշեցնում.

«Էy yār mobārak bād, ēnšā-allāh mobārak bād! Āmadīm bāz āmadīm az xūnēyē dāmād āmadīm, hamē māh o hamē šāh o hamē čēshmhā bādūmī. Էy yār mobārak bād, ēnšā allāh mobārak bād! Az xūnēyē ’arūs āmadīm-hamē kūr o hamē šal o hamē čēshmhā nam namī. Yār mobārak bād, āmadīm hūrī o parī bēbarīm, ēnšā allāh mobārak bād»<sup>121</sup>

(Ե՞յ, յա՛ր, շնորհավոր լինի, Աստծով շնորհավոր լինի: Եկել ենք, կրկին փեսայի տնից ենք եկել: Ամենքը՝ լուսին, ու ամենքը՝ թագավոր, ու բոլորը՝ գեղեցիկ աչքերով: Ե՞յ, յա՛ր, շնորհավոր լինի, Աստծով շնորհավոր լինի: Եկել ենք, կրկին հարսի տնից ենք եկել: Բոլորը՝ կույր, ու բոլորը՝ կաղ, ու բոլորի աչքերը՝ ճպոտ: Յա՛ր, շնորհավոր լինի, եկել ենք՝ հուրի-փերի տանենք, Աստծով շնորհավոր լինի):

Ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե հեղինակն ինքը ապրել է նման ընտանիքում և ներկա է եղել այդ ծեսին: Ֆրանսիացի հայտնի արևելագետ Ժիլբեր Լազարը, գնահատելով Ս. Յեղայաթի տաղանդը, գրում է. «Այս բոլոր կերպարները հյութեղ և կենդանի լեզվով են խոսում՝ լի առակներով և ժողովրդական ասացվածքներով: Յեղայաթն առաջինը չէ, որ ժողովրդական բանահյուսությունը պարսից գրականության մեջ օգտագործեց, բայց չկա նրա նման մեկը, որ այսքան բնական և առանց դույզն-ինչ շինծուության այդպիսի արտահայտություններ ներմուծեր պատմվածք և միահյուսեր թեմային»<sup>122</sup>.

Իրավագուրկ վիճակի հետևանքով կանանց խեղված ճակատագրերի հաճախաղեա խնդրին է անդրադարձել Ս. Յեղայաթը:

«Զանի քե մարդաշ րա գոմ քարդ» («Ամուսնուն կողը ած կինը») պատմվածքն սկսվում է այգեկութի գունեղ նկարագրու-

<sup>120</sup> «Xūn xūnaš rā mīxord», «Ēlāhī lāl bēšavī», «Mordē šūy tarkībat rā bēbarad», «Dāqat bē dēlam bēmānad» (Mojavēzī P., op. cit., pp. 342-344).

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 344:

<sup>122</sup> Monty V., *Sādēq Hēdāyat*, maqālēyē Žilbēr Lāzār, tarjomēyē Hasan Qaēmyān, 1<sup>st</sup> print, Tehran, 1382, p. 121.

թյամբ: Իրենց տքնանքի արդյունքներով խանդավառված գյուղացիները խաղողով լի արկղերը դասավորում են մոտակա հին չինարի ծառի տակ: Շառից կախված է դախիլ<sup>123</sup>, մի մանրամասն, որի միջոցով ընթերցողը ծանոթանում է իրանցիների շրջանում տարածված հավատալիքներից ևս մեկին:

Պատմվածքի հերոսները՝ Զարինքոլահը և Գոլ Բաբուն, նույնպես զբաղված են խաղողի բերքահավաքով: Ահա այդտեղ է, որ հայացքների փոխանակումով ծնվում են սիրո առաջին կայծերը: Գոլ Բաբուն շրջապատին ուրախացնելու և գեղեցիկ աղջիկների ուշադրությունը գրավելու համար տաղեր է երգում, իսկ մյուսները ձայնակցում են նրան.

«Gälēš kūrī āhāy lē lē. bēšīm bē jā, āhāy lē lē.

Yē poštē ājār, do poštē ājār, bīyā bēšīm bējār āhāy lē lē.

Bīyā bēšīm fākūn to mī xāharī»<sup>124</sup>

(Գալեշիցի աղջիկ, վայ լե, լե, / Գնանք բրնձի արտ, վայ լե, լե, / Մի խուրձ զամբյուղում, երկու խուրձ զամբյուղում, / Ե՛կ գնանք բրնձի արտ, վայ լե, լե, / Ե՛կ գնանք ամբար, դու իմ քույրն ես):

Աշխատանքային երգերը ստեղծվում են աշխատանքի ժամանակ և գյուղական ստեղծագործություններ են. աշխատանքից դուրս դրանք գոյություն չունեն: Իհարկե, երբեմն աշխատանքի ժամին երգվում են բացառապես ոչ աշխատանքային երգեր: «Փաստերը ցույց են տալիս, որ կան բազմաթիվ երգեր, որոնք աշխատանքային չեն, բայց երգվում են աշխատանքի ժամանակ (սիրո երգեր, խաղիկներ, երգիծական երգեր և այլն)»<sup>125</sup>, - գրում է Գ. Գրիգորյանը:

Զարինքոլահը և Գոլ Բաբուն միմյանց սիրո խոստումներ են տալիս, սակայն աղջկա մայրը, իմանալով եղելությունը, բարկությունից անեծքներ է տեղում աղջկա գլխին. «Մեռել լողացնելու թախտին տեսնեմ քեզ, հա՞», «Դանկարծամահ լինես», «Դարսանիքդ սուզ դառնա», «Մուրազդ փորդ մնա», «Զահել մեռնես»<sup>126</sup> և

<sup>123</sup> Daxīl-daxīl bastan – «Թել, հազած շորի ծվեն և այլն կախել սրբատեղիի դռանը՝ ապավինելով սրբի ողորմածությանը» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 471):

<sup>124</sup> Mojavēzī P., op. cit., p. 157.

<sup>125</sup> Գրիգորյան Գ., Դայ ժողովրդական բանահյուսություն, Եր., «Լուս» հրատ., 1980, էջ 319:

<sup>126</sup> «Էլահի րույն տաքէ մօրդէշն խնէ բիօֆտի», «Varbēparī», «Arūsīat azā bēšavad»,

այլն: Անեծքների այս «փունջը» աղջկան ճակատագրական սխալ քայլից հետ պահելու զայրույթի պոռթկումն է: Դա մոր՝ աղջկան երջանիկ տեսնելու հույսի խորտակումն է: Եվ այդ ընկալումից է առաջ գալիս անեծքներում մահվան, վերջի շեշտադրումը:

Ամուսնությունը, այնուամենայնիվ, կայանում է: Որպես օժիտ՝ մի պղնձե կաթսա, դեղին պղնձից ինքնաեռ և ճոխ հյուրասիրություն՝ համազյուղացիների մասնակցությամբ... Զարինքոլահի և Գոլ Բաբուի ամուսնության ծիսակարգը լիակատար է դարձնում մոլլա Սեյեն Մասումին, որը, մենքարի<sup>127</sup> վրա նստած, երկու-երեք կրոնական երգ է երգում<sup>128</sup>:

Ամուսնանալուց հետո գույգը տեղափոխվում է Թեհրան: Քաղաքի այլասերված միջավայրում հայտնված իշապան Գոլ Բաբուին չի հետաքրքրում ընտանեկան կյանքը: Նա իր նոր ընկերների օրինակով ամեն օր դաժան ծեծի ու մտրակահարման է ենթարկում կնոջը: Ո՞չ Զարինքոլահի հոգատարությունն ու ջերմ սերը, ո՞չ նույնիսկ նորածին երեխան ի գորու չեին նրան ճիշտ ուղու բերելու: Ի վերջո Գոլ Բաբուն լքում է ընտանիքն ու Վերադառնում իր ծննդավայր: Զարինքոլահը գնալու տեղ չուներ: Նրա հիշողության մեջ կրկին հնչում է Քեշվարսուլթանի երգած տաղը.

«Xūnēyē bābā nūn o anjīl xūnēyē šūvar čūq o zanjīl īšālā mobārak bād!!»<sup>129</sup>

(Յոր տանը՝ հաց ու թուզ, / Ամուսնու տանը՝ լուծ ու շղթա, / Աստծով շնորհավոր լինի):

Զարինքոլահը, փոքրիկին գիրկն առած, երկար հարցուփորձից հետո գտնում է ամուսնուն, սակայն արդեն ուշ էր:

Պատմվածքի այս հատվածում Ս. Շեղայաթն օգտագործում է Մազանդարան նահանգի (իրանի հյուսիսային շրջան) բարբառով նախադասություններ, որոնք արտաքերում է Գոլ Բաբուի մայրը, որը, դռան մոտ կանգնած, արգելում է Զարինքոլահին տեսնել ամուսնուն.

«Mah rīkāy jānē jā čī xānī? Bī hayā zanā xējālat nakēšnī; tēh īn vačē rā mūl hā kardī; āsāxānī mah rīkāy gardan bēnganī?»<sup>130</sup>

«Hasrat bē dēl bēmānī», «Javānmarg bēšavī» (Mojavēzī P., op. cit., p. 163).

<sup>127</sup> Mēnbar – «Մասնավոր ամբիոն, որի վրա նստած՝ քարոզում է մահմեդական հոգևորականը» (Մանսուրեան Ր., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1045):

<sup>128</sup> Տե՛ս Մոյավēzī P., նշվ. աշխ., էջ 163, 164:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>130</sup> Նույն տեղում, էջ 175:

(Տղայից ի՞նչ ես ուզում, անամոթ կին, չե՞ս ամաչում, քո  
այս Երեխան ապօրինի վաստակ է, հիմա ուզում ես տղայիս  
վզի՞ն կապել):

Զարինքոլահը, իմանալով Գոլ Բաբուի Երկրորդ ամուսնու-  
թյան մասին, իր համար ավելորդ բեռ դարձած Երեխային թող-  
նում է ամուսնու գյուղում՝ մի տան դռան առաջ, և հեռանում՝ նոր  
բախտ որոնելու:

«Թախթե Արու Նասր» («Արու Նասրի գահը») պատմվածքը  
գրված է բարձր հայրենասիրական ոգով: Մի խումբ արտասահ-  
մանցի հնագետներ Շիրազ քաղաքի մոտակայքում պեղումների  
ընթացքում հայտնաբերում են քարե դագաղ, որի մեջ Սասանյան  
թագավորության ժամանակաշրջանի զմուված մի դիակ էր՝ ոսկե-  
թել հագուստով, գլխին մարգարտազարդ սաղավարտ, վզին թան-  
կարժեք քարերից պատրաստված մանյակ և այլն: Պատմվածքում  
դեպքերը զարգանում են այս հայտնագործությունից հետո:

Երբ խումբն ավարտում է պեղումները, որոշում է մի գիշեր  
զվարճանալ: Դրավիրում են տեղի երգիչների և նվագածուների:  
Ս. Շեղայաթը մեջբերում է բանահյուսական երգ՝ այս անգամ  
Ֆարս նահանգի Զահրոն քաղաքի բարբառով.

«Bolandī sēyl-e 'ālam mīkonam man, yār jūnī,

Nazar bar do sū došman mīkōnam man, yār jūnī,

Yēkīm šab dīgē māro nēgah dār, yār jūnī,

Kē fardā dard-e sar kam mīkonam man, yār jūnī, mēhrabūnī,

Bē qorbūnat mīram to kē nēmīdūnī...»<sup>131</sup>

(Բարձունքից աշխարհն եմ դիտում, իմ սիրելի՝ յար, / Երկու  
դիրքերից թշնամուն եմ հետևում, իմ սիրելի՝ յար, / Մի գիշեր էլ  
ինձ պահի՛ր, իմ սիրելի՝ յար, / Վաղը կզնամ, իմ սիրելի՝ յար, /  
Մատադ լինեմ քեզ, դու չգիտես...):

Պատմվածքում սիրային այս տաղիկի ընտրությունը պա-  
տահական չէ: Արշավախումբն ավարտել էր գործը և պիտի մեկ-  
ներ: Ամեն մի ավարտ իրաժեշտի տրամադրություն է ծնում: Այդ  
տրամադրությամբ են համակված թե՛ հնագետները, թե՛ Երա-  
ժիշտներն ու երգիչները: Եվ գրողը գտել է այդ տրամադրությունը  
լավագույնս արտահայտելու միջոցը:

Սյուժեի հուզակերանական խորքայնությունն ընդգծելու  
առումով կարելի է պարզապես որպես գյուտ արժենորել «Զան-

<sup>131</sup> Նույն տեղում, էջ 307:

գալ» («Մագիլ») պատմվածքում «Թափառիկ սոխակ» ժողովը դական երգի մեջբերումը: Բնավեր թոշնի են նման մորը կորցրած երեխաները՝ քույր և եղբայր: Նրանք ապրում են հոր և խորթ մոր հետ, բայց մեկուսացած են մի խոնավ սենյակում: Մի գիշեր, օգտվելով ծնողների բացակայությունից, նրանք որոշում են բակում՝ ավագանի մոտ, անկողին փոել և քնել: Ժամանակը պատեհ համարելով՝ քննարկում են իրենց փախուստի ծրագիրը: Քույրը, իրենց մտահղացումով ոգևորված, մտաբերում է մանկության տարիներին մորից լսած մի երգ.

«Manam, manam, bolbol-e sargaštē, az kūh o kamar bargaštē,

Mādar-e nābēkār marā koštē, pēdar-e nāmard marā xordē.

Xāhar-e dēlsūz ostoxānhāyē marā bā haftā golāb šosē,

Zīr-e dēraxt-e gol čāl kardē, manam šodam yē bolbol:

Par-par»<sup>132</sup>

(Ես եմ, ես եմ սոխակը թափառիկ՝ / Վերադարձած սար ու ձորից: / Չար մայրս է ինձ սպանել, / Տմարդ հայրս է ինձ կերել: / Սրտացավ քույրս / Ուկորներն իմ յոթ վարդի ջրով լվացել, / Թաղել է վարդի տունկի տակ: / Ես էլ փետրաթափ սոխակ եմ դարձել):

Գուցե այս երգը նրանց սնարին երգել է սիրտը նեղված մայրը, որ այդպես տպավորվել էր նրանց մանկական հոգում և հիշողության մեջ: Եվ որքա՞ն համահունչ է այն գրողի ասելիքին:

Իբրև քաղաքացիական պատասխանատվության սուր զգացում ունեցող արվեստագետ՝ Ս. Յեղայաթը չեղ կարող անտարբեր մնալ իր երկրում խմորվող ազգային-քաղաքական տրամադրությունների նկատմամբ: Դրանց անդրադառնալիս հատկապես եթե նկատի առնենք, որ դրանց վերաբերյալ արգելված էր բացորոշ խոսել, նա դիմում է այլաբանության, երգիծելու հնարավորություններ տվող առակի ժամրին:

Կենդանական առակի կանոններով է գրված նրա «Խարե դաջալ» («Ների ավանակը») վերնագրով պատմվածքը: Կենդանական առակների լեզուն պարսիկ ընթերցողին ծանոթ ու հասկանալի է դեռևս դասական գրականությունից և բանահյուսությունից՝ շնորհիկ հանրահայտ «Քալիլէ վա Շեմնե» ժողովածուի: Ս. Յեղայաթի նպատակն իրանի իշխանության և օտար գաղութարանների հանցագործ համագործակցության մասին բարձրածայնելն էր: Ամենայն հավանականությամբ նկատի ունենալով

<sup>132</sup> Նույն տեղում, էջ 96:

անգլո-իրանական նավթային ընկերությունը՝ Յեղայաթը գրում է, որ մեծն առյուծին (Ոեզա շահին) աղվեսը (Անգլիան) կարգել է թագավոր, որպեսզի նա պաշտպան կանգնի երկրի գանձերին՝ հօգուտ իրենց ընդհանուր շահի: Մեծն առյուծը, որ կոչվում է Դավալփա<sup>133</sup>, ոչխարների (հասարակ մարդկանց) վերջին ուժերն է սպառում: Նա իր պարտականությունը կատարում էր ըստ համատեղ կազմած ծրագրի և գոհ էր արդյունքներից: Սակայն խորամանկ աղվեսը, կանխազգալով անցանկալի զարգացումները, «Դավալփային՝ Խար Դար Չաման<sup>134</sup> երկրի (Ս. Յեղայաթն այսպես է անվանում Իրանը – Ա. Յ.) թագավորին, ունելիով բռնում և ջրանցքի ճանապարհից դուրս է նետում: Նա էլ ոհզած հարստությունից իրեն բաժին է վերցնում ու կորչում: Այս պահին աղվեսը վիշապին (թագաժառանգին – Ա. Յ.) Իրանում տեր է նշանակում իր գանձերին և հանձնարարում ոչխարներին արյունաքամ անել, որպեսզի նախկին թագավորի ավանդույթը պահպանվի»<sup>135</sup>:

Առյուծից հետո վիշապը, այսինքն՝ թագաժառանգ Մուհամմադ Ոեզա շահն է շարունակում ծծել ոչխարների արյունը: Ահա թե ինչ այլաբանական պատկերներով է նկարագրում Ս. Յեղայաթը ոչխարների ապրելակերպը. «Խար Դար Չաման երկրի պահեստներում մեծ քանակությամբ դեղեր կային, բայց ոչխարները տառապում էին քոսախստից, սովի և քաղցի մատնված, սակայն հարգված չարաշահողները առվույտը պահում էին ամբարներում: Ոչխարները ոտքով էին ճամփորդում, բայց հարկադրված էին ավիաուղիների ընկերություններին հարկ վճարել»<sup>136</sup>: Ինչպես ակնհայտ է վերջին նախադասությունից, հայրենասեր գրողի զայրույթը դառնում է անտանելի, իսկ այլաբանությունը՝ ավելի քան թափանցիկ: Այդպիսի թափանցիկությունը գերակայող է նրա «Թուփե մորվարի» («Մարգարտե թնդանոթ») ստեղծագործության մեջ: Ավելի ճիշտ՝ այստեղ նա առավելապես խախտել է

<sup>133</sup> Դավալփա – «Երևակայական էակ՝ մարդու նմանությամբ, սակայն անհամեմատ երկար ու բարակ ոտքերով, որոնց պատճառով էլ անկարող է քայլել: Նրանք իբր թե ապրում էին անտառներում ու ամայի վայրերում և որսալով պատահական անցորդների՝ փաթաթվում էին նրանց վրա և ստիպում՝ իրենց շալակած պտույտ տան» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 498):

<sup>134</sup> Խար Դար Չաման – խառնաշփոթություն, խառնակություն, անտերություն (նույն տեղում, էջ 434):

<sup>135</sup> Hēdāyat S., Majmū'eyī az āsār-e Sādēq Hēdāyat, p. 486.

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 485:

այլաբանության կանոնները՝ երգիծական բացախոսությամբ մոտենալով քաղաքական պամֆլետի ժանրին:

Ս. Շեղայաթը դառնացած է իր ժողովրդի մեջ արմատացած սնուտիապաշտությունից: Կծու է նրա երգիծանքը, երբ խոսքը վերաբերում է Ռեզա շահին, որին նա անվարան ներկայացնում է որպես անխիղճ, անուս և դավաճան տիրակալ: Նա հետահայաց անդրադառնում է արաբների՝ Պարսկաստան ներխուժմանը, ապա՝ անցում կատարում Պորտուգալիայի պատմությանը:

Այսպիսի էկլեկտիկ բովանդակության պատճառով ստեղծագործությունը սուր քննադատության է ենթարկվել: Այսպես, օրինակ, արձակագիր և թարգմանիչ Թուրաջ Ֆարազմանդը հետևյալ կարծիքն է հայտնել. «Ես «Թուփե մորվարի»-ն բարձր չեմ գնահատում.... Մի մարդ, ով գրել է «Բուֆե քուռ»-ը, «Սե դարրե խուն»-ը և «Սայե ռոշան»-ը, չպետք է գրեր «Թուփե մորվարի»-ն... Ընդհանուր առմամբ արաբների նկատմամբ Ս. Շեղայաթի զայրույթը մեր օրերի քաղաքակրթությանն ու մտայնությանն անհարիր է»<sup>137</sup>: Նրան համակարծիք է պարսիկ մեկ այլ գրականագետ՝ Մուհամմադ Ռեզա Սարշարը<sup>138</sup>:

Ակնհայտ է, որ Ս. Շեղայաթը կյանքի վերջին տարիներին այլևս անկարող էր հանդուրժել երկրում ստեղծված կամայականության մթնոլորտը: Նա իր նամակներից մեկում ընկերոջը՝ Շասան Շահիդ Նուրայիին, «Թուփե մորվարի»-ի մասին գրում է. «Եթե տրամադրություն ունենայի հեգնախառն բաներ գրելու, ապա նրանց (իշխանությանը – Ա. Յ.) մի լավ տեղը կդնեի և իրենց սերունդն աղբի կվերածեի»<sup>139</sup>.

Երեք ամիս անց (մայիսի 15, 1947) նամակներից մեկում Ս. Շեղայաթը գրում է. «Մտադիր եմ հեգնախառն և անպատկառ այնպիսի մի բան գրել, որը թուքումուր լինի դրանց բոլորի համար: Միգուցե չկարողանամ այն տպագրել, բայց կարևոր չէ: Սա կլինի իմ վերջին հարվածը, որպեսզի իրենց մտքում չասեն՝ «Ինչքա՞ն հիմար էր»<sup>140</sup>:

Ի թիվս բանահյուսական այլ ժանրերի՝ Ս. Շեղայաթը հատկապես արժենորում էր հեքիաթը՝ որպես ժողովրդի ակնկալիք-

<sup>137</sup> Qāsēmzādē M., op. cit., p. 113.

<sup>138</sup> Տե՛ս Saršār M. R., *Rāz-e šohrat-e Sādēq Hēdāyat*, 5<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Kānūn-e andīshēyē javān, 1388, էջ 55:

<sup>139</sup> Hēdāyat S., *Haštād o do nāmē bē Hasan Šahīd Nūrāyī*, p. 87.

<sup>140</sup> Նույն տեղում, էջ 109:

ներն ու աշխարհնկալումն արտացոլող գանձարան: Բնականաբար, նա պետք է օգտագործեր և օգտագործել է այս ժամրի բազմանշանակ հնարավորությունները: Հեքիաթի ժանրով ստեղծագործելիս նա դրսենորել է խոսքի պարզության բացառիկ կարողություն, ժողովրդի հետ նրա լեզվով հաղորդակցվելու հմտություն: Այդօրինակ պարզության նմուշ է Ս. Շեղայաթի «Աբեղեղեցի» («Կենարար ջուրը») ստեղծագործությունը: Այն արտացոլում է պարսիկների՝ երջանկության և ազատության բաղձանքները, երազանքներ, հանուն որոնց իրագործման նա պայքարի փայլուն օրինակներ է տվել իր նորագույն պատմությունների էջերում: Ս. Շեղայաթը ցանկանում էր արթնացնել իր ժողովրդի ազատաբաղ ոգին:

Երեք եղբայրներից կրտսերը՝ Ահմադաքը, կենարար ջրի օգնությամբ, որը գտնվում էր Ջամիշեքահար (Մշտագարուն) քաղաքում, մտադրվում է փրկել երկու՝ Զառաֆշան (Ոսկեհյուս) և Մահթաբան (Լուսնկա) երկրների բնակիչներին: Դրանց տերերը՝ Ահմադաքի երկու եղբայրները, խորամանկությամբ ժողովրդին իրենց կողմն էին գրավել, որովհետև Զառաֆշան երկրի բնակիչները կույր էին, իսկ Մահթաբանինը՝ խուլ ու համր: Նրանք կորցրել էին նաև իրենց ողջախոհությունն ու առողջ մտածելակերպը:

«Ահմադաքը նետ ու աղեղը վերցրեց, կոիվ գնաց և դարան մտավ: Կույր և խուլ զինվորները կողք կողքի էին նստած, որպեսզի խուլերը՝ կույրերին աչքեր, իսկ կույրերը խուլերին ականջ լինեին.... Պատերազմը երկարեց և պատճառ դարձավ, որ արյան գետեր իռսեն՝ լցված դիակներով: Զառաֆշան և Մահթաբան երկրների ոսկյա գենքերը չդիմացան Ջամիշեքահար քաղաքի պողպատե գենքերին, և զորքը ցրվեց....»<sup>141</sup>, - գրում է Ս. Շեղայաթը:

Արևելքի և Արևմուտքի խոսքարվեստին քաջատեղյակ գրողը, կարևորելով հեքիաթի ժանրի արտահայտչական հնարավորությունները, ընդգծում էր, որ այն տարածում ունի աշխարհի բոլոր ժողովուրդների մշակույթներում: Ջարկ է նկատել, որ Ս. Շեղայաթն անդրադառնում է տարալեզու հեքիաթների թեմաների ընդհանրության կարևոր իրողությանը՝ միաժամանակ նշելով դրանց բովանդակային զարգացումների տարբերությունը՝ որպես ինքնատիպությունը պայմանավորող հատկանիշ: «Ջամեմա-

<sup>141</sup> Hēdāyat S., Nēnēštēhāyē parākandē, էջ 230:

տելով տարբեր ազգերի հեքիաթները, որոնք տարածված են հնդեվոռական ցեղերի ողջ բնօրրանում, նույնիսկ կարմրամորթ և սևամորթ ցեղերի շրջանում, տեսնում ենք, որ դրանք շատ փոքր տարբերություններով բոլոր տեղերում ել կան: Շոտլանդիայի հովիվը, Սիսիլ կղզու ձկնորսը, Ռայանի դայակը, ռուս մուժիկը, հնդիկ սերմնացանը և ուղտապանը բոլորն ել թերուս և անհասկացող մարդիկ են: Սրանք զարմանալի և ծիծաղելի պատմություններ են, որոնց արտաքին կառույցը տարբերվում է, բայց բոլորի թեման նույնն է: Օրինակ՝ «Մահփիշանի»<sup>142</sup> («Լունաճակատը») իրանական հեքիաթը փոքր տարբերություններով առկա է նաև ֆրանսիացիների, գերմանացիների, իռլանդացիների մոտ, իսկ թեմայի առումով ավելի մոտ է նորվեգական հեքիաթին»<sup>143</sup>:

«Կարմիր գլխարկը» հեքիաթի իր մշակումը Ս. Շեղայաթը վերնագրել է «Հաչք քուչուլույե ղերմեզ»<sup>144</sup> («Կարմիր գլխաշորով փոքրիկը»): Նշենք, որ Ս. Շեղայաթը տեղայնացնում է հեքիաթը՝ գլխարկի փոխարեն ընտրելով «լաչաք» (գլխաշոր) բառը<sup>145</sup>: Շեղվելով հայտնի նախօրինակներից՝ Ս. Շեղայաթն իրապատում ավարտ է տվել իր տարբերակին: Գայլը նախ՝ ուտում է տատիկին, իսկ վերջում՝ փոքրիկ աղջկան<sup>146</sup>:

Այլ ժողովուրդների հեքիաթներից կատարած մշակումներից են «Շանգուլ վա Մանգուլ» («Շանգուլը և Մանգուլը»), «Աղամուշե» («Պարոն մկնիկը»), «Ղեսեյե գորգ վա բոզղալե» («Գայլի և այծի հեքիաթը»), «Փեսարաք թանքալ» («Ծույլ տղան»), «Ղեսեյե դանդան մորվարիդ, գիս գոլաբաթուն»<sup>147</sup> («Մարգարտեատամ, Ուկեծամիկ հեքիաթը») և մի քանի ուրիշ ասքապատումներ, որոնք, ի թիվս նրա այլ մշակումների, սիրով ընթերցում են ոչ միայն փոքրիկները, այլև մեծահասակները:

Պարսկական հեքիաթները սովորաբար սկսվում են «Կարչկար, բացի Աստծուց ոչ ոք չկար» և ավարտվում «Մեր պատ-

<sup>142</sup> «Māhpīśānī».

<sup>143</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 236.

<sup>144</sup> «Lačak kūčülüyē qērmēz».

<sup>145</sup> Պարսիկ աղջիկները գլխարկի փոխարեն գլխաշոր էին կրում:

<sup>146</sup> Շեքիաթի մշակումը նա օգտագործում է՝ ևս մեկ անգամ իր ժամանակակիցների ցավը բարձրածայնելու համար:

<sup>147</sup> «Šangūl va mangūl», «Āqā tūšē», «Qēsēyē gorg va bozqālē», «Pēsarāk-e tanbal», «Qēsēyē dandān morvārīd, gīs golābatūn».

մությունը վերջացավ, ագռավն իր տուն չհասավ» կամ «Վեր ելանք՝ մածուն էր, ցած իջանք՝ թան էր, մեր պատմությունը սուտ էր: Վեր գնացինք՝ թան էր, ցած իջանք՝ մածուն էր, մեր պատմությունը ճիշտ էր» բանաձևերով<sup>148</sup>: Գրեթե նույնպիսի սկիզբ ու ավարտ ունեն հայկական հեքիաթները՝ «Լինում է, չի լինում», «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Սրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» և այլն:

Ս. Շեղայաթը գրականության մեջ ձեռք բերած հաջողությունների համար պարտական է ոչ միայն իր տաղանդին, այլև աշխատասիրությանը, նյութի մեջ համակողմանիորեն խորամուխ լինելու կարողությանը: Դրան նպաստել են նաև Եվրոպայում անցկացրած տարիները և այդ ընթացքում նրա ուսումնասիրած արտասահմանյան նյութերը, որոնք ավելի բեղմնավոր դարձրին բանահյուսական նյութով ստեղծված նրա գրականությունը:

Հայտնի գրող Ս. Ֆ. Ֆարզանեն այսպես է բնութագրում Ս. Շեղայաթի ուղին. «Շեղայաթը հարգանքի է արժանի, որովհետև գիտի, որ եթե իր ժամանակակից ընթերցողի հետ համընթաց լինի, կարող է նաև խոսել նրա առօրյա խնդիրների և նրան հուզող նյութերի մասին: Եղել են և կան մարդիկ, որոնք իրենց ժամանակաշրջանի վերաբերյալ վկայություններ են թողել, բայց Շեղայաթը չի բավարարվել այդքանով: Նա այնպիսի վկա է, որը խնդիրների էությանն է ուշադրություն դարձնում, իր անհատական մոտեցումն ունի, մտածածը բարձրաձայնելու և հարկ եղած դեպքում առարկելու կարողություն, բանաստեղծական զգացողություն, այդ պատճառով իսկական գրող է: Շեղայաթն իր արվեստը խոսքի իսկական վարպետների մոտ է սովորել»<sup>149</sup>: Այդ իսկական վարպետներից «ամենամեծը Շեղայաթի համար» իր ժողովուրդն էր, որի հոգու նվիրական թրիոներից ծնված խոսքը նրա արձակի ավիշն ու ատաղձը դարձավ:

<sup>148</sup> «Yēkī būd yēkī nabūd, qēȳt az xodā hīčkas nabūd», «Qēsēyē mā bē sar rēsīd, kalāqē bē xūnē-aš narēsīd», «Bālā ūmadīm māst būd pāyīn raftīm dūq būd qēsēyē mā dorūq būd, bālā raftīm dūq būd pāyīn ūmadīm māst būd qēsēyē mā rāst būd» (Hēdāyat S., Nēvēštēhāyē pārākandē, pp. 145, 149, 154).

<sup>149</sup> Farzānē M., Āšnayī bā Sādēq Hēdāyat, p. 424.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ  
ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ ԻՐԱՍՈՒՄ  
19-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Բանահյուսական արվեստի դրսերումները ժողովրդական ոգու, հոգեբանության և աշխարհընկալման ծևեր են՝ իրադարձությունների անմիջական արձագանքներից սկսած մինչև կյանքի և իրականության խորքային ու խորհրդանշանական իմաստավորումները, առակներից և ասացվածքներից մինչև էպիկական լայնահուն և մեծածավալ ստեղծագործությունները, որոնք դառնում են պատմագիտական, իմաստասիրական, կրոնագիտական ուսումնասիրությունների հատուկ առարկա: Այդպիսիք են բոլոր ժողովուրդների դիցաբանական երկերը, էպոսները, մասնավորապես «Մահաբհարատա»-ն և «Շամայանա»-ն, վեդաները, իին հունական առասպելները և Հոմերոսի էպիկական պոեմները, գրադաշտական գրական հուշարձանները, հայկական էպոսները, որոնք հնուց ի վեր դարձել են իմաստության կենդանի աղբյուրներ և առ այսօր չեն դադարել այդպիսին լինելուց: Մեր ժամանակների մեծագույն մտածողներն ու քերթողները ներկայումս ել առատ սնունդ են ստանում այդ անսպառ հարստությունից<sup>150</sup>: Ճեղայաթը ևս քաջատեղյակ էր այս ամենին, և այդ է պատճառը, որ զարմանալի տարողունակ և խորքային է նրա մշակութագիտական շտեմարանը, որով նա դարձել է 20-րդ դարի մեծագույն մտածողներից մեկը:

19-20-րդ դարերում՝ աշխարհագրական հայտնագործությունների ժամանակաշրջանում, որոշակի հետաքրքրություն առաջացավ ժողովրդի կյանքի, ապրելակերպի և կենցաղի

<sup>150</sup> Բերենք միայն մեկ օրինակ: Ֆրանսիացի մեծագույն գրողներից Ալբեր Կամյուն նորովի է իմաստավորել Սիզիփոսի առասպելը՝ դրան հաղորդելով ժամանակակից հնչեղություն: Պարզվում է, որ անվերջանալի անարդյունք աշխատանքի դատապարտված Սիզիփոսն ինքնագիտակցության և մտորումի պահ է գտնում, երբ նրա ձեռքից քարը դուրս է թռչում և հետ գլորվում: Զեռքերն ազատված Սիզիփոսն այլևս ազատ է և կարող է խորհել ինքն իր մասին, այսինքն՝ ազատության մասին: Սիզիփոսը մարմնավորում է հոգսաշատ և ծանր գործունեության դատապարտված մարդկությանը, որը ժամանակ անգամ չունի մտածելու, թե ով է ինքը, որտեղից է գալիս և ուր է գնում (տե՛ս Կամյո Ա., Միֆ օ Սիզիփե, Էսсе օ Աբսурդ // Ըմերք բոց, Մ., Издательство политической литературы, 1990, էջ 222-319):

նկատմամբ: Յենց այդ ժամանակ Արևմուտքում, մասնավորապես Եվրոպայում, բանագիտությունն առանձնացավ իրու ինքնուրույն գիտաճյուղ, և բանահյուսական նյութերը կանոնակարգվեցին: Ուսումնասիրության սկզբնական շրջանում հարյուրավոր հետաքրքրասերներ մեկնում էին հեռավոր ծանոթ կամ անծանոթ երկրներ, որպեսզի նյութեր հավաքեին քաղաքակրթությունից հեռու վայրերի բնակիչների կենցաղից, մշակույթից, սովորույթներից, հավատալիքներից և այլն: Այդ բոլոր ուսումնասիրությունները գնահատելի և ոգևորիչ էին, բայց իհմնված չէին գիտական մեթոդի վրա, քանի որ ուսումնասիրողները մեծ մասամբ պատահական մարդիկ էին, որոնց աշխատանքը գուտ սիրողական էր: Այդ պատճառով արխիվներում հավաքված նյութերը համակարգված չէին և հակասում էին մեկը մյուսին: Ստեղծված իրավիճակը կարգավորելու համար սկսեցին մշակվել բանագիտության (ֆոլկլորիստիկա) մեթոդաբանական ծրագրեր, իրականացվել իրատարակչական լայնամասշտաբ աշխատանքներ, ապա ի հայտ եկան գիտականորեն իհմնավորված բանասիրական ուսումնասիրություններ: Այս աշխատանքների շնորհիվ մոռացությունից փրկվեց բազմաթիվ ազգերի, այդ թվում՝ Իրանի հին և հարուստ բանարվեստը, որի պահպանման համար միայն տեղի ուսումնասիրողների ջանքերը բավարար չէին:

Ինչպես արդեն նշել ենք, պարսկական բանահյուսության ուսումնասիրության զարգացման գործում ավանդ ունեցան այնպիսի օտարազգի գիտնական-արևելագետներ, ինչպիսիք են Ռ. Մասսեն, Դ. Լ. Ռ. Լորիմերը, Զ. Մորիերը, Ա. Քրիստենսենը, Յան Ռիփբան, Ա. Ռոգենֆելդը, Դ. Ս. Կոմիսարովը, Ն. Ա. Կիսյակովը, Վ. Ա. Ժուկովսկին և ուրիշներ: Նրանց ջանքերի շնորհիվ ստեղծվեցին բազմազան ազգագրական և բանահյուսական նյութեր: Այս մասին Ս. Յեղայարը գրում է. «Պարսկական ասացվածքները պարսկական արձակի բարձրարժեք և կենդանի նմուշներից են: Դրանք իրենց թեմատիկ բազմազանությամբ և գեղարվեստական մակարդակով համաշխարհային գրականության մեջ արժանի տեղ են զբաղեցնում և կարող են համեմատվել լավագույն գրականության հետ: Ցավոք, դրանցից մինչև իհմա մեզ են հասել միայն Դ. Լորիմերի ժողովածուն (*Persian Tales*, London, 1919)` Քերմանի և Բախթիարի<sup>151</sup> ժողովրդական հեքիաթները՝ անգլերեն

<sup>151</sup> Քերմանը Պարսկաստանի հարավարևելյան մեծ քաղաքներից է, իսկ Բախ-

թարգմանությամբ, որոնց պարսկերեն բնագրերը չեն պահպանվել, Ա. Քրիստենսենի ժողովածուն (*Contes Persanes, en Langue Populaire*, Kobenhaven, 1918)` պարսկերեն բնագրով, որտեղ ավելի շատ ընդգրկված են ասացվածքներ: Յանրի Մասսեի ժողովածուում (*Contes en Persan Populaire*, Paris, 1925) ասացվածքները գերակշռում են հեքիաթների համեմատությամբ. միայն երկուերեք հեքիաթ կա խորասանի<sup>152</sup> բարբառով»<sup>153</sup>:

Անգլիացի L. F. Էլվել Սաթընը, որն աշխատում էր Թեհրանում՝ Անգլիայի դեսպանատանը (1940 թ.), իր՝ գրող և թարգմանիչ ընկերոջ՝ Ալի Զավահեր Քալամի միջոցով ծանոթանում է մաշդի Գելին խանում անվամբ մի դայակի հետ: Սաթընը, հետաքրքրված լինելով պարսկական ժողովրդական բանահյուսությամբ, գրուցի է բռնվում տատիկի հետ: «Մաշդի Գելին խանումը շուրջ երկու հարյուր հեքիաթ պատմեց Էլվել Սաթընին: Նա բոլորը ձայնագրեց և վերարտադրեց»<sup>154</sup>, - գրում է գիտնական, արձակագիր և թարգմանիչ Ալի Բոլութբաշին: Սաթընը իր գրի առաջ նյութերը մշակում ու հրատարակում է առանձին գրքով՝ «Աֆսանեհայե Իրանի»<sup>155</sup> («Իրանական լեզենդներ») խորագրով, որը հետագայում Զավահեր Քալամը թարգմանում է պարսկերեն:

Արձակագիր և թարգմանիչ Մուհամմադ Զաֆար Մահջուրն իր «Աղաբյաթե ամյանե»<sup>156</sup> («Ժողովրդական գրականություն») գրքում ժողովրդական բանահյուսությունն ուսումնասիրող արևելագետների մասին գրում է. «Ժողովրդական բանահյուսության հավաքման աշխատանքներ կատարող Եվրոպացի արևելագետներից նախ պիտի նշել ֆրանսիացի Փեթի դե լա Կրուային (18-րդ դար), ով «Հեզար օ յեք շաբ»<sup>157</sup> («Յազար ու մի գիշեր») գրքի

թիարը հարավարևմտյան հատվածում է գտնվում:

<sup>152</sup> Խորասանը Պարսկաստանի հյուսիսարևելյան նահանգներից է:

<sup>153</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān*, p. 219.

<sup>154</sup> Bolūkbāšī A., *Mo 'arēfī va naqd-e āsārī dar adabīyāt-e mardomshēnāsī*, Tehran, ēntēš. Daftar-e Pažūhēshhāyē Farhangī, 1377, p. 215.

<sup>155</sup> Stéu Sutton Elwell, *Afsānēhāyē Īrānī*, tarjomēyē 'Alī Javāhēr Kalām, Tehran, ēntēš. 'Ēlmī va farhangī, 1379:

<sup>156</sup> «Adabyāt-e 'āmyānē».

<sup>157</sup> «Hēzār օ յեք շաբ» – Յին հեքիաթների ժողովածու՝ արաբերենով, պարսկերենով, իինդի լեզվով: «Յազար աֆսան» պարսկական հեքիաթների ժողովածուն հիմք է ծառայել «Հեզար օ յեք շաբ» գրքի շարադրման համար, որի հեքիաթները հնդկական աղբյուրներից են քաղված, և որը տասներորդ դարում պահ-

ազդեցությամբ ֆրանսերենով հրատարակել է «Հեղար օ յեք ռուզ» («Հազար ու մի օր») գիրքը: Այն թարգմանվել է պարսկերեն («Ալեֆ օլ-Շահար»<sup>158</sup> խորագրով) և երկու անգամ հրատարակվել... Այնուհետև հիշատակելի է իր ազգայնական գաղափարներով հայտնի Քոնթ դո Գորինոն, որը նույնիսկ մի քանի հեքիաթ է գրել պարսկական ոճով, որոնք թարգմանվել են պարսկերեն... Ամենահայտնի արևելագետները, որոնք զբաղվել են այս աշխատանքով, դանիացի Արթուր Քրիստենսենը և Հանրի Մասսեն են: Նրանք պարսկական հեքիաթների մի մասը հավաքել են»<sup>159</sup>:

Հայտնի է, որ Սեֆյան տիրապետության շրջանում ժողովրդական բանարվեստի նյութերի հավաքման, մշակման և հրատարակության աշխատանքներ է կատարել գիտնական, հոգևորական Աղա Զամալ Խանսարին: Նրա գիրքը կոչվում է «Աղայեղ օլ-Շասա»<sup>160</sup> («Կանացի հավատալիքներ») և հայտնի է «Քոլսում Շամե» («Լանի Քոլսում») անունով:

Ղաջարյան Խասեր էր Դին շահի գահակալության շրջանի ազատամիտ մարդկանցից էր Միրզա Հարիբ Էսֆահանին՝ Դաստան մականունով, ով զբաղվում էր գրականությամբ և թարգմանությամբ: Նա 1941 թ. պարզ ժողովրդական լեզվով թարգմանել է ֆրանսիացի Զեյմս Մորիերի «Սարգոզաշեն Հաջի Բաբայե Էսֆահանի» («Հաջի Բաբա Սպահանցու կենսագրությունը»)<sup>161</sup> գիրքը, որը գրվել է 1823 թ., և որում նկարագրվում են ժողովրդի կենցաղը, սովորությունները և ծեսերը:

Պարսկաստանում «Փոլկլոր» բառը՝ որպես գիտական եզր, ի հայտ եկավ 19-րդ դարի երկրորդ կեսին, իսկ պարսկական ազգագրությունը եվրոպացի արևելագետների՝ ավելի ուշ շրջանի ուսումնասիրությունների արդյունք է:

Պարսկական բանահյուսության հավաքումն ու գիտական ուսումնասիրությունը սկիզբ է առել Ս. Հեղայարի օրոք: Մինչ այդ

լավերենից թարգմանվել է արաբերեն (տե՛ս **Mahjūb M. J.**, նշվ. աշխ., էջ 361-389):

<sup>158</sup> «Hēzār o yēk rūz» կամ «Alēf ol nahār».

<sup>159</sup> **Mahjūb M. J.**, op. cit., p. 73.

<sup>160</sup> **Sē'u Xānsārī Āqā J.**, 'Aqāyēd ol nasā yā Kolsūm nanē, bē kūšēš-e Katīrāyī, Tehran, 1349:

<sup>161</sup> **Sē'u Justinian Morier J.**, *Sargozašt-e Hājī Bābāyē Īsfahānī*, tarjomēyē Habīb Īsfahānī, bē kūšēš-e Jamālzādē, Tehran, 1348:

կատարվել են հիմնականում նախապատրաստական աշխատանքներ: Այսպես, եղել են մարդիկ, ովքեր ջանադրաբար գործել են այդ ուղղությամբ, բայց նրանց գործերը մնացել են թերիկամ անավարտ: Ըստ պարսիկ գրականագետ Ալի Բոլուքքաշիի՝ «ժողովրդական բանահյուսություն» արտահայտությունն առաջին անգամ Թեհրանի պետական համալսարանի դասախոս Ղոլամ Ռեզա Ռաշիդ Յասամին ընտրել և օգտագործել է որպես «ֆոլկլոր» բառի հոմանիշ: Ռաշիդ Յասամին 1936 թ. մարտի 14-ին՝ իր դասախոսության ընթացքում, անդրադարձել է «ֆոլկլոր» բառի նշանակությանը և այն նյութերին, որոնցով զբաղվում է այս գիտությունը<sup>162</sup>: Սակայն վաղաժամ մահվան պատճառով Ռեզա Ռաշիդ Յասամիի ուսումնասիրություններն անավարտ են մնացել:

Այս մասին կա մեկ այլ վկայություն: Արձակագիր, բարմանիչ և հնագույն ձեռագրերի գիտակ Իրաջ Աֆշարը գրում «Սադեղ Յեղայաթի ուսումնասիրությունների արդյունքը ժողովրդական բանահյուսության ոլորտում «Օսանե» և «Նեյր. գեստան» գրքերն են, որոնք համարվում են այս բնագավառաջին քայլերը: Նրա ներկայացրած ուսումնասիրությունները վերաբերում են 1945 թ., սակայն մինչ այդ Ռաշիդ Յասամին հոդվածներ էր իրատարակել ֆոլկլորի և դրա հետազոտման մեթոդների մասին: Այն ժամանակ, երբ Յեղայաթը ներկայացրեց իր ծրագրերը, Ռաշիդ Յասամին արդեն մահացել էր»<sup>163</sup>:

Ո. Յասամիի կատարած ուսումնասիրությունները Ս. Յեղայաթի աշխատանքների համեմատությամբ կատարյալ չեն: Այսպես, հասարակական փաստերը և գավառական կուսակցություններին առնչվող նյութերը Ո. Յասամին ներկայացրել է ավանդույթներին և սովորույթներին վերաբերող բաժնում, իսկ արվեստի բնագավառին առնչվող նյութերը կապել է նյութականի հետ: Այս կապակցությամբ Ալի Բոլուքքաշին գրում է. «Ս. Յեղայաթի դասակարգումները եթե համեմատենք Ո. Յասամիի հետազոտության հետ, առաջինն ավելի գիտականորեն և բազմակողմանիորեն է մոտենում նյութին: Նա քաջատեղյակ է ֆրանսիացի

<sup>162</sup> Տե՛ս Bolūkbāšī A., *Dar farhang-e xōd zīstan va bē farhanghāyē dīgar nēgarīstan*, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Golāzīn, 1389, էջ 67-68:

<sup>163</sup> Irāj Afšār, *Hēdāyat va nēzām-e gērdāvariyyē farhang-e mardom-e Īrān az zabān-e Irāj Afšār*, Majalēyē mardom Tehran, 1382, sāl-e aval, no. 1, p. 12.

հեղինակների հետազոտական աշխատանքների ծրագրերին և տվյալների դասակարգման մեթոդներին: Նա այդ սկզբունքով է ժողովրդական բանահյուսության նյութերն առանձնացրել և համակարգել»<sup>164</sup>:

Բանահյուսական և ազգագրական նյութերի ուսումնասիրություններ կատարել է նաև տաղանդավոր գրականագետ Հասան Մողաղամը (1898-1925): Նրա մասին արձակագիր և բանագետ Աբոլղասեն Էնջավի Շիրազին գրում է. «Հասան Մողաղամը գիտակ էր ֆրանսերենին և քաջատեղյակ էր արևմբության ֆոլկլորագիտության գիտական ծրագրերին: Եթե նրա անբուժելի հիվանդությունը չլիներ, հենց այն ժամանակ կսկսեր բանահյուսության տեսական (ֆոլկլորագիտության) ուսումնասիրությունները գիտական հիմքերի վրա դնել, և մեծ մասամբ ազգային ժառանգության գոհարներն անհետացումից կփրկվեին»<sup>165</sup>:

Քուիի Քերմանին 1931 թ. հարյուր քսան ժողովրդական և ազգային տաղերի վերաբերյալ ուսումնասիրություն է կատարել: Հետագայում «Հաֆթսադ թարանե» («Յոթ հարյուր երգեր»)<sup>166</sup> անվամբ տպագրված աշխատության մեջ այդ թիվն աճել է: Նույն տարում արևելագետ Հանրի Մասսեն այն թարգմանել է ֆրանսերեն, իսկ դանիացի Քրիստենսենը՝ գերմաներեն: 1933 թ. Կրթության նախարարությունը պաշտոնապես Քուիի Քերմանիին է հանձնարարում հեքիաթների ուսումնասիրության աշխատանքը: Վերջինս 1935 թ. Նաթանզ, Քաշան և Իսպահան քաղաքներից հավաքած հեքիաթները հրատարակում է «Չհարդահ աֆսանե» («Տասնչորս հեքիաթ»)<sup>167</sup> վերնագրով:

Ժողովրդական բանահյուսությանը մեծ ծառայություն է մատուցել նաև Դեհխողան՝ քառահատոր «Ամսալ օլ-հեքամ»-ը<sup>168</sup> («Խրատական ասացվածքներ») չափածոյից արձակի վերածելով: Նրա գրչին է պատկանում «Չարանդ ո փարանդ»<sup>169</sup> («Ափեղցիել») գիրքը, որը գրված է պարզ ու հասկանալի լեզվով, լի է

<sup>164</sup> Bōlūkbāšī A., *Dar farhang-e xod zīstan va bē farhanghāyē dīgar nēgarīstan*, p. 79.

<sup>165</sup> Īnjavī Šīrāzī A., Zarīfyān M., *Gozarī va nazarī... dar farhang-e mardom*, Tehran, ēntēš. Ēsparg, 1371, p. 15.

<sup>166</sup> Sē'u Kūhī Kērmānī H., *Haftsad tarānē az tarānēhāyē rūstāīyē Irān*, Tehran, 1347:

<sup>167</sup> Sē'u Kūhī Kērmānī H., *Čhārdah affānē*, «Majalēyē Mūsīqī», Tehran, 1318, sāl-e aval, no. 6-8:

<sup>168</sup> «Amsāl ol hēkam».

<sup>169</sup> «Čarand o parand».

ասույթներով և ժողովրդական արտահայտություններով:

1935 թ. Իրանում իհմնադրվում է մշակութային ակադեմիա՝ վարչապետ Մուհամմադ Ալի Ֆորուշիի նախագահությամբ՝ նպատակ ունենալով գիտնականների և գրողների, այդ թվում՝ Ս. Շեղայաթի ջանքերով ուսումնասիրելու ժողովրդական բանահյուսությունը և ազգագրությունը: Նույն դարաշրջանի առաջին տասնամյակներին քրտնաջան և անխոնջ աշխատանք են կատարում մի շարք գրողներ, ժողովրդական բանահյուսություն ուսումնասիրողներ՝ Յոսեյն Քուհի Քերմանին, Ալի Աքբար Դեհխոդան, Ամիր Ղոլի Ամինի Եսֆահանին և Ֆազլոլահ Սորիի Մոհքադին:

Ամիր Ղոլի Ամինին երկու գրքով իրատարակում է պատմություններ և խրատական հեքիաթներ՝ «Մի աֆսանե ազ աֆսանեհայե մահալիե Եսֆահան» («Երեսուն հեքիաթ իսպահանի գավառներից») և «Ֆոլքլորե Իրան-Ղասրանհայե ամսալ» («Իրանի ֆոլկլորը, ասացվածքները և գրույցները»)<sup>170</sup>:

20-րդ դարի սկզբին ասպարեզ եկան պարսկական ազգային գրականությանը զարկ տվող երիտասարդ գրողներ, որոնց թվում էր Սեյեդ Մուհամմադ Ալի Զամալզադեն: 1922 թ. Բեռլինում իրատարակվում է նրա պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Յեքի բուդ, յեքի նարուդ»-ը<sup>171</sup> («Կար, չկար»), որը գլուխգործոց է: Ժողովածուում ընդգրկված են վեց կարճ պատմվածքներ: Յետաքրքրական է, որ պատմվածքների վերնագրերը վերցված են պարսկական հայտնի ասացվածքներից: Իբրև ռեալիստական գրական ուղղության սկզբնավորող՝ Զամալզադեն գրում է ժողովրդական պարզ և հասկանալի լեզվով, հանդես է գալիս տարբեր ոճերով և մոտեցման բազմապիսի եղանակներով: Այսպիսով, նա դասականը փոխարինում է նորարարությամբ, վերակառուցում գրական լեզուն և դառնում առաջիններից, որոնց նպատակը պարսկերենը օտարամուտ փոխառություններից պաշտպանելն էր: Յենց Զամալզադեից հետո է գրական ասպարեզ մտնում Ս. Շեղայաթը, մարդ, որի անունը պատիվ է բերում պարսից գրականությանը, ժողովրդական բանահյուսությանն ու ազգագրագիտությանը:

Իրանում Զամալզադեից հետո Ս. Շեղայաթին է պատկանում կարճ պատմվածքների և նովելի վարպետի դափնին: Սա-

<sup>170</sup> Տե՛ս Առնո՛ւ Ա. Ք., *Sī afsānē az afsānēhāyē mahalīyē Īsfahān*, Էսֆահան, 1339, *Folklore ī Irān- dāstānhāyē amsāl*, vol. I-II, Էսֆահան, 1351:

<sup>171</sup> «Yēkī būd yēkī nabūd».

կայն նա, առաջնորդվելով գիտական սկզբունքներով, միաժամանակ ուսումնասիրում է ազգագրություն և ժողովրդական բանահավաքչություն, այն, ինչ բացակայում էր ժամանակի՝ ազգագրությանը վերաբերող աշխատանքներում:

Ս. Շեղայաթի՝ ազգագրության և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության առաջին շրջանն արգասավորվեց «Օսանե» (1931 թ.) և «Նեյրանգեստան» (1933 թ.) ուսումնասիրություններով: Արևելագետ Շանրի Մասսեն իր հոդվածներից մեկում Ս. Շեղայաթի՝ բանահավաքչության ուղղությամբ կատարած աշխատանքների մասին գրում է. «Մի օր Սադեղի ուշադրությունն իրանի բանահյուսության վրա կենտրոնացրի, ասացի. «Ես ճանապարհորդ եմ, բայց դու իրանում ես և ապրում ես տատիկների ու դայակների կողքին: Այդ պատճառով դու ավելի լավ կարող ես իրանի բանահյուսությունը հավաքել»: Շեղայաթը համաձայնեց սկսել աշխատանքը և վերջապես իրատարակեց «Նեյրանգեստան»-ը»<sup>172</sup>:

1939 թ. Ղուլամ Շոսեյն Մինբաշյանը հիմնադրում է «Մուսիդի»<sup>173</sup> ամսագիրը, որի խմբագիր է նշանակվում Ս. Շեղայաթը: Նրանց հետ համագործակցում են Փ. Նաթել Խանլարին, Ալի Ասղար Սորուշը, Մ. Ֆ. Սոբիի Մոհքադին, Նիմա Յուշիջը և Աբդուլ Շոսեյն Նուշինը: Սա իրաշալի առիթ էր Ս. Շեղայաթի համար, ով հնարավորություն է ստանում ամսագրում տպագրելու իր՝ ազգագրությանն ու ժողովրդական բանահյուսությանը նվիրված հոդվածները՝ «Թարանեհայե ամյանե»<sup>174</sup> («Ժողովրդական երգեր»), «Մաթալհայե ֆարսի» («Պարսկական հեքիաթներ»)<sup>175</sup> և մի շարք հեքիաթներ<sup>176</sup>: Ամսագիրը, սակայն, կարճ կյանք ունեցավ. ընդամենը երկու տարի անց՝ 1941 թ., փակվեց:

Որոշ ժամանակ անց Ռեզա Չորջանիի, Շասան Շահիդ Նուրայիի և Ս. Շեղայաթի հետ համագործակցությամբ Փ. Ն. Խան-

<sup>172</sup> Տե՛ս Qāēmyān H., *Darbārēyē Hēdāyat va Hēdāyat az nēgāh-e orūpātīyān*, 1<sup>st</sup> print, Tehran, Շահական պատկենք, 1384, էջ 44:

<sup>173</sup> «Mūsīqī».

<sup>174</sup> Տե՛ս Hēdāyat S., *Tarānēhāyē 'āmyānē*, «Majalēyē Mūsīqī», 1318, sal-e aval, no. 6-7:

<sup>175</sup> Տե՛ս Hēdāyat S., *Matalhāyē fārsī*, «Majalēyē Mūsīqī», 1318, sal-e aval, no. 9:

<sup>176</sup> Տե՛ս Լզā mūšē, *Šangūl va mangūl*, «Majalēyē Mūsīqī», 1318, sal-e aval, no. 8. *Lačak kūcūlūyē qērmēz*, «Majalēyē Mūsīqī», 1319, sal-e dovom, no. 2. *Sang-e Sabūr*, «Majalēyē Mūsīqī», 1320, sal-e dovom, no. 6-7:

լարին հիմնադրում է «Սոխան»<sup>177</sup> ամսագիրը: Ս. Շեղայաթը 1945 թ. այս ամսագրում հրատարակում է իր գիտական հոդվածները, որոնց կանորադառնանք հետագա շարադրանքում:

Երաժշտական հաստատությունում աշխատելու ժամանակ (1938 թ.) Շեղայաթի առաջարկությամբ ռադիոկայանից հայտարարություն է տարածվում, թե ովքեր ինչ հեքիաթներ գիտեն, կարող են ուղարկել, և իրենց անունով դրանք կընթեղցվեն: Շայտարարությունը լայն արձագանք է գտնում: Երկրի տարբեր վայրերից հեքիաթներ և ասացվածքներ են ուղարկվում ռադիոյի հասցեով: Շեղայաթը բոլոր նյութերն ուշադրությամբ կարդում, սրբագրում և պատրաստում է՝ ընթեղցելու համար: Երբեմն դրանք հեղինակների անունով տպագրվում էին «Մուսիղի» ամսագրում:

Ս. Շեղայաթի օրերից մինչև մեր ժամանակաշրջանը իրանում ազգագրագիտությամբ շատերն են զբաղվել, մինչև իսկ նորացված ծրագրեր և գործնական մեթոդներ են ներկայացվել, բայց Ս. Շեղայաթի գործն իր ամբողջության մեջ եզակի է: Էնջավի Շիրազին այս մասին գրում է. «Թեկուզ տարբեր մարդիկ են այս գործը շարունակել, բայց մինչև այժմ ամենահաջող աշխատանքը, որ այս բնագավառում ստեղծվել է, ինչ Ս. Շեղայաթի «Նեյրանգեստան»-ն է: Նրանց, ովքեր հետաքրքրվում են ազգագրությամբ, այս աշխատանքն եմ առաջարկում: Ես ինքս, երբ լրագրությամբ էի զբաղվում և դրան հաջորդող տարիներին էլ.... նյութերի հավաքման համար օգտվել եմ երջանկահիշատակ Շեղայաթի ցուցումներից և տեսությունից»<sup>178</sup>:

«Թեկուզ իրանի բանահյուսությունը այլ տարածաշրջանների բանահյուսության համեմատ ավելի հարուստ է, բայց այն անճանաչ է մնացել: Եթե այս ուղղությամբ լրջորեն և շուտափույթ քայլեր չձեռնարկվեն, հավանաբար այդ ժառանգության մեջ մասը կանկետանա»<sup>179</sup>, - ընդգծում է ազգագրության և ժողովրդական բանահյուսության պահպանությամբ մտահոգ Ս. Շեղայաթը: Բարեբախտաբար, գիտնականի հորդորներն ապարդյուն չեն անցել. նրանից հետո մեծ թվով գրականագետներ զբաղվել են գիտության այդ ազգապահպան ճյուղով:

<sup>177</sup> «Soxan».

<sup>178</sup> Էնյավ Շիրազ Ա., *Jān-e 'āryat*, - Farhang-e 'āme, Pažūhešhāyē adabī, mardom šēnāsī, ed. Sēdāqatpīshē M., Tehran, ēntēš. Farzān, 1381, p. 212.

<sup>179</sup> Հեդայատ Տ., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 240.

## Ա) ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՂԱՅԱԹԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Շնորհիվ Ս. Հեղայաթի անխոնջ և ջանադիր աշխատանքի՝ իրանի ժողովրդական բանահյուսությունը և ազգագրությունը, օգտագործվելով գեղարվեստական գրականության մեջ, նոր շունչ և կենդանություն ստացան: Նա կարողացավ մեթոդներ, գիտական սկզբունքներ մշակել և սահմանել, որոնց կիրառումը ազգագրագետներին հնարավորություն տվեց բանահավաքչությունը գիտական ճանապարհով օգտագործելու: Ս. Հեղայաթի ծրագրային մոտեցումները լիովին բավարարում էին ժամանակի ազգագրագիտության պահանջները: Տասնամյակներ անց էլ մասնագետները և գիտնականները կիրառում են նրա մոտեցումները, որոնք նոր սերնդի համար ուղեցույցի դեր ունեն: Փարվիզ Նաբել Խանլարին այս առիթով գրում է. «Թեկուզ ժողովրդական բանահյուսության օգտագործումը գրականության մեջ Դեհխոնդային է վերագրվում, բայց Հեղայաթն էր այն մարդը, ով այս գործն ամենայն գիտական պատշաճությամբ, պատվարեր մակարդակով կատարեց և իր ստեղծագործություններով պարսկերենն ավելի արտահայտիչ և ճկուն դարձրեց»<sup>180</sup>:

Ս. Հեղայաթը՝ որպես պարսկական ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը գիտական հիմունքներով ներկայացնող և դրա հիմնադիր, պատասխանատվության բարձր գիտակցում ունի: Նա իր գործը կատարել է հստակ նպատակադրմամբ: Սկզբում պարզ հետաքրքրասիրությունը, սերը հայրենիքի և ազգի նկատմամբ, ինչպես նաև մանկության տարիների տպավորությունները և հիշողության մեջ արմատացած մանրամասները, ապա արտասահմանյան կրթությունը և մշակութային ուսումնասիրությունները նրան ուղղորդում են ավելի լուրջ գործունեության:

Մանկական տարիքից ծնված սերը իրանի անցյալի, հետաքրքրությունը ծեսերի, ավանդույթների, երգերի և ասացվածքների նկատմամբ արտահայտվել են նրա գրեթե բոլոր

<sup>180</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», 1346, vol. 15, no 11, p. 15.

ստեղծագործություններում: Ազգագրական և մշակութային ժառանգության անհետացման վտանգի զգացումը նկատելի է նրա մի շարք հոդվածներում: Հեղայաթն այն կարծիքին էր, որ քաղցի և աղքատության պատճառով ցեղերի գաղթը կամ նստակյաց կյանք վարելը, ինչու չէ, նաև մեր օրերում մարդկանց դյուրին տեղաշարժը և մյուս կողմից հասարակական կյանքում արագ տեղի ունեցող նորարարությունները պատճառ են դառնում մի շարք սովորույթների և ավանդույթների անհետացման: Եթե մեր բոլոր հնարավոր միջոցներով դրանք չհավաքենք, ապա, շատ չանցած, այդ ազգային գանձերը կորստյան կմատնվեն<sup>181</sup>: Նա նույնն էր ասում նաև ժողովրդական երգերի մասին. «Մեր օրերում, նախքան դրանք վերջնականապես կանհետանան, պետք է գնալ այդ գանձերի վերջին պահապանների՝ հասարակ մարդկանց և գյուղացիների մոտ և գրի առնել դրանք»<sup>182</sup>:

Ժողովրդական բանահյուսական նյութերի հավաքումը սկզբնական շրջանում սիրողական բնույթ ուներ: Գիտնականները, աստիճանաբար գիտակցելով բանահյուսության տեղն ու դերը մշակույթի և արվեստի բնագավառում, սկսում են ավելի լրջորեն մոտենալ հարցին: Այս գործին առավել նախանձախնդիր և բարեխիղճ վերաբերմունք է ցուցաբերել Ս. Հեղայաթը: Նա ժողովրդական բանահյուսական նյութեր հավաքելու համար ոչ մի առիթ և միջոց չի խնայել: Այս առումով նրա համար շատ օգտակար աղբյուր է եղել իրենց տանն ապրող դայակը՝ Օմոլ Լեյլին. «Ամեն անգամ հեքիաթ պատմելու համար Սադեղն ինձ երկու դուրուշ էր տալիս»<sup>183</sup>:

Հեղինակը, ուսումնասիրություններն էլ ավելի բարելավելու և լիակատար դարձնելու նպատակով, համագործակցում է ռադիոընկերության հետ, որտեղ առիթ է ունենում ռադիոյով ներկայացնելու հավաքած, այդ թվում՝ նաև իր հեքիաթները: Այս աշխատանքում նրան օգնում էր ռադիոհաղորդավար Մ. Ֆ. Սոբիի Սոհթադին. նա Ս. Հեղայաթի օգնականն էր նաև «Մուսիղի» ամսագրում:

Կարճ ժամանակում ժողովրդական բանահյուսության մեջ շտեմարան է գոյանում, որը դրվում է Սոբիի Սոհթադիի տրամա-

<sup>181</sup> Տե՛ս Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, էջ 240-241:

<sup>182</sup> Նույն տեղում, էջ 201:

<sup>183</sup> «Majalēyē Sērīd o sīyāh», 1351, ող 35, թ. 5.

դրության տակ: Նա, սակայն, իր ուսուցչի նկատմամբ անազնիվ է գտնվում: Ս. Մոհքաղին իր ձեռքի տակ եղած բանահյուսական նյութերը, ըստ իր ճաշակի, այսինքն՝ քմահաճորեն, ոճական փոփոխությունների է ենթարկում և չորս գիրք է իրատարակում: Ենջավի Շիրազին այս առթիվ գրում է. «Յավոք, հաշվի չառնելով գիտական հիմունքները, նա (Սորիի Մոհքաղին – Ա. Յ.) մի քանի ավանդապատում պատմվածքներ միաձուլում է և, ըստ իր ճաշակի, նորը ստեղծում: Նա պատմվածքի կմախքի, բարբառի, ոճի և կառուցվածքի նկատմամբ գրական ոտնձգություն է կատարում, նույնիսկ բնագրերը չեն պահպանում, քանի որ արխիվ չի ունեցել: Այնուամենայնիվ, եթե նա նման քայլի չուներ, ինչ խոսք, միգուցե այս հեքիաթների մեջ մասը մոռացության մատնվեր»<sup>184</sup>:

Սորիի Մոհքաղին իրանի տարբեր վայրերից հեքիաթներ է հավաքում և ռադիոհաղորդման միջոցով մատուցում ունկնդիրներին: Յարկ է նշել, որ այդ հեքիաթների մի մասը Ս. Յեղայարն էր տրամադրել նրան: Ապագայում նա բոլոր հեքիաթները հրատարակում է գրքերի տեսքով<sup>185</sup>:

Սորիի Մոհքաղին իր ուսուցչի նկատմամբ մեկ այլ տմարդի քայլ էլ է կատարում, որին արձագանքում է հենց ինքը՝ Ս. Յեղայարը: Նա իր նամակներից մեկում՝ ուղղված իր մտերիմ ընկեր Յասան Շահիդ Նուրայիին, գրում է. «Սորիին ամենայն անպատկառությամբ և անզգամությամբ հակասական քարոզչություն է սկսել իմ դեմ: Ում մոտ ասես խոսում է և ինձ ներկայացնում իբրև ազատության թշնամի, անկիրք և բարոյազուրկ մարդ, ի վերջո իր հայրենիքի առաջին թշնամի.... Զարմանալի չէ, որ այդ ամենից հետո նրան տեղավորեցի ռադիոյում, հեքիաթներ տվեցի, գիրքը սրբագրեցի.... Եվ ահա իրեն կորցրել ու պահանջատեր է դարձել: Յավալի է, բայց այստեղ նման դեպքերը սովորական երևույթ են»<sup>186</sup>:

Ս. Յեղայարը, հետևողական լինելով իր աշխատանքի նկատմամբ, ձեռք է բերում մեծ հավաքածու: Նրան շրջապատողները նույնպես օգտվում են դրանից: Նա շատ հաճախ առանց

<sup>184</sup> Homāyūnī S., *Farhang-e mardom-e Sarvestān*, Moqadamēyē Īnjavī Šīrāzī, Tehran, 1348-49, pp. 11-12.

<sup>185</sup> Տե՛ս Sobhī Mohtadī F., *Afsānēhā*, vol. 1-2, Tehran, 1998, *Afsānēhāyē Iran-e bāstān va majār*, Tehran, 1332, *Afsānēhāyē AbūAlī Sīnā*, Tehran, 1349, *Afsānēhāyē kohan*, vol. 1-2, Tehran, 1380:

<sup>186</sup> Hēdāyat S., *Haštād o do nāmē bē Šahīd Nūrāyī*, p. 131.

զլանալու տրամադրում էր իր ունեցած նյութերը, մինչև անգամ նվիրում: Յասան Ղանմյանն այս կապակցությամբ գրում է, որ Մոջթաքա Մինովին իր ելույթի մի հատվածում, որը նվիրված էր Սադեղ Շեղայաթի հուշ-երեկոյին, այսպես է ասում. «Միրզա Ալի Աքբար Ղեհխոդան իր «Ամսալ օլ-հեքամ» գիրքն էր գրում, և ընկերները, և ծանոթներն իրենց հնարավորությունների սահմաններում օգնում էին նրան: Նրանցից ամենաշատը Ս. Շեղայաթն օգնեց: Վերջինս ժողովրդական ասացվածքների մոտավորապես երկու հազար նմուշ ուներ՝ գետեղված երկուհարյուրէջանոց մատյանում: Այդ բոլորը նա առանց զլանալու նվիրեց Ղեհխոդային: Չգիտեմ՝ դրանք վերադարձվեցի՞ն, թե՞ ոչ»<sup>187</sup>: Շետաքրքրականն այն է, որ Ս. Ա. Ղեհխոդայի վերոնշյալ գրքում Շեղայաթի անունը նույնիսկ չի ակնարկվում: Գրող և գրականագետ Մահմուդ Քաթիրային Ս. Շեղայաթի ու Ս. Ա. Ղեհխոդայի միջև եղած կապերի և այս իրողության մասին ունի իր կարծիքը. «Մեզ հայտնի չեմ, թե ինչու Ղեհխոդան ոչ իր հատորներում, ոչ ել մեկ այլ տեղում Շեղայաթի մասին չի ակնարկել: Միակ տրամաբանական վարկածն այն կարող է լինել, որ Շեղայաթի ցանկությամբ և պնդմամբ Ղեհխոդան ոչ մի անուն չի հիշատակել: Զարկ է նշել, որ նրանք ընկերներ էին, և Ղեհխոդան մեծագույն հարգանք ուներ Շեղայաթի նկատմամբ»<sup>188</sup>:

Ս. Շեղայաթը երբեք չի դադարել ամեն կերպ իր հայրենակիցներին խրախուսելուց՝ նրանց մասնակից դարձնելով ժողովրդական բանահյուսության հավաքման աշխատանքներին: 1943 թ. սկսած՝ համագործակցությունը «Սոխան» ամսագրի հետ նրան ավելի մեծածավալ և հետևողական աշխատանք կատարելու մեջ հնարավորություն է ընձեռում: Նա նույնիսկ համոզված էր, որ տեղական օրաթերթերը և ամսագրերը ևս կարող են աջակցություն ցուցաբերել՝ քաջալերելու հայրենակիցներին բանահավաքչական գործում, մինչև իսկ լավագույնների հավաքած նյութերը տպագրելու խոստում տալ: Ս. Շեղայաթն այս մասին գրում է. «Այն գրավոր փաստաթղթերն ու ապացույցները, որոնք հավաքվում են, պետք է խնամքով պահպանվեն և տպագրվեն ուղարկողի անունով: Երբ այդ փաստերը հրատարակվեն և մասնագետների տրամադրության տակ դրվեն, այն ժամանակ

<sup>187</sup> Hēdāyat S., *Nēnēštēhāyē parākandē*, p. 25.

<sup>188</sup> Katīrāyī M., *Zabān o farhang-e mardom*, Tehran, ēntēš. Joharī, 1357, p. 138.

Երկրի ժողովրդական բանահյուսությունը մանրազնին կուսումնասիրվի, համեմատական-հետազոտական աշխատանք կկատարվի և կդասակարգվի»<sup>189</sup>:

Ս. Շեղայաթը համոզված էր, որ այս գործի առաջընթացին դպրոցականները նույնպես կարող են մասնակցել՝ իրենց ընտանիքներից և շրջապատից հետաքրքիր նյութեր ձեռք բերելով: Մեզ հայտնի է, որ ժողովրդական զրույցները և հեքիաթներն ընդհանրապես մեր տատիկների և պապիկների հուշերում են պահպանվում: Սա նպաստավոր հանգամանք է, որպեսզի, հետաքրքրությունից դրդված, նոր սերունդը ջանք չխնայի և մասնակից լինի այս աշխատանքին: Իհարկե, խոսքը միայն հետաքրքրասերների մասին չէ, այլ ցանկացած մասնագիտություն ունեցող անձի՝ աստղագետ, բժիշկ, լեզվաբան և այլն: Նրանք էլ իրենց հերթին ի զորու կլինեն, գիտական հիմքերի վրա հենվելով, աշխատելու ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության ուղղությամբ, ներդնելու իրենց ավանդը և պահպանելու թեկուզ պատառիկներ:

2002 թ. Ս. Շեղայաթի ծննդյան հարյուրամյա հոբելյանի առթիվ Թեհրանի Շահիդ Ռազայի համալսարանում կազմակերպված հանդիսության ժամանակ Զահանգիր Ֆորուհարը՝ Ս. Շեղայաթի եղբորորդին, իր դասախոսության ընթացքում անդրադառնում է նաև ժողովրդական բանահյուսության բնագավառում նրա ծավալած աշխատանքներին: Նա գտնում է, որ Ս. Շեղայաթի հավաքած նյութերը քսան տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն են և նրա մյուս գեղարվեստական ստեղծագործությունների հետ մեծ տեղ են զբաղեցնում նրա գրական ժառանգության մեջ, քանի որ դրանց ուսումնասիրությունը նա երբեք չի դադարեցրել: Զահանգիր Ֆորուհարի ելույթի մի հատվածում կարդում ենք. «Այս տաղը՝ «Է՞ յար տօբārak bād» («Է՞ յ, յար, օրինված լինի»), տարիներ առաջ մի շնորհալի մարդ է հորինել, որը հետագայում փոխանցվել է սերնդեսերունդ, և միլիոնավոր հարսներ են այս տաղով ամուսնու տուն գնացել: Այս գործը նրա կողմից շատ էր կարևորվում: Շեղայաթը, արտասահմանյան ժողովրդական բանահյուսության նմուշներ ձեռք բերելու համար, կապեր է հաստատում հայտնի արևելագետների հետ, ինչպիսիք են Արթուր Քրիստենսենը Դանիայում, որևէ արևելագետ Վ. Մի-

<sup>189</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān*, p. 273.

նորսկին Լոնդոնում, Դ. Կոմիսարովը Մոսկվայում, Մուհամմադ Ալի Զամալզադեն ժնևում և շատ ուրիշներ: Որպես արդյունք՝ ձեռք է բերում մի հավաքածու՝ կազմված տեղաբնիկների սնուտիապաշտություններից, սովորույթներից, տաղերից, ասացվածքներից, քննադատական աշխատանքներից, դարձվածքներից, որոնք հրատարակվել են»<sup>190</sup>:

Յամաշխարհային մակարդակի մեծությունները՝ գրողներ և արվեստագետներ, մեծապես օգտվել են ժողովրդական իմաստության այդ անհուն շտեմարանից՝ բանահյուսությունից: Յետաքրքրական է, որ Գրիգոր Նարեկացին և իր «Մատյան»-ի մեջ բազմիցս դիմել է ժողովրդական բանահյուսությանը, օգտագործել իմաստավորման և կերպավորման նրա եղանակները, իսկ 26-րդ գլուխն ամբողջությամբ կրում է ժողովրդական երգի բնավորությունը՝ ավելի մեծ հուզականություն հաղորդելով նրա խոսքին<sup>191</sup>:

Ս. Յեղայաթն ազգագրագիտական ուսումնասիրությունը ժամանց չի համարում և մասնագետներին իր մեթոդական ուղեցույց-հոդվածում հորդորում է աշխատանքին մոտենալ լրջորեն: Գտած նյութը չպետք է փոփոխությունների ենթարկել: Նա բանահավաքչությամբ զբաղվողներին այսպես է դիմում. «ժողովրդական բանահյուսությունը զվարճանք չէ. որան չպետք է հպանցիկ մոտենալ: Այս գործի համար համբերություն, իմացություն, ճիշտ մտածողություն և գիտական տեղեկացվածություն է հարկավոր: Այն փաստաթուղթը, որում փոփոխություն է արված, կամ խախտված է նախադասությունների կառուցվածքը, կամ բանահավաքը, ըստ իր ճաշակի, բարոյական, կրոնական, խրատական մտքեր է ավելացրել, որևէ արժեք չի ներկայացնում»<sup>192</sup>:

1931 թվականից սկսում են հրատարակվել Ս. Յեղայաթի հավաքած ժողովրդական բանահյուսական աշխատանքները, և սա ապացույցն է այն իրողության, որ նա դեռ շատ վաղ տարիքից է սկսել իր ուսումնասիրությունները: Զահանգիր Ֆորուհարը, ով Ս. Յեղայաթի բանահյուսական աշխատանքների պահպանաման և հրատարակման գործում մեծ ներդրում ունի, գրում է.

<sup>190</sup> Hēdāyat J., *Yēksad sālēgīyē Sādēq Hēdāyat dar Irān va jahān*, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Donyāyē dānēš, 1384, p. 208.

<sup>191</sup> Տե՛ս Սուլթան Գրիգոր Նարեկացի, Նարեկ աղօթամատեամ, թարգմ.: Աշոտ Պետրոսյան, Եր., «ՎՄՎ-պրինտ» հրատ., 2013, Բան ԻԶ, էջ 153:

<sup>192</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 259.

«Բելգիայում և Ֆրանսիայում եղած տարիներին, երբ Ս. Յեղայաթը հայրիկիս՝ իսա Յեղայաթի մոտ էր լինում (1926), նրա պատմածների հիման վրա նույնպես Իրանի ժողովրդական բանահյուսության շուրջ աշխատանքներ էր տանում»<sup>193</sup>: «Նա իր ուսումնասիրություններն ավելի հիմնավոր դարձնելու և հավելյալ աղբյուրներ ձեռք բերելու նպատակով արտասահմանի կրթված և վերլուծաբան ընկերների հետ կապեր էր հաստատում ու նրանցից գրքեր խնդրում»<sup>194</sup>:

Գիտականության առաջնայնություն և նյութի նկատմամբ ճիշտ մոտեցում. ահա այն հիմնական տարրերը, որոնց վրա խարսխվում է ազգագործագիտության հեղայաթական հայեցակարգը:

<sup>193</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>194</sup> Նույն տեղում, էջ 16:

## Բ) ՍԱՌԵԴ ՀԵՂԱՅԱԾԱԸԸ ԲԱՆԱԿԱՎԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԱԽԱԶԵՇԵՐԻ

Ս. Հեղայաթից ժառանգած գիտական ուսումնասիրությունները հավաստի աղբյուր և կայուն հիմք դարձան հետագա աշխատասիրությունների համար: Նրա գործը բարձր գնահատողներից է Աբոլղասեմ Էնջավի Շիրազին. «Իհարկե, այդ մարդիկ (Հեղայաթի նախորդները – Ա. Յ.) միայն ժողովրդական բանահյուսության մեկ ճյուղն են ուսումնասիրել, այսինքն՝ գրական ժառանգությունը, բայց ժողովրդական բանահյուսությունը մեզ ամբողջականորեն ներկայացրել և ուղղորդել է մեր ժամանակակիցը՝ առաջադեմ և նորարար Ս. Հեղայաթը»<sup>195</sup>:

Ս. Հեղայաթը «Օսանե»-ի առաջաբանում, անդրադառնալով բանահավաքչության կարևորությանը, գրում է. «Իրանը դեպի արդիականացում է գնում: Այս զարգացումը հասարակության բոլոր շերտերում ակնհայտ է: Մտածելակերպն աստիճանաբար փոխվում է, իինը ձևափոխվում է, ինչ որ հնացած է, վերանում է, մի կողմ թողնվում: Ցավալին այն է, որ այս նորարարությունների հետևանքով հեքիաթները, պատմությունները, հորինվածքները և ազգային երգերը, որոնք նախնիներից մնացած հիշատակներ են և փոխանցվել են սերնդեսերունդ, անհետանում և մոռացության են մատնվում: Ազգային նման ստեղծագործություններն աննշան են համարվել, նույնիսկ դրանց հավաքմամբ չեն զբաղվել»<sup>196</sup>:

20-րդ դարի սկզբին՝ Իրանի իշխանությունների կողմից ժողովրդի կեղեքման և ընդիմադիրների քաղաքական հալածանքների դեմ պայքարի շրջանում, Ս. Հեղայաթը փորձեց ցույց տալ բանահյուսության և ազգագրության կարևորությունը: Նրա ծավալած գործունեությունն ազգային մշակութային ժառագության ուսումնասիրության և պահպանման գործում մեծ խթան հանդիսացավ:

«Օսանե» և «Նեյրանգեստան» ուսումնասիրությունների հրատարակումից հետո Իրանում նոր քափ է ստանում ազգագրության և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքը: Ուսումնասիրություն-

<sup>195</sup> Īnjavī Šīrāzī A., *Farhang-e mardom va tarz-e gērdāvarī va nēvēstan-e ān*, Tehran, ēntēš. Farhang, 1346, p. 3.

<sup>196</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 163.

ները և հետազոտությունները դրվում են Մշակույթի գերատեսչության (ղեկավար՝ Սուլիամմադ Ալի Ֆորուշի) վերահսկողության տակ: Գերատեսչությունն էր առաջադրանքներ տալիս և հետևողականորեն հսկում դրանց մշակումն ու կատարումը: Հիմնադրվում է մարդաբանական թանգարան: Ա. Էնջավի Շիրազին այս մասին գրում է. «Հեղայաթի ուսումնասիրությունների հրատարակումից հետո իրանի գիտության պատասխանատունները մտադրվում են հիմնադրել ազգագրական թանգարան.... Սուլիամմադ Ալի Ֆորուշիի խորհրդատվությամբ մշակույթի ակադեմիայի հիմնադրումից հետո ձեռնամուխ են լինում պարսկական ժողովրդական բանահյուսության հավաքման գործին: Մտադրությունն իրագործելու համար իրաման է արձակվում: Իհարկե, մի շարք անհիմն և կասկածելի նյութեր են հավաքվում, բայց գործն առաջ տանելու համար դրանք բավարար լինել չէին կարող»<sup>197</sup>.

Ս. Հեղայաթն իր «Ֆարհանգե ամյանեյե մարդուն իրան»<sup>198</sup> («Իրանի ժողովրդական մշակույթ») գրքում ակնարկում է այս մասին: Նա չէր կարող պետական մարմինների հետ այս բնագավառում համագործակցել, քանի որ չէր հանդուրժում նրանց գործելակերպը և վարած քաղաքականությունը: Նա անհաշտ վերաբերմունք էր ցուցաբերում այն ամենի նկատմամբ, ինչը ճնշում ու կաշկանդում էր իր ազատ միտքն ու ծանակող գոիչը, խաթարում իր արժեքների համակարգը և տակնուվրա անում ներքին նուրբ զգացմունքային աշխարհը: Այս գրքում նա գրում է. «Իհարկե, այս հաստատության առնչությամբ շատ առարկություններ կարող են լինել, բայց խոսքը դուք մասին չէ: Կարևոր այն է, որ ժողովրդական մշակույթի և ստեղծագործությունների հավաքման համար կենտրոն է ձևավորվում, և երբ այստեղ հիմնարար փոփոխություններ տեղի ունենան, ապագայում ավելի լուրջ և գիտական ձեռքբերումներ կլինեն»<sup>199</sup>:

Ժողովրդական բանահյուսական և ազգագրական նյութերը, որոնք ծառայում են որպես նոր սերնդի դաստիարակության լավագույն միջոցներ, պարսկական հին և դասական գրականության մեջ, ցավոք, ներկայացված են թուցիկ, մշակված չեն և ցրված են տարբեր գրական աղբյուրներում: Ս. Հեղայաթը ցան-

<sup>197</sup> Homāyūnī S., op. cit., p. 10.

<sup>198</sup> «Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān».

<sup>199</sup> Hēdāyat S., Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān, p. 239.

կանում էր, որ այդ նյութերը, գեղարվեստական գրականություն ներմուծվելուց զատ, նաև պահպանվեն: Նա, քաջ գիտակցելով գործի նրբությունը, ժողովրդական բառ ու բանը և ազգագրական նմուշները գեղարվեստական խոսքում օգտագործելիս չի աղավաղել, որովհետև բուն նպատակն այդ ժառանգությանը հարազատ մնալն էր: Այդ կտորները նա համարում էր ժողովրդի ոչ միայն լեզվի, այլև առհասարակ կյանքի պատմությունը:

Շատերը հետևեցին Ս. Յեղայաթի ամենամեծ ծառայությանը՝ օրինակ ունենալով նրա ծրագրերը և ականջալուր լինելով նրա հորդորներին: Յրապարակ եկան բազմաթիվ բանահավաքներ, ովքեր սկսեցին նկարագրել հայրենի բնակավայրերն ու գավառները: Նրանց թվին էր պատկանում Ա. Ենջավի Շիրազին, ով Յեղայաթի ժամանակակիցն էր, հավատարիմ աշակերտն ու գործի շարունակողը: Նա այսպես է գնահատում իր ուսուցչին. «Իրականում նա մեզ մարդկության այս գիտությանը ծանոթացրեց: Նա չափազանց սիրում էր ժողովրդական բանահյուսությունը: Թեկուզ անցած տասնամյակներում մի քանի հոգի զբաղվել են այս գործով, բայց Յեղայաթն է հիմնադիրը: Նա է առաջինը, ով մեզ գիտական ճիշտ ուղին ցույց տվեց.... Յեղայաթը ժողովրդական բանահյուսությունը ճանաչելու, արժեորելու և դրա կարևորությունը գիտակցելու հարցում մեր առաջնորդն ու ուսուցիչն է»<sup>200</sup>:

Ա. Ենջավի Շիրազին, հավատարիմ մնալով իր ուսուցիչ սկզբունքներին, տարիներ անց մշակում է իր ծրագիրը<sup>201</sup>: Լինելով ռադիոհաղորդավար՝ հետևում է Ս. Յեղայաթին և այն ունկնդիրներին, որոնք հետաքրքրվում են ազգագրական նյութերով, հրավիրում է համագործակցության:

Ս. Յեղայաթի բանահավաքչական ուսումնասիրությունները գնահատողներից և նրան հիմնադիր ու առաջնորդ համարողներից է Մուհամմադ Զաֆար Մահջուբը: Նա գրում է. «Առաջինը հանգուցյալ Ս. Յեղայաթն է, ով բազմաթիվ հեքիաթներ, ասացվածքներ ու ժողովրդական երգեր հավաքեց և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության բնագավառում առաջինն ընդարձակ գիտական ծրագիր հրատարակեց.... Մեր օրերում

<sup>200</sup> Rūznāmēyē Ēttēlā'āt, *Gofrogū bā Ēnjavī Šīrāzī darbārēyē Hēdāyat*, Tehran, 1354, no. 14938, p. 21.

<sup>201</sup> Տե՛ս Ēnjavī Šīrāzī A., *Farhang-e mardom va tarz-e gērdāvarī va nēnēštan-e ān*, 80 էջ:

բոլոր այն անձանց համեմատությամբ, որոնք աշխատել են այս ոլորտում, Յեղայաթը թե՛ գիտության առաջատարն էր, թե՛ առաջադեմ գիտնականը»<sup>202</sup>:

Ս. Յեղայաթը ողջ կյանքի ընթացքում երբեք չդադարեց ուսումնասիրություններ կատարելուց, մինչև անգամ կյանքի վերջին տարիներին, երբ իշխանությունների վարած քաղաքականության պատճառով խոր տագնապների մեջ էր: 1948 թ. իր գրած նամակներից մեկում<sup>203</sup> արտասահմանում ապրող Յասան Շահիդ Նուրայիից խնդրում է «Maintenant»<sup>204</sup> ամսագրի մի համար, որում նրան հետաքրքրում էր «Le Folklore Vivant» վերնագրով հոդվածը:

Ս. Յեղայաթի ամենամեծ և անուրանալի ծառայությունը եղավ ազգագրական նյութերի և ժողովրդական բառ ու բանի հավաքման գործի կազմակերպումը և բանահյուսությունն ու ազգագրությունը գիտական հիմքերի վրա դնելու գործը: Այդ ծրագիրը՝ որպես առաջինը, անշուշտ, անթերի չեր, այդուհանդերձ, նրան հետևող բազմաթիվ բանահավաքներ հետագայում նույնպես մեծ աշխատանք կատարեցին: Նա գործի հենց սկզբից այն ճիշտ հետևությանն էր հանգել, որ իր առաջին պարտականությունը հում նյութերը կորստից փրկելն է: Ոչ մի առիթ բաց չթողնելով՝ կոչ էր անում հայրենակիցներին համախմբվելու բանահավաքչական աշխատանքի շուրջ: Եվ կոչն ապարդյուն չանցավ. Իրանի տարբեր վայրերից հավաքվեց բավականաչափ նյութ:

Չեռքի տակ եղած հավաստի փաստերն ապացույցն են այն իրողության, որ ազգագրական և բանագիտական նյութերի կարևորումը, պահպանումը և գիտական աստիճանի բարձրացումը Ս. Յեղայաթի ջանքերի արդյունքն են: Ոուս արևելագետ Ն. Ա. Կիսլյակովն այս կապակցությամբ գրում է. «Իրանական հասարակության մեջ ժողովրդական արվեստի և բանահյուսական նյութերի հավաքման նկատմամբ հետաքրքրությունը, հեղինակի (Ս. Յեղայաթ – Ա. Յ.) խոսքերով, արթնացավ իր «Ազգային գետանցուան» գրքի լույսընծայումից հետո (1933 թ.)»<sup>205</sup>:

<sup>202</sup> **Маһјүб** М. Џ., оп. cit., p. 56.

<sup>203</sup> **Տես Հեծայատ** Տ., *Haštād o do nāmē bē Šahīd Nūrāyī*, էջ 145:

<sup>204</sup> «Maintenant, Cahiers d'art et de literature» – արվեստի և գրականության երաշխավորված ամսագիր, որը իրատարակվել է Փարիզում 1945-1948 թթ.:

<sup>205</sup> **Кисляков** Н., *Садек Хедаят. Фольклор или народные знания*, «Советская этнография», М.-Л., 1949, N 2, с. 230.

Նշենք, որ հետագայում՝ 1977 թ., Ս. Յեղայարի նշված երկու աշխատանքները՝ «Եյրանգեստան»-ը և «Օսանե»-ն, բանահյուսությանը և ազգագրությանը վերաբերող հոդվածների հետ հրատարակվում են առանձին գրքով՝ «Ֆարիանգե ամյանեյե մարդումն Իրան» վերնագրով:

## ՍԱՌԵՂ ՀԵՂԱՅԱԹԻ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ Ա) «ՆԵՅՐԱՆԳԵՍՄԱՆ»

Սաղեղ Հեղայաթի բանագիտական ուսումնասիրությունների երախայրիքը «Նեյրանգեստան»-ն է: Այն տեղ է գտնել «Ֆարհանգե ամյանեյե մարդումե իրան»<sup>206</sup> («Իրանի ժողովրդական մշակույթ») գրքի առաջին գլխում: Գիրքը 21-րդ դարի սկզբին վերահրատարակվել է չորրորդ անգամ, որը ժողովրդական բանահյուսության և ազգագրության բնագավառում քսանամյա աշխատանքի արդյունք է և սկսվում է գրքի իրատարակման նախաձեռնող ու կազմող Զահիանգիր Ֆորուհարի նախաբանով: Գիրքը բաղկացած է երեք գլխից՝ ա) «Նեյրանգեստան», թ) «Թարանեհայե ամյանե» («Ժողովրդական մշակույթ»), որը բաղկացած է յոթ ենթագլուխներից՝ 1) «Օսանե», 2) «Թարանեյե բաշեհա» («Մանկական օրորոցային երգ»), 3) «Թարանեյե դայեհա վա մադարիա» («Դայակների և մայրերի երգ»), 4) «Թարանեհայե ամյանե» («Ժողովրդական երգեր»), 5) «Մաթալիայե ֆարսի» («Պարսկերեն առածներ»), 6) «Ֆոլքլոր յա ֆարիանգե թուղե» («Ժողովրդական բանահյուսություն կամ ժողովրդական մշակույթ»), 7) «Թարիե քոլի բարայե քավոշե ֆոլքլորե յեք մանթաղե» («Մի շրջանի ժողովրդական բանահյուսության հետազոտության ընդհանուր ծրագիր»), զ) «Ասարե չափ նաշողե» («Անտիա աշխատանքներ»), որը բաղկացած է չորս ենթագլուխներից՝ 1) «Ղետեհա վա աֆսանեհա» («Պատմություններ և հեքիաթներ»), 2) «Թարանեհա» («Երգեր»), 3) «Էսթելահաթ վա ամսալե մահալի» («Առածներ և տեղական ասացվածքներ»), 4) «Թահղիղաթ, նամեհա» («Հետազոտություններ, նամակներ»). Բոլորը տպագրվում են առաջին անգամ:

«Նեյրանգեստան»-ի ստեղծման համար ժողովրդական բանահյուսությունն առավել խորությամբ ճանաչելու և տեղեկություններ հավաքելու նպատակով Սաղեղ Հեղայաթն օգտվել է թե՛ տեղական և թե՛ օտար աղբյուրներից: Ի թիվս պարսկական աղբյուրների՝ նա օգտվել է հետևյալ երկերից՝ «Ավեստա» (զրա-

<sup>206</sup> Տես Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, 458 էջ: Այսուհետ նշված գրքից կատարվող հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով էջերը:

դաշտականների սուրբ գիրքը), «Ֆարհանգե Զահանգիրի» («Զահանգիրի բառարան»), կազմող՝ Զամալ ադ Դին Շուսեյն Եբն Ֆախրեդին Հասան Էնջավի Շիրազի), «Թարիխե Թարարի» («Թարարիի պատմությունը»), հեղինակ՝ Սուհամմադ Եբն Զարիր Թարարի), Ֆիրդուսու «Շահնամե», «Ղինքարդ» (զրադաշտականների կրոնական հանրագիտարան), «Մորուջ օլ-զահաք» («Ուկյանարգագետինները»), հեղինակ՝ Ալի Եբն Շուսեյն Մասուդի), «Ազայեր օլ-մախլուղաթ» («Տարօրինակ արարածները»), հեղինակ՝ Սուհամմադ Եբն Մահմուդ Եբն Ահմադ Թուսի), «Նեզիաթ օլ-ղոլութ» («Առաքինի սրտեր» հանրագիտարան, հեղինակ՝ Համդուլահ Մոսթոֆի), «Շեզար ասրար» («Շազար գաղտնիք»), հեղինակ՝ Սոստաֆա Բեհջաթ), «Բորհանե Ղաթե»<sup>207</sup> («Անհերքելի փաստ» բառարան, հեղինակ՝ Սուհամմադ Եբն Խալաֆ Թարիզի) և այլն:

Ուստի արևելագետ Ն. Ա. Կիսյակովը Ս. Շեղայաթի սույն ուսումնասիրության մասին գրում է. «Նա առաջին անգամ չեր հանդես գալիս իրանական ազգագրագիտության և բանագիտության բնագավառներում: 1931-1933 թթ. նրա իրապարակած երկու գրքույկները՝ «Օսանե»-ն և «Նեյրանգեստան»-ը, սկիզբ դրեցին ազգագրական և բանագիտական նյութերի հավաքման գործին և նպաստեցին այս բնագավառում հետագայում արևմտաեվրոպացի գիտնականների գործունեության ծավալմանը»<sup>208</sup>:

Ֆրանսիացի արևելագետ Հանրի Մասսեն պարսկական ժողովրդական հավատալիքների մասին իր գրքի ներածական հատվածում բարձր է գնահատում նաև Ս. Շեղայաթի ցուցաբերած օգնությունը. «Պետք է շնորհակալություն հայտնեմ այն անձանց, որոնք իրենց գիտական կարողություններով և բարեհաճ վերաբերմունքով օժանդակել են ինձ ուսումնասիրություններ կատարելիս: Առաջին հերթին նկատի ունեմ Ս. Ա. Դեհխոդային, Ս. Շեղայաթին և Ս. Նաֆիսիին, որոնց հետ շփումը շատ կարևոր և օգտակար է եղել ինձ համար»<sup>209</sup>:

«Նեյրանգեստան»-ի առաջարանում Ս. Շեղայաթը, իր մտահոգությունը հայտնելով հասարակության մեջ տարածված նա-

<sup>207</sup> «Farhang-e Jahāngīrī», «Tārīx-e Tabarī», «Šāhnāmē», «Dīnkard», «Morūj ol zahab», «'Ajāyēb ol maxlūqāt», «Nēzhat ol qolūb», «Hēzār asrār», «Borhān-e qātē».

<sup>208</sup> Кисляков Н., указ. соч., с. 230.

<sup>209</sup> Masse H., *Litteraturs populaires de toutes les nations*, vol. 1, Paris, 1938, p. 15.

խապաշարումների ու սնոտիապաշտության վերաբերյալ, դրանք դիտում է որպես ժողովրդական զանգվածների խավարամտության պահպանման գլխավոր գործոն: Վերլուծելով և լուսաբանելով դրանց առաջացման և արմատավորման սոցիալ-պատմական պատճառները՝ նա փորձում է այդ չարիքի դեմ պայքարելու եղանակներ առաջարկել: Այս միտումն էլ դարձել է «Նեյրանգեստան»-ի ստեղծման շարժառիթ:

«Նեյրանգեստան» ուսումնասիրության մեջ հեղինակը ներկայացնում է պարսից ժողովրդի մի շարք հավատալիքներ, ավանդույթներ, հնագույն տոների, ամուսնության, ինչպես նաև հղիության, ծննդաբերության, հիվանդությունների և դրանց բուժման ընթացքում կատարվող ծեսերը: Եթե սրանց ավելացնենք երազների մեկնությունը, նույնիսկ մարմնամասերի և որոշ կենդանիների միջոցով կատարվող գուշակությունների, բույսերի բուժիչ հատկությունների վերաբերյալ նյութերը, ապա ակնհայտ կդառնա «Նեյրանգեստան»-ի ճանաչողական ընդգրկունությունը: Ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակը կարողացել է դիտարկել թե՛ հազարամյակների վաղեմություն ունեցող և թե՛ համեմատաբար նոր ժամանակներում ձևավորված հավատալիքներն ու ավանդույթները:

Սադեղ Հեղայաթը «Նեյրանգեստան» վերնագիրն ընտրել է՝ ելնելով աշխատության բովանդակությունից: Այստեղ հատկապես համակողմանիորեն են ներկայացված ժողովրդական հավատալիքները, հմայական արարողությունները և ծեսերը: Ընդորում «Նեյրանգ» (Neyrang) պարսկերեն նշանակում է «հմայություն, կախարդանք»: Ուստի արևելագետ Ն. Ա. Կիսլյակովն այս մասին գրում է. «Ինչպես գրում է հեղինակը, գիրքն ինքն անվանել է Սասանյանների ժամանակաշրջանի պահլավերեն կրոնական գրքերից մեկի վերնագրով, որը պարունակում է աղոթքներ և նզովքներ: «Նեյրանգեստան» բառը նշանակում է «կախարդանքների երկիր», «հրաշքների երկիր»<sup>210</sup>:

Սակայն ընդգծենք, որ պահլավերեն գրական հուշարձան

<sup>210</sup> «Նեյրանգեստան»-ի ռուսերեն տարբերակը Ն.Ա. Կիսլյակովի թարգմանությամբ և ընդարձակ առաջաբանով իրատարակվել է նախկին ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի ժողովածուում (տե՛ս «Садек Хедаят. Нейрангестан. Перевод с персидского, предисловие и комментарии Н. А. Кислякова», «Переднеазиатский этнографический сборник», т. 1, М., АН СССР, 1958, էջ 259):

«Սեյրանգեստան»-ը գործառվում էր զրադաշտականների ծիսական արարողությունների ժամանակ, մինչդեռ Ս. Յեղայաթի ուսումնասիրությունը բովանդակությամբ համադրելի չէ պահևական նույնանուն հուշարձանի հետ:

Յեղինակը «Սեյրանգեստան»-ը, ինչպես և իր մյուս ուսումնասիրություններն ու գեղարվեստական ստեղծագործությունները խմբագրել և վերստուգել է, ինչը նրա աշխատանքային առանձնահատկություններից է: Ս. Յեղայաթի ընկերը՝ գրող Շասան Ղաեմյանը, այս մասին գրում է. ««Սեյրանգեստան» գրքի հավելումներն ավելին են, քան գրքի հիմնական բովանդակությունն է, քանի որ Յեղայաթը «Սեյրանգեստան»-ի երկու էջերի միջև մեկ կամ երկու սպիտակ թուղթ է ավելացրել և դրանց վրա նշումներ կատարել, մեկնաբանել տեքստերը: Ցավոք, այդ վերանայված գրություններն անհետացել են, և ներկայումս հրատարակված «Սեյրանգեստան»-ը առաջին, այսինքն՝ չխմբագրված օրինակից է տպագրվել»<sup>211</sup>.

Յեղինակի մեկ այլ ընկեր՝ հայտնի գրող, թարգմանիչ, բանագետ Ենջավի Շիրազին, վկայում է, որ Ս. Յեղայաթը, բանահավաքչական աշխատանքներն ավարտելուց հետո, ըստ սովորության, աշխատությունը մեկ օրինակով տպագրել էր տալիս, ապա, գրքի կազմարարի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, հանձնարարում էր այդ գրքի էջերի մեջ սպիտակ թղթեր տեղադրել՝ հավելումներ կատարելու համար: Գրքի կազմարարը բնօրինակին մեծ քանակությամբ սպիտակ էջեր էր ավելացրել, որոնց համարակալումը սկսվում էր 165-ից և ավարտվում 353-ով: Յեղինակի կողմից ավելացված էջերում ժողովրդական մշակույթի մասին նյութեր էին<sup>212</sup>:

Հրատարակումից որոշ ժամանակ անց «Սեյրանգեստան»-ը հայտնվում է արգելված գրքերի ցանկում: Գրող և թարգմանիչ Մահմուդ Քաթիրային պարզաբանում է. «Արգելվը Յեղայաթի մեղքով էր: Հրատարակիչը չէր ցանկանում հեղինակի հասանելիքը վճարել: Քանի որ Ս. Յեղայաթը դառնացած էր այդ հրատարակիչներից՝ բազմաթիվ գրողների իրավունքները ոտնահարելու համար, «Սեյրանգեստան»-ից մի օրինակ է վերցնում,

<sup>211</sup> Hēdāyat S., Nēvēštēhāyē Parākandē, p. 13.

<sup>212</sup> Տե՛ս Dēhbāšī ’A., Yādnāmēyē Sēyēd Abolqāsēm Ēnjavī Šīrāzī, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Soxan, 1381, էջ 529:

մի քանի տեղ կարմիրով ու կապույտով նշումներ է կատարում և տալիս Ս. Մինովիին: Նրան խնդրում է, որ այն Մշակույթի նախարարություն՝ Շարիաթի օրենքի տեսուչի մոտ տանի, որպեսզի ընդգծված հատվածները ցույց տա և ասի, որ այդ հատվածներում անպատշաճ նյութեր են գրված: Ս. Մինովին կատարում է Յեղայաթի ցանկությունը, ինչի հետևանքով գրքի հրատարակումն արգելվում է: «Եյրանգեստան»-ի՝ ընդգծված հատվածներով օրինակներից մեկը գտնվում է Մինովիի գրադարանում, որը Յեղայաթի ընդգծած էջերն առանձին է պահում»<sup>213</sup>:

Բերենք երկու օրինակ այդ ընդգծված հատվածներից. «Զուրը և աղը Ֆաթեմե Զահրայի (Մուհամմադ մարգարեի աղջկա – Ա. Յ.) տայրն»<sup>214</sup> (մահրիե)<sup>215</sup> են: Դրանք չպետք է աղտոտել, և ոչ ոքի համար չպետք է խնայել» (էջ 81) կամ «Ովքեր ոջիլ չունեն, մուսուլման չեն»<sup>216</sup> (էջ 107):

Ս. Յեղայաթը՝ նախ «Օսամե»-ն, ապա՝ «Եյրանգեստան»-ը հրատարակում է սահմանափակ տպաքանակով՝ իր խնայողությունների հաշվին: Նա դրանցից օրինակներ է նվիրում արտասահմանցի իրանագետներին, իր ընկերներին, այն գիտնականներին ու ուսյալներին, որոնք հետաքրքրություն էին ցուցաբերել այդ նյութերի հանդեպ:

Առաջարանից և 23 գլուխներից բաղկացած ուսումնասիրության բովանդակությունը կարելի է ներկայացնել պայմանական թեմատիկ բաժանումներով. *տոնածիսական ավանդույթներ*, «Ամուսնական ծես», «Կնոջ հղիություն», «Երեխա», «Յիշանդությունների ծես», «Մի քանի հնագույն տոներ», *հավատալիքներ*, «Տարբեր հավատալիքներ և ծեսեր», «Մուրազների իրականացում», «Մահ», «Գուշակություն մարմնի անդամների միջոցով», «Բախտագուշակություն, կանխագուշակություն, հավահմայություն, թռչնահմայություն», «Ժամանակ, օր, օրվա ժամեր», «Յասարակական խրատանի», «Իրերը և դրանց առանձնահատկությունները», «Բույսեր և ընդեղեն», «Սողուններ և գեռուններ», «Թռչուններ և հավազգիներ», «Ընտանի և վայրի կենդանիներ»,

<sup>213</sup> Katīrāyī M., *Qētāb-e Sādēq Hēdāyat*, Tehran, 1349, p. 327.

<sup>214</sup> Տայր – «Գումար կամ գույք, որ փեսան վճարում կամ հանձնառու է լինում վճարել հարսնացուին» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1065):

<sup>215</sup> Mahrīyē.

<sup>216</sup> «Āb o namak mahr-e Fātēmē Zahrā ast, nabāyad ān rā ālūdē kard va az kasī nabāyad darīq kard», «Har kas šērēš nadārad mosalmān nīst».

«Նշանավոր վայրեր և իրեր»<sup>217</sup>, և «Ժողովրդական քանարվեստ»՝ «Խրատներ և գործնական բնույթի հավատալիքներ», «Մի քանի արտահայտություններ և ասացվածքներ», «Ժողովրդական հեքիաթներ»:

Ինչպես նշվեց, «Նեյրանգեստան»-ի առաջաբանում Ս. Յեղայաթն անդրադառնում է հասարակության մեջ տեղ գտած ժողովրդական հավատալիքների, ավանդույթների ու ծեսերի ծագման և արմատավորման պատճառներին ու հանգամանքներին, ժամանակի ընթացքում դրանց կրած փոփոխություններին: Նրա համոզմամբ հնագույն պատմությունը և այլ ժողովուրդների հետ սերտ շփումները ազգային հարուստ մշակույթի ձևավորման կարևոր գործոններն են:

Նա նշում է, որ իր հայրենիքը հազարամյակների պատմություն ունի և հաճախ է ենթարկվել հարևան պետությունների ասպատակություններին ու վերածվել օտար ազգերի իջևանատան (քարվանսարա): Այստեղ են իջևանել հնագույն աշխարհի քաղաքակիրք և վայրագ ազգերի՝ քաղղեացիների, ասորիների, հույների, հռոմեացիների, հրեաների, թուրքերի, արաբների և մոնղոլների բազմաթիվ քարվաններ: Սրանից Յեղայաթը հետևություն է անում, որ հիշատակված ժողովուրդների մշակույթն ու քաղաքակրթությունն իրենց ազդեցությունն ու հետքերն են քողել իրանում և ավելի են խորացրել պարսիկների մեջ տարածված նախապաշտումները: Այդ պատճառով նա անհրաժեշտ է համարում իրանական մշակույթի փուլերն ուսումնասիրելիս անդրադառնալ նշված համապատասխան իրողություններին:

«Նեյրանգեստան»-ի առաջաբանում Ս. Յեղայաթը հանգամանորեն անդրադառնում է նաև հավատալիքների և կրոնների ծագումնաբանական խնդիրներին: Նա գտնում էր, որ կրոնների առաջացումը պայմանավորված է ժողովրդի մեջ արմատացած հավատալիքներով ու սնոտիապաշտությամբ, որոնք մարդկության պատմության տարբեր ժամանակահատվածներում ուղղորդող դեր են ստանձնում և դառնում նրա պատմության անբաժանելի մասը:

Ապագա մեծ գրողին բնականաբար չեն կարող չգրադեցնել նաև հավատալիքների, նախապաշտումների և սնոտիա-

<sup>217</sup> Տեղանուններին առնչվող հավատալիքների առանձնահատկությունն այն է, որ դրանք կապվում են պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանների հետ: Դրանց մի մասը կրոնական բնույթ ունի:

պաշտության առաջացման հոգեբանական պատճառները: Նա ընդգծում է, որ դրանց հոգեբանական հիմքը բնության անբացատրելի երևույթների և տարերքի նկատմամբ երկյուղն ու սարսափն են (ամպրոպներ, երկրաշարժեր, Արևի ու Լուսնի խավարում և այլն): Ս. Շեղայաթը համոզված էր, որ մարդն ինքն իրեն և շրջապատը ճանաչելու համար հույսն իր իսկ գիտելիքների վրա չի դնում, այլ առաջնորդվում է զգացմունքներով ու երևակայությամբ: Նա այդ ճանապարհով էր փորձում հաղթահարել խնդիրները և գտնել անլուծելի թվացող հարցերի պատասխանները, սակայն ընկնում է թյուրըմբոնման մեջ: Սարգիս Շարությունյանն այս կապակցությամբ գրում է. «Արդ, ի՞նչ են իրենցից ներկայացնում այս հավատալիքները. դրանք երկանդամ ավանդական ասույթներ են՝ տրամաբանորեն կառուցված պայմանի և հետևանքի այն փոխկապակցությամբ, որ եթե տվյալ պայմանն իրականացվի, ապա կունենա տվյալ հետևանքը»<sup>218</sup>:

Ս. Շեղայաթը գտնում էր, որ քաղաքակիրթ, պակաս քաղաքակիրթ և վայրագ ցեղերի հավատալիքների ու սովորույթների ակունքները նույնական են, սակայն տարբեր են դրանց դրսերումները, և համամիտ էր «Նախնադարյան քաղաքակրթություն»<sup>219</sup> ուսումնասիրության հեղինակ, գրականագետ Էդուարդ Թեյլորի այն տեսակետին, ըստ որի՝ երբ մենք բեղվինների հավատալիքներն ու սովորույթները քաղաքակիրթ երկրների նմանատիպ օրինակների հետ համեմատենք, պարզապես կզարմանք, որ այդ վայրագ ցեղերի քաղաքակրթությունը քիչ տարբերությամբ բարձրագույն քաղաքակրթության կողմից ճանաչված է, իսկ երբեմն նույնիսկ՝ նման:

Սադեղ Շեղայաթը պարսկական նախապաշտումները, հավատալիքները և ծեսերը, ըստ ծագման և սկզբնաղբյուրի, երկու մասի է բաժանում՝ ա) տեղի հնդիրանական նախնիներից մնացած և բ) պարթևներից, օտար ազգերից՝ հույներից, հռոմեացիներից, հիմնականում սեմական ցեղերից ներմուծված:

Առաջին խմբում, ըստ հեղինակի, պարսիկների մեջ արմատացած և լայն տարածում գտած այն հավատալիքներն են, որոնք իրենց հետ բերել են արիական ցեղերը՝ տեղափոխվելով

<sup>218</sup> Շարությունյան Ս., Դայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 9:

<sup>219</sup> Stéu Tylor E., *Civilisation Primitive*, vol. 1, Paris, 1920, p. 8.

Իրանական բարձրավաճանդակ: Դրանք կապված են տիեզերքի և բնության տարրերի՝ արևի<sup>220</sup>, լուսնի, վիշապների, կենդանիների, բույսերի և թռչունների ոգեպաշտության և նրանց միջոցով կատարվող գուշակությունների հետ: Ըստ Յեղայաթի՝ այս հավատալիքները գուտ պարսկական են, և դրանց ակունքները նույնիսկ զրադաշտականությունից շատ առաջ պետք է փնտրել: Նա նշում է, որ, օրինակ, ծառերի հետ խոսելը վկայում է, որ մարդիկ համոզված էին, որ բույսերը ոչ միայն հոգի, այլև մտածողություն ունեն: Ելնելով այն փաստից, որ, ըստ զրադաշտական կրոնի, հոգին մի քանի աստիճանի է, ամեն էակ իր Փարավահարն<sup>221</sup> ունի, իսկ բույսերին մտածողություն չի վերագրվում, հեղինակը եզրակացնում է, որ բույսերի, քարերի, ծառերի ոգեպաշտությունը ծագել է զրադաշտականությունից առաջ:

<sup>220</sup> Պարսկական դիցարանում արեգակի աստվածը՝ Սիհրը (Միթրա), երկնային լույսի, հզորության և ջերմության աստվածն է՝ դառնալով երկնայինի ամենամեծ պաշտամունքը: Այս կապակցությամբ Սարգիս Յարությունյանը գրում է. «Իրանական, մասամբ և հայկական ավանդության մեջ արևը պատկերվել է առյուծի կերպարանքով, որից և պարսկերեն «Շիր-Խորշիդ»՝ «Առյուծ-արև» (մինչև Փահլավի դինաստիայի անկումը Շիր-Խորշիդի պատկերը՝ որպես զինանշան, դրվում էր Իրանի պետական դրոշի կենտրոնում – Ա. Յ.), բառակապակցությունը, որը նույնական է հայկական Առյուծ Միերին (Միերն իբրև արեգակի աստված կամ խորհրդանիշ)» («Իրան նամե», գիտամշակութային, հասարակական-քաղաքական հանդես, Եր., հուլիս 1993, թիվ 2, էջ 16):

«Զրադաշտական գաղափարախոսության կարևոր ֆիգուրներից մեկը եղել է արևի ու լույսի պաշտամունքը, որը, համաձայն Ավեստայի տվյալների, արտացոլվել է Ահուրա Մազդայի և Միտրայի կերպարների մեջ»,- գրում է Գառնիկ Ասատրյանը («Իրան նամե», 1999, թիվ 32-34, էջ 108):

Այս մասին իր «Յայ ազգագրություն» գրքում ակնարկում է նաև Վարդ Բդոյանը՝ առանց, սակայն, փասթը հաստատող աղբյուրների վկայակոչման. «Բանասիրությունը հաստատում է, որ Վանա Միերի դուռը նույնպես կապ ունի Սիհրի պաշտամունքի հետ, որը սերտորեն աղերսվում է մեր «Սասմա Շոեր» էպոսում պահպանված հերոսների անվան հետ» (Բդոյան Վ., Յայ ազգագրություն, Եր., 1974, էջ 228): Զարգացնելով միտքը՝ մի ուրիշ հատվածում գիտնականը հաղորդում է. «Միհր-Միթրայի տոնը կատարվել է փետրվարի 14-ին, այդ պատճառով այս ամիսը մեհեկան է կոչվել: Մեհեկանի միհրական տոնակատարությունից մեզ է հասել Տյառնընդառաջ վերանվանված կրակի տոնը, որը միաժամանակ Արևի տոնն է» (նույն տեղում, էջ 229):

<sup>221</sup> Faravahar – «Ոգեղեն էակ, որը, ըստ զրադաշտականների, ստեղծել էր Ահուրամազդան՝ կայունացնելու համար բարի գործերի ընթացքն աշխարհում: Ամեն մի բարի մարդու ծննդով իր Փարավահարը իջնում էր երկնքից, պաշտպանում նրան չարերից ու նեցուկ կանգնում նրա բարի նպատակներին» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 766):

Ս. Յեղայաթը բախտագուշակությունը և հավահմայությունը, այս կամ այն դեպքը չարաբաստիկ կամ բարեբաստիկ համարելը պատահական համընկնումների արդյունք էր համարում: Ըստ նրա՝ այդպիսի նախապաշարումներ գոյություն ունեն տարբեր ազգերի մեջ և շատ նման են իրար:

Սասանյանների ժամանակաշրջանից պահպանված զրադաշտական գրավոր հուշարձաններից «Դիմքարդ»<sup>222</sup>-ը, «Արդավիրաֆնամե»<sup>223</sup>-ն, «Բոնդահեշն»<sup>224</sup>-ը, «Նեյրանգեստան»-ը հստակ ներկայացնում են հին պարսկական նախապաշարումներ ու ավանդույթներ, ինչպիսիք են հացի և լապտերի պաշտամունքը, չար աչքին հավատալը, նոուռուզի տոնակատարությունը, որոնք ժողովրդի մեջ տարածված են մինչև այժմ: Ըստ Յեղայաթի՝ որոշ ավանդույթներ և նախապաշարումներ օտար երկրներից են իրան ներթափանցել և տեղական սովորույթներին համահավասար կենցաղավարել են պարսիկների միջավայրում:

Երկրորդ խմբի հավատալիքները, Յեղայաթի համոզմամբ, ձևավորվել են նախքան Աքեմենյանների ժամանակաշրջանը, և դրանց տարածողներն ու քարոզիչները սեմական ցեղին պատկանող, կախարդությամբ, աստղագուշակությամբ և բախտագուշակությամբ զբաղվող մոգերն էին: Այստեղ հեղինակը ֆրանսիացի գրականագետ Ֆ. Լենորմանդի գրքից («Divination») կատարում է մեջբերում, ըստ որի՝ քաղդեացիները, արաբներին ընդօրինակելով, բախտագուշակության համար մոշի ուստեր են

<sup>222</sup> «Dinkard» – Զրադաշտական գրական աշխատասիրություն և կրոնական ծիսակարգերի ժողովածու՝ բաղկացած ինը գրքերից (տե՛ս Tafazolī A., Առաջնական պատմություններ Իրանի գործականացնելու մասին գրքեր, 1958, 165 էջ):

<sup>223</sup> «Ardāvīrāfnāmē» («Արտա Վիրապ նամակ») – Վիրաֆ կամ Վիրագ անունով մարդու պատմությունն է, որը հայտնվում է անդրաշխարհում և վերադարձին տեղեկություններ է փոխանցում դժոխքից, քավարանից և դրախտից: Արդան նրա մականունն է և նշանակում է «բարեպաշտ»: Գիրքը բաղկացած է 101 գլուխներից (տե՛ս նույն տեղում, էջ 166): Գրական այս հուշարձանը թարգմանվել և տպագրվել է նաև հայերեն (տե՛ս «Արտա Վիրապ նամակ», թարգմ.՝ Աբրահամյան Ռ. Թ., Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 165 էջ):

<sup>224</sup> «Bōndahēšn» – Արարչագործության սկիզբ կամ իսկական արարչագործություն: Գրքի կարևորությունն իր անվան հետ է կապված, որովհետև դրա կարևոր գլուխներն արարչագործության մասին են: Գիրքը գրի է առնվել Սասանյանների տիրակալության վերջին շրջանում և բաղկացած է երեսունվեց գլխից: Ինչպես պահլավերեն մյուս հուշարձանները, կազմված է տարբեր նյութերի և աղբյուրների համադրությամբ (տե՛ս Tafazolī A., Առաջնական պատմություններ Իրանի գործականացնելու մասին գրքեր, 1958, 165 էջ):

օգտագործել, ինչպես մեղացի մոգերը<sup>225</sup>: Իսկ երբ նրանք զրադաշտականների շրջանում ազդեցություն են ձեռք բերում, բարսամի<sup>226</sup> օգտագործումն են ներմուծում այդ կրոնի ծիսակարգ: Ընդ որում Յեղայաթը միաժամանակ նշում է, որ զրադաշտականներն ի սկզբանե խուսափում էին հմայություններից ու բախտագուշակությունից:

Ոուս արևելագետ Ն. Ա. Կիսյակովը ևս համամիտ է Ս. Յեղայաթի այս տեսակետին. «Զրադաշտական մոգերի մեծ մասը, որոնք զբաղվում էին աստղագուշակությամբ, բախտագուշակությամբ, կախարդությամբ, օտարերկրացիներ էին: Յենց նրանք էլ եղել են նշված նախապաշտումների տարածողները ժողովրդի մեջ»<sup>227</sup>:

Իրան ներթափանցած կախարդություններին, գուշակություններին և այլ հավատալիքներին Սադեղ Յեղայաթն անդրադարձել է դեռևս Ֆրանսիայում ապրած տարիներին գրած «Զադուգարի դար Իրան»<sup>228</sup> («Կախարդությունը Իրանում») վերնագրով հոդվածում, որը իրատարակվել է «Le Voile Dysis» ամսագրում: Այստեղ, Զրադաշտի հանդես գալու, զրադաշտականության տարածման, ինչպես նաև զրադաշտական սուրբ գրքի՝ «Ավեստա»-ի գլուխների ու դրանց մեկնությունների մասին մանրամասն խոսելուց զատ, նա իր դիտարկումներն է անում զոհաբերության ծեսի, նախապաշտումների և սնոտիապաշտության վերաբերյալ: Անդրադառնալով մոգերի և թագավորների փոխհարաբերություններին՝ Ս. Յեղայաթը գրում է. «Թագադրությունից առաջ մոգերը թագավորին փորձության էին ենթարկում, նույնիսկ գահ բարձրանալուց հետո նրան հանգիստ չէին տալիս,

<sup>225</sup> Տե՛ս Հեծայատ Տ., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, էջ 26:

<sup>226</sup> Barsam – Ծառի կտրատած ոստեր, որոնք պահլավերենում թաք և պարսկերենում թայ են անվանվում: «Ավեստա»-ում ասվում է, որ բարսամը պետք է նոան, մոշի և հառումի (հատուկ բույս է, որի ճյուղը բարակ և ամուր է, ծաղիկը՝ մուգ դեղին, հասմիկի նման և փոքր տերևներով) ոստերից լինի: Զրադաշտականները դրանից հյութ են պատրաստում և օգտագործում արարողությունների ժամանակ. այն հարբեցնող հատկություն ունի: Այն օգտագործում են փառաբանելու բույսերին, որոնք մարդու և անասունների համար սննդամիջոց են և բնության գեղեցկություն (տե՛ս Հūšīdarī J., նշվ. աշխ., էջ 162):

<sup>227</sup> «Садек Хедаят. Нейрангестан. Перевод с персидского, предисловие и комментарии Н. А. Кислякова», с. 260.

<sup>228</sup> Տե՛ս Հեծայատ Տ., *Jādūgārī dar Irān*, «Māhnāmēyē Armaqān», Tehran, 1346, vol. 36, no. 7, էջ 354-364:

վարչական և դատական բոլոր իաստատություններում ազդեցություն ունեին, մինչև իսկ ձգտում էին պաշտոն ձեռք բերելու: Այսպիսով, մազդայական ծեսերը ըստ «Ավեստա»-ի կանոնի չգոյատևեցին, և այդ կրոնը, մուտք գործելով ասորիների և հույնների մեջ, ամբողջությամբ կորցրեց իրական պատկերը: Սասանյանները կարողացան որոշ բարենորդումներ կատարել, բայց մուսուլմանները դրանք հիմնովին ոչնչացրին, այնպես որ մնացած զրադաշտականները նույնիսկ Զրադաշտի անունը մոռացան»<sup>229</sup>:

Ս. Յեղայաթը «Սեյրանգեստան»-ի նախաբանում գրում է, որ քաղդեացիները և ասորիները կախարդության «մայրն» են համարվում: Սարսափելի աստվածների, ինչպես նաև զոհաբերության, չար ու բարի օրերի և աստղերի մասին հավատալիքները նրանք փոխանցել են նաև պարսիկներին: «Մի կողմից՝ հույնների հարձակումները իրենց գուշակներով, աստվածներով ու կիսաստվածներով, մյուս կողմից՝ հռոմեացիները իրենց աստղագուշակներով, ապա՝ իրեաների ներգաղթը իրան և այն հավատալիքները, որ նրանք Եգիպտոսից և արաբական անապատներից իրենց հետ բերեցին, վերջապես արաբների արշավանքը ավելի ամրակայեցին և խորացրին նախապաշտումներն ու սնոտիապաշտությունը իրանում»<sup>230</sup>:

Յեղայաթի համոզմամբ զոհաբերության ծիսակատարությունները բնորոշ չեն եղել պարսիկներին, քանի որ նրանք ընդունակ չեն միջատի անգամ վնասելու: Ի հաստատումն իր պնդման՝ նա տողատակում մեջբերում է մեծն Սաադիի հետևյալ բեյթը<sup>231</sup>:

«Mayāzār mūrī kē dānē kēš ast  
kē jān dārad o jān-e šīrīn xoš ast» (Էջ 28)

(Մի՛ վնասիր այն մրջյունին, որ հատիկ է կրում, / Քանի որ հոգի ունի, և իր կյանքը քաղցր է):

Ըստ Ս. Յեղայաթի՝ այդ ծեսերը և արարողությունները հին սեմական ցեղերի մտահղացումն են: «Զադուգարի դար իրան» հոդվածում նա այդ մասին գրում է. «Յերողոտոսն ասում է՝ զոհաբերության ցանկությունը մոգերի մեջ այնքան մեծ էր, որ չեղապահում միայն անասունների սպանությամբ, նույնիսկ երիտա-

<sup>229</sup> Նույն տեղում, Էջ 360, 361:

<sup>230</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, pp. 26-27.

<sup>231</sup> Բեյթ է կոչվում ոտանավորի յուրաքանչյուր երկու կիսատողը:

սարդ աղջիկներ և պատանիներ էին նվիրում աստվածներին՝ որպես զոհ»: Ապա շարունակում է. «....այս սովորույթը զրադաշտական կրոնին է անցել մեդացի մոգերի և պարսիկների՝ Իրանական բարձրավանդակ մուտք գործելուց առաջ, ապա աստիճանաբար փոխանցվել է արիացիներին: ....աստղագուշակություն, բախտագուշակություն, չար ոգիների վանում, գրբացություն և շատ ուրիշ հմայական, կախարդական սովորույթներ մոգերի միջոցով են թափանցել զրադաշտական կրոնի մեջ, այդ թվում՝ ուրենու և եղեգի ոստերով ապագայի կանխագուշակություններ անելը և այլն»<sup>232</sup>.

Ս. Յեղայաթը շեշտված ափսոսանքով է նշում, որ օտարերկրացիների ներմուծած պաշտամունքային տարրերի կամ առասպելների հետևանքով հաճախ մոռացության են տրվել զուտ պարսկական հավատալիքները: Ի հավաստումն այս դիտարկման՝ նա բերում է հետևյալ օրինակը. Ալեքսանդր Մակեդոնացին պարսկական գրականության մեջ ներկայացված է որպես բարեհամբավ, իմաստուն զորավար, մինչդեռ բուն ժողովուրդը նրան նզովյալ է համարել. «Եթե համեմատենք Ալեքսանդրի ու Ռուտամի մասին ավանդապատումները, կտեսնենք, որ դրանցից Ալեքսանդրին վերաբերողները կեղծ զրույցներ են՝ անկասկած անվանի Ռուտամի մասին ասքերի նմանակումով (էջ 28)»: Ի լրումն ասվածի՝ նա վկայակոչում է մեկ այլ համանման օրինակ. իին ժամանակներում պարսիկները ծիածանը նմանեցնում էին Ռուտամի աղեղին, մինչդեռ այն ավելի ուշ *Ալիի աղեղ* է անվանվել: Ըստ հեղինակի՝ այսպիսի եղծումները շատ են և իւղաթյուրում են պարսից ավանդապատումներն ու ժողովրդի՝ սեփական պատմության ընկալումները:

Ս. Յեղայաթն անդրադառնում է այն իրողությանը, որ պարսկական հեքիաթները, թափանցելով օտար երկրներ, Իրան են վերադառնում այլափոխված: Որպես օրինակ նա հիշատակում է «Ալեֆ լայլաթ օլ լայլա»<sup>233</sup> («Յազար ու մեկ գիշեր») հայտնի հուշարձանը, որի հիմքում ընկած է Սասանյանների օրոք սանսկրիտից պահլավերեն թարգմանված «Յեզար աֆսան»<sup>234</sup>-ը («Յազար հեքիաթ») կամ «Յեզար օ յեք շաբ»<sup>235</sup> («Յա-

<sup>232</sup> Hēdāyat S., *Jādūgārī dar Īrān*, p. 361.

<sup>233</sup> «Alēf laylat ol-laylah».

<sup>234</sup> «Hēzār afsān».

զար ու մի գիշեր») հեքիաթների պարսկական ժողովածուն, որը պահլավերենից թարգմանվել է արաբերեն, բայց աղավաղված:

Դամաշխարհային գրական մշակույթին քաջատեղյակ գրողի և գիտնականի այս ափսոսանքի պատճառն այն էր, որ նա խոր ցավ էր ապրում օտար տերությունների քաղաքական և տնտեսական շահագրգորությունների աքցանում հայտնված իրանում անկասելի արագությամբ Արևմուտքի մշակույթի և կենցաղավարման զանգվածային տարածումից, իորի դրսերումներից, որոնք կարող էին խաթարումներ առաջ բերել պարսիկների ինքնության մեջ: Այս տագնապ-մտահոգությունները վառ դրսերում են ստացել Հեղայաթի «Աք գենդեգի» («Կենարար ջուրը») և մի քանի այլ ստեղծագործություններում:

Կարևորելով պարսիկների կենցաղում լայնորեն տարածված ժողովրդական ծեսերն ու ազգային տոնները՝ Սադեղ Հեղայթը հատկապես ընդգծում է վերջիններիս նշանակությունը. «Զպետք է մոռանանք մի շարք լավ և սիրված ավանդույթներ, որոնք իրանի պանծալի օրերի հիշատակներից են՝ Մեհրեգամ<sup>236</sup>, Նոուռուզ<sup>237</sup>, Զաշնե Սադե<sup>238</sup>, Չիարշանբեսուրի՛<sup>239</sup> և այլն, և որոնց

<sup>235</sup> «Hēzār o yēk šab».

<sup>236</sup> Mēhrēgān – «Մեհր՝ տարվա 7-րդ ամսի անունն է, նույն ամսի 16-րդ օրվա անվանումը և իանդիսավոր մեծ տոն զրադաշտական Պարսկաստանում, որ տեղի էր ունենում մեհրի 16-21-ին» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1064): Հնագույն ժամանակներում այս տոնը կոչվում էր Մեհրաքանա. Մեհրեգանի առաջին օրը կոչվում է Մեհրեգանե ամե, իսկ վերջինը՝ Մեհրեգանե խասե (Ավագ Մեհրեգան): Մեծ ծմեռը սկսվելուն պես մեծ խանդավառությամբ տոնում էին Մեհրեգանը (տե՛ս Հաշիդար Յ., նշվ. աշխ., էջ 443, 444):

<sup>237</sup> Nōwruz – Նոուռուզը, առնչություն ունենալով Զամշիդի (իրանի ազգային պատմություններում Փիշդադյան դինաստիայի հզոր թագավորներից) հետ, իրանցիների ազգային մեծ տոններից է, որը կատարվում է գարնան սկզբին, տարվա առաջին օրը և ֆարվարդին ամսի մեկին (մարտի 21): Ասում են՝ Զամշիդը, կարգավորելով կենցաղավարությունը և արդարադատությունը, տարվա սկզբին՝ Որմիզդ կոչվող օրը, գահ է բարձրանում: Ժողովուրդը մեծ խանդավառությամբ տոնում է այդ օրը և Նոր օր անվանում (տե՛ս նույն տեղում, էջ 455):

<sup>238</sup> Jašnē Sadē – իրանի հնագույն տոններից է և հատուկ առնչություն ունի կրակի հետ: Ըստ ավանդության՝ շատ հին ժամանակներից առ այսօր բահման (փետրվար) ամսի 10-ին իրավառություն է լինում: Սադե անվան վերաբերյալ ասում են՝ այդ օրն Ադամի զավակների թիվը հարյուրի է հասնում, իսկ մեկ այլ ավանդության համաձայն՝ Քեյումարսի աղջիկներն ու տղաներն այդ օրն արբունքի տարիքի են հասնում և այլն (տե՛ս նույն տեղում, էջ 324): Այս տոնի մասին տարբեր գրքերում տարբեր մեկնաբանություններ կան: Ըստ առասպելաբանության և «Շահնամե»-ի հիշատակության՝ այն կապվում է կրակի հայտնա-

պահպանումը մեր ազգային պարտականությունն է: Որանք պետք է հատկապես նշել» (էջ 32):

Այսպիսով, Ս. Շեղայաթը ժողովրդական բանահյուսությունը և ազգային մշակույթն ուսումնասիրում է ոչ միայն դրանց գուտ իմացաբանական արժեքները բացահայտելու, այլև իրանական ինքնատիպ մշակութային շերտերն օտար, եկվոր տարրերից զատելու նպատակով, քանզի վերջիններս, Շեղայաթի համոզմամբ, ներսից հարվածում են իրանական ազգային անվտանգությանը՝ խեղելով իրանցինների ազգային ինքնությունը:

Նշելով, որ Վայրագ ցեղերի նախնական մշակույթներից մինչև քաղաքակրթության վերջին նվաճումներն ուսումնասիրված են ըստ ամենայնի, նա շեշտում է դրանց անհրաժեշտությունը նաև Իրանի պարագայում, որպեսզի պարսկական հավատալիքները չդառնան սուկ պարսից պատմության՝ մոռացության դատապարտված իրողություններ: Ավելին, նրա համոզմամբ, պարսկական ազգագրության բնագավառում կատարված ուսումնասիրությունները և դրանց արդյունքների լուսաբանումն ու իրապարակումը գործուն միջոց կարող են դառնալ այնպիսի մոլորությունների դեմ պայքարում, ինչպիսիք են բախտագուշակությունները, հմայություններն ու կախարդանքները<sup>240</sup>:

«Ներանցեստան»-ում հեղինակը, ի լրումն իհմնական նյութի, տողատակերում բերում է համապատասխան բովանդակությամբ փաստեր՝ քաղված ինչպես զրադաշտական հուշարձաններից («Ավեստա», «Բոնդահեշն», «Շայեստ նաշայեստ», «Դինքարդ» և այլն), այնպես էլ պարսկական դասական շրջանի սկզբնաղբյուրներից (Օմար Խայամի «Նոուռուզնամե», Մուսթա-

---

գործնան հետ: Մի օր Փիշդադյան թագավորության երկրորդ թագավորը՝ Զամշիդը, լեռան ստորոտում օծի է հանդիպում և մի քար նետում: Օձը փախչում է, իսկ նետած քարը դիպչում է մի ուրիշ քարի, և կայծ է դուրս գալիս. այդպես հայտնագործվում է կրակը (տե՛ս Rajāyī-Boxārāyī, Mazdārūr, *Bargozidēyē Sāhnāmē Fērdosī*, Tehran, 1381, էջ 2):

<sup>239</sup> Čhār šanbē sūrī – Հնագույն Իրանում տարվա վերջին տասն օրերին փառաբանում էին իրենց նախնիների ֆարավահարներին (պահապան և պաշտպան ոգիներ), Աստծու լույսը վառելով՝ ողջունում նրանց հոգիներին և իրավառություն կազմակերպում: Սասանյաններից հետո իրավառության այս ավանդույթը տեղափոխվեց տարվա վերջին երեքշաբթի (լույս չորեքշաբթի) երեկոյան: «Sūrī» պարսկերեն բառ է, ածական, նշանակում է «կարմիր» (պահլավերեն «sūrīk») (տե՛ս Hēshīdarī J., նշվ. աշխ., էջ 243):

<sup>240</sup> Ste'us Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, էջ 32, 33:

ֆա Բեհջաթի «Յեղար ասար», Յամդ Օլլահ Մոսթոֆի «Սեղաք օլ-Ղոլոր», Մուհամմադ Յոսեյն Էբն Խալաֆ Թաքրիզիի «Բորհանե ղաթե», Ուզա Ղոլի խան Յեղայաք Բաշիի «Ֆարհանգե անջոման արա», Մուհամմադ Էբն Մահմուտ Էբն Ահմադի «Աջայեր օլ-մախ-լուղաթ», Զամալ ադ Ղին Յոսեյն Էբն Ֆախրեդդին Յոսեյն Էնջավի Շիրազի «Ֆարհանգե Զահանգիրի»<sup>241</sup>)՝ հարկ եղած դեպքում վկայաբերելով պարսից պոեզիայի մեծերի՝ Մուլեհեդդին Սահուր և Զալալ ադ Ղին Մոլավիի խոսքերը:

Այսպիսով, Սադեղ Յեղայաթն ազգագրական իրողությունների մեծ մասը ներկայացնում է առանց մեկնաբանությունների՝ ասես դրանց լուսաբանման գործառույթը վստահելով համապատասխան խնդրի առնչությամբ իր բերած սկզբնաղբյուրային տեղեկույթին: Սա չի նվազեցնում Ս. Յեղայաթի աշխատության գիտական նշանակությունը, քանզի այստեղ ի մի բերված և թեմատիկորեն համակարգված հարուստ նյութն արգասաքեր հիմնահող և մեկնակետ պիտի դառնար այս բնագավառում ապագա հետազոտությունների համար:

«Ամուսնության ծիսակատարություն»<sup>242</sup>: «Սեյրանգեստան»-ում հատկապես մանրամասն ու համակողմանիորեն են դիտարկված ամուսնության, հղիության շրջանում կնոջը և երեխայի ծննդյանն առնչվող ծեսերն ու արարողությունները: Ընդորում Ս. Յեղայաթը, որպես կանոն, բուն ծիսակարգի մասին պատկերացումը լրացնում-ամբողջացնում է բանահյուսական երգ ու բանի գուգադրումով:

Իրանում ամուսնական ծեսն ընտանեկան կենցաղային ավանդույթներից ամենակարևորն է: Այն երկրի առանձին շրջաններում որոշակի տարբերություններ ունի: Սակայն ընդհանուր են արարողակարգն ու ուտեստները: Իրանում իսլամի ընդունումից հետո արարողությունը սկսում են կատարել հոգևորականի մասնակցությամբ, որն ընթերցում է «Ղուրան»-ից հատվածներ: Ամուսնական ծեսը պետք է կատարվի մի սենյակում, որի հիմքերն ամուր են, իսկ սեղան պատրաստող կանայք պետք է ամուսնական կյանքում երջանիկ անձինք լինեն: Կանայք նախ՝ գորգին փուված սպիտակ սփոռոցի վրա տեղադրում

<sup>241</sup> «Nowrūznāmē», «Hēzār asrār», «Nēzhat ol-qolūb», «Borhān-e qātē», «Farhang-e anjomān ārā», «'Ajāyēb ol-maxlūqāt», «Farhang-e jahāngīrī».

<sup>242</sup> «'Ādāb va tašrīfātē zanāšūyī».

Են փեսայի կողմից ուղարկված հայելին, որը բախտավորություն է խորհրդանշում, ապա՝ մոմակալի վրա գույզ մոմեր են վառում փեսայի և հարսի անունից:

Այդ օրը հանդիսանքին ներկա են լինում հարսնացուի և փեսացուի հարազատները: Յարսանյաց ծեսը միջարկվում է հարսի և փեսայի մասին տեղական բարբառներով հյուսված երգերով ու տաղերով:

«Էմշաբ չե շաբաս? Շաբ-է վեսալ աստ

Ին չանէ ռօր աչ չերազ օ լալեաս!» (էջ 189)

(Այս գիշեր ի՞նչ գիշեր է: / Միասնության գիշեր է, / Այս տունը լի է լույսով ու կակաչով):

Ըստ որում հեղինակը հանգամանալից տեղեկություններ է հաղորդում մահրիեի (փեսայի վճարած ամուսնագումարը) և օժիտի կարգի մասին, որոնք հարսանեկան ծեսի անբաժան մասն են կազմում:

Ի տարբերություն նշվածի՝ Ս. Յեղայաթը գրեթե ոչինչ չի գրում ամուսնության կանոնակարգի մի քանի կարևոր բաղադրիչների՝ փեսայի ու հարսի ծանոթության, միջնորդների, խնամախոսության և նշանադրության մասին:

«Յոի կին, երեխա»<sup>243</sup>: Իրանում ընդունված է կնոջ հղիության ընթացքում երեխայի սեռի գուշակության ավանդույթը: «Եյրանգեստան»-ում մանրամասն նկարագրվում են չարքերին հալածելու համար իրականացվող արարողությունները, ներկայացվում են ծննդկանի հատուկ խնամքի վերաբերյալ տեղեկություններ:

Ծննդկանին ու նորածնին չարքերից պաշտպանելուն միտված միջոցներն այստեղ բավականին ընդգրկուն են ներկայացված: Այսպես, շամփուրի վրա անցկացնում են երեք կամ հինգ սոխ և դնում տան անկյունում: Ցանկալի է նաև, որ իրացան և սուր լինեն: Ըստ մեկ այլ ավանդության՝ ծննդկանի անկողնու չորսբոլորը սրով շրջան են գծում և բացատրում, որ սահմանագիծը Մարիամի և իր Որդու համար է<sup>244</sup>, և սուրը, հանելով պատյանից, դնում են ծննդկանի գլխավերնում մինչև նրա լոգանք ընդունելու օրը (էջ 39-40):

<sup>243</sup> «Zanē ābēstan, bačē».

<sup>244</sup> Այստեղ խոսքը հավանաբար մանուկ Յիսուսի և ս. Մարիամ Աստվածածնի մասին է:

Ուշագրավ է, որ ծիսահմայական արարողություններ ընդունված են եղել նաև հայերի մեջ: «Նորածնին լողացնելուց հետո տատմերը վերցնում է խանձարուրված երեխային, վրան երկու հաց դնում, ծայրը մի սոխ ցցած շամփուրով, շենք ու պատը խազելով դուրս գալիս տնից, բարձրանում կտուրը և դեպի արևելք դառնալով՝ աղոթում... Մետաղե շամփուրն ու սոխը, ըստ հավատալիքի, չարահալած առարկաներ են, որոնց միջոցով տան շեմին ու պատերին կատարած խզումներով անջրագետվում, արգելափակվում էր չար ոգիների մուտքը տուն»<sup>245</sup>:

Ըստ պարսկական հավատալիքների՝ այս ամենն արվում էր նրա համար, որ ալ՛օ<sup>246</sup> ու թպղաները<sup>247</sup> ծննդկանի Սարդը չգողացնան:

Ընդ որում չարխափանի միջոցը նույն նպատակով էր գործադրվում նաև Յին Յայաստանում, հատկապես Զավախքի ու Մուշի շրջաններում: Սարգիս Յարությունյանը 146 ժք. դրվագում գրում է. «Խորագրված է «Յոի կանաց աղոթք»: Բանահավաքի ծանուցմամբ՝ «Յոի կինը սուրբ պիտի պահե և միշտ պիտի հիշե Զորեքմուտը, Ուրբըթմուտը և Կիրակմուտը, երբ ծնի՝ օգնության հասնին. Եթե չէ պահած՝ ծննդյան միջոցին «Սատանեք կը քոմին, ճիկյարը հանին կը տանին», և վերջում նշում. «Բանահավաքի ծանուցման մեջ հիշատակված ծննդկանի Սարդը հափշտակող սատանաները ալերն ու թպղաներն են»<sup>248</sup>:

«Նեյրանգեստան»-ում հանգամանալից տեղեկություններ են հաղորդվում իրանում նորածնի խնամքի, անվանակոչության,

<sup>245</sup> Յարությունյան Ս., Յայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., 2006, էջ 321:

<sup>246</sup> «Երևակայական չար ոգի, որ պատուհասում է ծննդկաններին (սնոտ.)» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 29):

<sup>247</sup> «Ծննդկանին և նորածնին վնասող չար ոգի» (Յարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 460):

«Իրանահայերի մոտ, ըստ գրական նյութերի, ամլության դատապարտող հիմնական գործոնները «թպղա» կամ «չլլա» չար ոգիներն են, ընդ որում ավելի լայն տարածում ունի հավատը «չլլա» չար ոգու նկատմամբ: «Չլլա» տերմինը, ամենայն հավանականությամբ, ծագում է միջինասիական (ավելի ճիշտ՝ իրանական – խմբ.) ժողովուրդների «չիլ» - քառասուն բառից: Ի դեպ, Խորեզմի ու բեկների մոտ «չիլա» է կոչվում ոչ միայն կնօքը չարիք պատճառող «չիլլան», այլ նաև հետծննդյան քառասունօրյա ժամանակահատվածը» («Իրան-նամե», 1999, թիվ 32-34, էջ 33):

<sup>248</sup> Յարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 312:

նրա աճի իրողությունների հիման վրա փոքրիկի ապագայի գուշակությունների մասին: Իրանում նորածնին փաթաթում են սպիտակ կտորի մեջ, որն անվանում են դատաստանի օրվա շապիկ, գլխավերևում տասն օր մոմ են վառում<sup>249</sup>, վեցերորդ գիշերը նորածնի համար անուն են ընտրում (էջ 41): Պարսիկները հավատում են, որ Երեխան աշխարհ գալիս իր հետ բերում է իր օրապարենը (rūzī), (էջ 43): Երեխայի՝ վերևից ատամ հանելը չարիք է համարվում: Չարը վերացնելու համար պետք է Երեխային ցածր տանիքից վայր գցել, իսկ ներքեւում մեկը պետք է բռնի նրան (էջ 45): Արու զավակ ունենալուց հետո պարսիկներն ուխտ են անում, որ մազերը յոթ տարի չեն կտրելու, յոթներորդ տարվա ավարտին կտրած մազերի կշռին հավասար ուկի են գնելու՝ ապարանջան պատրաստելու և այն իրենց սրբատեղիներից մեկին նվիրելու (էջ 46):

**«Տարբեր հավատալիքներ և ծեսեր»<sup>250</sup>:** Այս հատվածում հետաքրքրական տեղեկություններ կան ճամփորդություններին վերաբերող հավատալիքների մասին: Մատուցարանի վրա դնում են հայելի, մի ափսե ալյուր, մի թաս ջուր՝ վրան կանաչ տերև դրված, նաև «Ղուրան»: ճամփորդի գլխավերևում «Ղուրան» են պահում, որպեսզի անցնի դրա տակով: Ապա պետք է նայի հայելու մեջ, մատը թաթախի ալյուրի մեջ և դրոշմի ճակատին: Մեկնելու պահին հյուրի հետևից ջուր են ցողում: Զուրը և հայելին լուսավորություն են խորհրդանշում, իսկ ալյուրը՝ բարիք: ճամփորդության յոթերորդ օրը ճամփորդի պատվին ապուր են եփում, որը կոչվում է *աշե փոշթե փա*<sup>251</sup> (էջ 48):

Բավականին հանգամանորեն ներկայացված հավատալիքների շարքում ուշագրավ է անձրևահայց հմայությունը, որը մասնավորվում է հետևյալ արարողակարգով. Երաշտի ժամանակ խորասանի (իրանի հյուսիսարևելյան շրջան) գյուղերից մեկում խրտվիլակ էին պատրաստում, երեսը ծածկում և հետևից քայլելով երգում.

**«Čolī qazak bārūn kon  
bārūn-e bī pāyūn kon» (էջ 50)**

<sup>249</sup> Տողատակում Ս. Յեղայաթը նշում է, որ այս հավատալիքը գալիս է զրադաշտական կրոնից:

<sup>250</sup> «Էլեղած և տաշրիֆատ ցնացն».

<sup>251</sup> Աշ-ե քոշ-ե քա.

(Չոլի՛ ղազաք<sup>252</sup>, անձրև բե՛ր, / Հորդառատ անձրև բե՛ր):

Յին Յայաստանում այդպիսի հմայածիսական արարողությունների առկայության մասին վկայվում է Վարդ Բդոյանի «Դայ ազգագրություն» գրքում: Ուշագրավ է, որ մեզանում և այդ նպատակին ծառայեցվել է Նուրի կոչվող կանացիակերաց խրտվիլակը գյուղամիջում պտտեցնելը: Այնտեղ մասնավորապես կարդում ենք. «Մոգական բնույթ ունեցող ծեսերի մեջ ամենատարածվածը անձրևահայցն էր, որի համար կար երկու գլխավոր արար: Առաջինը՝ Նուրի կոչված կանացիակերաց խրտվիլակը գյուղամիջում պտտեցնելն էր, և երկրորդ՝ արորին կանանց լծելով՝ չորացած գետի հունը վարելը: Երկու պարագայում էլ ծեսերը կապվում էին անձրևաբեր աստվածության պաշտամունքի հետ: Իսկ Նուրինն ինքնին ներկայացնում էր ջրային տարերքի աստվածուիի նարի արձանը»<sup>253</sup>:

Դայոց այս ծեսին անդրադարձ է կատարվում նաև Յրանուշ Խառատյանի «Դայ ժողովրդական տոները» աշխատության մեջ<sup>254</sup>:

«Դիվանդության ծեսեր»<sup>255</sup>: Ս. Դեղայարն անդրադառնում է նաև հիվանդությունների բուժման եղանակներին: Ներկայացվում է ջուլ (յօ՛ն) կոչված հիվանդության բուժման ավանդական ձևը, որը բավականին տարածված էր: Երբ հիվանդն ամբողջ օրը շարունակ քաղց էր զգում, ասում էին՝ նրա ստամոքսի մեջ բու կա, և մարդու կերածն ամբողջությամբ նրան է բաժին հասնում: Բուժման համար հիվանդի ձեռքերը և ոտքերը կապում էին: Անուշահոտ ու համեղ ուտելիքներ էին պատրաստում և դնում նրա կողքին: Այդ ժամանակ բուն ուտելիքի հոտից դուրս էր ցատկում ստամոքսից, և հիվանդը բուժվում էր (էջ 53): Այս բաժնում ներ-

<sup>252</sup> «Čolī qazak» բառակապակցությունը կազմված է երկու բառից՝ «Կնլի» կամ «Kolē» և «Qazah»: «Kolē» արար բեղվինների լեզվում նշանակում է «ծոմոված», իսկ «Qazah»՝ «փոթորկի աստված»: Դետագայում պարսկերենում «Čolī qazak»-ը օգտագործել են «փոթորկի աստծո աղեղ» նշանակությամբ: Դետևաբար՝ «Čolī Qazak» կարող է նշանակել «ծիածան» (տե՛ս Šakūrzādē Ē., ’Aqāyēd va rosūm-e ’āmēyē mardom-e Xorāsān (bē ēnzēmām-e pārēi aš’ār va loqāt, amsāl va afsānēhā va fālhā va do’ā va mo’amāhā), Tehran, ēntēš. Bonyād-e farhang-e Irān, 1346, էջ 270):

<sup>253</sup> Բդոյան Վ., նշվ. աշխ., էջ 20:

<sup>254</sup> Խառատյան-Առաքելյան Յ., Դայ ժողովրդական տոները, Եր., «Զանգակ» հրատ., 2005, էջ 122:

<sup>255</sup> «Ādābē nāxōšī».

կայացվում են ջերմությունն իջեցնելու և չար աչքը խափանելու այլ միջոցներ ևս:

«Յանկություններն իրականացնող ծեսեր»<sup>256</sup>: Յանկություններն ու փափագները կյանքի կոչելու ավանդույթը պարսիկների ամենասիրելի արարողությունն է: Նա, ով ուզում է՝ իր նվիրական իղձն իրականանա, դիմում է իր սրբին և ուխտ է անում հյուրասիրություն կազմակերպելու, որը հայտնի է *սոֆրե*<sup>257</sup> անունով: Ամեն սուրբ ունի իր հատուկ սոֆրեն, որը բաղկացած է հատուկ ուտելիքներից և ճաշատեսակներից: Սաղեղ Շեղայաքն անդրադառնում է տարբեր սոֆրեների, բայց մենք կներկայացնենք հետևյալ սոֆրեները՝ *սոֆրե Բիբի Սեշանբե*<sup>258</sup> (Բիբի Սեշանբեի ճաշ), *սոֆրե Ֆաթեմե Զահրա*<sup>259</sup> (Ֆաթեմե Զահրայի ճաշ) և *սոֆրե սաբզի*<sup>260</sup> (կանաչի ճաշ), որը պատվիրող ուխտյալը պետք է հնագանդվի ծեր և փորձառու կնոջ իրահանգներին: Սրանք են նվիրական իղձի իրականացման նախապայմանները (Եջ 56, 59): Չարքը խափանելու և ցանկությունն իրականացնելու համար պատրաստում են *աջիլե մոշքելգոշա*<sup>261</sup>: Այն բաղկացած է յոթ տեսակի աղանդերներից և բաժանվում է յոթ հոգու միջև, որպեսզի ակնկալիքը կատարվի, կամ խնդիրը հարթվի (Եջ 57):

Ս. Շեղայաքն անդրադառնում է նաև հանգուցյալի առնչու-

<sup>256</sup> «Barāyē bar āmadanē hājat».

<sup>257</sup> Sofrē – Բառացի՝ «սփոռց», «սեղան», իսկ փոխաբերական իմաստով՝ «ճաշ, սիրո ճաշ»: «Sofrē nazrī»-ն կիրառվում է կրոնական իմաստով, այսինքն՝ «մատաղի սպասարկման ճաշասեղան»:

<sup>258</sup> Sofrē Bībī Sēšanbē – Բիբի Սեշանբեն այն բարեգործ և հավատացյալ կանանցից էր, որոնք ծնվել են երեքշաբթի օրը, ամուսնացել են երեքշաբթի օրը և վախճանվել են երեքշաբթի օրը: Նա Մուհամմադ մարգարեի դուստրերի՝ Բիբի Շուրիի և Բիբի Նուրիի ժամանակակիցն էր: Բիբի Սեշանբեի ճաշը ողորմությամբ հավաքված գումարով պատրաստված ճաշ է:

<sup>259</sup> Sofrē Fātēmē Zahrā – Ֆաթեմե Զահրան Մուհամմադ մարգարեի դուստրն էր, և այդ ճաշը Ֆաթեմե Զահրային է նվիրվում՝ ցանկությունների կատարման կամ հիվանդությունների բուժման համար, որ երեք անգամ հինգշաբթի լույս ուրբաթ գիշերն է պատրաստվում:

<sup>260</sup> Sofrē sabzī – Կանաչի ճաշ, սարերում կամ գետափին պատրաստվող ճաշասեղան, որի վրա անպայման պետք է տեղ գտնեն նոութուզի ճաշատեսակները: Կարևոր այն է, որ, բացի սեղան պատրաստող տարեց կնոջից և բարի փերիներից, ոչ ոք չպետք է լինի:

<sup>261</sup> Ājīl-e moškēl gošā – Այսինքն՝ խնդիրները լուծող աղանդեր: Այս աղանդերը պատրաստվում է Յալդայի գիշերը, Զհարշանբեսուրիին, կրոնական և ազգային տոններին: Աղանդերի պատրաստման և հավատքի ավանդույթը վերագրվում է Իրանի հնագույն ժամանակներին:

թյամբ կատարվող արարողություններին: Թե՛ զրադաշտական, թե՛ իսլամական կրոնի օրենքներով հանգուցյալները ըստ ամենայնի մեծարվում են: Նոր ննջեցյալի հոգին մինչև դատաստանի օրը պետք է սպասի: Հանգուցյալի կատարած չար ու բարի գործերի քննությամբ էլ որոշվում է՝ նա դրախտի<sup>261</sup> է արժանանալու, թե՞ դժոխքի: Հինգշաբթի լույս ուրբաթ գիշերը մեռելների հոգիները գալիս են իրենց տները այցելության, հետևաբար՝ չպետք է նրանց մասին բամբասել, այլ հարկավոր է բարի աղոթքներով հիշել նրանց: Եթե վաղ առավոտյան շան ոռնոց լսվի, նշանակում է՝ հոգեառ է եկել: Որպեսզի հոգեառը տուն չնտնի, պետք է կոշիկները շրջել (էջ 64): Հանգուցյալի դին գիշերը մենակ չեն թողնում, իսկ գլխավերնում մոմ են վառում, ինչը հետո թափանցել է իսլամական մշակույթ: Թաղելու պահին հանգուցյալի գլխավերնում գերեզմանաքար (Սանգե լահաղ)<sup>262</sup> են դնում, որպեսզի Նաքիրի և Սոնքերի<sup>263</sup> գալու ժամանակ հանգուցյալի գլուխը դիաչի գերեզմանաքարին, փոշտա և ասի՝ «Ալ-համդու լիլլահ Ռաբալ Ալամին»<sup>264</sup> (Փա՛ռ Աստծուն, աշխարհի Տիրոջը): Այդ պահին իրեշտակները կիասկանան, որ հանգուցյալը մուսուլման է: Ահա թե ինչու է պարտադիր, որ փոշտալուց հետո յուրաքանչյուր մուսուլման արտասանի այդ բառերը (էջ 65):

«Կանխագուշակություն մարմնի մասերի միջոցով»<sup>265</sup>: Երազների և քնելու վերաբերյալ շատ հակիրծ անդրադարձից հետո Ս. Յեղայաթի դիտարկած հավատալիքների մեջ մեծ թիվ են կազմում կանխագուշակությունները: Խոսքը վերաբերում է հատկապես մարմնի մասերին, որոնք կարող են մարդու էռության, բնավորության գծերի բացահայտման կամ սպասելի դեպքերի կանխագուշակության միջոց դառնալ<sup>266</sup>: Մեծ գլուխը խելամտու-

<sup>262</sup> Sang-e lahad.

<sup>263</sup> Nakīr va Monkēr – Յրեշտակներ, որոնք գերեզմանում հարցաքննում են նոր հանգուցյալին:

<sup>264</sup> Al-hamdū lī-lلāh Rabal 'Ālamīn.

<sup>265</sup> «Tafāol nāšī az a'zāyē badan».

<sup>266</sup> Յայերի շրջանում հար և նման հավատալիքների ու գուշակությունների մասին տե՛ս Յարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 17, 18, Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Եր., Յայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 158:

Յետաքրքրական է նաև այն, որ մարմնամասերի վերաբերյալ այդ նախնական պատկերացումները պատմազգագրական դարավոր դիտարկումների արդյունք են, որոնց հիման վրա 18-19-րդ դդ. գիտականության աստիճանի եր հավակնում «Դիմագիտություն» (ֆիզիոգնոմիկա) հոգեֆիզիոլոգիական գուգա-

թյան և ուշիմության, իսկ կարծ հասակը ճարպկության, բանիմացության և ինարամտության նշան է (էջ 68): Եթե գլխի մազերը թափվեն, ծիտը կտանի, բույն կհյուսի, իսկ մազի տերը գլխապտույտ կունենա (էջ 69):

Սարգիս Դարությունյանը ներկայացնում է հավատալիքի հայկական տարբերակը. «Զեյթունում և մի շարք այլ գավառներում խուզած մազը գետին չեղն թափում, որպեսզի մազի տիրոջ գլուխը չցավեր»<sup>267</sup>:

Դեղայաթը ներկայացնում է այլ հավատալիքներ ևս, ինչպես, օրինակ, քրի ծայրի քոր գալը հյուր ունենալու նշան է (էջ 69), աջ աչքի կոպի թրթռոցը՝ տիսրության (էջ 70): Այս մասին Ս. Դարությունյանի աշխատության մեջ կարդում ենք. «Զավախքում հավատում էին, թե երբ մեկի քիթը քոր էր գալիս, հյուր է գալու, երբ աջ աչքը թրթռում էր, գործը հաջողվելու է»<sup>268</sup>:

Փոշտոցը նույնպես կանխագուշակությունների հիմք է դառնում: Մեկ փոշտոցը սպասման և առողջության նշան է: Սպասելու պահին պետք է յոթ անգամ «Սալավաթ»<sup>269</sup> (Օրինություն Սուհամմադ մարգարեին) ասել: Զույգ փոշտոցը ջահնչ<sup>270</sup> (հազիվիազ) կամ ջահնչ<sup>271</sup> (ճիզ) է նշանակում, և պետք է շտապողականություն ցուցաբերել (էջ 70): Գարեգին Սրվանձտյանցը այս մասին հետաքրիր ակնարկներ ունի «Մանաճա»-ում<sup>272</sup>:

«Բախստագուշակություն, կանխագուշակություն, թռչնահմայություն, հավահմայություն»<sup>273</sup>: Այս բաժնում տեղ գտած հմայությունները բովանդակային տեսակետից չեն համապատասխանում վերնագրին: Խոսքը վերաբերում է «հավահմայություն» և «թռչնահմայություն» բառերին, որոնց մասին տեքստում

---

հեռականության տեսությունը, որը դիմագծերի և մարմնակազմական յուրահատկություններով էր պատճառաբանում մարդու խառնվածքն ու բնավորությունը, նրա ընդունակությունները և այլն: Նշանավոր իմաստասեր Արթուր Շոպենհաուերը ևս հանճարի իր տեսությունը իիմնավորում էր դիմագիտական և մարմնակազմական յուրահատկություններով (տես՝ Ռուբենգայեր Ա., Միք ու վոլյա և պատկեր, Մ., առաջ. «Минск», 1999, 1405 էջ):

<sup>267</sup> Դարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 17:

<sup>268</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>269</sup> Salavāt.

<sup>270</sup> Jaxd.

<sup>271</sup> Jahd.

<sup>272</sup>Տես՝ Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, էջ 158:

<sup>273</sup> «Tafāol, nofūs, morvā, morqvā».

ոչ մի ակնարկ չկա: Թերևս ժամանակի ընթացքում արտագրող գրիչները ինչ-ինչ պատճառներով բաց են թողել նշված տեղեկույթը: Սակայն վերնագրից կարելի է եզրակացնել, որ հին պարսիկների շրջանում այդպիսի հմայություններ գոյություն են ունեցել: Ն. Ա. Կիսյակովն այդ վերնագրի բառացի թարգմանության փոխարեն նոր խորագիր է ընտրում՝ «Նախագուշակություններ, լավ և վատ նախանշաններ»<sup>274</sup>, որն ավելի մոտ է ենթագլխի բովանդակությանը:

Գրքի այս հատվածից բերենք մի քանի օրինակ: Այսպես, եթե ափսեներն իրար կողքի շարվեն, նշանակում է՝ հյուր է գալու, իսկ եթե դրանց կողքին փոքր ափսե լինի, նրանց հետ փոքր երեխա է լինելու (Էջ 72): Կինը, տունը և ծին կարող են օրինաբեր լինել կամ հակառակ ներգործությունն ունենալ (Էջ 73): Եթե բյուրեղապակյա իր կոտրվի, չպետք է անհանգստանալ, քանի որ տան չարիքն այդպես վերանում է (Էջ 74) և այլն:

«Ժամ, ժամանակ, օր»<sup>275</sup>: Քննության են առնվում ըստ ժամանակային միավորների կատարվող կանխագուշակությունները: Վաղ առավոտյան դագաղ տեսնելը լավ նշան է: Սաֆար (լուսնային տարվա երկրորդ ամսվա արաբական անվանումը) ամիսը չարագույժ է, քանի որ 124 հազար իմամներից 120-ը այդ ամսվա ընթացքում են մահացել, կամ սաֆար ամսում ճամփորդելը չարաբաստիկ է (Էջ 76): Ով քառասուն անգամ բաղնիք գնա, կիսելագարվի (Էջ 78): Զմռան ամենաերկար գիշերը, որ Յալդա<sup>276</sup> է կոչվում, պետք է ձմերուկ ուտել (Էջ 79):

«Դասարակական խրատանի»<sup>277</sup>: Այս հատվածում ամփոփված են հիմնականում դաստիարակչական բնույթի ժողովրդական ասույթներ: Օրինակ՝ տանը հյուր լինելու դեպքում չպետք է հատակն ավլել, կանաչ ծառին չպետք է քար նետել, չպետք է հետևել ուտելու ժամանակ հյուրի կատարած շարժումներին, հացի կողերը չպետք է պոկել. դրանք դատաստանի օրը օձ կդառնան և կփաթաթվեն տվյալ անձի վգին (Էջ 83): Այս հավատալիքներից մի քանիսը կրոնական են: Օրինակ՝ ջուրը չպետք է

<sup>274</sup>Տե՛ս «Садек Хедаят. Нейрангестан. Перевод с персидского, предисловие и комментарии Н. А. Кислякова», էջ 285:

<sup>275</sup>«Sā’at, vaqt, rūz».

<sup>276</sup>Yaldā – «Դեյ մեկի (պարսկական տասներորդ ամիս/դեկտեմբեր 21) գիշերը, որ տարվա ամենաերկար գիշերն է» (Մանսուրեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1193):

<sup>277</sup>«Ahkāmē ’omūmī».

աղտոտել, քանի որ Ֆաթեմեի տայրն է (էջ 81): Մարգարեի կանչը (կատարվում է երազների միջոցով) ուխտագնացության արժանանալու նախապայման է (էջ 82): Սեխի կեղևը չպետք է այրել, քանի որ վրան գրված է «Յա Ալի»<sup>278</sup> (էջ 83): Աստծուն պետք է միայն փառաբանել (Նրա գործերն անքննելի են), որպեսզի բարիքներն ավելի շատանան: Աշխարհը միայն իինգ սրբերի (փանջ թան)<sup>279</sup> սիրույն և պատվին է ստեղծվել: Ընդգծենք, որ Սադեղ Շեղայաթը համաձայն չէ նշված հավատալիքի իրավացիությանը և իր տեսակետը հիմնավորելու համար հղում է կատարում «Բոնդահեշմ» (էջ 56) գրադաշտական հուշարձանին, որում ասվում է, թե Որմիզդը Զրադաշտից կատարյալ մեկին չի գտել և ավելի լավին չէր կարող ստեղծել: Նա է ընտրյալը, և աշխարհը նրա պատվին է ստեղծել (էջ 84):

*Փոլե սերաթի*<sup>280</sup> մասին հավատալիքն առկա էր գրադաշտականության մեջ<sup>281</sup>: Գարեգին Սրվանձտյանցն անդրադառնում է նաև այս նյութին. «Դասա իրեղեն գետ, տեսա մազե կամուրջ կապել են. էն գլոխ դրախտն էր, էս գլոխ դժոխք...»<sup>282</sup>:

«Ընդհանրական բնույթի կանոններ և խրատներ»<sup>283</sup>: Այս ենթագլուխը հիմնականում բանահյուսական արժեք ունի: Բերենք օրինակներ. Եթե որևէ իր կորչում է, զգեստի անկյունը կապում են և ասում. «Փակել եմ փերիների թագավորի աղջկա

<sup>278</sup> «Yā ’Alī». Ալի-ն մուսուլմանների առաջին իմամի անունն է:

<sup>279</sup> Panj Tan – «Դինգ սրբերն ըստ մահմեդական շիա ճյուղի դավանության, որոնք են՝ Մուհամմադ մարգարեն, նրա կինը՝ Ֆաթեմեն, իմամներ Ալին և իր որդիները՝ Դասանն ու Շուսեյնը» (Մանսուրեան Ջ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 259):

<sup>280</sup> Pol-e sērāt – «Բարակ ու դժոխքի վերևում: Դատաստանի օրը մարդիկ պարտավոր են անցնել դրա վրայով: Արդարները կանցնեն, իսկ մեղավորները կգլորվեն դժոխք» (նույն տեղում, էջ 256): Ըստ գրադաշտական հավատալիքների՝ այն կամուրջը, որով ննջեցյալների մեղավոր կամ անմեղ հոգիները պետք է անցնեն և դրախտ կամ դժոխք գնան, կոչվում է *Փոլե չինվաթ*: Իսլամում այս կամուրջը *Փոլե սերաթ* (ճանապարհ) է կոչվում, որը «Դուրան»-ում ավելի քան քառասուն անգամ օգտագործվում է «ուղիղ» բառի հետ. այդ կապակցությունը նշանակում է «Աստծու և ճշմարիտ ճանապարհ» (տե՛ս Հաշիմարի J., *Dānēšnāmēyē Mazdīsnā*, էջ 201):

<sup>281</sup> Տե՛ս Bahār M., *Pažūhēšī dar asātīr-e Irān*, 4<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Āgāh, 1381, էջ 335:

<sup>282</sup> Սրվանձտյանց Գ., Եղկեր, հ. 1, էջ 150:

<sup>283</sup> «Dastūrhā va ahkāmē ’omūmī».

բախտը» կամ «Սատանա՛, իմ իրը տո՛ւր, ես էլ քոնը կտամ» (էջ 89): Հացը Աստծու բարիք է, եթե ոտքի տակ ընկնի, պետք է վերցնել, համբուրել և պատի ճեղքում դնել, որպեսզի սով չլինի:

Հացի պաշտամունքը հայերի մեջ ևս բավական մեծ տարածում ունի: Նույնիսկ դրան դիմել են Հովի. Թումանյանը, Սիլվա Կապուտիկյանը: Բերենք պարսկական տարբերակին համարժեք օրինակ. «Հացը երբ գետին ընկնի, պետք է անմիջապես վերցնել, համբուրել և ուտել»<sup>284</sup>:

Հիվանդությունները, բնական աղետները կամ թշնամիներին վանելու համար Արեգակի ու Լուսնի խավարման ժամանակ պետք է Նամազե ջամա-աթ և Նամազե Այաթ<sup>285</sup> կատարել, քանի որ այդ պատահարները մեղքերի հետևանքով են տեղի ունենում (էջ 90):

«Մի քանի առած-ասացվածքներ»<sup>286</sup>: Հեղայաթը կարևորում և արժենորում է հետևյալ կերպ. «Հասարակ ժողովուրդն իր տեսածն ու զգացմունքներն արտահայտելու համար բառեր չի փնտրում և դրանք տրամաբանության չի ենթարկում, այլ արտաբերում է հանպատրաստից: Դրանք որքան մոտ են հասարակական հոգեբանությանը, այնքան կենդանի ու զորեղ են: Լեզվի ծագումն ուղղակիորեն կապված է այս երևույթի հետ: Կան բառեր, որոնք կենդանիների և իրերի ձայների ընդորինակումներ, երեխաների արտաբերած հնչյուններ են, օրինակ՝ բահ-բահ (պահ-պահ), ջու-ջու, բայց հետագայում լեզվի մեջ հատուկ նշանակություն են ստացել» (էջ 91): Բերված օրինակները նաև լրացնում է արսե (փոշտալ), ղահղահե (քրքիջ), խոռ-խոռ (խռխռոց), մյու-մյու (միաու-միաու), վաղ-վաղ (կաղկանձ), ղառղառ (կռկռիք), հաֆ-հաֆ (հաֆ-հաֆ), շոռ-շոռ<sup>287</sup> (չոռում է) և այլ բնածայնություններով»<sup>288</sup>:

Հեղինակն անդրադառնում է նաև այլաբանությունների կի-

<sup>284</sup> Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., «Հայաստան», 1974, էջ 267:

<sup>285</sup> Namāz-e jamā'at – «Հավաքական աղոթք, Namāz-e Āyāt – Արհավիրքի օրերի աղոթք, տարերային աղետների փարատում խնդրելու նպատակով կատարվող աղոթք» (Մանսուրեան Հ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1115):

<sup>286</sup> «Čand ēstēlāh va masāl».

<sup>287</sup> Bah-bah, 'Atsē, Jū-Jū, Qahqahē, Xor-xor, Myū-myū, Vāq-vāq, Qār-qār, Hāf-hāf, Šor-šor.

<sup>288</sup> Տե՛ս Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, էջ 91:

րառությանը և փոխաբերական իմաստով գործածված արտահայտություններին ու ընդգծում, որ դրանք լայն գործածություն ունեն թե՛ գրականության և թե՛ ժողովրդի խոսակցական լեզվում: Ի դեպ, Ս. Հեղայաթն իր արձակում կարողանում էր հմտորեն կիրառել լեզվական այս հնարավորությունները, ինչը նրա ոճի հնքնատիպության նախապայմաններից մեկն է: Ասացվածքները լեզվի մեջ փոխաբերական իմաստ են ձեռք բերում և կիրառվում: Նա այստեղ անդրադառնում է դրանցից մի քանիսին, օրինակ՝ «Āb zīr-e kāh» ասում են երկերեսանի մարդուն, որին հայերենում համապատասխանում է «դարմանի տակի ջուր» արտահայտությունը, «Damāqas čāq ast» («Քիթն առողջ է (չաղ է)»), կամ «Nānaš tūyē roqan ast» («Հացը յուղի մեջ է»), հարուստին, ունկորին, «Dastaš bē dahānaš mīrēsad» («Չեռքը բերանին հասնում է»), միջին խավի մարդուն, «Dastaš kaj ast» («Չեռքը ծուռ է»), մանր գողություններ անողին և այլն (էջ 91, 92):

Արժե հիշատակել հեղինակի դիտարկած ասացվածքներից ևս մի քանիսը՝ «Az dandēyē čap boland šodē» («Թարս ոտքի վրա է արթնացել»), «Tarē bē toxmaš mīravad Hasanī bē bābāš» («Խնձորը ծառից հեռու չի ընկնում»), «Dar-e xānēaš bastē ast» («Դուռը բացող չկա»), «Pā tū kafš-e kasī kardan» («Մեկի գործերին միջամտել»), «Kolāhēmān tū ham raft» («Հարաբերությունները վատանալ»): Նույն հատվածում Ս. Հեղայաթը բերում է նաև երդումների օրինակներ, որոնք մեծ տարածում ունեն հասարակության մեջ, օրինակ՝ «Bē tīq-e āftāb qasam» («Արևս վկա»)<sup>289</sup>, «Bē sūyē čērāq qasam» («Երդում ճրագին»), «Bē ojāq-e pēdarat qasam» («Երդվում եմ հորս օջախով») և այլն (էջ 92-94):

«Իրերը և դրանց առանձնահատկությունները»<sup>290</sup>: Ինչպես բոլոր ժողովուրդները, այնպես էլ պարսիկները իրերը, նույնիսկ ուտելիքները ոչ միայն գուշակությունների, այլև հիվանդությունների բուժման միջոց են համարել: Ս. Հեղայաթն այս նյութին այսպես է անդրադառնում: Աղը հարգանքի և մեծարման նշան է: Ով մեկի աղ ու հացը ուտի, նրան պետք է երախտապարտ լինի: Աղ ուտողն աղամանը չպետք է կոտրի (էջ 97): Մարդկային

<sup>289</sup> Գ. Հակոբյանը, բացատրելով երդման նշանակությունը, բերում է օրինակներ, որոնցից մի քանիսը ևս կապվում են արևի հետ. «Թող քոռ աշեմ արևին, ագյար սուտ կըսեմ», «Իմ արևը ճիշտ կըսեմ», «Քու արևը չեմ խաբէ» (տե՛ս Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 281):

<sup>290</sup> «Čīzhā va xāsīyatē ānhā».

խառնվածքը, իամաձայն ժողովրդական բժշկության, չորս տեսակ է լինում՝ տաք, խոնավ, չոր, սառը: Դրանց հավասարակշռության պահպանումն ուղղակիորեն կապված է առօրյա սննդակարգի հետ (էջ 100):

**«Բույսեր և սերմեր»<sup>291</sup>:** «Սեյրանգեստան»-ում Ս. Շեղայաթը չի շրջանցել դեղաբույսերի մասին պարսկական աղբյուրներում վկայված տեղեկությունները և դրանց վերաբերող հավատալիքները: Բույսերը և ընդեղենն իրենց բուժիչ ու սննդային հատկություններով օգտագործվում են մարդկության առաջացումից առ այսօր: Ըստ ավանդության՝ բրնձի ամեն մի հատիկի վրա գրված է «Ղոլ հով Ալլահ»<sup>292</sup> (Ասում է Աստված), այդ պատճառով էլ այն չպետք է ոտքի տակ ընկնի (էջ 102): Ըստ հեղինակի՝ պարսիկները հավատում են, որ Աստծո ստեղծած առաջին բանջարեղենը ձմերուկն է: Բարձրյալն այն ստեղծելու ընթացքում է փորձառություն ձեռք բերել և մյուս բույսերի հատիկներն ու սերմերը կամ հանել է, կամ թողել մեկ հատ: Կարմիր վարդը, որը պարսիկներն անվանում են գոլե Մուհամմադի<sup>293</sup> (Մուհամմադի ծաղիկ), ծաղկել է Մուհամմադ մարզարեի թափած քրտինքի կաթիլներից (էջ 103):

**Մեհրե գյահ**<sup>294</sup> (մարդարմատ) դեղաբույսի մասին տեղեկությունները Շեղայաթը քաղել է Մուհամմադ Շոսեյն Եբն Խալաֆ Թաբրիզիի «Բորհանե ղաթե» և Զամալ ադ Դին Շոսեյն Եբն Ֆախրեդին Շոսեյն Ենջավի Շիրազիի «Ֆարհանգե Զահամգիրի» բառարաններից, որոնցում ասվում է, որ այն մարդանման բույս է և Զինաստանում է աճում: Արմատները մարդու մազերի են նման, էգն ու արուն հյուսվել են իրար և ոտքերով ամրացել: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ այն քաղողը մի քանի օրից անխուսափելիորեն մահանում է: Այդ պատճառով էլ այն արմատահան անելու համար պարանի մի ծայրն ամրացնում էին բույսին, իսկ մյուս ծայրը՝ որսկան շան մեջքին: Կենդանուն հրապուրում էին որսով: Շունը վազում էր որսի հետևից, և բույսն

<sup>291</sup> «Gyāhān va dānēhā».

<sup>292</sup> «Qol Hov Allāh».

<sup>293</sup> Gol-e Mohamadī – Կարմիր վարդ:

<sup>294</sup> Mēhr-e gyāh – «Մանրագոր, մանդրագոր, մարդախոտ, Սողոմոն Խմաստունի ծառ (բսբ.), - Atropa mandragora L., mandrake, E.- բելադոն, շիկատակ, մահացու մորմ, մահամորմ, լուսնի ծաղիկ (բսբ.)» (Մանսուրեան Ռ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 1064):

արմատով դուրս էր գալիս: Շունը մի քանի օրից սատկում էր (էջ 104):

Այս դեղաբույսը հայտնի է բազմաթիվ ազգերի և լայն կիրառություն ունի: Գարեգին Սրվանձտյանցը «Գրոց բոոց»-ում ներկայացնում է այս դեղաբույսի հետ կապվող ավանդություն-հավատալիքի հայկական տարբերակը. «Լոշտակ անունով բույս մը կա, որ Մշո աշխարհին մեջ հաճախ կը գտնվի, առավելապես Ս. Կարապետի վանքի բոլորը... Այս այն բույսն է, որի արմատը մարդանման ըլլալ կը համարեն, և թե մինչև անգամ անոնց մեջ արուն ու էգն ալ հայտնի են: Թե այս արմատը հանելու համար աղոթք մը ունին, և թե երբ կը կտրեն յուր մյուս կտորներեն, ահագին ծայնով կը ճչա. ուլ մը կամ հավ կը կապեն այդ մարդարմատին, որպեսզի երբ ճչա՝ այն ուլը կամ հավը անոր ծայնին զոհ լինի»<sup>295</sup>:

Սարգիս Յարությունյանը հիշատակում է *մեհրե գյահի* կամ լոշտակի մեկ այլ տարբերակ. «Լոշտակը (Briania alba) դդմագգիներին պատկանող լայնատերև և երկար մարդակերպ արմատներով բույս է, Յայկական լեռնաշխարհում շատ տարածված, հնուց օգտագործվում է բժշկության մեջ, իբրև դեղաբույս, արդի խոսակցականում կոչվում է նաև «հայկական ժենշեն».... Յայատանի տարբեր վայրերում հավատում են, թե լոշտակի արմատները հողից հանելիս սուր ճիչ են արձակում, որը լսելիս մարդ մեռնում է: Այդ հավատալիքի հիման վրա լոշտակը հողից հանում են հմայական հատուկ արարողությամբ. նախ՝ լոշտակի կողքերը փորում են, շանը կապում արմատներից, իրենք բավական հեռանում, որ ճիչը չլսեն: Երբ շունը քաշում հանում է լոշտակն իր արմատներով, հավաստիացնում են, թե շունն այդ ճիչից սատկում է»<sup>296</sup>.

«Սողուններ և խայթողներ»<sup>297</sup>: Իրանում գուշակություններ արվում են նաև կենդանիների միջոցով՝ հիմնվելով դրանց ոչնչացման և դրա դրական կամ բացասական հետևանքների վրա: Այսպես, օրինակ, այն տարին, երբ շատ են ճանճերն ու ճնճղուկները, հիվանդություններ չեն լինում: Կամ՝ օձի գլուխն ու պոչը կտրում և մեջտեղի մասը եփելով ուտում են՝ ուժերը

<sup>295</sup> Սրվանձտյանց 4., Երկեր, հ. 1, էջ 43:

<sup>296</sup> Յարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 334, 335:

<sup>297</sup> «Xazandēgān va gazandēgān».

վերականգնելու համար: Օձի թույնը նման մարդու վրա այլևս ազդեցություն չի ունենում (էջ 107):

«Թռչուններ և հավազգիններ»<sup>298</sup>: Սնոտիապաշտ մարդը նախապաշտումներ է ունեցել՝ կապված կենդանիների հետ (թռչուններ և հավազգիններ), որոնք գալիս են դեռևս զրադաշտականությունից: Օրինակ՝ անժամանակ կանչող աքաղաղին պետք է մորթել կամ նվիրել, հակառակ դեպքում տերը կմահանա (էջ 109): Սարգիս Դարությունյանի աշխատության մեջ ներկայացված է համանման հավատալիքի հայկական տարբերակը. «Երբ հավը կամ աքաղաղը գիշերվա ընթացքում անժամանակ կանչում էր, ենթադրում էին, թե դժբախտություն պիտի պատահի»<sup>299</sup>:

Սարդկության պատմության ամենավաղ շրջանից սկսած՝ գրեթե բոլոր քաղաքակրթություններում հավատալիքները հիմնականում կապված են եղել կենդանիների (շուն, ցուլ, ձի, կատու և այլն) հետ: Պետք է ընդգծել, սակայն, որ միևնույն կենդանին տարբեր կրոններում տարբեր կերպ է ընկալվել:

«Ընտանի և վայրի կենդանիներ»<sup>300</sup>: Այս բաժնում Ս. Դեղայաթն անդրադառնում է տարբեր կենդանիների հետ կապված հավատալիքներին ու կանխագուշակություններին: Շունը և աքլորը զրադաշտականության մեջ մեծարվում են որպես նստակեցության սիմվոլներ: Շունն այն կենդանին է, որը նախախուլամական ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում է եղել լավ իմաստով, իսկ դրանից հետո պիղծ է համարվել: Ըստ հավատալիքի, եթե ճաշելու ժամանակ շունն ուտողի բերանին նայի, և մարդը նրան իր ուտելիքից չտա, կտառապի ջուր հիվանդությամբ: Անշուշտ, այս հավատալիքը զրադաշտական մտածողության արդյունք է: Ս. Դեղայաթն այս մասին գրում է. «Երևի սա հնագույն պարսիկներից մնացած հարգանք և ուշադրություն է շան՝ որպես հավատարիմ և պահապան կենդանու նկատմամբ, իսկ իսլամից հետո այս կենդանին համարվում է պիղծ և անմաքուր, իսկ նրան նեղացնելը՝ բարի արարք» (էջ 115): Ապա հեղինակն օրինակներ է վկայաբերում զրադաշտական «Մադ դար Բոնդահեշն» հուշարձանից. «1) Դաց ուտելիս երեք պատառ պետք է շանը տալ, 2) շանը չպետք է ծեծել.... 7)

<sup>298</sup> «Parandēgān va mākyān».

<sup>299</sup> Դարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 19:

<sup>300</sup> «Dām va dad».

աշխարհում մարդկանց և ոչխարի պահապանն է, 8) եթե շուն  
չլինի, մի ոչխար չենք ունենա» (էջ 115):

Ա. Ա. Կիսյակովն այս առնչությամբ նկատում է. «Յետա-  
քրիր է Յեղայաթի երկակի վերաբերմունքը շան նկատմամբ՝  
պայմանավորված երկու՝ զրադաշտական և իսլամական կրոն-  
ների մեջ եղած տարբեր ըմբռնումներով: Յայտնի է, որ զրադաշ-  
տականները շանը համարում էին պիտանի և մաքուր կենդանի,  
իսկ մուսուլմանները հակառակ մոտեցումն ունեն»<sup>301</sup>:

Վարդ Բդոյանի «Դայ ազգագորություն» գրքում, քրիստո-  
նեական ավանդույթի համաձայն, կենդանիները դասակարգվում  
են խմբերի և լինում են պիղծ կամ ուտելի: Այս մասին հեղինակը  
վկայաբերում է Եզնիկ Կողբացու բացատրությունը, որ «պիղծը  
չի ուտվում ոչ թէ ի բնութենե, այլ ըստ ախորժանքի»: Ե. Կող-  
բացին պիղծ է համարում նաև արյունը և սատկածի միսը: Վ.  
Բդոյանի գրքում պիղծ համարվող կենդանիների թվում է նաև  
շունը<sup>302</sup>:

«Մի քանի հնագույն տոներ»<sup>303</sup>: Այս խորագրի ներքո ներ-  
կայացվում են Իրանի հին ժամանակաշրջանի տոնածիսական  
ավանդույթները՝ *Մեհրեզման, Սաղե, Չհարշանքեսուրի, Ղաշող-*  
*զանի*<sup>304</sup>, *Նոռուուզ, Ջաֆթ սիմ*<sup>305</sup>, *Միզդարեղար*<sup>306</sup> և այլն: Դին

<sup>301</sup> «Садек Хедаят. Нейрангестан. Перевод с персидского, предисловие и  
комментарии Н. А. Кислякова», с. 262:

<sup>302</sup> Տե՛ս Բդոյան Վ., նշվ. աշխ., էջ 208, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր.,  
1970, էջ 173:

<sup>303</sup> «B'azī az jašnhāyē bāstān».

<sup>304</sup> Qāšoq zanī - «Ժողովրդական ավանդություն, որը տեղի է ունենում ամեն  
տարի՝ վերջին երեքշաբթի գիշերը՝ լույս չորեքշաբթի: Ծեսին մասնակցում են  
աղջիկներ ու կանայք (երբեմն էլ՝ տղաներ), որոնք, չաղրաների տակ ծպտված,  
դիմում են հարևանների դռներն ու գդալներով թակում իրենց հետ առած գա-  
վաթներին այնքան ժամանակ, մինչև որ տնեցիները գդալների ձայնից շտապեն  
աղանդ կամ Նոռուուզի առթիվ այլ նվերներ գցել նրանց գավաթի մեջ» (Ման-  
սուրեան Դ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 782):

<sup>305</sup> Haft sīn - «Նոռուուզի (իրանական տարեմուտի) առթիվ տոնական ճաշասե-  
ղանի զարդարանքը կազմող առանձին բաժին, որտեղ ճաշակով դասավորվում  
են «Ղուրան»-ը, մի հայելի, երկու աշտանակ և մի մատուցարան, որը պարու-  
նակում է «Ս» տառով յոթ համեմներ կամ պտուղներ, որոնք են՝ սխտոր (sīr),  
խնձոր (sīb), փշատ (sēnjēd), աղտոր (somāq), սամանու (samanū, ցորենից պատ-  
րաստված իրուշակեղեն), քացախ (sērkē) և սպանդ (sērpand, որը ծխում են՝ չար  
ոգիները վանելու համար)», (նույն տեղում, էջ 1170):

տարվա վերջին երեքշաբթի օրվա գիշերը տեղի է ունենում հրավառություն՝ Զհարշանքեսուրի: Այս մասին տարբեր ավանդություններ կան (էջ 123, 124): Ղաշողզանին կատարվում է Զհարշանքեսուրիի երեկոյան: Ըստ ավանդության՝ երեքշաբթի լուս չորեքշաբթի գիշերը՝ հրավառությունից հետո, հիվանդ ունեցողները բուժման համար խորհուրդ են անում. մի գդալ և աման վերցրած՝ աղմկում են հարևանների դրան մոտ՝ գդալով հարվածելով ամանին, և դրամ կամ ուտելիք ակնկալում: Ստացած ուտելիքով հիվանդին կերակրում են, իսկ դրամով՝ դեղ գնում (էջ 124):

*Նոուռուզը* (Նոր օր) պարսիկների ամենասպասված և սիրելի տոնն է՝ Նոր տարին: Տոնից 15 օր առաջ սկսում են ցորեն կամ ոսպ աճեցնել, մաքրում են տունը, նոր զգեստներ գնում: Ա. Շեղայաթն այս կապակցությամբ վկայակոչում է Զրադաշտի խոսքերը. «Զրադաշտն ասաց՝ *Նոուռուզին* հանգուցյալնելի ոգիները այցելում են իրենց տները: Նա հրամայեց այդ օրերին տները մաքրել, մաքրուր գորգեր փռել, համեղ ուտելիքներ պատրաստել, որպեսզի հանգուցյալների հոգիներն այդ ուտելիքների հոտից և սննդայնությունից կազդուրվեն» (էջ 125):

Ըստ ավանդության՝ անհրաժեշտ է պատրաստել *հաֆթ սին*, այսինքն՝ «Ս» տառով սկսվող յոթ տեսակի բան, որոնց կողքին պետք է դնել «Ղուրան», հաց, ջուր, վարդի ջուր, միրգ, քաղցրավենիք և այլն: *Նոուռուզի* տասներեքերորդ օրը կոչվում է *Միզդե բե դար* (տասներեքերորդ՝ դուրս): Պարսիկները, ավանդույթի համաձայն, այդ օրը տնից դուրս՝ դաշտերում ու զբույզիներում են անցկացնում: Երիտասարդ, չամուսնացած աղջիկները բախտավոր լինելու համար շիվեր են հյուսում ու երգում՝ «*Միզդե բե դար*, մյուս տարի ամուսնու տանը, երեխան գրկին»<sup>307</sup> (էջ 126):

«Նշանավոր վայրեր և իրեր»<sup>308</sup>: Այս խորագոի ներքո ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում հայտնի վայրեր՝

<sup>306</sup> Sīzda bē dar - «Ավանդական ժողովրդական տոն, որ տեղի է ունենում ամեն տարի՝ ֆարվարդին ամսի 13-ին» (նույն տեղում, էջ 630): Նոուռուզի տասներեքերորդ օրը պարսիկները, ըստ ավանդության, զբոսանքի են գնում, որպեսզի այդ օրվա չարաբաստությունն իրենցից հեռանա (տե՛ս **ՀԱՌԻԴԱՐԻ** J., նշվ. աշխ., էջ 339):

<sup>307</sup> «Sīzdē bē dar, sāl-e gēgar, xānē šohar, bačē baqal».

<sup>308</sup> «Jāhā va cīzhāyē m’arūf».

իղձակատար շիրիմներ, աղբյուրներ, բաղնիքներ և ծառեր, որոնք իրենց մեջ ավանդական խորհուրդներ են ամփոփում: Սկզբում հեղինակը ներկայացնում է «Սարվե Քաշմառ»-ի (Քաշմառի նոճին) առասպելական գրույցը: Ասում են՝ Զրադաշտը դրախտից եղևած երկու ճյուղ է բերում, որոնցից մեկը տնկում է Քաշմառում, իսկ մյուսը՝ Թուսի (Խորասան նահանգում) գյուղերից մեկում: Քաշմառում տնկածը դառնում է վիթխարի ծառ՝ հազար չորս հարյուր տարեկան՝ հայտնվելով մարդկանց ուշադրության կենտրոնում (էջ 127): Ուշագրավ են իմամ Ալիի մասին գրույցները՝ «Չեշմեյե Ալի» («Ալիի աղբյուրը»), «Չամամե Փանջե Ալի» («Փանջե Ալիի բաղնիքը՝ հազար չորս հարյուր տարեկան»), «Թաղե Ալի» («Ալիի առաստաղը»), «Չահե Մորթազ Ալի» («Մորթազ Ալիի հորը»)<sup>309</sup>: Բիրի Շահրբանուի<sup>310</sup> գերեզմանը Ոեյ քաղաքում հասարակության համար հարգանքի տուրքի վայր է: Այս վայրերը մարդկանց երազանքներն ու ցանկություններն իրականացնող սրբավայրեր են մինչև օրս (էջ 127-138):

Ժողովրդական բանարվեստը կարելի է ասել Յեղայաթի տարերքն էր: «Նեյրանգեստան»-ում նա անդրադառնում է ժողովրդի բանավոր խոսքի նմուշներին:

«Ժողովրդական հեքիաթներ»<sup>311</sup>: Յեղայաթը չեր կարող և չի շրջանցել ժողովրդական՝ հիմնականում իրաշապատում հեքիաթները: Նա նշում է, որ թեև դրանցում պատկերվում է անիրական, առասպելական աշխարհը, սակայն դրանց հավատում են թե՝ ասացողը և թե՝ լսողները:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին՝ «Խարե Դաջալ» (Ների ավանակը), «Նասնաս» (մարդակերպ դևեր), «Զաքելղա վա Զաքելսա» (քաղաքի անուններ), «Յաջուջ վա Մաջուջ» (Երկար ականջներով գաճաճ մարդիկ), «Դավալփա»<sup>312</sup> (Երևակայական էակ՝ Երկար ոտքերով և մարդու նմանությամբ):

«Խարե Դաջալ» հեքիաթում Դաջալը մի փալան ունի, որ ամեն գիշեր կարում է, բայց առավոտյան պատռված է գտնում: Աշխարհի վերջին օրը Դաջալի ավանակն Իսպահանում գտնվող մի հորից դուրս է գալու այլայլված և տարօրինակ կերպարան-

<sup>309</sup> «Čēsmēyē ’Alī», «Hamām-e Panjē ’Alī», «Tāq-e ’Alī», «Čāh-e Mortāz ’Alī».

<sup>310</sup> Bībī Šahrbānū.

<sup>311</sup> «Afsānēhāyē ’āmyānē».

<sup>312</sup> «Xar-e dajāl», «Nasnās», «Jābēlqā va Jābēlsā», «Y’ājūj va M’ājūj», «Davālpā».

քով: Նեռը իր գալստյան օրն այս ավանակի վրա նստած է լինելու:

«Նասնաս» հեքիաթում նասնասները մարդակերպ դևեր են, որոնց մարմնի կեսը կառուցված է մարդու մարմնի նման: Նրանք ցատկուտում են մեկ ոտքի վրա, խոսում են արաբերեն, և տեղաբնիկները որսում են նրանց՝ ուտելու համար: Նասնասներն ապրում են Աղենում և Օմմանում: Նրանց մասին հեքիաթներ են հյուսվել (էջ 144, 145):

Զարելղան և Զարելսան («Զարելղա վա Զարելսա» հեքիաթում) Աստծու ստեղծած երկու քաղաքներն են. առաջինը՝ արևելքում, իսկ երկրորդն արևմուտքում է գտնվում: Ասում են՝ յուրաքանչյուր քաղաք տասներկու հազար դուռ ունի, և դրոների միջև եղած տարածությունը մեկ փարսախ է: Քաղաքն այնքան բնակչություն ունի, որ ամեն մի դռան մոտ տասը հազար պահակ է կանգնում:

«Յաջուջ վա Մաջուջ» հեքիաթի համանուն հերոսները՝ Յաջուջն ու Մաջուջը, գաճաճներ են, որոնց ականջները կարծես փոփ լինեն, դրա համար էլ քարշ են գալիս գետնին: Դրանց սերունդներն աշխարհում խառնակությունների պատճառ են դառնում:

«Դավալփա» հեքիաթի համանուն հերոսը բարակ, երկար ոտքերով ծեր մարդ է, որը լաց լինելով խնդրում է, որ իրեն գետն անցկացնեն: Այդ պահին նա փաթաթվում է անցորդին և ստիպում իրեն շալակած ման տալ: Ազատվելու միակ միջոցը նրան հարթեցնելն է:

Ս. Յեղայաթը մանրամասնում է խոսքը հատկապես «Սիմորդ»<sup>313</sup> հեքիաթի առիթով: Նա առասպելական սիմորդ հավքի մասին տեղեկությունները ներկայացնում է ըստ «Աջայեք ոլ մախլուղաթ»<sup>314</sup> երկի: Նա նշում է, որ սիմորդ հավքը հսկա մի թռչուն է, այնքան մեծ է, որ հեշտությամբ փիղ է բարձրացնում: Նրան համարում են թռչունների արքա: Պարսկական առասպե-

<sup>313</sup> Sīmorg.

<sup>314</sup> «'Ajāyēb ol maxlūqāt na qarāyēb ol mojūdāt», այլ անվանումներով՝ «'Ajāyēb nāmē» և «Jām-e gitī namā»: Գրել է Մուհամմադ եբն Մահմուդ եբն Ահմադ Թուսին 6-րդ դարում պարսկերենով: Մեկ այլ գիրք նույն վերնագրով գրել է Զաքարիա Ղազվինին արաբերենով:

լազրույցներում երկու սիմորդ կա<sup>315</sup>. մեկը Ահուրայի<sup>316</sup> (աստվածային) և Ռոստամի պահապանն է և ուսուցիչը, մյուսը՝ Ահրեմանի<sup>317</sup> (սատանա) հսկա թռչունը, որին Իսֆանդիարը սպանում է (էջ 151, 152):

«Բազմազան»<sup>318</sup>: «Նեյրանգեստան»-ի վերջին գլխում ընդգրկված են հմայական աղոթքներին, հավատալիքներին, գուշակություններին վերաբերող նյութեր, որոնք գրեթե կրկնում են աշխատության նախորդ մասերում հաղորդված տեղեկությունների բովանդակությունը: Ըստ Երևույթին, հեղինակի մշակած վերջնական տարբերակը մեզ չի հասել, այլապես դրանք տեղաբաշխված կլինեին համապատասխան գլուխներում:

Ուսումնասիրելով ազգագրական ժառանգության շուրջ Ս. Հեղայաթի կատարած գիտահետազոտական աշխատանքները և գնահատելով դրանք՝ կարող ենք մատնանշել մի քանի թերություն-անհամապատասխանություններ: Այսպես, ուսումնասիրությունը, ըստ Հեղայաթի կազմած ծրագրի<sup>319</sup>, պետք է բաղկացած լիներ «Նյութական», «Հոգևոր» և «Հասարակական» բաժիններից, սակայն նախնական ծրագրին համապատասխան համակարգվածություն չունի: Աշխատանքը Ս. Հեղայաթը սկսում է ամուսնության ծեսով և ավանդույթներով, բայց ծրագրում սրանց մասին խոսվում է նաև երրորդ՝ «Հասարակական կենցաղ» գլխում: Նույն գլխում են գետեղված նաև հղիության և երեխաների մասին հատվածները, ինչպես նաև մահվան ու երազների մեկնությունները: Բույսերի և սերմերի մասին նաև խոսում է տասնյոթերորդ բաժնում, մինչդեռ դա ծրագրված էր ներկայացնել երկրորդ՝ «Բարոյական կյանք» գլխում: Այս գլխում պետք է ընդգրկվեին նաև «Սողուններ և խայթողներ», «Ընտանի և վայրի կենդանիներ» ենթագլուխները: Վայրերին նվիրված ենթագլուխը պետք է գետեղվեր առաջին գլխում, մինչդեռ տեղ է գտել ուսումնասիրության վերջին հատվածներում:

Ս. Հեղայաթը «Նեյրանգեստան»-ում չի նշում այն վայրերի

<sup>315</sup> Տե՛ս Rastegār Fasāyī M., *Pēykargardānī dar asātīr*, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Pažūhēsgāh-e 'olūm-e ēnsānī va motālē'āt-e farhangī, 1383, Āmūzgār Ž., Tafazolī A., *Ostūrēyē zēndēgīyē Zartošt*, 4<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Čēsmē, 1380:

<sup>316</sup> Ahūrāyī.

<sup>317</sup> Ahrēmanī.

<sup>318</sup> «Gūnāgūn».

<sup>319</sup> Այս նյութին կանդրադառնաք հաջորդ գլխում:

անունները, որոնց ազգագորությունը կամ բանահյուսությունն է ներկայացնում, նաև այն, թե դրանք իասարակության հատկապես որ խավի մեջ են տարածված եղել: Այսուհանդեռձ, պարսիկ գրող Մահմուդ Քաթիրային գրում է. «Մենք մեր հետազոտությունների միջոցով պարզեցինք, որ «Նեյրանգեստան»-ի բովանդակության մեջ մասի նյութերը Թեհրանի բնակչության հավատալիքներն ու սովորույթներն են»<sup>320</sup>:

Եվս մեկ նկատառում. «Նեյրանգեստան»-ում ներկայացված են ասույթներ ու ասացվածքներ, որոնց իմաստը հեղինակն ամբողջությամբ չի մեկնաբանում և բավարարվում է դրանց առաջացման հանգամանքները պարզաբանելով: Բերենք օրինակներ. «Կիրակի երեկոյան որևէ մեկի տուն չպետք է գնալ», «Կնոջ արյունը չարագուշակ է», «Գիշերը ջուրը չպետք է կանգնած խմել»<sup>321</sup> և այլն: Նկարագրական մասն ընթերցողի մեջ հարցեր է առաջացնում, որոնց պատասխանները, սակայն, հեղինակը չի տալիս:

Այս բացքողումները թերևս կարելի է անխուսափելի համարել, քանի որ «Նեյրանգեստան»-ը Ս. Շեղայաթը կազմել է երիտասարդ տարիքում, երբ դեռ ձեռք չէր բերել գիտական աշխատանքի համար անհրաժեշտ փորձառություն, չուներ ազգագրական հետազոտությունների իրականացման հայեցակարգային ծրագիր: Այդպիսի ծրագրով, կազմակերպական և մեթոդաբանական հստակ հենքով նա պետք է հանդես գար կարծ ժամանակ անց՝ կազմակերպիչ-առաջնորդի դեր ստանձնելով իրանի գիտության այս ոլորտում:

«Նեյրանգեստան»-ի բուն պարսկական սկզբնաղբյուրային հարուստ հենքը կարող էր և դարձավ մշակված մեկնակետ՝ իրանում ազգագրական ուսումնասիրություններ ծավալելու համար, արժանիք, որն ընդգծել է պարսիկ հայտնի ազգագրագետ Էնջավի Շիրազին<sup>322</sup>:

<sup>320</sup> Katīrāyī M., *Sādēq Hēdāyat dar būtēyē naqd o nazar*, gērdāvarandē Dānāyī Borūmand M., 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Mo’alēf, 1377, p. 202.

<sup>321</sup> «Šab-e yēkšanbē nabāyad bē xānēyē kasī raft», «Xūn-e zan šūm ast», «Dar šāb nabāyad īstādē ab xord».

<sup>322</sup> St'u Ēnjavī Šīrāzī S. A., *Jān-e ’āryat, farhang-e mardom, pažūhēshhāyē adabī, mardom šēnāsī*, bē kūshēš-e Mahīn Sēdāqatpīshē, էջ 212:

## Բ) «Օսանե»

Ս. Շեղայաթի բանագիտական ուսումնասիրությունների առաջին արգասիքը «Օսանե» («Շեքիաթ») ժողովածուն է: Այն սկսվում է առաջաբանով, որին հաջորդում են «Մանկական երգեր», «Դայակների և մայրերի երգեր» (օրորոցայիններ, որտեղ Ս. Շեղայաթը գետեղել է նաև մի քանի ժողովրդական երգեր), «Մանկական խաղերգեր և հանելուկներ» բաժինները, և վերջում ներկայացվում են ժողովրդական երգեր:

«Օսանե»-ն առաջին անգամ հրատարակվել է 1931 թ. «Արյան քողե» ամսագրում, իսկ 1939 թ. Շեղայաթը գրում է մի հոդված՝ «Թարանեհայե ամյանե» («Ժողովրդական երգեր») վերնագրով, և տպագրում «Մուսիղի» ամսագրի 6-րդ և 7-րդ համարներում: Ս. Շեղայաթի եղբորորդին՝ Զահանգիր Ֆորուհարը, հետագայում հավաքում և մեկտեղում է հեղինակի հրատարակված և անտիպ ուսումնասիրությունները՝ լույս ընծայելով դրանք «Ֆարհանգե ամյանեյե մարդոմե Իրան» («Իրանի ժողովրդական նշակույթ») խորագրով գրքում:

«Օսանե»-ն սկզբում հրատարակվում է «Նեյրանգեստան»-ի հետ և դառնում գրքի առաջին բաժինը, իսկ հետագայում տեղ է գտնում «Ֆարհանգե ամյանեյե մարդոմե Իրան»-ի երկրորդ գլխում՝ «Նեյրանգեստան»-ից հետո: «Օսանե»-ն բարբառային դարձած «Աֆսանե»-ն է, որը նշանակում է «հեքիաթ, ավանդավեպ, առասպել կամ գրույց»: Ուշադրության արժանի է այն փաստը, որ գրողը որպես այս ուսումնասիրության վերնագիր ոչ թե գրական «Աֆսանե» տարբերակն է ընտրել, այլ, օգտվելով ժողովրդական բարբառից, այն «Օսանե» է անվանել: Նա նպատակ ուներ այս գործով ազգային և ժողովրդական երգերի ոգին իր հայրենակիցներին առավել հասկանալի դարձնելու: Սադեռ Շեղայաթը «Օսանե»-ն սկսում է պարսկական քնարերգության մեջ դասական Մոլավիի (Զալալ աղ Դինի Ռումի) բանաստեղծությունից երկու բեյթերի մեջբերումով.

«Kūdakān afsānēhā mīavarand,  
Darj dar afsānēšān bas rāz o pand,  
Hazalhā gūyand dar afsānēhā;  
Ganj mījū dar hamē vīrānēhā»<sup>323</sup>

<sup>323</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 163. Այսուհետ նշված գրքից  
129

(Մանուկները հեքիաթ են իյուսում, / Նրանց հեքիաթները լի են առեղջվածով ու խրատով, / Այդ հեքիաթներում կատակներ են անում, / Գանձեր որոնի՛ր յուրաքանչյուր ավերակում):

Սա խորհրդագիտական մոտեցում է, որում շեշտվում են հեքիաթի իրականության իմաստային հարստությունը և մարդկային երևակայության թոհջբները, ժողովրդական ոգու մի անբավ հարստություն, որն այնքան վաղ զգացել է Ս. Յեղայաթը և որին անմնացորդ նվիրել է իր կյանքը:

Յեղայաթը նախ անդրադառնում է այն իրողությանը, որ իրանը զարգացման և նորացման ճանապարհի սկզբին է դեռևս, սակայն կանխատեսող ուսումնասիրողի համար պարզ էր, որ այդ զարգացման հետևանքով ժողովրդական բանահյուսության մի շարք մասունքներ պիտի անդառնալիորեն անհետանան, իսկ դրանք փրկելու համար քայլեր չեն ձեռնարկվում: Դրանց կարևորությունը բնավ չեն գիտակցում: Յեղայաթը ժողովրդական բանահյուսական արվեստը գնահատելիս հավասարության նշան չի դնում գրական-բարոյախոսական և ժողովրդական ստեղծագործությունների միջև՝ գտնելով, որ առաջինները դժվարըմբունելի և չոր բովանդակության պատճառով չեն ամրագրվում ժողովրդի հիշողության մեջ: Մինչդեռ ժողովրդական երգերը և բարոյախրատական պատգամներն ունկնդիրների համար դյուրըմբունելի, պարզ և հասանելի են: Ս. Յեղայաթն ընդգծում է, որ հեքիաթները համահունչ են մանուկների նուրբ հոգու ընկալումներին, քանի որ երբեմն դրանց հերոսներն իրենց սիրելի կենդանիներն են:

Ս. Յեղայաթն անդրադառնում է մի շարք երգերի, որոնք ստեղծվել են՝ հատուկ արտակարգ կամ բախտորոշ իրավիճակներ ներկայացնելու համար: Նա բերում է հետևյալ օրինակը.

«Էy sāl bar nagardī                    bē mardomān čē kardī  
Zanhā ro šalaxtē kardī                    dokūnhā ro taxtē kardī  
    Éy sāl bar nagardī» (էջ 196)

(Այ տարի, էլ ետ չգաս, / ժողովրդին էս ի՞նչ արիր. / Կանանց թշվառ ու խեղճ դարձրիր, / Խանութները փակ մնացին: / Այ տարի, էլ ետ չգաս):

Սա երգում էին երաշտի և սովորական տարիներին: Իրանական

սարահարթում և ողջ տարածաշրջանում երաշտները համատարած բնույթ և նույնիսկ բախտորոշ դեր ունեին, ուստի հասկանալի է ժողովրդական երգչի հոգու անհուն մորմոքը:

Ս. Շեղայաթը նշում է, որ ժողովրդական երգերի մեծ մասը նույնիսկ կրում է նախախլամական ժամանակաշրջանի, հատկապես «Ավեստա»-ի ազդեցությունը: Այս պարագայում ի հայտ է գալիս Ս. Շեղայաթի՝ դասական քնարերգության ընթանական խորությունը, որն այնքան հզոր է արտահայտված զրադաշտական պոեզիայում: Շեղայաթի ժամանակակիցները քնարերգությունը հասկանում էին աշուղական պարզունակ երգի մակարդակով: Նա գտնում էր, որ «Ավեստա»-ի երգերը ժողովրդական երգերից տարբերվում են նրանով, որ հանգավոր չեն: Ընդ որում նա «Գաթաներ»-ից<sup>324</sup> հատվածաբար բերել է պարսկերեն հետևյալ օրինակը.

«Vohū xšasrēm vaīrīm

bāgēm abī baīrīstēm.

Sakīyē va sanāyē mazdā vahīstam tat nē nūčīt varšānē» (էջ 167):

Այստեղ առաջին կիսատողը՝ Վեց, Երրորդը՝ ութ, իսկ Երկրորդը և չորրորդը յոթ վանկից են բաղկացած: Ս. Շեղայաթի բերած նմուշը կրճատված է: Ահա «Ավեստա»-ից մի աղոթքի պահլավերեն ամբողջական տեքստը.

«Vohū xšaθrēm vaīrīm

bāgēm aībī. baīrīstēm

<sup>324</sup> Զրադաշտականների ներկայիս սուրբ գիրքը՝ «Ավեստա»-ն, Սասանյանների ժամանակաշրջանի գրքի մեկ քառորդն է: Այն բաղկացած է հինգ գրքերից՝ «Յասներ» («Գաթաներ»-ը կամ «Գասեներ»-ը այս հատվածում են), «Յաշտերգեր», «Կամղիղադ», «Վիսփարդ», «Խորդե Ավեստա», և ցրված կտորներից (տե՛ս Āmūzgār Ž., Tafazolī A., Zabān-e pahlavī, adabyāt va dastūr-e ān, 1<sup>st</sup> print, Tehran, Շնորհ. Մօ՛ն, 1380, էջ 28):

Ավելորդ չեղել, որ «Ավեստա»-ի սքանչելի երգերը, որոնք հմայիչ խտացումներն են իրենց և նախորդ ժամանակաշրջանների ժողովրդական բանարվեստի, միաժամանակ պարսկական դասական պոեզիայի առաջին արտահայտություններից են, որոնք միջնադարյան Իրանի աշխարհահոչակ քնարերգության հիմքը դարձան: Պատահական չեղ, որ «Ավեստա»-ի օրիններգերն ու իմաստուն մտքերը մեծ ազդեցություն են թողել 19-րդ դարի եվրոպական մշակույթի և արվեստի վրա: Դրա վառ օրինակը Ֆրիդրիխ Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» իմաստափական, գրական երկն է (տե՛ս Նիցշե Ֆ., Այսպես խոսեց Զրադաշտը, Եր., 2008): Ի. Մ. Օրանսկին գրում է. «Դարերի ընթացքում Իրանի հնագույն ժամանակաշրջանում աստվածների և փականների գովքին նվիրված երգերը և հեքիաթները միայն բանավոր էին և ժողովրդական բանավոր մշակույթի պես սերնդեսերունդ էին փոխանցվում» (Օրանսկու Ի., Введение в иранскую филологию, М., 1988, с. 78):

Vīdīsēmnāī īzācīt  
Šīoθanāś mazdā vahīstēm tat nē nūcīt varēšānē»<sup>325</sup>

(Ո՞վ Մազդա, այս բարի և անսահման թանկ երկիրը՝ որպես ճշմարիտ բարեպաշտի բաժին, նրան է տրվելու, ով պատվով բարի գործեր կկատարի: Արդ ցանկանում ենք նման բախտի արժանանալ):<sup>326</sup>

Պարսկերեն ժողովրդական երգերից՝ նույնահանգ մեկ այլ օրինակ.

<p>«Hā jēsam o vājēsam Xānomī bē qorbūnam šod</p>	<p>tū hoz-e noqrē jēsam, noqrē namakdūnam šod»</p>
---	--

(էջ 167)

(Թռչկոտեցի, թռչկոտեցի, / Արծաթե ավազանի մեջ ընկա: / Խանումն ինձ մատաղ եղավ, / Աղամանիս արծաթը դարձավ):

«Մանկական-օրորոցային երգ»<sup>327</sup>: Յերոսները մարդկանց կերպարներով կենդանիներն են, օրինակ՝ մսավաճառ, ոսկերիչ, խանութպան, ճախարակագործ և այլն, իսկ երգերի բովանդակությունը կազմում են մանուկներին հետաքրքիր և հուզող նյութերը: Բերենք դրանցից մի քանիսը.

<p>«Yēkī būd yēkī nabūd Sar-e gonbad-e kabbūd Asbē 'asārī mīkard Sagē qasābī mīkard Šotorē namadmālī mīkard</p>	<p>pīr-e zanīk-e nēšasē būd xarē xarātī mīkard gorbē baqālī mīkard pašē raqāsī mīkard 'ankabūtē...»</p>
---	---

(էջ 170)

(Կար չկար, / Կապույտ գմբեթի վրա, / Ծեր կին կար նստած, / Զին հունձ է անում, / Եշը դարձել է ատաղձագործ, / Շունը միս է վաճառում, / Կատուն՝ նպարավաճառ / Ուղտը՝ թաղիքագործ, / Սոնակը պարերով է զբաղված / Սարդը....):

<p>«Gonjīškak-e alēylī Balē balē man dīdam</p>	<p>bābāy-e mano to nadīdī? kolangī dūšaš būd</p>
--	--

Ābī tah-e dūlaš būd» (էջ 172)

(Լեյլի ծիտիկ, / Յայրիկիս չե՞ս տեսել: / Այո՛, այո՛, տեսել եմ: / Բրիչը ուսին էր, / Դույլի մեջ ջուր էր):

<sup>325</sup> Humbach H., *The heritage of Zarasthushtra (A new translation of his Gatas)*, 1994, Universitaverlag C. Winter, Heridelberg, p. 96.

<sup>326</sup> «*Kētāb-e Gātā*», ēdīt va tarjomē Ēbrāhīm Pūr Dāvūd, Tehran, ēntēš. Asātīr, 1384, p. 127.

<sup>327</sup> «*Tarānēyē bačēhā*».

«Ին կūչē ro kī sāxtē?

Ӯսāyē bannā sāxtē

Bā čūb-e n'anā sāxtē» (էջ 176)

(Այս փողոցը ո՞վ է շինել: / Վարպետ շինարարն է շինել, / Անանուխի ցողուններից է շինել):

«Դայակների և մայրիկների երգ»<sup>328</sup>: Մայրիկներն ու դայակները փոքրիկներին քնեցնելիս երգում են այնպիսի օրորոցային երգեր, որոնք սկսվում են «Լալա-լալա»-ով կամ կարճ և հետաքրքիր պատմությամբ.

«Lā lā, lā lā gol-e pūnē  
Nūnaš dādīm badaš āmad  
Lā lā, lā lā golam bāšī  
Bēmūnī mūnēsam bāšī  
Lā lā, lā lā...» (էջ 179)

gēdā āmad dar-e xūnē  
xodaš raft sagaš āmad  
to darmūn-e dēlam bāšī  
bēxābī az saram vāšī

(Լալա-լալա, դաղձի՛ ծաղիկ, / Ուզվոր եկավ տան դուռը, / Յաց տվեցինք, նեղացավ: / Ինքը գնաց, իր շունը եկավ: / Լալա-լալա, ծաղիկս լինես, / Դու սրտիս դեղը լինես, / Մնաս, ինձ մտերիմ լինես, / Քնես, գլուխս ազատես, / Լալա-լալա....):

Ս. Յեղայաթն օրորոցայիններն արժենորում է որպես մանկան ականջին հասնող առաջին մեղեղիներ: Օրինակ.

«Bē kas kasānaš nēmīdam  
Bē mard-e pīraš nēmīdam  
Barāyē pēsar bozorgtaraš

bē rāh-e dūraš nēmīdam  
šā bīyād bā lašgaraš  
āyā bēdam āyā nadam!»

(էջ 181)

(Ամեն մարդու չեմ տա, / Յեռու տեղ չեմ տա, / Ծեր մարդու չեմ տա: / Թագավորն իր զորքով / Ավագ որդու համար թե զա, / Տա՞մ, թե՞ չտամ):

Նկատենք, որ օրորոցային երգերն առանձնահատուկ տեղ ունեն նաև այլ ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովը դական բանահյուսության մեջ:

Յեղինակի եղբորորդին՝ Զահանգիր Յեղայաթը, օրորոցային երգերի մասին հետևյալ նկատառումն է անում. «Ծատերն այս երգերը պարզունակ ու անորակ էին համարում և կարծում էին, որ «Լալա-լալա, դաղձի՛ ծաղիկ» երգը միայն լալկան և դժվարությամբ քնող երեխայի համար պետք է երգել: Մինչդեռ Ս. Յեղայաթը մանկական երգերին առանձին գլուխս հատկացրեց և

<sup>328</sup> «Tarānēyē dāyēhā va mādarhā».

արժնորեց դրանք»<sup>329</sup>:

Ինչպես նշեցինք, օրորոցային երգերի բաժնում Ս. Յեղայարը զետեղել է նաև մի քանի մանկական խաղերգեր, հանելուկներ և ժողովրդական երգեր: Նա նշում է, որ մանկական խաղերգերն առ այսօր տարածված են Իրանի տարբեր քաղաքներում և գյուղերում՝ տեղական բարբառներով: Դրանցից հատկանշական է նրա ստորև բերվող խաղը՝ հետևյալ բովանդակությամբ: Մանուկները, շրջան կազմած, նստում են, ոտքերին խփելով՝ երգում և հերթով ոտքերը բարձրացնում, և այսպես՝ մինչև երգի ավարտը: Ում հերթը լինի, և նա չհասցնի ոտքերը բարձրացնել, դուրս կմնա խաղից: Երգը հայտնի է «Արալ-մաթալ թութուլե» սկզբատողով:

«Atal matal tūtūlē	gāb-e Hasan kūtūlē
Na šīr dārē na pēsūn	šīrēš o bordan kordēsūn
Yē zan-e kordī bēsūn	ēsmēšo bēzār Sētārē
Vāsēaš bēzan naqārē	yē čūb zadam bē bolbol
Sēdāš raft Ēstanbol	Ēstanbolam xarāb šod
Band-e dēlam kabāb šod!» (Էջ 183)	

(Արալ-մաթալ թութուլե, / Կոլոտ Յասանի կովը, / Ո՞չ կաթ ունի, ո՞չ պտուկ, / Իր կաթը տարան թուրդիստան, / Մի քուրդ կին առավ, / Անունը դրեց Սեթարե: / Նրա համար զարկիր նաղարա, / Փայտով խփեցի սոխակին, / Զայնը հասավ Ստամբուլ: / Ստամբուլն էլ փլվեց, / Սրտիս թելը կտրվեց):

Երեխաները մի խաղ ունեն, որը կոչվում է գորգամ բե հավա<sup>330</sup> (բռնոցի): Այս խաղում գայլն ու վարպետն այսպես են երկխոսում.

«Gorgam o galē mībaram	čūpūn dāram nēmīzāram
Man mībaram xūb xūbēšo	man nēmīdam pēškēlēšo
Kārd-e man tīztarē	donbē man lazīztarē
Xūnē xālē az kodūm varē	az īn varē, az ūn varē»
(Էջ 186)	

(- Գայլ եմ ու հոտ եմ տանում: / - Յովիվ ունեմ, չեմ թողնի: / - Ես կտանեմ ամենից լավը: / - Ես նրա թրիքն էլ չեմ տա: / - Իմ դանակն ավելի սուր է: / - Իմ դմակն ավելի համեղ է: / - Մորաքրոջ տան ճանփան ո՞րն է: / - Ես կողմից է, էն կողմից է):

<sup>329</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān, Moqadamēyē gērdāvarandē*, p. 17.

<sup>330</sup> Gorgam bē havā.

Բերենք երկու օրինակ հաջորդ՝ հանելուկների բաժնից.

«Bāftam, o bāftam                          pošt-e kūh andāxtam» (էջ 187)  
(Հյուսեցի, հյուսեցի, / Սարի ետև զցեցի): (վարսեր)

«Yūz palang-e bī dom                          na jo xordē na gandom  
Gašt zanad bīyābān                          naf dahad bē mardom» (էջ 188)

(Յովազ է առանց պոչի, / Ո՞չ գարի է կերել, ո՞չ ցորեն, / Թափառում է դաշտերում, / Մարդկանց օգուտ է բերում): (մեղու)

«Ժողովրդական երգեր»<sup>331</sup>: Այս բաժնում Սադեղ Շեղայաթը բարձր է գնահատում բանահյուսական ստեղծագործության այս տեսակը՝ որպես ժողովրդի հույզերի, հոգսերի ու ակնկալիքների անմիջական արտահայտություն: Նա նշում է, որ ժողովրդական երգերը կայուն տեղ ունեն յուրաքանչյուր ազգի կյանքում և մշակույթի մեջ: Դրանք, ի տարբերություն հեղինակային խոսքարվեստի, ժամանակի ընթացքում փոփոխության չեն ենթարկվում, այլ պահպանվում են նույնությամբ: Ուստի պետք է անհապաղ դրանք փրկել մոռացությունից և գիտական ծրագրով մշակման ենթարկել: Շեղայաթի համոզմամբ, թեև ժողովրդական երգերը, ստեղծված լինելով հասարակ մարդկանց կողմից, արվեստով համադրելի են պրոֆեսիոնալ երաժշտությանը, սակայն, ինչպես հարկն է, ուսումնասիրողների ուշադրությանը չեն արժանացել: Իսկ այն, ինչ թոռուցիկ ներկայացվում է տարբեր հրապարակումներում, հեռու է բավարար լինելուց: Նույնիսկ երգերի նոտագրություններ չկան, ինչն էլ դառնում է սերնդեսերունդ փոխանցման ժամանակ դրանցում փոփոխությունների պատճառ: Մինչդեռ քաղաքակիրք երկրներում մանրամասն ուսումնասիրության է ենթարկվում անգամ ամենահետին գյուղերի բանահյուսական ժառանգությունը: Այս բաժնում զետեղված են տարբեր ժանրերի ժողովրդական երգեր (սիրային, ծիսական, կենցաղային և սոցիալական):

«Gol dar īn baqē                          sonbol dar īn baqē  
Šādūmād rā bē gū                          'Arūs dar īn baqē» (էջ 188)

(Ծաղիկն է այս այգում, / Սմբուլն է այս այգում, / Թագավոր փեսային ասա, / Յարսն է այս այգում):

Mardī kē nūn nadārē                          ānqadr zabūn nadārē» (էջ 191)  
(Մարդը, որ հաց չունենա, / Այդքան էլ լեզու չի ունենա):

<sup>331</sup> «Tarānēhāyē 'āmyānē».

«Donyā bē īn bozorgī      kūrē nasīb-e mā šod  
 Bāq bē īn bozorgī      qūrē nasīb-e mā šod» (էջ 192) ·  
 (Այս մեծ աշխարհում / Կույրն է ինձ բաժին ընկել, / Այս մե-  
 ծությամբ այգուց / Խակ խաղող է ինձ բաժին ընկել):  
 «Syā bāšē sūxtē bāšē      Namadī bē kūl dāštē bāšē  
 Yē xūrdē pūl dāštē bāšē» (էջ 192)

(Սև լինի, արևահար լինի, / Մի թաղիք շալակին ունենա, /  
 Մի քիչ փող ունենա):

Ժողովրդական երգերի այս բարձր արժենումներում իսկ ակնհայտ է Ս. Յեղայաթի նախանձախնդրությունը՝ ոչ միայն փրկելու ազգային մշակույթի այդ գանձերը կորստից, այլև հանձնելու դրանք հետագա սերունդներին իրենց անխաթար, ամբողջական տեսքով: Պարսկական մշակույթի հետագա զարգացման համար դրանց նշանակությունն ընդգծելու համար նա բերում է Գերմանիայի օրինակը. «Գերմանիայում ժողովրդական երգերը (Volkslied) արժենուվել և առաջընթաց են ունեցել, քանի որ մեծ երգահանները՝ Ա. Մոցարտը, Կ. Մ. Վ. Վեբերը, Ֆ. Պ. Շուլցերտը և Ռ. Շումանը, այդ երգերի մեղեղիներն իրենց հորինած ինքնուրույն ստեղծագործությունների հիմքն են դարձրել: Ուսասանում իին ժամանակներից ժողովրդական երգերն ազգի բարոյահոգեբանական նկարագրի ձևավորման և դաստիարակության կարևոր աղբյուր են եղել: Իսկ որոշ երկրներում, ինչպես Յունացիայում, դրանք ազգային երաժշտության հիմքն են համարվում»<sup>332</sup>:

Սադեղ Յեղայաթն անդրադառնում է պարսկական երգի մի քանի ժանրերի (դյուցազներգական, կատակերգական, սգո և ողբի)՝ մանրամասնելով դրանց առաջացման հանգամանքները և կատարման ընթացքը: Նա գտնում էր, որ դյուցազներգությունը չափածոյի տարրական նմուշն է: Դրանց նյութն ընդհանրապես ռազմական բախումներն են, փականականի, ցեղապետի, զինվորի կամ հայրենակցի վերադարձը: Դրանք կարող են լինել ողբերգեր՝ զոհված փականականի նահատակվելու մասին, և կատարվում են հատուկ անհատների կողմից: Ցավոք, նոր նմուշներ այս երգերից պարսկերենով ձեռքի տակ չկան, բայց, անկասկած, ցեղախմբերն այդպիսիք ունեն<sup>333</sup>:

<sup>332</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 204.

<sup>333</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 208:

Ողբերգերն ընդհանրապես կանայք են ներկայացրել: Այս մասին Սադեղ Յեղայաթը հետևյալն է գրում. «Սգո հանդեսներին Քոհքիլոյեում (իրանի հարավային նահանգներից – Ա. Յ.) կան այնպիսի կանայք, որոնք ինը, տխուր տաղեր են ասում և ողբում: Նման ողբասքեր հավանաբար եղել են ողջ Մերձավոր Արևելքում: Այս արարողությունը «Սո Սիոշ» (Սիավոշի սուզը) են անվանում»<sup>334</sup>: Ապա, իր միտքը շարունակելով, ասում է՝ նույն գործողությունը Կորս<sup>335</sup> կղզում կատարում էին կանայք, որոնց անվանում էին «Voceri»<sup>336</sup>: Այս կանայք այնպիսի երգեր էին երգում, որոնք հանպատրաստից հորինված չէին, այլ եղել են տարբեր տեղերում, երբեմն փոփոխության են ենթարկվել: Այս սովորությը հույներն էլ են ունեցել:

Ս. Գրիգոր Նարեկացին, նկատի ունենալով նմանօրինակ երևույթները, գորում է. «Եւ արդ, ստուգապէս և իրաւաբար նրանց հետ, որոնք կողկողանքի ծայներին յարմարեցնում են համահունչ յօրինուածքն իրենց խօսքերի և նոյն գրերին են բերում աւարտը տների, որով արցունք բխեցնելու համար սաստկագոյն մորմոքով սիրտ են ճմլեցնում՝ իղձերը բորբոքելով, ինքս լալագին բանաստեղծութիւն յօրինողների պարագլուխ դարձած, և նրանց հետ վշտակրութեան հոգու ողբաձայն հեծութիւնները պիտի տարածեն»<sup>337</sup>:

Այնուհետև Սադեղ Յեղայաթը նշում է, որ կատակերգերը հորինվել են հատուկ աշխույժ տրամադրություն ստեղծելու և զվարճացնելու նպատակով: Այս երգերը հաճախ նաև երևույթները բացատրելու միտում ունեն: Օրինակ.

«Āb ūmad, āb ūmad Hamūn kē taš xāmūš kard	kodūm āb? kodūm taš?...» (Էջ 210) (Զուր եկավ, ջուր եկավ: / - Ո՞ր ջուրը: / Այն, որ կրակը հանգրեց: / - Ո՞ր կրակը....):
--	---

Այս հատվածում Յեղայաթն անդրադառնում է կոմիտաս վարդապետի ժողովրդական երգերից մեկին, զուգահեռներ անցկացնում պարսկականի հետ և գրում. «Յին հայերենում նույնպես գտնում ենք նման բովանդակությամբ երգ.

- Ո՞վ է կերել այծը:

<sup>334</sup> Նույն տեղում, էջ 209:

<sup>335</sup> Ֆրանսիայի 26 երկրամասերից մեկը:

<sup>336</sup> Աղաղակ, ծիչ:

<sup>337</sup> Սուրբ Գրիգոր Նարեկացի, Նարեկ աղօթամատեան, էջ 153:

Գայլն է կերել այծը....»<sup>338</sup>:

Ս. Յեղայաթի ժողովրդական երգերի բաժնում տեղ են զտել նաև հարսանեկան ծեսին, հարսի և սկեսրոջ, ամուսինների հարաբերություններին վերաբերող երգեր: Օրինակ.

«'Arūs mī barīm kūčē bē kūčē vāsaš mī pazīm āš-e ālūčē

Կūčē tangē? Balē, 'arūs qašangē? Balē das bē zolfāš nazanīn morvārī bandē? Balē» (էջ 215)

(Յարս ենք տանում փողոցից փողոց, / Նրա համար եփելու ենք սալորի ապուր: / - Փողոցը նե՞ղ է: Այո՛: - Յարսը գեղեցի՞կ է: Այո՛: / Ծամերին ձեռք չտաք: - Մարգարտո՞վ է կապած: Այո՛):

Յարսանեկան և տոնական երգերը գյուղերում ու քաղաքներում սովորաբար տեղական բարբառով, նվազարանների և պարերի ուղեկցությամբ են երգվում:

Խոսելով ժողովրդական սիրերգերի մասին՝ Սադեղ Յեղայաթն ընդգծում է դրանց անմիջական զգացմունքայնությունը և տիպարանական ընդհանրություններ է տեսնում դրանց և այլ ժողովուրդների ժողովրդական երգարվեստի միջև: «Տարօրինակն այն է, որ այսպիսի երգեր կան շատ այլ լեզուներով: Ֆրանսերենում հայտնի է «Chanson des Metamorphoses»-ը, որը սիրուհուն հետապնդելու ու փախցնելու մասին է.... Այս երգում աղջիկը սիրեցյալին սպառնում է, որ եղնիկ, ձուկ, կարմիր վարդ կամ աստղ կղառնա (էջ 212)»: Յեղայաթը բերում է մի նմուշ պարսկական այդպիսի երգերից.

«Էy māh-e boland dar havāyī!

To kē māh-e boland dar havāyī	manam sētārē mīšam dorat ro mīgīram
To kē sētārē mīšī doram ro mīgīrī	manam abrī mīšam rūto mīgīram
To kē abrī mīšī rūmo mīgīrī	manam bārūn mīšam ton ton mībāram
Tō kē bārūn mīšī ton ton mībārī	manam sabzē mīšam sar dar mīyāram
To kē sabzē mīšī sar dar mīyārī	manam bozī mīšam...» (էջ 212)

(Ո՞վ դու, երկնքում բարձր լուսին, / Թե դու լիալուսին դառնաս երկնքում, / Ես աստղ կղառնամ դեմքիդ հանդիման, / Թե դու

<sup>338</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 210. Առանձին բաժնում կխոսենք Յեղայաթ և Կոմիտաս բանագետների մասին և կանդրադառնանք այս կատակերգությանը:

աստղ դառնաս, ինձ լուսապատես, / Ես ամպ կդառնամ, դեմքդ կծածկեմ, / Թե դու ամպ դառնաս, երեսս ծածկես, / Ես անձրև կդառնամ, տեղատարափ կթափվեմ, / Թե դու անձրև դառնաս, տեղատարափ գլխիս թափվես, / Ես էլ կանաչ կդառնամ, գլուխ կբարձրացնեմ, / Թե դու խոտ դառնաս ու աճես, / Ես էլ այծիկ կդառնամ...):

Ս. Շեղայաթն ընդգծում է ժողովրդական երգի հմայքը. «Սիրային երգերը իրաշալի ոճավորում ունեն: Օրինակ՝ այս սովորական և հայտնի երգի (վերը բերված օրինակը – Ա. Յ.) գրական արժեքն այնքան մեծ է, բովանդակությունը՝ այնքան գրավիչ և իրապուրող, որ կարող է մեծ բանաստեղծների լավագույն սիրեցերի հետ համեմատվել»<sup>339</sup>:

Պարսկական ժողովրդական երգերում կան այնպիսի հին ստեղծագործություններ, որոնք անխաթար պահպանվել են և ոչ մի փոփոխության չեն ենթարկվել, երգվում են նույնիսկ մեր օրերում: Օրինակ.

«Xoršīd xānom āfto kon Mā bačēhāyē gorgīm	yē moš bērēnj tū āo kon az sarmāyī bēmordīm» (Էջ 210)
--	--

(Տիկին արև, ծագիր, / Մի բուռ բրինձ ջրի մեջ դի՛ր. / Մենք գայլի երեխաներ ենք, / Ցրտից կմեռնենք):

Ուշագրավ է Ս. Շեղայաթի դիտարկումը պարսիկների կողմից արևի անձնավորման վերաբերյալ, որը նա ինաստավորում է այլ ժողովուրդների հավատալիքների համապատկերում: «Արևը շատ ազգերի հեքիաթներում իգական սեռի է: Սլավոնական ժողովուրդներն ասում են «Կարմիր մայր արև», և, ինչպես պարսկական հեքիաթներում, այն առկա է նաև հայերի շրջանում»<sup>340</sup>: Շեղայաթը նանրամասնում է, որ հին ժողովուրդները լուսատուներին ամենուրեք մեծարել ու պաշտամունքի առարկա են դարձրել և դրանց հետ կապել իրենց գոյատևումը: Նրա այս եզրակացությունը զուգադրելի է ազգագրագետ Վ. Բդոյանի մեկնաբանության հետ. «Արևապաշտությունը Շայաստանում, ոգեպաշտական շրջանից աստիճանաբար անցում կատարելով, հասել է անձնավորման, մարդակերպավորման աստիճանին... ժողովուրդը ներկայումս էլ իր պահպանած ավանդությունների մեջ արեգակը համարում է կենդանի, աշխույժ և գեղեցիկ կերպարանքով

<sup>339</sup> Նույն տեղում, Էջ 211:

<sup>340</sup> Նույն տեղում, Էջ 210:

աղջիկ»<sup>341</sup>: Մեզ համար, սակայն, նկատելի է, որ հայոց մեջ Արևը՝ որպես անձնանուն, գործածական է երկու սեռի համար էլ՝ Արև-լուս, Արևիկ, Արփի (իգ.) և Արեգ (ար.):

«Պարսկերեն առածներ»<sup>342</sup>: Յեղինակը կարծ առաջաբանից հետո ներկայացնում է չորս հեքիաթ՝ «Աղա մուշե» («Պարոն մկնիկը»), «Շանգուլ վա Մանգուլ», «Լաչաք քուչուլույե դերմեզ» («Կարմիր գլխաշորով փոքրիկը») և «Մանգե սարուր»<sup>343</sup> («Շամբերատար քարը»), որոնք առաջին անգամ տպագրվել են 1931 թ. «Արյան քողե» ամսագրում: Առաջաբանում Ս. Յեղայաթն արտահայտում է իր կարծիքը հեքիաթների և մանկական պատմվածքների կարևորության վերաբերյալ. «Ժողովրդական հեքիաթներն անհրաժեշտ են հատկապես մանուկների համար, և հարկավոր է, որ, թեկուց երևակայության և զվարճությունների համար, դրանք ապրեն մարդկության պատմության մեջ, և երեխաները պատկերացում ունենան իրենց նախնիների մասին՝ սկսած նրանց պատմության սկզբնական շրջանից»<sup>344</sup>.

Յեքիաթները պարսկական արձակի արժեքավոր ու կենսունակ արտահայտություններից են, իսկ դրանց ստեղծողն ու պահպանողը ժողովուրդն է: Ինչպես մյուս ազգերի բանահյուսության, պարսկական բանահյուսության մեջ նույնպես հեքիաթներն ամենահին, ամենահարուստ և առավել լայն տարածում գտած ժամրն են: Դրանք կրում են ժողովրդի կյանքի, մտածողության կնիքը: Նրանց հիմնական բովանդակությունը բարու հաղթանակն է չարի դեմ, լույսի ու խավարի, հուրի-փերիների և դևերի պայքարը և այլն:

Կենդանիների մասին հեքիաթները սիրված են եղել մանուկների կողմից, քանի որ մարդը վաղնջական ժամանակներից շիվել է վայրի կենդանիների հետ և ճանաչել նրանց: Յեղինակի առաջին երեք հեքիաթների հերոսները կենդանիներն են, որոնք երեխաների մեջ հետաքրքրություն, սեր կամ ատելություն են առաջացնում: Իսկ «Մանգե սարուր»-ը կարող ենք հրաշապատում հեքիաթների շարքում դասել, որոնց տարածված մոտիվներից մեկը կախարդանքի միջոցով մարդուն քարացնելն է: Թա-

<sup>341</sup> Բդոյան Վ., նշվ. աշխ., էջ 204, 205:

<sup>342</sup> «Matalhāyē fārsī».

<sup>343</sup> «Āqā mūšē», «Šangūl va Mangūl», «Lačak kūčūlūyē qērmēz», «Sang-e sabūr».

<sup>344</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 219.

գավորի քնած տղային պետք է արթնացնի մի հասարակ աղջիկ, որը պատահականորեն հայտնվում է տղայի կողքին:

Սադեղ Յեղայաթը բարձր է գնահատում Գրիմ Եղբայրների, Յանս Քրիստիան Անդերսենի և Վոլտ Դիսնեյի ստեղծագործությունները, որոնք շատ սիրելի են մանուկներին և միաժամանակ հետաքրքրություն են առաջացնում բանահյուսական ժառանգությամբ զբաղվող գիտնականների համար:

Բանահյուսական ուսումնասիրությունների հաջողության համար պետք է անկողմնակալ լինել, խուսափել ցեղային, լեզվական, բարոյական ու կրոնական մոլեուանդությունից: Ս. Յեղայաթը գտնում էր, որ բանահավաքչական գործի արդյունավետության համար պետությունը պետք է համագործակցի գիտնականների, արվեստագետների, Մշակույթի նախարարության աշխատակիցների հետ: Նույնիսկ դպրոցականները և նրանց ընտանիքները մեծ օգնություն կարող են ցուցաբերել:

## Գ) ՍԱՂԵԴ ՀԵՂԱՅԱԾԱՌ՝ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԶԱՏԱԳՈՎ

Իրանում բանագիտությունը սկզբնավորվել է հին բանահյուսության առանձին նմուշօրինակների հետազոտությամբ և 20-րդ դարի առաջին կեսերին ընդլայնել իր սահմանները: Բանագիտության պատմության համար սա պայմանավորում է զարգացման մի նոր, բարձր փուլ և կայուն առաջընթացի հնարավորություն ստեղծում: Իրանում բանահավաքչական աշխատանքներով շատերն են զբաղվել, այդ թվում՝ Աղա Զալալ Խանսարին, Զալալ Մողաղամը, Միրզա Ջաբիր Էսֆահանին և այլք, իսկ ժողովրդական բանահյուսության ակունքները գալիս են դեռևս միջնադարից. հիշենք, օրինակ, Նիզամիի «Դաքք փեյքար»-ը, Խաղանիի «Դիվան»-ը կամ Մոլանա Զալալ առ Դին Ռումիի «Մասնավի»<sup>345</sup>-ն:

Ինչ վերաբերում է Ս. Ջեղայաթին, այս ասպարեզում նա ստեղծել է իսկապես բարձրարժեք գործեր: Նա աչքի էր ընկնում իր խորագիտությամբ, քաջատեղյակ էր ոչ միայն հարազատ ժողովրդի հին ու նոր հարուստ բառ ու բանին, այլև արևելյան և արևմտյան ազգերի մի շարք գրական-գեղարվեստական հուշարձանների, բանագիտության պատմության ու տեսության ընդհանուր հարցերին: Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ իր ժողովրդի բանահյուսության և ազգագրության հարցերը քննելու այլ ժողովուրդների բանահյուսությունների հետ ունեցած հարաբերությունների համատեքստում՝ իրանականը ճիշտ ուղու վրա դնելու համար: Նա այնքան էր խորամուխ եղել բանահյուսության և ազգագրության մեջ, որ, ինչպես նշել ենք, դրանց տարրերը ներմուծեց իր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Նրա արձակը պարզապես ողողված է ժողովրդական բառ ու բանով:

Ս. Ջեղայաթը ժողովրդական հավատալիքների հետազոտությունը սկսում է այն ժամանակ, երբ դեռ հոչակված չէր իբրև բանագետ, հետազոտող, բանահավաք: Նա մշակեց ազգագրական հետազոտության գիտական տեսություն և ստեղծեց մեթոդաբանական ծրագիր, որոնցով կանոնավորեց, համակարգեց

<sup>345</sup> «Haft pēykar», «Dīvān», «Masnavī».

ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման գործընթացը, որը մինչ այդ տարերային վիճակում էր, և դա արեց ժամանակի եվրոպական գիտության պահանջներին համապատասխան՝ ամուր հիմքերի վրա դնելով բանահավաքչության գործը իրանում:

Սադեղ Հեղայաթն այս քայլերով մեծ ներդրում է ունենում ազգագրության ուսումնասիրության մեջ: Նրա նախ՝ զուտ բանահավաքչական աշխատանքը, բանահյուսական հիմքով ստեղծագործելու ջիղը, ապա՝ գիտական ծրագրի մշակումը մեզ համար պարզում են հեղինակի՝ բանագիտական նախասիրություններից ազգագրագիտությանն անցնելու տրամաբանական ուղին: Նրա ուսումնասիրությունները տեսականորեն և գործնականորեն մերձենում և կարծ ժամանակ անց դնում են բանագիտական-ազգագրագիտական գիտության ձևավորման հիմքը:

Պարբերական մամուլը, մասնավորապես «Սոխան» և «Մուսիղի» ամսագրերը, նպաստավոր պայմաններ է ստեղծում՝ գիտնականի հետազոտությունները հայրենակիցների շրջանում տարածելու համար: Դրանցում իրենց տեղն են գտնում ժողովրդական բանահյուսության և ազգագրության նմուշները, որոնք արդեն ուսումնասիրության նոր հեռանկարներ են բացում իրանի բանարվեստի առջև:

Հեղայաթն այն ճիշտ հետևությանն էր հանգել, որ իր գործը ոչ միայն ժողովրդական բանարվեստի նյութերը փրկելն էր, այլև դրան զուգընթաց գիտական ծրագիր մշակելը, ինչը պակաս կարևոր չէր գիտության հետագա զարգացման համար:

Նրա հոդվածները հաջորդաբար լույս են տեսնում «Սոխան»-ի չորս համարներում՝ 1. «Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ»<sup>346</sup> (նմուշներ, հավաքման ծրագիր և գրանցման ցուցումներ), 2. «Մի շրջանի (տարածական առումով – Ա. Յ.) ֆոլկլորի հետազոտության ընդհանուր ծրագիր»<sup>347</sup>, 3. «Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ»<sup>348</sup> (Գործի սկիզբ), 4. «Ֆոլկլոր կամ

<sup>346</sup> Տե՛ս Hēdāyat S., *Folklor yā farhang-e tūdē*, «Majalēyē Soxan», Tehran, ēsfand 1323, 2<sup>nd</sup> year, no. 3:

<sup>347</sup> Տե՛ս Hēdāyat S., *Tarh-e kolī barāyē kānoš-e folklor-e yēk mantaqē*, «Majalēyē Soxan», farvardīn 1324, 2<sup>nd</sup> year, no. 4:

<sup>348</sup> Տե՛ս Hēdāyat S., *Folklor yā farhang-e tūdē*, «Majalēyē Soxan», ordībēhēšt 1324, 2<sup>nd</sup> year, no. 5:

ժողովրդական մշակույթ»<sup>349</sup>: Վերջին երկուսն ունեն նույն խորագիրը, բայց տարբեր նյութեր են բովանդակում:

Ս. Յեղայաթի հոդվածներն իր ժամանակաշրջանում գիտականության և մեթոդաբանության տեսանկյունից ավարտուն և ամբողջական աշխատանքներ էին և ոչ միայն հեղինակի բարձր գիտակցության ու մտածողության, այլև արտերկրի ազգագրագետների հետազոտությունների լայն և բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունք: Դրանք շաղկապված են և լրացնում են մեկը մյուսին:

«Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ» (Ամուշներ, հավաքման ծրագիր և գրանցման ցուցումներ): Ս. Յեղայաթն առաջին հոդվածը սկսում է «Ֆոլկլոր» բառի ծագումնաբանությամբ, ապա՝ անդրադառնում այն իրողությանը, որ ֆոլկլորը ձևավորվում է այն երկներում, որոնց հասարակությունը կազմված է երկու շերտից՝ ուսյալ և անուս: Միաշերտ հասարակության մեջ, ինչպիսին են Ավստրալիայի վայրի ցեղերը, որոնք գիր ու գրականություն չունեն, ֆոլկլոր գոյություն չունի: Հեղինակը գտնում էր, որ ազգագրությունն ուսումնասիրում է ոչ միայն ազգի քաղաքական, կրոնական հարցերը, սովորույթները, այլև երգերը, առածները, ասացվածքներն ու հեքիաթները:

Ըստ հեղինակի՝ ֆոլկլորի ուսումնասիրության դաշտը բավական ընդարձակվել է: Սկզբում հետաքրքրված էին միայն ժողովրդական բանահյուսությամբ: Աստիճանաբար ուսումնասիրության դաշտն ընդլայնվում է. ավելանում են հավատալիքները, աստղագուշակությունը, բնության պատմությունը, բժշկությունը, տոմարագիտությունը, վիմագրությունը, բուսաբանությունը, առօրյա կյանքին (ծնունդ, մանկություն, ամուսնություն, ծերություն, սգո ծես, ազգային և կրոնական տոներ) առնչվող հավատալիքներ և ավանդույթներ, հասարակության կենցաղային սովորույթներ՝ արվեստներին և արհեստներին առնչվող: Այս բոլորն ունեն իրենց հատուկ երգերը, հետևաբար՝ ֆոլկլորի մաս են կազմում:

Ս. Յեղայաթը հոդվածի մի բաժնում ասում է. «ժողովրդական արվեստը և գրականությունը մարդկության գլուխգործոց-

<sup>349</sup> Տե՛ս Հեծայատ Տ., *Folklor yā farhang-e tūdē*, «Majalēyē Soxan», xordād 1324, 2<sup>nd</sup> year, no. 6:

Ների շաղախն են, հատկապես գրականությունը, գեղագիտությունը, փիլիսոփայությունը և կրոններն անմիջականորեն այս աղբյուրից են սնվել ու սնվում.... Ժողովրդական տաղերը, երգերն ու հեքիաթներն ազգի ստեղծագործական ոգու արտացոլումն են և միայն անուս և անհայտ մարդկանց շրջանում են պահպում.... Եկել է պահը, որ ավանդույթներն ու սովորույթները, նաև երգերը, հավատալիքներն ու հեքիաթները պատմության մաս կազմեն»<sup>350</sup>: Ս. Շեղայաթը գտնում է, որ «Ղասարակության երգերի, հեքիաթների և հավատալիքների՝ սկզբնական շրջանում միաձույլ լինելը կապվում է այն ժամանակահատվածի հետ, երբ տարբեր ցեղախմբերը դեռ չեն առանձնացել և միասնական կյանք էին վարում.... Նախնական կրոնները և պաշտամունքները երեք հիմնական ակունքներ ունեն՝ ննջեցյալների պաշտամունքը, բնության ու կենդանիների պաշտամունքը և սովորույթներն ու եղանակային տոնախմբությունները, որոնք մարդուն և բնությանը միացնում են իրար»<sup>351</sup>:

Ս. Շեղայաթը բաց գիտակցում էր, որ «Ժողովրդական բանահյուսությունը մանուկ գիտություն է, և դրա հավաքելը դժվարին գործ է. սայթաքելու վտանգ կա.... Եթե բանահավաքչական գործում անպատճախանատու մոտեցում ցուցաբերվի, և թերացումներ լինեն, ժառանգության մեջ մասը կորցնելու վտանգ կառաջանա»<sup>352</sup>: Սադեղ Շեղայաթը հիշատակում և բարձր էր գնահատում արևելագետներին, որոնք զբաղվել են բանահավաքչությամբ: Նա մատնանշում է հետևյալ անունները՝ Վ. Ա. Ժուկովսկի, Ա. Քրիստենսեն, Յ. Մասսե, Գալոն, Բրիկո, Լորիմեր, Ռամասկես, Ի. Զարուբին և իր հայրենակից Յ. Քուիի Քերմանի: Նա գրում է, որ իրանի ժողովրդական բանահյուսության մասին ամենաընդգրկուն գիրքը Յանրի Մասսեի՝ օտար լեզվով հրատարակած երկու հատորով աշխատանքն է<sup>353</sup>: Գիրքն ընդգրկում է համարյա ամբողջ «Նեյրանգեստան»-ը, «Օսանե»-ն, «Չհարդահ աֆսանեյե Քուիի»<sup>354</sup>-ն («Քուիիի տասնչորս հեքիաթը») և մի շարք փաստաթղթեր ու վկայություններ կամ արտագրած նոտա-

<sup>350</sup> «Majalēyē Soxan», 1323, 2<sup>nd</sup> year, no. 3, p. 180.

<sup>351</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>352</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān*, p. 237.

<sup>353</sup> Masse H., *Croyances et Coutumes Persanes*, Paris, 1938.

<sup>354</sup> «Čhārdah afsānēyē Kūhī».

Աեր Եվրոպացիների ուղեգրություններից<sup>355</sup>:

«Մի շրջանի ֆոլկլորի հետազոտության ընդհանուր ծրագիր»: Երկրորդ հոդվածում հեղինակը պարզ, հասկանալի և մանրամասն ներկայացնում է ազգագրական և բանահյուսական ժառանգության հետազոտության ուղիները: Սկզբում նա ծրագիրը բաժանում է չորս հիմնական մասերի՝ ա) «Նյութական կյանք», բ) «Հոգեբարոյական կյանք», գ) «Հասարակական դավանանք, աստվածային էության փնտրտություն», դ) «Հասարակական կենցաղ»: Երկրորդ բաժնի նյութերն ավելի ծավալուն են, քան մյուս երեքինը: Այստեղ հեղինակը բաժանումները կատարել է՝ հենվելով պարսկական սովորույթների և ապրելակերպի առանձնահատկությունների վրա:

Առաջին բաժինը՝ «Նյութական կյանք», ունի երեք ենթաբաժին՝ 1. կենցաղային իրեր, 2. աշխատանք կամ ապրելու միջոցներ, 3. եկամուտ ու հարստություն:

Երկրորդ բաժինը՝ «Հոգեբարոյական կյանք», ավելի հարուստ է, բաղկացած է իինգ ենթաբաժիններից՝ 1. «Բարբառներ ու տեղաբնիկների լեզուներ» (առօրյա լեզու, հատուկ ու հասարակ և իրերի անուններ, արտահայտություններ, փոխաբերություններ, արվեստի լեզու և այլն), 2. «Ժողովրդական գիտություն» (իրերի և կենդանի արարածների, մարդու կառուցվածքի, հանքաբանության, բուսաբանության, կենդանաբանության, տոմարագիտության, օդերևութաբանության և չափաբանության վերաբերյալ նյութեր, նախնիների պատմություն, պատմական նյութեր, ժողովրդական արվեստի նյութեր), 3. «Ժողովրդական իմաստաբանություն» (ժողովրդական փիլիսոփայություն, հասարակագիտություն և բարոյագիտություն, բարոյագիտական գրքեր), 4. «Գեղագիտություն» (ժողովրդական արվեստ, գրականություն) և 5. «Խորհրդավոր կյանք», որն ամենից ընդարձակն ու հետաքրքիրն է և բաղկացած է չորս մասերից՝ ա) «Հասարակական կախարդություն, ուժի որոնում» (կախարդություն, հմայություն, թույներ և հակաթույներ, վնասակար կենդանիների և միջատների վանում, բարի և չար ոգիներ և այլն), բ) «Գուշակություն» (երազականություն, չար ոգիների դուրսբերում), գ) «Ընտանեկան գու-

<sup>355</sup> Տե՛ս Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, էջ 239:

շակություն աշխատանքի հաջողության և հիվանդության բուժման առնչությամբ» (բախտագուշակություն և հմայական աղոթքներ չարիքի դեմ), դ) «Ծեսեր և հողի բարեբերության աղոթքներ»:

Երրորդ բաժինը՝ «Հասարակական դավանություն, աստվածային էության փնտրություն», նույնպես բաղկացած է չորս ենթամասերից՝ 1. «Հասարակական աստվածաբանություն» (Աստված, հրեշտակներ, բնության հոգիներ, հանդերձյալ աշխարհի հոգիներ, հանդերձյալ աշխարհ), 2. «Հասարակական պաշտամունք» (հոգիների և սրբերի, սգո և տոնական օրերի, մեղքերի թողության և այլն), 3. «Միջնորդներ Աստծո և մարդու միջև» (թագավոր, ցեղապետ, հոգևոր պետ, օրենսգիրք և այլն), 4. «Դավանաբանական գրություններ»:

Չորրորդ բաժնում՝ «Հասարակական կենցաղ», Հեղայաթն անդրադառնում է արյունակցական կապերի և «ընտանիք» հասկացության ուսումնասիրությանը (բարեկամություն և ամուսնություն, ծնունդ և մանկություն, դաստիարակություն, խնամախսություն, հարսանիք, տուն, նիստուկացի սովորույթներ, հիվանդություններ, մահ):

«Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ» (Գործի սկիզբ): Ս. Հեղայաթն այս հոդվածի սկզբում անդրադառնում է իր երկրորդ հոդվածի բովանդակությանը, որը, իր կարծիքով, ավարտուն չէ, և չպետք է սահմանափակվել միայն ներկայացված օրինակներով. այն կարող է փոփոխության ենթարկվել՝ տեղին կամ պայմաններին համապատասխան: Նա որևէ գավառի ֆոլկլորի ուսումնասիրությունը հեշտ կատարելու համար առաջարկում էր հետևել նաև օտարերկրացի գրականագետ Փ. Սանթիվ (Saintyves P., *Manuel de Folklore*, Paris, 1963) ցուցումներին<sup>356</sup>: Հեղայաթը հորդորում էր աշխատանքը կառուցել գիտական իրողությունների հիման վրա, քանի որ դրանք կառույցի իսկական շաղախն են, և, մանրամասնելով իր խոսքը, գրում էր. «Նախ պետք է ձեռնամուխ լինել և իրանի տարբեր վայրերի ֆոլկլորը գրի առնել, ապա ձեռք բերվածները համադրել ու ուսումնասիրել: Քանզի նյութն այն ժամանակ հետաքրքրական կդառնա, երբ ամբողջ երկրի ֆոլկլորը ձեռքի տակ լինի, և հավաքված նյութերի համադրությունը գիտական արդյունքներ ունենա: Այնպես որ շտապողականու-

<sup>356</sup> Տե՛ս Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Īrān*, էջ 258:

թյունը և կանխավ արված դատողությունները կշեղեն աշխատանքից»<sup>357</sup>:

Յեղայաթը գտնում էր, որ տարբեր ազգերի ու ցեղերի երկիր իրանում պետք է նախ՝ ուսումնասիրել քաղաքները, գյուղերը, ապա՝ զբաղվել համեմատական աշխատանքով: Այս մասին նա գրում էր. «Իրանի բանահավաքչական աշխատանքը ծավալուն ու բազմաբնույթ է և ուշադրության արժանի, որովհետև հնագույն պատմություն ունեցող այս երկրում տարբեր մասերի միջև կենցաղի, եղանակի, աշխարհագրական տարածքի տարբերություններ կան: Այնպես որ նույնիսկ ամենափոքր գյուղի կամ ցեղի, ինչպես, օրինակ, յազիդիները Քարանդում, դերվիշների տարբեր ցեղերի կամ կրոնական փոքրամասնությունների (Շահսավան, Ղաշղայի, Քյուրդ, Բախթիարի, Թորքաման, Բոյեր Ահմադ, Լոռ....) մասին հետաքրքիր գոքեր կարելի է գրել»<sup>358</sup>.

Ս. Յեղայաթը հետազոտությունն իրականացնելու երկու ձև է առաջարկում՝ առաջին՝ ուղղակի որոնումներ որևէ գյուղում, փոքր քաղաքում կամ մեծ քաղաքի մի թաղամասում, երկրորդ՝ անուղղակի որոնում, որ կարող է մի նահանգի կամ երկրի ֆոլկլորը լինել: Երկրորդ դեպքում նա հանձնարարում է դիմել տարբեր անձերի կատարած ուսումնասիրություններին, որոնց նույնիսկ կարող է ուսումնասիրողը չճանաչել կամ տեսած չլինել: Նա գործն արդյունավետորեն կազմակերպելու համար բաժանումներ է կատարում՝ ա) աշխատանքի ձև, բ) դիտելու ձև, գ) հանդիպման վայր, դ) փաստական նյութերի գրառում, ապա մանրամասն անդրադառնում է դրանց:

Ըստ հեղինակի՝ ուսումնասիրության ընթացքում պետք է լինել ազնիվ, անկողմնակալ, տեղեկացված և համբերատար:

«Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ»: Չորրորդ հոդվածում Ս. Յեղայաթը ներկայացնում է տառադարձության աղյուսակ, որն արևելագետ Ռոժե Լեսկոյի<sup>359</sup> համագործակցությամբ կազմել էր Փ. Ն. Խանլարին: Յեղինակն աղյուսակի օգտագործման անհրաժեշտությունը հետևյալ կերպ է ներկայացնում՝ 1. բարբառներում և տեղաբնիկների լեզուներում եղած բառերի ու արտահայտությունների տառադարձում, 2. հավատքների,

<sup>357</sup> «Majalēyē Soxan», 1324, 2<sup>nd</sup> year, no. 5, p. 337.

<sup>358</sup> Տես Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, էջ 258:

<sup>359</sup> Լեսկո Ռոժե (1914-1975) – ֆրանսիացի իրանագետ, թարգմանիչ և քաղաքական գործիչ, ֆրանսերեն է թարգմանել Ս. Յեղայաթի «Բուժեք քուր»-ը:

երևակայությունների և սովորույթների տառադարձում, 3. ասացվածքների, բառակապակցությունների և բառերի տառադարձում, որոնք հատուկ են որևէ բարբառի, 4. տաղերի և օրորոցային երգերի տառադարձում, 5. հեքիաթներում և երևակայական արտահայտություններում եղած տեղերի և իրերի տառադարձում, 6. տեղաբնիկների լեզվով պատմությունների տառադարձում:

Ս. Հեղայաթը գտնում էր, որ տառադարձության այլուսակը գրական պարսկերենի համար չէ. դրա նպատակը տարբեր բարբառների բանարվեստի ճիշտ և ոյուրին մատուցումն է: Պետք չէ ենթադրել, որ սա պարտադրվում էր հեղինակի կողմից և ոճաբանության ուսումնասիրության համար էր նախատեսված: Հոդվածի վերջում հեղինակը պետությանն առաջարկում է շոջաբերականների միջոցով գրառման աշխատանքի հրավիրել գիտնականներին, արվեստագետներին, հաստատությունների աշխատողներին, աշակերտներին և ընտանիքներին: Ստորև ներկայացվում է Ս. Հեղայաթի տառադարձության այլուսակը.

### Տառադարձության այլուսակ

A	í	Z	ظ + ض + ذ + ج	V	و
Â	î	Z	ڙ	H	ح + ه
B	ب	C	ش	Y	ي
P	ٻ	,	ئ + ع + ا	O	ا
T	ط + ت	Q	غ + ق	Ô	او (تو)
S	ص + س + ث	F	ف	U	او (سو)
J	ج	K	ک	E	ا (کوتاه)
Ç	ڇ	G	گ	e	ا (کشیده)
X	خ	L	ل	I	اي
D	د	M	م	W	واومعدوله
R	ر	N	ن		

### 1. Զայնավոր հնչուններ

\*e (է/!) – Բառամիջում ստորին (շեշտազուրկ) և կարճ

(խուլ) ձայն, օրինակ՝ pedar / փեղար / բժ (հայր), nemune / նեմունե / نمونه (նմուշ):

\*e (է/ !) – Ստորին (շեշտագուրկ ), բարձր (շեշտված) և երկար (բացականչ) ձայն, որը հաճախ բարի վերջում է հանդես գալիս, օրինակ՝ kuçe/ քուչե/ کوچه (փողոց):

\*a (ա / ī) – Բառամիջում ստորին (շեշտագուրկ ) ձայն, օրինակ՝ pedar / փեղար / բժ (հայր):

\*a (ա/ ī) – Բառի սկզբում, մեջտեղում և վերջում, օրինակ՝ aftab / աֆթաբ / آفتاب (արև):

\*o (օ- ī) – Բառի սկզբում, օրինակ՝ por / փոր / پر (լիքը) կամ xorcid / խորչիդ / خورشید (արև):

\*u (ու / օ՛) – Բառի մեջտեղում երկարացված ձայն, օրինակ՝ zur / զուր / زور (ուժ), xun / խուն / خون(արյուն):

\*ô (ա/ ī) և (օ / ī) – աօ-ին համահունչ ձայն, օրինակ՝ Nôrusz / Նորուզ (Նորուրուզ) / نوروز / زوروز:

\*i (ի / ա՛) – Պարսկերենում ի-ին համարժեք ձայն, օրինակ՝ zir / զիր / زیر (տակ):

## 2. Բաղաձայն հնչյուններ

\*b և p – Արտասանվում է բ-փ / ب-پ:

\*t – Արտասանվում է թ / ط – տ, օրինակ՝ tabut / թաբութ / تابوت (դագաղ), xarrați / խառաքի / خراطی (ճախարակագործություն):

\*s – Արտասանվում է ս / س-ث-ص, օրինակ՝ Ius / լուս / لوس (շփացած), wares / վարես / وارت (ժառանգ), qassas / ղասاس / قصاص (վրեժինդրություն):

\*j – Արտասանվում է ջ / ج , օրինակ՝ aj / aջ / عاج (փղոսկո):

\*ç – Արտասանվում է չ / ڇ , օրինակ՝ gaç / ڦاڻ (գաڻ):

\*x – Արտասանվում է խ / ڏ , օրինակ՝ ڦab / ڦساب / خواب (քուն):

\*z – Արտասանվում է ժ / ڙ , օրինակ՝ ڦaz / ڦواڻ / زاڻ (զրախոսություն):

\*\_z – Արտասանվում է q / ڦض-ڦظ , օրինակ՝ baڦ / ٻاڦ / باڦ (բազե), ڦat / ڦاڻ / ذات (էություն), ڦarar / ڦاڻار / ضرر (վնաս), ڦohr / ڦونه / ظهر (ճաշ):

\*c – Արտասանվում է ڦ / ڦش , օրինակ՝ ڦab / ڦاڻ / ش (գիշեր):

\*\_ – Գրվում է ڦ / ڦ - ڦع տառի փոխարեն, օրինակ՝ e'\_temad / ٻڦءماد / اعتماد (վստահություն), so'\_al / ٻوڦال / سؤال (հարց), ma'\_nus / ڦانوس / مانوس (սերտություն, մտերմություն):

\*q – Գրվում է ڦ / ڦ - ڦخ տառի փոխարեն, օրինակ՝ zaڦ / ڦاڻ / زاخ (կաշաղակ), taڦ / ڦاڻ / طاق (առաստաղ):

\*y – Գրվում է ڦ / ڦى անշարժ տառի փոխարեն, օրինակ՝ meyy / ڦئى / مئى (գինի), rey / ڦئى / ڦى (բաղաքի անուն):

\*Վերոնշյալ հնչյունները ցույց են տալիս բառերի արտասանությունը, իսկ պարսկերենում կան հնչյուններ, որոնք բառի վերջում գրվում, բայց չեն արտասանվում, օրինակ՝ h (h / ه ). xane / ڦانه / خانه), որը նշանակում է «տուն» և գրվում է «xane», այլ ոչ թե «xaneh»:

\*ő – Պարսկերենում կրկնվող բաղաձայնի նշան է, որը կոչվում է «թաշդիդ / tašdīd»: Այս նշանի դեպքում տառադարձության ժամանակ տվյալ բաղաձայնը կրկնվում է, օրինակ՝ aṛre / aռը / ار (սղոց), xarrati / ڦانهاتي / خراتي (ճախարակագործություն),

abbas / Աբբաս / عَبَّاس (տղամարդու անուն):

\*w – Գրվում է վ / و: Այս հնչյունը պարսկերենում գրվում, բայց չի արտասանվում, օրինակ՝ x\_ab / խ\_աբ / خواب (քուն), x\_ahar / խ\_ահար / خواهار (քույր), բայց որոշ բարբառերում այն արտասանվում է, օրինակ՝ xwab / խվաբ, xwahar / խվահար:

\*e – Այս ձայնավոր հնչյունը երկու բառեր իրար միացնելիս արտասանվում է, բայց չի գրվում: Այն միայն տառադարձության ժամանակ է գրվում, օրինակ՝ pedar-e man / փեղար է ման / پر من (իմ հայրը):

Ազգագրագիտության և բանագիտության պահանջներին հարմարեցված Ս. Շեղայաթի ծրագիրը մեծ օգնություն էր այս բնագավառի մասնագետներին և ոչ արհեստավարժ հավաքողներին: Կարծ ժամանակամիջոցում այն իր ներդրումն է ունենում նյութերի գրառման գործում:

Անկասկած, ազգագրագիտության բնագավառում Ս. Շեղայաթի ներկայացրած այս ծրագրերը, իրենց դրական կողմերով հանդերձ, եթե ոչ ամբողջությամբ, ապա որոշակի վերանայման և փոփոխության կարիք ունեն:

Ս. Շեղայաթի օրերից մինչև մեր օրերը իրանում ազգագրագիտությամբ շատերն են զբաղվել, մինչև իսկ նորացված ծրագրեր և աշխատանքային մեթոդներ են մշակել, բայց Ս. Շեղայաթի գործն իր ամբողջության մեջ եղակի է:

Ս. Շեղայաթի մահվանից տասնամյակներ անց նրա կողմից ներկայացված նյութերը, ինչպես նաև գիտահետազոտական մեթոդանությունն անփոխարինելի ատաղձ են բազմաթիվ բանագիտական ու ազգագրագիտական ուսումնասիրությունների և գրական ստեղծագործությունների համար:

## Դ) ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Ֆարիանգե ամյանեյե մարդոմե իրան» («Իրանի ժողովրդական մշակույթ») գոքի վերջին գլխում ամփոփված են Ս. Հեղայաթի անտիպ աշխատանքները: Այստեղ կան մի շաբթ բանահավաքչական ուսումնասիրություններ, որոնք պահպանվել են հեղինակի եղբորորդու՝ Զահանգիր Ֆորուհարի մոտ և առաջին անգամ են իրատարակվում: Այս գլխում զետեղված են հեքիաթներ, պատմվածքներ, երգեր, տեղական ասացվածքներ, առածներ, հետազոտություններ և նամակներ:

«Պատմություններ և հեքիաթներ»<sup>360</sup>: Այս նյութերն ուղարկվել են երկորի տարբեր վայրերից, և կան նաև դրանց բնագրերը: Տողատակերում նշված են հեքիաթ ուղարկողի անուն-ազգանունը, քաղաքի անունը, թվականը, նույնիսկ թղթի որակը և թանաքի գույնը: Հեքիաթները մեծ մասամբ ուղղված են Սադեղ Հեղայաթին. միայն երկուսն են ռադիոյի հաղորդավար Սորիի Մոհքաղիի անունով: Դրանք իրենց նկարագրություններով և իրականության արտացոլման ձևերով միասեռ չեն: Սովորաբար առանձնացվում են հեքիաթների հետևյալ տեսակները՝ իրաշապատում, իրապատում, ընտանեկան կյանքի դրվագներ ներկայացնող և կենդանական: Կենդանական հեքիաթների հերոսների հիմնական հատկանիշը մարդկային լեզվով խոսելն է, մարդու նման դատելն ու գործելը:

Հեքիաթներում լավատեսական ավարտը՝ ուժեղի և բարու հաղթանակը, հեքիաթասացների և ունկնդիրների ցանկությունն է միայն, քանի որ իրականությունն այլ բան է հուշում:

Ս. Հեղայաթին ուղարկված քսանյոթ հեքիաթներից երկուսը տեղաբնիկների բարբառով են, որոնց կցված են թարգմանությունները: Այստեղ ներկայացնում ենք մի փոքր հատված դրանցից մեկից.

«Yē pīrē zanūyī būd o dāš non mīroch o hēy balgāy mīrēxt myān-e tandūryē čāqūlūyīam āmad kē rad šovē īnē dīd...» (Էջ 366)

(Մի ծեր կին հաց էր թխում և ծառի տերևները լցնում էր թռնողի մեջ: Մի ծիտ, որ անցնում էր այդ կողմով, նրան տեսավ...):

Մի ուրիշ հատված.

«Raf pāyīn o dīd kē 'arūsīyē dīd onjēn dāran bērā 'arūsī sag

<sup>360</sup> «Qēsēhā va afsānēhā».

mīkošēn gof kē sag nokošīn man barātān kol āvordom valī čan tā tēkē az on rānāš bērā man nēgā dārīn...» (Ez 367)

(Գնաց, գնաց ցած ու տեսավ՝ հարսանիք է: Տեսավ՝ այն-տեղ հարսանիքի համար շուն են սպանում, ասաց. «Շուն եք սպանում, ես ձեզ համար այժ եմ բերել, բայց մի քանի կտոր նրա ոտից ինձ համար պահեք...»):

Այս երկու հատվածներում հանդիպում ենք երկու բառ՝ «չāqūlūyī» (ծիտ) և «kol» (այծ), որոնք Դամղանի բարբառով են գործածված, և առանց բացատրության ընթերցողը «չāqūlūyī»-ն (գիր-գեր) կհասկանա, իսկ «kol»-ը բազմիմաստ բառ է:

Ս. Յեղայաթը, համոզված լինելով, որ պարսկական հեքիաթների տարբերակներ օտար ազգերի մոտ նույնպես կգտնվեն, գրում է. «Պարսկական հեքիաթների նման հեքիաթներ գտնում ենք նաև Եվրոպական լեզուներում, իսկ հեքիաթների հավաքման համար պետք է հին սերնդի և անուս մարդկանց դիմել և նրանց արտահայտություններն ու բարբառները առանց փոփոխության ձայնագրել»<sup>361</sup>:

Պարսկական այս հեքիաթը մեզ անմիջապես հիշեցնում է Յովհաննես Թումանյանի «Ծիտը»<sup>362</sup> հեքիաթը, որտեղ տեսնում ենք սյուժեների նմանություն:

«Երգեր»<sup>363</sup>: Իրանի տարբեր վայրերից Սադեղ Յեղայաթին ուղարկում էին նաև երգեր, որոնք, իրենց տվյալ վայրերին համապատասխան, կոչվում են «Բելուչի»<sup>364</sup>, «Բիրջանդի»<sup>365</sup>, «Դամղանի»<sup>366</sup>, «Շուշբարի»<sup>367</sup>, «Շիրազի»<sup>368</sup>, «Մազանդարանի»<sup>369</sup>,

<sup>361</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 220.

<sup>362</sup> Տե՛ս Թումանյան Ր., Հեքիաթներ, Եր., «Սովետական գրող» իրատ., 1978, էջ 22:

<sup>363</sup> «Tarānēhā».

<sup>364</sup> Բելուչի – Իրանի հյուսիսարևելյան նահանգներից մեկի՝ Սիստան-Բելուչստանի բարբառ է: Այս նահանգում երկու ցեղեր են բնակվում, որոնք կոչվում են սիստանի և բելուչի: Սիստանի ցեղը խոսում է պարսկերեն, իսկ բելուչիները՝ բելուչերեն:

<sup>365</sup> Բիրջանդի – Բիրջանդ քաղաքի բարբառ է, իսկ Բիրջանդը Իրանի հյուսիսարևելյան խորասան նահանգի քաղաքներից է:

<sup>366</sup> Դամղանի – Պարսկաստանի Սեմնան նահանգի կենտրոնական քաղաքի՝ Դամղանի բարբառ է:

<sup>367</sup> Շուշբարի – Շուշբար քաղաքի ժողովորդի խոսակցական լեզուն է, իսկ Շուշբար քաղաքը գտնվում է Իրանի հարավարևմտյան խուզեստան նահանգում:

<sup>368</sup> Շիրազի – Իրանի հարավային նահանգի Շիրազ քաղաքի բարբառ է:

«Յազդի»<sup>370</sup> և այլն: Երգերից ոչ բոլորը նոտաներ ունեն, սակայն մի քանիսն ունեն բառերի բացատրություն: Բերենք օրինակներ.

«Kaēlī syā korī mo                    xōš bēšo o xōš bēbī mo

Čyā nādāy bē čyā rasad        malī mūnē bē ryē rasad» (Էջ 369)

(Աև փետուրով հավը եկավ, / Ինքը գնաց, ու ինքը եկավ, / Բան չունի, որ մի բանի հասնի, / Մնաց կատուն հասնի դմակի):

Այս երգն ուղարկվել էր Արդեստանից՝<sup>371</sup> իր բարգմանությամբ, իսկ հաջորդը՝ Շուշբարից՝ նոտաներով և տեղ-տեղ բառերի բացատրությամբ.

«Har čē dārom sī-e to dārom ’azīzē xonamēy

az golālt kola bēč ēynom to bēnay rañzov namēy» (Էջ 378)

(Ինչ ունեմ, քեզ համար ունեմ, տանս սիրելին ես, / Մազերիդ ծայրից ծաղիկ քաղեմ, դու հոռոմսամիթի թուփն ես):

Մյուս երգն ուղարկված է Մազանդարանից՝ միայն նոտաներով.

«Bī tē yēkadm dēlam xoram na o nē                    agar rūyat bēvīnam qam na o nē  
Agar dard-e dēlam qēsmathā kon-e                    dēl-e bī dard-e dar ’ālam na o

nē» (Էջ 392)

(Առանց քեզ մի վայրկյան սիրտս ուրախ չէ, / Եթե դեմքդ տեսնեմ, տիսուր չեմ լինի: / Եթե սրտիս վիշտը բաժանեն, / Առանց վշտի աշխարհում սիրտ չկա ու չկա):

«Առածներ և տեղական ասացվածքներ»<sup>372</sup>: Իրանի տարբեր վայրերից ուղարկված ասացվածքները և առածներն օգտագործվում են երկրի ողջ տարածքում՝ նույն իմաստներով, բնակիչներին հատուկ և հասկանալի բարբառներով: Օրինակներ Սուրմաղից<sup>373</sup> ստացված ասացվածքներից՝ «Ādam-e gēdā īn hamē adā» («Դատարկ կաթսան բարձր է զնգում», Էջ 402), «Āš-e kašk-e xālē, bēxorī pādē naxorī pādē» («Մորաքրոջ եփած բանապուրը ուզեսուզես պիտի ուտես», Էջ 403), Շիրազից ստացվածներից՝ «Har

<sup>369</sup> Մազանդարանի – Մազանդարան նահանգի ժողովրդի բարբառն է, իսկ Մազանդարանը Իրանի հյուսիսային նահանգներից է:

<sup>370</sup> Յազդի – Իրանի կենտրոնական հատվածում գտնվող քաղաքներից Յազդի բարբառ է:

<sup>371</sup> Արդեստան – Իրանի կենտրոնական հատվածում գտնվող Իսֆահան նահանգի քաղաքներից է:

<sup>372</sup> «Ēstēlāhāt va amsālē mahalī».

<sup>373</sup> Սուրմաղը բարբառ է, որի կրողները բնակվում են Իրանի հարավում գտնվող Ֆարս նահանգի Աբան գավառի Սուրմաղ քաղաքում:

jā sangīyē barī pāyē langīyē» («Ինչ որ ծանր քար է, կաղ ոտքին է դիպչում», էջ 405), «Mīrē sāl-e tang, mīmūnē nūm o nang» («Անցնում են նեղ տարիները, մնում են միայն համբավն ու անպատվությունը», էջ 408), «Gorbē dastaš bē gūšt nēmīrasē mīgē zēnom dārē» («Աղվեսի ձեռքը խաղողին չի հասնում, ասում է՝ խակ է», էջ 410), «Jang-e aval bēh zē solh-e āxar» («Առաջին կրիվն ավելի լավ է, քան վերջին զինադադարը», էջ 414):

Ընթերցողի համար ակնհայտ է, որ այս ասացվածքների բազմաթիվ տարբերակներ մեզ ծանոթ են նաև հայ ժողովրդական բանահյուսությունից:

Շուշթարից ստացված հեքիաթներ՝ «Gapta-a ՚amūz kočalot ՚amoxtū» («Մեծին սովորեցրու, փոքրը գիտի», էջ 403), «Āsyogaī bēnū malbas» («Զրաղացը հերթով է», էջ 404):

**«Հետազոտություններ, նամակներ»<sup>374</sup>:** Սադեղ Հեղայաթն այս ենթագլխի հետազոտական աշխատանքները սկսում է իրանում սիրված և տարածում ունեցող տիկնիկային ներկայացումներից: Նա նախ՝ նկարագրում է ներկայացման տաղավարը և դրա գտնվելու վայրը, թե ինչպիսին է լինելու այն, վարագույրների չափսերը, որոնք օգտագործվում են պատերի փոխարեն, որովհետև ներկայացումը տեղի է ունենում բացօթյա, ապա՝ խամաճիկների չափսերը, հասակը, տեղերը, թելերի երկարությունը, որոնցով խաղացվում են տիկնիկները: Տիկնիկների մեծ մասը պատրաստվում է ապակուց, իսկ մյուս մասը՝ փայտից ու գործվածքից: Ներկայացումը կատարում են երկու հոգով, որոնց հետ ելույթ է ունենում նվազախումբը թմբուկով և քյամանչայով: Երգերը կարող են լինել ազգային, հին ժամանակներից մնացած կամ ժամանակակից, իսկ ներկայացման նյութերը երբեմն գռեհիկ, ոչ պատշաճ բովանդակություն ունեն: Տիկնիկները խոսում են հասարակությանը հուզող խնդիրներից ու բացահայտում ճշմարտությունը: Հրավերների դեպքում տիկնիկային ներկայացումները կարող են բեմադրվել նաև տներում:

Ըստ հեղինակի՝ իրանում երկու տեսակի տիկնիկային թատրոն է եղել: Մեկի ժամանակ տիկնիկի գլուխը և մարմինը հագցնում էին մատներին և խաղացնում: Այս տեսակի տիկնիկային թատրոնները ներկայացնողի անունով կոչվում էին «Փահլան քաչալ» («ճաղատ փահլան»): Մյուսի ժամանակ տիկնիկ-

<sup>374</sup> «Tahqīqāt, nāmehā».

ները թելերով էին խաղացնում և կոչում էին «Խեյմե շաք բազի»<sup>375</sup> («Տաղավարում գիշերային տիկնիկախաղ»): Առաջինի դեպքում բեմադրությունը կատարվում էր ցերեկը, երկրորդի դեպքում՝ գիշերը:

Սադեղ Յեղայաթն անդրադառնում է ժողովրդական ծեսերից մեկին, որը կատարվում է նոուռուգից<sup>376</sup> մի քանի օր առաջ և տևում չորս օր: Այս ծեսը կատարվում է Խալխալում<sup>377</sup> և Գիլանի<sup>378</sup> բազմաթիվ վայրերում: Այն կոչվում է «Քոսաջ վա արուս»<sup>379</sup> («Քոսաջը և հարսը»): Մի այրամարդու տարօրինակ զգեստներ են հազցնում, թաղիքե գլխարկից զանգակ կախում, մի կնոջ էլ հարսի շորեր են հազցնում: Նրանք դափու ու զուռնայի նվազակցությամբ փողոցներում երգում ու պարում են և դրամ ու ուտելիք հավաքում: Յեղինակը նշում է, որ սա Սասանյանների ժամանակաշրջանից մնացած ծեսերից է:

Յեղայաթն անդրադառնում է անձրև տեղալու մասին մեկ այլ ավանդույթի հետ կապված ծեսի, որը կոչվում է «Գելի»<sup>380</sup> (հոտ, ամբոխ): Այս ծիսական արարողությունը կատարվում է Ֆարս նահանգում: Երիտասարդի գլխին երկու կոտոշ են դնում, իսկ մեջքին՝ պոչ: Նրան կանեփի հյուսվածքից կամ հին թաղիքից զգեստ են հազցնում, գլխին ստվարաթղթից պատրաստված երկար գլխարկ դնում և ձեռքը երկու երկար փայտ տալիս: Ապա Գելին առաջից, իսկ գյուղի բնակչությունը նրա հետևից շրջում են գյուղի փողոցներով, երգելով ուտելիք հավաքում: Բերենք մի հատված այդ երգից.

«Gēlī gēlīn šāx-e zērīn hū hū

Alāh to bēzan bārūn	sī māy 'ayālvārūn
Hāy gēlīyē mā čē zēštī	bārūn-e ūn doroštī
Moštī jovī dāštam	sar-e gēlī kāštam» (Էջ 423)

(Գելի Գելին, ոսկյա կոտոշ, հն՝, հն՝, / Աստված, դու անձրև տո՛ւր, / Որովհետև մենք ընտանիքատեր ենք: / Յե՞յ, մեր Գելինը

<sup>375</sup> «Pahlēvān kačal», «Խեյմե շաք բազի».

<sup>376</sup> Nowrūz – Իրանական Ամանորը՝ Նոր տարին, որ զուգադիպում է գարնանամուտին և նշվում է մարտի 21-ին:

<sup>377</sup> Իրանի հյուսիսարևմտյան նահանգ, Ադրբեյջանի քաղաքներից:

<sup>378</sup> Իրանի հյուսիսային նահանգներից, որի կենտրոնը Շաշտ քաղաքն է:

<sup>379</sup> «Kosaj va 'arūs».

<sup>380</sup> «Gēlī».

ինչ տգեղ է / Նրա անձրևը խոշոր է, / Մի բուռ գարի ունեի, / Գելիի  
գլխին ցանեցի):

Տնետուն շրջողներն իրենց հավաքածը փոխանակում են ցորենի հետ և այդ ցորենով ապուր եփում: Այնուհետև ապուրը լցնում են մեծ ամանի մեջ, մի երկաթե օղակ գցում դրա մեջ, նստում շուրջը և հերթով նույն ամանից ուտում: Օղակն ում գդալի մեջ հայտնվի, նա ջրաղացի մեծ քարը պետք է շալակի և գնա երիտասարդների առջևից, որոնք աղոթելով նրա հետևից գնում են դեպի աղոթավայր: Այնտեղ հանգստանում են, ապա՝ ծերերի աղոթքից հետո, վերադառնում: Ասում են՝ երբեմն անձրև է գալիս, երբեմն՝ ոչ:

Սաղեղ Յեղայաթն ատամնացավը բուժելու հետաքրքիր մոգական ինարք է առաջարկում: Այսպես, նախ՝ մի թղթի վրա գրում են «շամալուն»<sup>381</sup> (շամալուն) բառը, ապա՝ գրածը փակցնում պատին և խորհուրդ անում: Այնուհետև «մ/թ/ը» տառի մեջտեղում մի սեպ են գամում: Եթե ցավը չանցնի, ապա մի ուրիշ սեպ են խրում «աը/’ա/չ» տառի մեջ, իսկ եթե դա էլ չօգնի, ատամնացավն անպայման կանցնի «ու/ն/ց/» տառի մեջ սեպ գամելիս:

Նշված ենթագլխի վերջում գետեղված է երկու նամակ: Առաջինը ֆրանսիացի հայտնի արևելագետ Յանրի Քորքոնից է, որը նամակում ցանկություն էր հայտնում հանդիպելու Սաղեղ Յեղայաթին, երկրորդը՝ պարսիկ գրող, թարգմանիչ և լրագրող Եհսան Թաքարից: Այն ուղարկվել էր գրող և թարգմանիչ Փարվիզ Նաբել Խանլարիին՝ «Սոխան» ամսագրի հասցեով: Եհսան Թաքարին խնդրում էր Ն. Խանլարին, որ իր ուղարկած Մազանդարանի առածներն ու երգերը հանձնի Ս. Յեղայաթին:

Ս. Յեղայաթի անտիպ ժառանգության հետագա իրատարակումը մեկ անգամ ևս ընդգծում է նրա ստեղծագործ և հետագոտական մտքի ընդգրկունությունը:

<sup>381</sup> Šam’alūn/شعلون.

## ՎԵՐԶԱԲԱՆ

Յամակողմանիորեն ուսումնասիրելով 20-րդ դարի պարսիկ գրող, բանահավաք և բանագետ Սադեղ Յեղայաթի կյանքն ու գործը՝ կարող ենք ամփոփել:

• 19-րդ դարի վերջից սկսած մինչև 20-րդ դարի սկիզբը՝ Իրանը գտնվում էր տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման բարդ ու հակասական մթնոլորտում և սոցիալական մակարդակով զիջում էր Արևմուտքին: Ղաջարական թագավորության ժամանակաշրջանում եվրոպական երկրների, մասնավորապես Ֆրանսիայի հետ ունեցած կապերի հետևանքով Իրանի տնտեսական և մշակութային կյանքում զարգացման նոր հնարավորություններ են բացվում: Սա այն ժամանակահատվածն էր, երբ ի հայտ եկան հակաբռնապետական, մշակութային -առաջադիմական շարժումները, որոնց սաղմերը երևան էին եկել դեռևս Սեֆյան դինաստիայի իշխանության շրջանում: Տեղական առաջընթացը՝ մի կողմից, Արևմուտքի հետ մշակութային կապերը՝ մյուս կողմից, նպաստում էին գեղարվեստական արձակի զարգացմանը և առաջընթացի նոր հեռապատկերներ ստեղծում:

• 20-րդ դարի 20-ական թվականներին լուսավոր գաղափարներով համակված գործիչները գեղարվեստական գրականության նոր ժանրերի՝ վեպի, պատմվածքի, վիպակի, նովելի օգտագործմամբ մերկացնում են կյանքի արատները, երկրում առկա իրադրությունը, վերլուծում ժողովրդին հուզող, բայց քողարկված քաղաքական և ազգային խնդիրները, արթնացնում հայրենակիցների ազգասիրական զգացումները և նրանց մեջ զարգացնում պայքարելու ոգին:

• Քաղաքական և մտավոր կյանքում տեղի ունեցած այս վերելքում էլ ձևավորվում է արվեստագետ Սադեղ Յեղայաթի հոգեմտավոր և քաղաքական աշխարհայացքը: Նրա գործունեության համար լայն հնարավորություններ են ստեղծում ընտանեկան բարեկեցիկ պայմանները, ապա արտասահմանում (նախ՝ Բելգիայում, ապա՝ Ֆրանսիայում, իսկ ավելի ուշ՝ Հնդկաստանում, որտեղ սովորում է պահլավերեն և ուսումնասիրում է գեղարվեստական դասական երկերը) ապրելու տարիներին ձեռք բերած փորձառությունը:

• ճիշտ է, նրան չհաջողվեց բարձրագույն կրթություն ստանալ, սակայն եվրոպական շփումները և գրականության ընթեր-

ցանության անհազ ծարավն իրենց կնիքն են թողնում նրա աշխարհայացքի և գրական ճաշակի ձևավորման վրա: Իր ստեղծագործություններով Եվրոպայից վերադարձած և կրթված Ս. Հեղայաթը մեծ դերակատարություն է ունենում պարսկական գրականության զարթոնքի մեջ, որն իրանի ժամանակակից գրական աշխարհում առաջիններից էր, որ նախաձեռնեց բանահյուսության և ազգագրության ուսումնասիրությունը և դարձավ շատերի ուսուցիչը:

• 1930-ական թվականներին գրականության մեջ գերիշխող ժամրերը՝ Վեպը, նովելը, պատմվածքը, զգալի զարգացում ապրելով, հասարակությանը հուզող խնդիրներն արծարծելու և դրանց լուծումներ գտնելու ամբիոն են դառնում:

• Արձակի բնագավառում Ս. Հեղայաթի համար ուսուցիչներ եղան Եղգար Ալան Պոն, Գի դը Մոպասանը, Ֆրանց Կաֆկան, Անտոն Չեխովը և ուրիշներ: Նա առաջինը պարսկերեն թարգմանեց Ֆ. Կաֆկայի և Ա. Չեխովի փոքր պատմվածքները:

• Ս. Հեղայաթի հեղինակային պատմվածքները լի են ժողովրդական պարզ և հասկանալի արտահայտություններով, ասացվածքներով, ինչն էլ յուրահատուկ նրբերանգներ և իմաստ է հաղորդում նրա ստեղծագործություններին: Քաջածանոթ լինելով պարսկական բազմաժանր հարուստ բանահյուսությանը և արժենորելով այն որպես իր ժողովրդի աշխարհընկալման և խոքարվեստի համաձուլվածք՝ նա լայնորեն օգտագործեց հայրենի բանահյուսության արտահայտչական միջոցներն իր գեղարվեստական երկերը կերտելիս:

• Գեղարվեստական գրականության ասպարեզում լայնահուն պատկերացումների տեր Ս. Հեղայաթն իր ժամանակի լավագույն արձակագիրներից մեկն է, որը նաև համաշխարհային ճանաչում ձեռք բերեց:

Ս. Հեղայաթի բազմաժանր ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է ժողովրդական բանահյուսական և ազգագրական հետազոտություններ՝ «Նեյրանգեստան» և «Օսանե», մշակույթի և ազգագրության գիտական ուսումնասիրության մեթոդաբանական ծրագրեր, իր գլուխգործոց, առեղծվածային և խորհրդավոր իմաստներ պարունակող պատմվածքը՝ «Բութե քուռ»-ը և այլն: Ժողովածումներում ընդգրկված են ռեալիստական պատմվածքներ՝ «Չենդե բե գուռ», «Մե դաքրե խուն», «Սայե ռոշան», «Սագե վելգարդ» և «Ալավիե խանում», երգիծական

ստեղծագործություններ՝ «Խարե դաջալ», «Թուփե մորվարի», դրամատիկական պատմվածքներ՝ «Մազյար», «Փարվին դոխութարե Սասան» և այլն: Բազմաթիվ են նրա բարգմանությունները պահլավերեն գրական հուշարձաններից՝ «Քարնամեյե Արդեշիրե Քարաքան», «Զանդե Վահման յասն» և այլն, ինչպես նաև արտերկրի հայտնի գրողներից՝ Անտոն Չեխով, Ֆրանց Կաֆկա, Ժան Պոլ Սարտր, Ռոժե Լեսկո: Ունի նաև գիտական և փիլիսոփայական հոդվածներ, գրաքննադատական աշխատություններ (խոսքը հատկապես վերաբերում է Օմար Խայամի ստեղծագործություններին) և ուղեգրություններ:

• 1931-1933 թթ. Ս. Հեղայաթի հրատարակած երկու փոքրիկ գրքերը՝ «Օսանե»-ն և «Եւյրանգեստան»-ը, սկիզբ դրեցին ազգագրական ու բանահյուսական նյութերի ամբողջացմանը և արևմտաեվրոպացի գիտնականների հետագա աշխատությունների համար դարձան պարսկական ժողովրդական արվեստի և կենցաղի ուսումնասիրության աղբյուր:

• Ի տարբերություն մյուսների՝ Ս. Հեղայաթը բանագիտական նյութերի ուսումնասիրությունը կատարում էր արդեն կայացած, եվրոպական գիտական հիմունքներով և մակարդակով, ներկայացնում իր ժամանակի համար նորարարական գիտահետազոտական տեսություն և ծրագրեր:

• Հետագայում բազմաթիվ հետազոտողներ հետևեցին Ս. Հեղայաթի օրինակին և հասան լուրջ նվաճումների: Յանդես Եկան բազմաթիվ բանահավաքներ, ովքեր սկսեցին հավաքել և ուսումնասիրել հայրենի բնակավայրերում սփուզած ժողովրդական արվեստի բազմազան նյութերը: Այդ բանահավաքներից էին Աբոլղասեմ Էնջավի Շիրազին, Մուհամմադ Զաֆար Մահջուբը, Մահմուդ Քարիրային, Ալի Բոլուքբաշին և այլք:

• Ս. Հեղայաթը կարողացավ մշակել մեթոդներ, բանաձևել սահմանումներ, որպեսզի ապագայում բանագիտությամբ հետաքրքրությունները հնարավորություն ունենային հավաքած նյութերը գիտականորեն օգտագործելու: Ս. Հեղայաթի ծրագրային մոտեցումները լիովին բավարարում էին ժամանակի բանահյուսության տեսության պահանջները: Մինչ օրս էլ մասնագետները կիրառում են նրա պատվիրանները, որոնք նոր սերնդի համար ուղեցույցի արժեք ունեն:

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ա) ՕՄԱՐ ԽԱՅԱՄԻ ՔԱՂՋԱԿԱՆԵՐԸ ՍԱԴԵԴ ՀԵՂԱՎԱԹԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

Սադեդ Հեղայաթն իր կարծ, բայց բեղմնավոր գրական կյանքի զգալի մասը նվիրել է փոքրածավալ պատմվածքներին: Միաժամանակ գրել է նաև գրական-քննադատական հոդվածներ և ամբողջական ուսումնասիրություններ, որոնցից մեկը նվիրված է Օմար Խայամի քառյակներին: Ս. Հեղայաթը դեռևս պատանեկան տարիներից խորապես տպավորված էր, եթե չասենք՝ հմայված էր, Օմար Խայամի քառյակներով:

Օ. Խայամն աշխարհահռչակ բանաստեղծ է, և նրա քառյակները թարգմանվել են գրեթե բոլոր զարգացած երկրների լեզուներով: Դայ մեծ մտավորականներն ու բանաստեղծները, բնականաբար, նույնպես չեն կարող անտարբեր անցնել Խայամի ստեղծագործության կողքով: Նրա քառյակները ճանաչվել ու գնահատվել են Նահապետ Քուչակի, Նաղաջ Հովհաննի, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Եղիշե Չարենցի, Հովհաննես Շիրազի և հայ այլ նշանավոր արվեստագետների կողմից:

Բազմաթիվ քառյակներ են վերագրված Օ. Խայամին, բայց Ս. Հեղայաթը, բնագրերի օրինակներն ուսումնասիրելով, ձեռնամուխ է լինում գտնելու այն քառյակները, որոնք հարազատ են Օ. Խայամի փիլիսոփայական աշխարհայացքին ու գաղափարներին: Օմար Խայամի քառյակների թվի և բովանդակության մասին բազմաթիվ կարծիքներ, տեսակետներ են արտահայտվել: 1923 թ. լույս է տեսնում Հեղայաթի՝ «Որբայաթե Խայամ» վերնագրով հոդվածը, իսկ 1934 թ.՝ «Թարամեհայե Խայամ» («Խայամի երգերը») քննական ուսումնասիրությունը: Հեղայաթի այս երկու ուսումնասիրությունների բովանդակությունը համարյա նույնն է, բայց ընտրած քառյակները և դրանց թիվը մեկը մյուսին չեն համապատասխանում: Մենք քննարկման առարկա ենք դարձրել Հեղայաթի «Թարամեհայե Խայամ» ուսումնասիրությունը<sup>382</sup>: Հե-

<sup>382</sup> Մենք մեր ձեռքի տակ ունենք այս աշխատանքի՝ 2536 (1977) թ. իրատարակված օրինակը (տես Hēdāyat S., Tarānēhāyē Xayām, Թեհրան, «Զավիդան»

դայաթը Խայամին վերագրվող հազարավոր քառյակներից նրա գոչի արդյունք էր համարում 143-ը: Նա 8 խմբի է բաժանել, համարակալել և համակարգել է քառյակները, ապա՝ անդրադարձել դրանց վերլուծությանը: Յեղայաթը քառյակները բժախնդրորեն է ընտրել, բովանդակությամբ դասակարգել: Այս մոտեցումը նորույթ էր և Յեղայաթի ցուցաբերած նորարարական մոտեցման ապացույցը:

Ելնելով քառյակներում արծարծված գաղափարներից՝ Խայամին համարում են աստվածավախ հավատացյալ, սուֆի, նույնիսկ աստվածամերժ, նյութապաշտ, աշխարհիկ, բնապաշտ, լավատես, հեղափոխական, օրինազանց, խորամանկ, ճարպիկ, վավաշոտ և այլն: Այս պարագայում անտեսվում են մարդու, պոետի հայացքների և գրական վարպետության դերը և արվեստագետի անհատականությունն ու ստեղծագործելու ազատությունը: Նրան պատկերացնում են իբրև հակասական և բազմադեմ մի մարդու: Ընթերցողի մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ քառյակների հեղինակը կարծես տարբեր ժամանակաշրջաններում և հոգեվիճակներում ապրած մարդ է: Կարելի է պատկերացնել, թե որքան կհեռանայինք ճշմարտությունից, եթե, ելնելով Նարեկացու «Մատյան»-ից, նրան համարեինք աշխարհի ամենամեղավոր մարդը:

Խայամին պատկանող քառյակների ամենահին ժողովածուներից մեկը (158 քառյակ) կազմվել է 1486 թ. և գտնվում է Մեծ Բրիտանիայի Օքսֆորդի համալսարանի «Բոդլեյան» գրադարանում: Այս ժողովածուն նույնպես Խայամին են վերագրվել իրականում նրան չպատկանող որոշ քառյակներ: Անգլերեն ամենահայտնի թարգմանությունն անգլիացի բանաստեղծ Էդուարդ ՖիցՉերալդինն է: Նա, քաջածանոթ լինելով Խայամի փիլիսոփայությանն ու ստեղծագործության հոգեբանությանը, Խայամին ոչ բնորոշ քառյակներ է թարգմանել:

Ըստ Ս. Յեղայաթի՝ 1193 թ.՝ Խայամի մահվանից 50 տարի անց, եմաղեղին Քաքեք Էսֆահանին իր արաբերեն «Խարիդ օլ-Ղասր»<sup>383</sup> («Պալատի գնումը») գրքում առաջին անգամ Խայամին կոչում է բանաստեղծ: Յին գրքերում, օրինակ՝ «Նազիաթ օլ-առ-Ղաս» («Յոգիների մաքրություն»), «Թարիխ օլ-հոքամա» («Իմաս-

հրատ., 2536, 98 էջ):

<sup>383</sup> «Xarīdat ol-qasr».

տասերների պատմությունը»), «Ասար օլ-բելադ» («Քաղաքների հետքերը»), «Ֆերդոս օլ-քավարիխ»<sup>384</sup> («Որախտի պատմություններ») և այլն, աղավաղված տեղեկություններ և կեղծ հեքիաթներ են պահպանվել, որոնք Խայամի քառյակների մասին սխալ պատկերացում կազմելու պատճառ են դառնում:

Ս. Յեղայարն իր «Թարանեհայե Խայամ» քննախոսական երկում Խայամին ներկայացնում է նախ՝ որպես փիլիսոփա, ապա՝ որպես բանաստեղծ: Յեղայարը քառյակների պատկանելությունը Խայամին որոշում է՝ իիմք ընդունելով բանաստեղծի աշխարհայացքը, փիլիսոփայական գաղափարները: Կարծում ենք, որ այդ մոտեցումը բավական հետաքրքրական է: Նա «Թարանեհայե Խայամ»-ի նախաբանում նախ՝ մանրամասն քննում է տարբեր տեսակետներ և ապա իիմնավորում իր ընթոնումը: Ս. Յեղայարն իր վերոնշյալ ուսումնասիրության մեջ գտնում է, որ Խայամն այդ քառյակների միջոցով իր գաղափարներն արտահայտում է պարզ, անպաճույժ, գեղեցիկ և խորիմաստ մտածումներով, ոյութիչ ու քովչական երաժշտականությամբ՝ հոգեգամայլ տպավորություն և տրամադրություն ստեղծելով ընթեցողների մեջ: Նրա քառյակներն ինքնատիպ են և խորին անհատականության կնիք են կրում: Խայամն այն բանաստեղծներից է, որոնք տիրապետում են իրենց ընթեցողների հոգիներին:

Ս. Յեղայարն իր ուսումնասիրությունների ընթացքում դիմում է երկու գրքերի, որոնցում Խայամին վերագրված քառյակներից, իր կարծիքով, 14-ն են ներկայացված, և ամենից իին բնագիրը 1241-1242 թթ. «Մերսար օլ-էբադ»<sup>385</sup> («Աստղադիտարանի ծառաներ») վերնագրով գիրքն է, որի հեղինակը հայտնի սուֆի Նաջմենին Ռազին է: Ըստ Յեղայարի՝ այս գիրքը մեծ երաշխիք է, որովհետև դրա հեղինակը մոլեռանդ սուֆի է և Խայամին համարում է նյութապաշտ, զվարճանոլ ու բնապաշտ: Նա գտնում է, որ նյութապաշտությունը և բնապաշտությունը երբեք աստվածապաշտության և լուսավորության բարձր աստիճանին չեն հասնում: Նաջմենին Ռազին Խայամի մասին գրում է. «Ուրեմն տեսության արդյունքը հավատքն է, և գործողության արդյունքը՝ աստվածածանաչությունը: Փիլիսոփաները և բնապաշտներն այս

<sup>384</sup> «Nazhat ol-arvāh», «Tārīx ol-hokamā», «Āsār ol-bēlād», «Fērdos ol-tavārīx».

<sup>385</sup> «Marsād ol-Ēbād».

Երկու արժանիքից զուրկ են, ուստի մոլորվում ու կորչում են: Գիտնականներից մեկը, որ կույրերի շրջանում գիտությամբ ու իմաստությամբ է հայտնի, Օմար Խայամն է, որը զարմանքից ու թշվառությունից այս քառյակն է երկնել.

Շրջապտույտ է աշխարհը, և մենք գալիս ենք ու գնում,

Նրա ո՞չ սկիզբը գիտենք և ո՞չ էլ վերջը:

Ոչ ոք այս ճշմարտության մասին չգիտի՝

Որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

(Dar dāyērēī kāmadan o raftan māst, / Ān rā na badāyat, na nahāyat pēydāst; / Kas mī nazanad damī dar īn 'ālam rāst, / Kīn āmadan o raftan bēkojāst!)»<sup>386</sup>:

Ս. Հեղայաթն այս քառյակից ավելի է համոզվում, որ Խայամը սուֆի չեր: Արմանուշ Կոզմոյանը գրում է. «Որպես փիլիսոփա՝ Խայամն իրեն համարում էր Իբն-Սինայի (Ավիցեննա), Ալ-Ֆարաբիի ռացիոնալիստական միտումների հետևորդ: Այդ միտումներն անվերապահորեն դիմակայում էին սուֆիական-փիլիսոփայական աշխարհայացքին, որի ներկայացուցիչները (Սանայի, Ռումի, Զամի), սուֆիզմի շրջանակներում արված ամենաընթաց ազատախոհության կոչերով հանդերձ, չեին համատեղում իրենց կրոնափիլիսոփայական որոնումները գիտականի հետ»<sup>387</sup>:

Ահա երկրորդ քառյակի կապակցությամբ Նաջմեդին Ռազին ասում է. «Իսկ իմաստությունն ի՞նչ է. ապրելուց հետո մեռնել և կենդանանալ մահվանից հետո՝ ահա դրա պատասխանը: Միամիտ մոլորվածը և անմիտ կորածն ասում է.

Ամենակալը ի՞նչ բնական կազմվածք արարեց,

Կրկին ի՞նչ պատճառով նրան դժվարության մեջ գցեց:

Եթե տգեղ ստացվեցին մարդկային այս դեմքերը, ո՞վ է մեղավոր:

Եթե գեղեցիկ էին, աղարտելը ինչի՞ համար է:

(Dārandē čē tarkīb-e tabāy'ē ārāst. / Bāz az čē sabab fēkandaš andar kam o kāst? / Gar zēšt āmad īn sovar, 'ēyb kērāst? / Var nīk āmad, xarābī az bahr-e čē xāst?)»<sup>388</sup>:

<sup>386</sup> Hēdāyat S., *Tarānēhāyē Xayām*, p. 11.

<sup>387</sup> «Մարգարտաշար, Ղասական քառյակը Ռուդաքիից միմյանց Զամի», կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց՝ Կոզմոյան Ա., Եր., 1990, էջ 20:

<sup>388</sup> Hēdāyat S., *Tarānēhāyē Xayām*, p. 12.

«Մունես օլ-ահրար»<sup>389</sup> («Ազատականների մտերիմը») գիրքը 1362 թ. միակ ճշգրիտ և հավաստի աղբյուրն է, որում ներկայացվում են Խայամի տասներեք քառյակները, որոնք համահունչ են նրա փիլիսոփայությանն ու գրական ոճին: Ըստ Ս. Շեղայաթի «Թարանեհայե Խայամ» գրքի համարակալման՝ դրանք 8-րդ, 10-րդ, 27-րդ, 29-րդ, 41-րդ, 45-րդ, 59-րդ, 62-րդ, 64-րդ, 67-րդ, 93-րդ, 115-րդ, 127-րդ քառյակներն են, որոնք Նաջմեդին Ռազիի երկու՝ 10-րդ և 11-րդ քառյակների հետ, որոնցից 10-րդը նույնպես «Մունես օլ-ահրար»-ում կրկնվում է, 14-ն են:

Այսպիսով, 14 քառյակները դարձել են Ս. Շեղայաթի ուսումնասիրության նյութ, որտեղ ամեն մի բառ կամ արտահայտություն նա խորագնին մեկնաբանել է:

Արդեն նշել ենք, որ Օ. Խայամի հակառակորդները համոզված էին, որ նա իր կյանքի տարբեր շրջաններում ունեցել է տարբեր գաղափարներ, և նրա մասին պատմություններ էին հորինում: Երիտասարդ տարիքում նա անհավատ է եղել և տուրք է տվել գինեմոլությանը, իսկ տարիքն առնելով՝ հավատքի և աստվածանաշության ճանապարհն է բռնել: Ս. Շեղայաթը վերջինիս վերաբերյալ գրում է. «....Ասում են՝ տարիքի հետ նրա մտածելակերպն ու տեսակետները փոփոխվել են: Սկզբում նա անտարբեր, գինեմոլ և անհավատ էր, իսկ կյանքի վերջին օրերին բախտը նրան ժպտում է, և նա Աստծո ճանապարհին է վերադառնում: Մի գիշեր, երբ նա հարբած էր, ուժեղ քամի է փչում, և նրա գինու կուժը գետնին է ընկնում ու կոտրվում: Այդ պահին Օ. Խայամը բարկությամբ դիմում է Աստծուն և ասում.

Գինուս կուժը, Տե՛ր իմ, կոտրեցիր,

Իմ առջև վայելքի դուռը փակեցիր,

Ես եմ խմում, բայց դու ես դառնում կռվազան հարբեցող,

Յողն իմ բերանը, մի՞թե, Աստված իմ, դու հարբեցիր:

(Ēbrīq-e mēyē marā šēkastī rabī, / Bar man dar-e 'ēyš rā bē bastī, / Man mēy xōram o to mīkonī badmastī; / Xākam bēdahan magar to mastī rabī?)»<sup>390</sup>:

Աստված բարկանում է Խայամի վրա, և նրա դեմքն իսկույն սկանում է, ապա նա կրկին ասում է.

«Nākardē gonāh dar jahān kīst? Bēgū,

<sup>389</sup> «Mūnēs ol-Ahrār».

<sup>390</sup> Hēdāyat S., Tarānēhāyē Xayām, p. 13.

Ānkas kē gonah nakardē čon zīst? Bēgū;

Man badkonam o to bad mokāfāt dahī!

Pas farq-e mīyan-e man o to čīst? Bēgū» (էջ 13)<sup>391</sup>

(Ո՞վ այս աշխարհում մեղք չի գործել՝ ասա՛ / Նա, ով մեղք չի գործել, ինչպե՞ս է ապրում՝ ասա՛: / Եթե ես վատ անեմ, և դու պատժես, / Ուրեմն իմ և քո միջև ի՞նչ տարբերություն՝ ասա՛):

Ս. Յեղայաթն այս հեքիաթը Նաջմեդուին Ռազիի նախատինքներից ավելի նվաստացուցիչ է համարում:

Կարևոր հանգամանք է այն, որ «*Օմար Խայամ. քառյակ-ներ*» հրատարակության նախաբանում ակադ. Եղվարդ Աղայանը, այս քառյակը վերագրելով Խայամին, գրում է. «Խայամի քառյակների մեջ հիմնականը մատերիալիզմն է: Նրա բոլոր դրույթների ու տրամադրությունների ելակետն է մատերիալիստական աշխարհայացքը»<sup>392</sup>: Եվ հարգարժան ակադեմիկոսն իր տեսակետը հիմնավորում է փիլիսոփայական մի տեսությամբ, որը վաղուց ի վեր ստացել է *մեխանիստական դետերմինիզմ* անվանումը: Արվեստի հրաշագեղ երևույթներին այդ ժամանակ սովորաբար անդրադառնում էին հատու կացնատաշ տրամաբանությամբ: Ի վերջո, չբավարարվելով մատերիալիզմով, Աղայանը Խայամին համարում է նաև աթեիստ, իբրև թե Խայամը ծաղրել է արարիչ Աստծուն: Եվ որպես ապացույց բերում է վերը ներկայացված քառյակի մեկ այլ տարբերակ.

«Այս աշխարհում ո՞վ չի մեղանչում, ասա՛,

Չմեղանչողը ինչպե՞ս է շնչում, ասա՛.

Ես վատ անեմ, դու էլ վատով ինձ պատժես,

Տարբերությունն ի՞նչ է մեր միջումն, ասա՛»:

Մեր կարծիքով այս քառյակը գուտ կրոնական բովանդակություն և բնույթ ունի. կարծես Նարեկացու գոչի տակից դուրս եկած լինի, քանզի, իրոք, անմեղ մարդ չկա առաջին մեղսագործությունից հետո: Երկրորդ՝ վատին վատով պատասխանելը բնութագրական է հեթանոսական բարքին ու բարոյակարգին: Այստեղ խոսքն ուղղված է ոչ թե Աստծուն, այլ խրատ է մարդուն, որպեսզի չարին չարով չպատասխանի:

Այսպիսով, առանց պարզելու, թե Օմար Խայամին վերա-

<sup>391</sup> Քառյակների կողքին՝ փակագծերում, նշված համարները Ս. Յեղայաթի «Թարանեհայե Խայամ» ուսումնասիրությունից ենք ներկայացնում:

<sup>392</sup> Օմար Խայամ, Քառյակներ, Եր., 1959, էջ 8:

գրվող 200-1000 քառյակներից որն է խայամինը, և որը՝ ոչ, բանաստեղծը բնութագրվում է այդ բոլոր քառյակներով, որոնք իրապես հակասում են մեկը մյուսին: Ուստի նախ պետք է հիմնվել պարսկական աղբյուրների վրա, մեր պարագայում՝ Յեղայթի ուսումնասիրությունների, ով պատահի հասակից սկսել է լոջորեն ուսումնասիրել Օմար խայամի գրական ժառանգությունը:

Յեղայաթը գտնում է, որ Օ. խայամին ճանաչողը նման հեքիաթներ ու քառյակներ լսելիս անմիջապես կհասկանա դրանց կեղծ լինելը, իսկ նրա ապրած խիստ մոլեռանդ ու ճղճին միջավայրը թույլ է տալիս ավելի լավ ու խորությամբ ճանաչել բանաստեղծի իրական մտքերն ու հույզերը: Այսպես, նրա մասին հեքիաթներ շատ կան: Ասում են՝ խայամի մայրը նրա մահվանից հետո որդու հոգու խաղաղության համար Աստծուն շատ է աղոթում: Մի գիշեր խայամի հոգին հայտնվում է մորը և ասում.

«*Ēy sūxtēyē sūxtēyē sūxtanī,  
Ēy ātaš-e dūzax az to afrūxtanī;  
Tā kēy gūyī kē bar 'Omar rahmat kon?  
Haq rā to kojā bērahmat āmūxtanī?*» (Էջ 14)

(Այ այրված, այրված, այրվեցիր, / Այ դու, որ դժոխքի կրակը վառեցիր, / Մինչև ե՞րբ կասես՝ Օմարին խղճա, / Արդարությունը դու որտե՞ղ գրությամբ սովորեցիր):

Յեղայաթը տևական ուսումնասիրության շնորհիվ գտնում է Օ. խայամին պատկանող իսկական քառյակներից մի թույլ և համոզված էր, որ նրա՝ տարբեր տարիներին գրված քառյակները փոխանցում են միևնույն մտքերն ու գաղափարները, որոնց միշտ հավատարիմ էր մնացել: Նա նույնիսկ երիտասարդ տարիքում կյանքը դառն ու մռայլ էր տեսնում և միայն դառը գինին էր համարում փրկության միջոցը: Ներկայացնենք նրա երիտասարդ տարիների քառյակներից.

«*Ēmrūz kē nobat-e javānī-e man ast,  
Mēy nūšam az ān kē kāmrānī-e man ast;  
'Ēybam makonīd, gar čē talx ast xoš ast,  
Talx ast, čērā kē zēndēgānī-e man ast!*» (Էջ 15 և 60)

(Այսօր, քանի որ իմ ջահելության օրն է, / Գինի եմ խմում, և այն իմ երջանկությունն է: / Ինձ մի՛ նախատեք, թեկուզ դառն է, դուրեկան է, / Դառն է, քանզի իմ կյանքի նման է):

Ծերության տարիներին Խայամն իր քառյակով կրկին փաստում է, որ այս աշխարհից այն կողմ ոչինչ չկա՝ ոչ ապաշխարություն, ոչ լավ, ոչ վատ, ոչ ուրախություն, ոչ տիրություն, պետք է վայելել կյանքի ամեն րոպեն ու վայրկյանը:

«Man dāman-e zohd o tobē tēy xāham kard,

Bā mūy-e sērīd, qasd-e mēy xāham kard,

Pēymānēyē 'omr-e man bē haftād rēsīd,

Īn dam nakonam nēšāt kēy xāham kard?» (Էջ 15 և 98)

(Կզնամ ճգնության և ապաշխարության ճանապարհով, / Սպիտակ մազերով, կզնամ գինու ճանապարհով, / Կյանքիս բաժակը յոթանասունի է հասել, / Պետք է զվարճանամ, ինչու ոչ, այս պահին):

Այսպիսով, Ելնելով քառյակներում արծարծված գաղափարներից, Յեղայաթը կարողանում է հասկանալ, թե դրանցից որոնք են իսկապես Խայամինը, և որոնք են նրան վերագրված: Այստեղ ևս պիտի հիշեցնենք, որ արվեստի ստեղծագործությունը միանշանակ և միագիծ մեկնության չի ենթարկվում՝ ի տարբերություն գիտական հայտնագործության, քանզի գրական ստեղծագործության բովանդակությունն անսպառ է, և կարևոր է այն, թե ինչ մեկնակետով ես նրան մոտենում: Չպետք է մոռանալ նաև այն, որ Խայամի երգած գինին, սերը և այլ առարկաներ ու երևույթներ ունեն խորհրդանշական իմաստներ, և առանց այդ խորհրդանիշների իմաստն ու խորությունը հասկանալու հնարավոր չէ ճշմարիտ հիմքով լուսաբանել Խայամի և առհասարակ միջնադարի մյուս բանաստեղծների քերթողական արվեստը:

Ուստ արևելագետ ժուկովսկին ութսուներկու քառյակ է հայտնաբերել և վերագրել Խայամին, բայց դրանք այնպիսի քառյակներ են, որոնք վերագրվել են նաև ուրիշ հեղինակների: Յետագայում դրանց թիվը հարյուրի է հասնում: Ըստ Յեղայաթի՝ ժուկովսկին էլ կարող էր սխալվել, որովհետև իիմնվել է այնպիսի աղբյուրների վրա, որոնք հավաստի չեն և կարող էին սխալ տվյալներ փոխանցել: Քառյակների փոփոխումն ու աղավաղումը անխոհեմություն է, որը երբեմն խիստ կրոնականների կամ սուֆիների կողմից դիտավորյալ էր արվում: Ա. Յեղայաթը որպես օրինակ բերում է հետևյալ քառյակի առաջին տողի՝ «*Sādī bētalab kē hāsēl-e 'omr dāmī ast*» (Ուրախություն *gawānqawāghīr*, քանի որ

կյանքի հասույթը մի շունչ է<sup>393</sup>), մյուս տարբերակը, որտեղ «šādī bētalab»-ի փոխարեն գրված է «šādī matalab» (Ուրախություն մի՛ ցանկացիր): Ակնհայտ է, որ այս փոփոխությամբ քառյակի իմաստը փոխվում է, և բանաստեղծության կառուցվածքն ու իմաստը այդ փոփոխությանը չեն համապատասխանում: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ ցանկացած քառյակ, որը Խայամինը չէ, բայց համընկնում է նրա աշխարհայացքին, վերագրվել է Խայամին, և հակառակ՝ Խայամինը վերագրվել է մեկ ուրիշին: Յետևաբար, եթե «Մունես օլ-ահրար» գոքի նման ուրիշ փաստեր լինեին, շատ դյուրին կլիներ Խայամի քառյակները գտնել: Յեղայթը մեկ այլ օրինակ է ներկայացնում.

«Ēy ān kē gozīdēī to dīn-e Zartošt,  
Ēslām fēkandēī tamām az pas o pīš,  
Tā kēy nūšī bādē o bīnī rox-e xūb?  
Jāyī bēnshīn 'Omar kē xāhandat košt» (Էջ 19)

(Ո՞վ դու, որ Զրադաշտի կրոնն ընտրել ես, / Խսլամն ամբողջովին տակն ու վրա արել ես, / Մինչև երբ գինի ըմպես ու գեղեցկուիի տեսնես, / Մի տեղ նստի՛ր, Օմա՛ր, քանի որ քեզ սպանելու են):

Յեղայաթը համոզված ասում էր, որ այս քառյակը Խայամինը չէ, բայց վերագրված է նրան, և այն գտնում ենք նրա քառյակների շարքում: Զարմանալի չէ՝ արդյոք, որ այս քառյակը Խայամի քառյակների շարքում ենք տեսնում, և այս սպանալից քառյակը նրա կենդանության օրոք չի՝ հորինվել<sup>394</sup>:

«Խայեամի միտքը վերին աստիճանի ազատ է և համարձակ: Նա իր փիլիսոփայութեան ճշմարտութիւնն ապացուցելու համար մի քանի բառով փշում է կրօնական շատ ուսուցմունքներ և սրբացուած աւանդութիւններ»<sup>395</sup>, - գտնում է արձակագիր և

<sup>393</sup> Այստեղ ամբողջությամբ ենք ներկայացնում քառյակը. «Šādī bētalab kē hāsēl-e 'omr damī ast (Ուրախություն ցանկացիր, քանի որ կյանքի հասույթը մի շունչ է), Har zarē zē xāk-e Kēyqobādī o Jamī ast (Ամեն մի տարրը Քեյղոբադի ու Զամի հողից է), Ahvāl-e jahān o asl-e īn 'omr kē hast (Աշխարհի վիճակն ու կյանքի խսկական արգասիքը, որ է), Xābī o xīyālī o farībī o damī ast (Երազ ու ենթադրություն, խարկանք ու մի վայրկյան է)»:

<sup>394</sup> Տե՛ս Hēdāyat S., *Tarānēhayē Xayām*, էջ 19:

<sup>395</sup> Օմար Խայամ, Բաբա Թահիր և զանազան, թարգմանեց բնագրից՝ Միրզաեանց Յովսէփի, Թեհրան, «Մոդերն» հրատ., 1923, էջ 6:

### բանաստեղծ 3. Միրզաեանցը:

Փիլիսոփա Խայամը: Խայամի փոքր, բայց իմաստալից քառյակներում արտացոլված գաղափարները, որոնք նրա սրտի գաղտնիքների և կուտակված վշտերի ու մտքերի շտեմարանն են, ընթերցողի հոգու հայելին են դառնում: Դրանք արձագանքում են մարդու ներաշխարհի ալեկոծումներին: «Խայամի յուրաքանչյուր առանձին միտք կարող ենք որևէ բանաստեղծի և մեծ փիլիսոփայի մոտ գտնել, բայց ընդհանուր առմամբ ոչ մեկին Խայամի հետ համեմատել չի լինի: Նա իր ոճով և արվեստով բոլորից բարձր է: Նրա լրջախոհ արտաքինն ամենից շատ նրան որպես փիլիսոփա և մեծ բանաստեղծ է ներկայացնում, ինչպիսին եղել են Եպիկուրը, Գյոթեն, Շեքսպիրը և Շոպենիառուերը»<sup>396</sup>, - գրում է Ս. Յեղայաթը:

Խայամից ժառանգած բազմաթիվ գիտական, փիլիսոփայական և գեղարվեստական աշխատանքները մեզ չեն ուղղորդում դեպի նրա մտքի խորքում եղած գաղտնիքները: Նրա քառյակների յուրահատուկ փիլիսոփայական գաղափարներն են, որ բացահայտում են բանաստեղծի վերաբերմունքն ու ճաշակը կրոնի, հավատքի, տիեզերքի և Աստծո արարչագործության նկատմամբ: Ընթերցողն առաջին հերթին տեսնում է նրա ծաղրը՝ ուղղված հոգևոր սպասավորներին: Նա դատապարտում է հոգևորականներին, կրոնագետներին և սնոտիապաշտներին: Յեզնանքով է արտահայտվում դրախտի գոյության, հոգիների վերակենդանացման, հավիտենական կյանքի մակերեսային, գոեհիկ ըմբռնումների մասին:

«Gūyand: bēhēšt o hūr 'ēyn xāhad būd,  
Va ānjā mēy-e nāb o angēbīn xāhad būd;  
Gar mā mēy o m'ašūqē gozīdīm čē bāk?  
Āxar na bē 'āqēbat hamīn xāhad būd?» (Էջ 84)

(Ասում են՝ դրախտն ու հուրին իրականություն են լինելու, / Եվ այնտեղ անարատ գինի և մեղր է լինելու: / Եթե մենք գինի ու սիրուիի ենք ընտրել, ի՞նչ վախ: / Չէ՞ որ վերջը սա է լինելու):

Ըստ Ս. Յեղայաթի՝ Խայամը համոզված էր, որ սկիզբ չունեցողի (Ազալ) գաղտնիքը ոչ մեկը չգիտի և ոչ էլ կիմանա: Այն, ինչ հյուսվել է, միայն հեքիաք է. տիեզերքի գաղտնիքը ո՞չ գիտությունը կլուծի և կպարզաբանի, ո՞չ կրոնը: Աշխարհում, որտեղ ապ-

<sup>396</sup> Hēdāyat S., Tarānēhāyē Xayāt, p. 21.

րում ենք, ո՞չ երջանկություն կա և ո՞չ էլ պատիժ, իսկ անցյալը և ապագան անգո են, և մենք այդ երկուսի սահմանագլխին ենք: Ուստի պետք է որսալ պահը և, որքան հնարավոր է, վայելել ներկան.

«Bā bādē nēshīn kē malēk Mahmūd īn ast,  
Vaz čang šēno, kē lahn-e Dāvūd īn ast;  
Az āmadē o raftē dēgar yād makon,  
Hālī xoš bāš, zānkē maqsūd īn ast» (էջ 96)

(Գինու հետ եղի՛ր, որովհետև թագավոր Մահմուդը սա է: / Քնարի մեղեդին լսի՛ր, որովհետև Դավիթ ձայնը սա է: / Եկածներին և գնացածներին էլ մի՛ հիշիր, / Ներկան վայելի՛ր, որովհետև նպատակը սա է):

Այստեղ ակնհայտ է Օմար Խայամի աշխարհայեցողության նմանությունը, նույնիսկ նույնությունը Եպիկուրի ուսմունքի հետ: Սակայն չպետք է գոեհկացնել Օմար Խայամի երջանկաբաղադությունը, ինչպես հաճախ վարվել ու վարվում են Եպիկուրիզմի հետ՝ վերածելով այն պարզ հեղոնիստական ուսմունքի, ըստ որի՝ կյանքի նպատակն ամեն կարգի հաճույք ստանալն է, ինչպիսին էլ այն լինի և ինչ գնով էլ լինի: Այսինքն՝ վերացվում է բարոյականության խնդիրը: Եթե այդպես լիներ, ո՞չ Եպիկուրը և ո՞չ էլ Օմար Խայամը չեն լինի մեծագույն մտածողներ, որոնք անջնջելի հետք են թողել համաշխարհային մշակույթի պատմության մեջ և այսօր էլ մեծ ազդեցություն ունեն արվեստի և իմաստասիրության ասպարեզներում: Եպիկուրը հստակ տարրերակել է ազնվական հաճելի ապրումները գոեհիկ զվարճանքից և նախընտրել է միայն բարձրակարգ զգացումները: Իսկ Օմար Խայամի համար գինին և հաճույքներն ունեն խորհրդանշական բնույթ, ինչպես «Երգ Երգոց»-ում. «Արդ, Սողոմոնը, կամենալով անձառելի բաներ պատմել, դրանք նմանեցրեց մարմնեղենների, այսինքն՝ հարսի և փեսայի, եղբորորդու և օրիորդի, դստեր և աղավնու, ստինքների և խունկի, թափված յուղի, խնձորի, այծյամի... պարտեզի և նմանատիա՝ ակնահաճո, ախորժալուր և մտափափագ բաների»<sup>397</sup>:

Օմար Խայամը պարզապես ընդդիմացել է կյանքից կտրված ռացիոնալիստական մտակառուցումներին և նախընտրել է կեցության ամբողջականությունը՝ և մտածողությունը, և

<sup>397</sup> Ս. Գր. Նարեկացի, Մեկնություն Երգ Երգոցի, Ս. Էջմիածին, 2007, էջ 20, 21:

զգացմունքը, և կամքը իրենց ներդաշնակ չափավորության մեջ:

Խայամը, Ս. Յեղայաթի բնութագրմամբ, խիստ ճակատագրապաշտ էր և, ելնելով աստղագիտական ուսումնասիրությունների արդյունքներից, երկինքն ու տիեզերքն էր դատապարտում և ոչ թե Աստծուն՝ գտնելով, որ բոլոր աստղերը չարագուշակ են, և բախտաբեր աստղ գոյություն չունի: Աշխարհում, առարկայացված իրականության մեջ միայն մի իրողություն կա, և դա չարիքն է, որը գերակշռում է բարուն և ուրախությանը: Ըստ Խայամի՝ բնությունն անողոք է և բացառապես իր գործն է անում, գիշատիչ և խենթ դայակ է, որն իր զավակների մասին հոգ է տանում, ապա, հասած թե խակ, նրանց հնձում է: Խայամն ասում է, որ լավ կլիներ, եթե ծնված չլիներ, բայց քանի որ ծնվել է, ինչքան շուտ գնա, այնքան բախտավոր կլինի:

«A flāk kē joz qam nafzāyand dēgar,  
Nanahand bējā tā narobāyand dēgar,  
Nā āmadēgān agar bēdānand kē mā  
Az dahr čē mīkēšīm, nāyand dēgar» (էջ 63)

(Ի՞նչ է ավելացնում երկինքը՝ տիսրությունից բացի, / Մի բան չի դնի իր տեղը, մինչև մյուսը չտանի, / Նրանք, որ դեռ աշխարհ չեն եկել, եթե իմանային, թե մենք / Աշխարհում ինչե՛ր ենք քաշել, բնավ չեն ծնվի):

Ս. Յեղայաթին նույնպես իր ողջ կյանքի ընթացքում հետաքրքրել է մահը: Նրա առաջին գրական աշխատանքը, որը պատրաստել էր դպրոցում, մի պատի թերթ էր, որին «Սեղայեամվաթ» («Ննջեցյալների ձայնը») վերնագիրն էր տվել: Նա արտասահմանից հաճախ էր ընկերներին նամակներ գրում: Այդ նամակներից մեկում, որն ուղղված էր Թաղի Ռազավիհն, գրում է. «Իրոք ամաչում եմ, որ չկարողացա Ձեզ այցելության գալ: Պատճառները մի քանիսն են: Նախ՝ ես իրարանցումից խուսափում եմ, որովհետև խիստ ֆաթալիստ եմ դարձել.... և հետո՝ շատ հոգնած եմ և անտարբեր ամեն ինչի նկատմամբ: Միայն օրերն եմ անցկացնում. ամեն գիշեր լավ խմելուց հետո հողում եմ թաղվում»<sup>398</sup>:

Ընդունելով Խայամի՝ մահվան մասին գաղափարները՝ Յեղայաթը դրանք նմանեցնում է նիրվանայի բուդդայական փիլիսոփայությանը: Կյանքի, մարդկանց և աշխարհի նկատմամբ Խա-

<sup>398</sup> Կատուզյան Մ. Ա., *Sādēq Hēdāyat va marg-e nēvīsandē*, Tehran, 1384, p. 73.

յամի հոռետեսությունը, ինչպես նաև արարշագործության հիմքերի դեմ նրա խռովությունը բխում են. իր փիլիսոփայական սկզբունքներից: Յեղայաթը գտնում էր, որ Շոպենհաուերը նույնպես իր հոռետեսությամբ հանգել էր հենց նույն կարծիքին, և, ըստ Շոպենհաուերի, «Եա, ով հասնում է այն աստիճանին, երբ ինքն իրեն է ժխտում կամ ըստ մեզ իրական թվացող աշխարհն իր բոլոր մոլորակներով և Ծիր կաթիններով, ի՞նչ է: Ոչինչ»<sup>399</sup>: Իսկ Օ. Խայամն ասում է.

«Bēngar zē jahān čē tarf bar bastam? Hīč,  
Vaz hāsēl-e 'omr čīst dar dastam? Hīč,  
Šam'-e tarabam, valī čo bēnšastam, Hīč,  
Man jām-e Jamam, valī čo bēškastam, Hīč» (էջ 89)

(Սայիր՝ այս աշխարհից մի ակնթարթով իեռացա. ոչինչ, / Կյանքից ի՞նչ էր ձեռքբերում. ոչինչ, / Բոցավառ մոմ եմ, բայց որ մարեցի, ի՞նչ եմ. ոչինչ, / Ես Զամշիդի գավաթն եմ, բայց որ փշովեցի, ի՞նչ եմ. ոչինչ):

Խայամի համար հստակ էր այն, որ մահն ամենուր է: Նա մահը համարում էր մանր նյութերի ծևափոխում՝ շրջապտույտ, երբ նյութերն ուրիշ նյութերի միաձուլումից կրկին կենդանանում են, իսկ հոգին մահվանից հետո այլևս գոյություն չունի: Յեղայաթը Օ. Խայամի քառյակների վերլուծությունից եզրակացնում է, թե Խայամը ցանկանում էր, որ մարդը երբեք ծնված չլիներ, որովհետև նա չգիտի իր սկիզբը և վերջը: Մարդու գոյությունն անգությակատագրի ազդեցության տակ է, այդ իսկ պատճառով հաջողություն ձեռք բերելու համար կարիք չկա չարչարվելու, քանի որ թագավորի և աղքատի վերջը նույնն է: Երկուսն էլ հող են դառնալու և բույսի տեսքով շարունակելու են իրենց կյանքը: Յետևաբար՝ տիսրությունն ու թախիծը պետք է մի կողմ թողնել: Նա երկու բան էր առաջարկում ներկա կյանքը վայելելու և վիշտը մոռանալու համար, այն է՝ կին ու գինի:

«Xayām, agar zē bādē mastī, xoš bāš;  
Bā lālē roxī agar nēšastī, xoš bāš;  
Čon 'āqēbat-e kār-e jahān nīstī ast,  
Ēngār kē nīstī, čo hastī xoš bāš» (էջ 98)

(Խայամ, եթե գինուց հարբած ես, ուրախ եղիր, / Եթե մի գեղեցկուհու հետ ես, ուրախ եղիր, / Որովհետև վերջիվերջո աշ-

<sup>399</sup> Hēdāyat S., Tarānēhāyē Xayām, p. 30.

խարիի ավարտը ոչինչ է: / Կարծի՛ր, թե չկաս. քանի դեռ կաս,  
ուրա՛խ եղիր):

Կարծում ենք՝ այսպիսի տրամադրություններն են բնութագրական նաև Մեծն Թումանյանի քառյակում.

«Ես է, որ կա... ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր:

Ես էլ կերթա՝ հանց երազում, թասըդ բե՛ր:

Կյանքն իոսում է տիեզերքում զընգալեն,

Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասըդ բե՛ր»<sup>400</sup>:

Ըստ Յեղայարի՝ Օ. Խայամն ասում է, որ նյութերը մի այլ տեղ մի ուրիշ առարկայի մեջ են իրենց գոյությունը շարունակում, իսկ ինքնուրույն հոգի, որն ասում են, թե մահվանից հետո ապրում է, գոյություն չունի: Եթե բախտավոր լինենք, մեզանից գոյացած նյութը գինու կարաս կդառնա և շարունակ գինարբութի մեջ կլինի: Այսպիսով, նյութերի վերաբերյալ փիլիսոփայությունը Խայամի վիշտն ու թախիծն են դառնում: Նա գինու կարասի մեջ գեղեցկուհիների է տեսնում, որոնք իոդ էին դարձել, բայց անսովոր կյանքով էին ապրում, որովհետև նրանց մեջ գինու նուրբ ոգին էր եռում:

«Lab bar lab-e kūzē bordam az qāyat-e āz,

Tā zū talabam vāsētēyē 'omr-e dērāz,

Lab bar lab-e man nahād o mīgoft bērāz:

Mēy xor, kē bēdīn jahān nēmīāyī bāz!» (Էջ 97)

(Ընչաքաղցությունից շուրթերս որի կուժի շուրթերին, / Նրան խնդրեցի, որ լինի միջնորդ երկար կյանքին, / Իր շուրթերը շուրթերիս որեց ու ասաց գաղտնիքը. / Գինի խմի՛ր, քանի որ այս աշխարհ չես զա կրկին):

«In kūzē čo man 'āšēq-e zārī būdē ast,

Dar band-e sar-e zolf-e nēgārī būdē ast;

In dastē kē bar gardēn-e ū mībīnī.

Dastī ast kē bar gardēn-e yārī būdē ast!» (Էջ 77)

(Այս կուժն ինձ նման ողբի սիրահար է եղել, / Սիրուհու վարսակապի ծայրին է եղել: / Այս բռնակը, որ նրա վզին ես տեսնում, / Այն ձեռքն է, որ սիրուհու վզին է եղել):

Դայ բանաստեղծ է. Չարենցն էլ է անդրադարձել Օ. Խայամին: Նա էլ գտնում էր, որ կյանքը հավերժական է, և ամեն մի

<sup>400</sup> Թումանյան Ր., Բանաստեղծություններ, քառյակներ, պոեմներ, լեգենդներ և բալլադներ, կազմեց՝ Կ. Ժ. Սաֆրազյան, Եր., 1986, էջ 84:

մահկանացու իր մեջ նորի առաջացման ծիլեր է սնում: Այս առթիվ նա գրել է.

«Դու մի օր աչքերը կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա,

Կզնաս, կանցնես աշխարհից, որ ուրիշը քո տեղ գոյանա:

- Այն դու ես, իմաստուն, այն դու,- բայց արդեն դարձած մի ուրիշ.

Դաստատեց, ժխտելով նա քեզ, որ ուրիշը քո տեղ գոյանա»<sup>401</sup>:

Գինին Օ. Խայամի քառյակներում խնդիրներից ծերբազատվելու և վշտերն ամոքելու հիմնական միջոցն էր: Ս. Շեղայթն այս մասին գրում է. «Գիներգությունը Խայամի քառյակներում կարևոր տեղ ունի: Սակայն Խայամը իրն Սինայի պես չափավոր էր գինի խմելու մեջ, բայց գինու գովքը նրա քառյակներում չափազանց շատ է: Միգուցե նրա մտադրությունը կրոնական անթույլատրելի արարքների գովքն է»<sup>402</sup>: Շեղայաթը մեջբերում է կատարում Խայամի «Նոուռուզնամե»-ից և ասում, թե «Նոուռուզնամե»-ի մի գլուխը հատկացված է գինու օգտակարությանը, որը հիմնված է հեղինակի ծեռք բերած փորձառության վրա: Նա այնտեղ հիշատակում է Ավիցեննայի ու Մուհամմադ Ալի Զաքարիա Ռազիի անունները և ասում. «Մարդու համար գինուց օգտակար ոչ մի բան չկա, մանավանդ պարզ և դառը գինուց. այն վիշտն ամոքում է և սիրտն ուրախացնում (էջ 70)»<sup>403</sup>:

«'Omrat tā kēy bēxod parastī gozarad,

Yā dar pēy-e nīstī o hastī gozarad;

Mēy xor kē čonīn 'omr kē qam dar pēy-e ūst

Ān bēh kē bē xāb yā bē mastī gozarad» (Էջ 98)

(Կյանքդ եթե քեզ գտնելու տենչով անցնի, / Լինել թե չլինելու իմաստը պարզելով անցնի, / Գինի խմի՞ր: Քանի որ այս կյանքի հիմքը տրտմությունն է, / Ավելի լավ է քնով կամ գինիով անցնի):

«Բանաստեղծ Խայամը» բաժնում Ս. Շեղայաթը Օ. Խայամին ներկայացնում է որպես բանաստեղծ և համոզված է, որ Խայամի քառյակներն այնքան պարզ են ու սրտամոտ, որ անմիջապես գերում են ընթերցողին: Քառյակը չափածո ստեղծագոր-

<sup>401</sup> Եղիշե Զարենց, Երկեր, Եր., 1985, էջ 313, 314:

<sup>402</sup> Hēdāyat S., Tarānēhāyē Xayām, p. 38.

<sup>403</sup> Նույն տեղում, էջ 38:

ծության փոքր տեսակներից է, և այս փոքր կաղապարների մեջ Խայամը բարձր վարպետությամբ է ներկայացնում իր մտքերն ու գաղափարները: Յեղայաթն այս կապակցությամբ նշում է, որ, ըստ արևելագետ Ա. Քրիստենսենի, Խայամի քառյակները հանգավորված պարսկական բանաստեղծություններ են, իսկ Ն. Շարթմանի կարծիքով դրանք երգեր են ու հաճախ եղանակներով էլ երգվում են, և հետագայում արաբները պարսիկներից ընդօրինակեցին քառյակների հանգն ու չափը:<sup>404</sup> Օրինակ.

«Hēngāmē sabūh ēy sanamē farox pēy,

Bar sāz tarānēī o pīš āvar mēy;

Kafkand bē xāk sad hēzārān Jam o Kēy

Āmadanē tīr mah o raftanē dēy»(էջ 92)

(Լուսադեմին [գինու] ումազ, ո՞վ լուսասփյուռ գեղեցկուիի, / Յորինիր մի երգ և մատուցիր գինին. / Որը հարյուր հազար Զամշիդ ու Քեյխոսրով հանձնեց հողին / Երբ թիր ամիսը եկավ, և դեյը գնաց [քանի ամառ ու ձմեռ եկավ ու գնաց]):

Յիշատակելով պոետիկայի հմուտ գիտակ Շամս էդ Ղին Ղեյս ալ-Ռազիին՝ Արմանուշ Կոզմոյանը նշում է, որ արաբական պոեզիան անտեղյակ է եղել քառյակի ձևին, և միայն ուշ շրջանում են արաբ բանաստեղծները գրել այդ օտարածին ժանրային ձևով՝ պարսկերեն թարանե և դոբեյթի անվանումը փոխարինելով արաբերեն ռոբայի բառով<sup>405</sup>:

Ս. Յեղայաթը, Օ. Խայամին համեմատելով Յաֆեզի, Սաադիի, Մոլավիի, Աբարի, Խաղանիի և այլոց հետ, գտնում էր, որ նա գերազանցել է բոլորին, քանի որ նրանք են ոգեշնչված հետևել Խայամի ուղուն: Անհրաժեշտ է նշել, որ Օ. Խայամը Ս. Յեղայաթին սիրելի և հարգելի էր նաև՝ որպես բանաստեղծ և ապա՝ իբրև գիտնական: Այս մասին Ս. Յեղայաթը գրում է. «Յաֆեզն ու Սաադին նյութերի վերածննդի, աշխարհի անկայության և վայրկյանների վայելումի ու գինեմոլության մասին բանաստեղծություններ են գրել, որոնք ուղղակիորեն Խայամից են ընդօրինակել, բայց չեն կարողացել նրա վեհությանը հասնել»: Յեղայաթը, խոսքը շարունակելով, մեկ այլ հատվածում նշում է, որ թեկուզ Յաֆեզը, Մոլավին և որոշ խոհեմ բանաստեղծներ

<sup>404</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>405</sup> Տե՛ս «Մարգարտաշար, Դասական քառյակը Ռուդաքիից մինչև Զամի», կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց՝ Կոզմոյան Ա., Եր., 1990, էջ 5:

Խայամի մտքերի արտահայտման խոռվությունն ու քաջությունը զգացել էին և երբեմն վեճի բռնվել, բայց իրենց մտքերը քողարկել և այլաբանորեն են արտահայտել, այդ պատճառով էլ նրանց բանաստեղծությունները մի քանի մեկնաբանություններ են ստացել: Օրինակ՝ Յաֆեզի ներկայացրած գինին որոշ դեպքերում պարզապես խաղողի հյութ է դառնում, որը քողարկում է սուֆիական ընկալումը: Իսկ Խայամը գաղտնիքների ու ակնարկների կարիք չեր զգում և մտքերն արտահայտում էր պարզորոշ: Նա իր այս պարզ, ազատ և հստակ ոճով տարբերվում է մյուսներից<sup>406</sup>:

Լուսնյակ գիշերները, ավերակները, բուն (մորդե հաղ), գերեզմանները, գարնանային խոնավ օդը Խայամին շատ էին ոգեշնչում, իսկ գարնան թարմությունն ու շուքը, ծաղիկների բույրը և գույնները, մարգագետինը, աղբյուրը, մեղմ զեփյուրն ու դյութիչ բնությունը գեղեցկուիհիների քնարի մեղեղիների ներքո և նրանց ջերմ համբույրները, գարնանային եղանակը և նոուրուզը Խայամի հոգու վրա խոր ազդեցություն էին քողնում:

«Con abr bē nowrūz roxē lālē bēšost,  
Bar xīz o bējām bādē kon 'azm dorost,  
Kīn sabzē kē ēmrūz tamāšāgahē tost,  
Fardā hamē az xākē to bar xāhad rost!» (Էջ 75)

(Ինչպես ամպը Նոուրուզին կակաչի երեսը լվաց, / Վեր կաց և հստակ հոգով գավաթի մեջ գինի լից, / Զմրուխտ խոտերն այս, որ այսօր աչքիդ առաջ են, / Դրանք ամենը վաղը ծիլ կառնեն քո աճյունից):

Օ. Խայամը գիտնական, մաթեմատիկոս և աստղագետ էր, սակայն մաթեմատիկան ու աստղագիտությունն ի զորու չեին նրան հետ պահելու բնությունից: Նա իր բացառիկ և անզուգական տաղանդով միայն մի քանի պարզ բառով նկարագրում էր իր ապրածն ու զգացածը և ընթերցողին իր հետ մասնակից դարձնում իր վայելքին: Նա ապրում էր մի ժամանակահատվածում, երբ բանագետների մեծ մասն արաբական բարդ բառապաշարի ազդեցությամբ բառախաղերով էր ցուցադրում իր իմացածը: Խայամի պարզ, հասկանալի քայլակները ոչ միայն բարձր տրամադրություն էին փոխանցում, այլև դրանց միջոցով նա իր սրտի խոսքն էր արտահայտում.

<sup>406</sup> Հմմտ. Hēdāyat S., Tarānēhāyē Xayāt, Էջ 45:

«Mahtāb bē nūr dāmanē šab bēškāft,  
Mēy nūš, damī xoštar az īn natvān yāft,  
Xoš bāš o bēyandīš kē mahtāb basī,  
Andar sar-e gūr yēk bē yēk xāhad tāft!» (Էջ 90)

(Լուսնկան իր լույսով գիշերվա քղանցքն է պատռում,  
/ Գինի ըմպի՛ր, քանի որ սրանից լավ պահ չես գտնի, / Զվա՛րթ  
եղիր ու խորհի՛ր, թե լուսինը քանի անգամ / Այս շիրիմներից  
ամեն մեկը կլուսավորի):

Խայամը որոշ քառյակներում հմտորեն բառախաղերի է  
դիմում, օրինակ՝ «հīč» (ոչինչ) բառն է օգտագործում, որին անդ-  
րադարձել ենք վերևում: Նրա հակառակորդներն ասում են, թե  
դա իր աղքատ բառապաշարի կամ հանգավորման արդյունքն է,  
բայց այդպես փիլիսոփայական խոր մտքեր և գաղափարներ են  
քողարկված: Դեղայաթը, քաջ գիտակցելով հեղինակի մտայնու-  
թյունը, քառյակների մի մասն առանձնացնում և դրանց «Hīč ast»  
(«Ոչինչ է») վերնագիրն է տալիս: Նա մեկ այլ քառյակում օգտա-  
գործում է «քու-քու» (կկու) բառը և իր վարպետ գրչով, գրական  
բարձր մակարդակով փոխանցում, թե ուր են անցյալի այդ  
փառքն ու շուքը: «Քու-քու» պարսկերեն ոչ միայն «քռչուն» է  
նշանակում, այլև «ո՞ւր է, ո՞ւր է»:

«Ān qasr kē bar čarx hamī zad pahlū,  
Bar dargah-e ū šahān nahādandī rū,  
Dīdīm kē bar kongērēaš fāxtēī  
Bēnšastē hamī goft kē: «kū-kū, kū-kū?» (Էջ 73)

(Այն պալատը, որը հենվում էր Երկնքին, / Թագավորներ  
երես դրին նրա դարպասին, / Տեսանք՝ մի կկու, նրա ատամնա-  
վոր աշտարակին / Նստած, ծայն էր տալիս. «Ո՞ւր են, ո՞ւր են»):

Մեկ այլ օրինակ.

«Ān qasr kē Bahrām darū jām gērēft,  
Āhū bačē kard o rūbah ārām gērēft,  
Bahrām kē gūr mīgērēftī hamē ’omr,  
Dīdī kē čēgūnē gūr Bahrām gērēft?» (Էջ 72)

(Այն պալատը, որտեղ Բահրամը գավաթ էր բարձրացնում, /  
Եղնիկը ձագ էր բերում, և աղվեսը՝ հանգիստը վայելում, / Բահ-  
րամը, որ ամբողջ կյանքում ցիռ (gūr) էր որսում, / Տեսա՞ր, թե  
գերեզմանը (gūr) ինչպես Բահրամին որսաց):

Խայամից մի ուրիշ արժեքավոր հիշատակ է մեզ հասել,

որը կոչվում է «Նոռուռուզնամե»<sup>407</sup>: Այս մասին Ս. Յեղայաթը գրում է. «Իմ սիրելի ընկեր Մոջթաբա Մինովիի ջանքերով «Նոռուռուզնամե»-ն իրատարակվեց: Այս գիրքը պարզ ու աննման պարսկերենով է գրված և ապացույցն է այն բանի, որ քառյակների հեղինակի հզոր գրչով է գրված: Պարսկերեն արձակ գրականության մեջ ամենասահուն և ամենալավ երկերից մեկն է, իսկ նախադասությունների կառուցվածքը պահլավերենին շատ մոտ է: Այդ ժամանակաշրջանի գրականությունից շատ թե քիչ հայտնի են եղել «Միասաթնամե»-ն («Գիրք կառավարման»), «Չհար մաղալե»<sup>408</sup>-ն («Չորս պատմություն») և այլն, բայց դրանք գրական արժեք չեն ներկայացրել, ինչպես «Նոռուռուզնամե»-ն»<sup>409</sup>:

Յեղայաթը նշում է, որ կան կարծիքներ, որ «Նոռուռուզնամե»-ն խայամը չի գրել, այլ մեկ ուրիշը: Յեղայաթի կարծիքով, եթե դա խայամը չէ, ապա նրան շատ մոտ մարդ է:

Այսպիսով, մենք Ս. Յեղայաթի գործադրած ջանքերի շնորհիվ հնարավորություն ունեցանք ավելի լավ ճանաչելու խայամին: Նա իրանում առաջինն էր, որ այդպիսի ջանադրությամբ ընթերցողին ծանոթացրեց քառյակների հանճարեղ վարպետի հետ: «Սադեղ Յեղայաթը խայամագիտության հիմնադիրներից է իրանում և նրան ճանաչելի դարձնելու համար ոչ մի ջանք չի խնայել... Նրա այս ուսումնասիրությունից կռահում ենք, որ նա ոչ թե հապճեաւ, այլ խոհեմությամբ է մոտեցել իր քննելիք նյութին: Նա, որոնումներ և խորաթափանց ուսումնասիրություններ կատարելուց հետո, երբ խայամին ճանաչելու համար բոլոր դրները փակ է տեսնում, աշխատում է քառյակների ուսումնասիրությամբ ճանաչել նրան»<sup>410</sup>, - գրում է պարսիկ գրող և գիտնական Մահմուդ Քաթիրային:

Իրանի դասական արձակագիրների և բանաստեղծների մեջ Ս. Յեղայաթն ամենից շատ գնահատում և ընդունում էր Օմար խայամին, Աբոլ Ղասեմ Ֆիրդուսուն և Յաֆեզին: Օ. խայամին ընդունում էր որպես մտավորական և փիլիսոփա: Նրա մտածելակերպը և վերաբերմունքն աշխարհի, կյանքի, արարչագործության և մարդկության նկատմամբ հարազատ էին Ս. Յեղայաթին: Նա տարիներ շարունակ զբաղվել է Օ. խայամի ստեղ-

<sup>407</sup> «Nōwrūznāmē».

<sup>408</sup> «Sīasatnāmē», «Čhār maqālē».

<sup>409</sup> Hēdēyat S., Tarānēhāyē Xayāt, p. 49.

<sup>410</sup> Ēttēhād H., Pajūhēšgarān-e mo 'āsērē Iran, p. 241.

ծագործությունների ուսումնասիրությամբ, ձգտել ճշմարտությունը զատելու կեղծիքից: Ուսումնասիրության արդյունքը «Թարանեհայե Խայամ»-ն է, որը գրականագիտական մեծ նվաճում էր, և որն անառարկելիորեն ընդունում են բոլոր գոռղներն ու տեսաբանները: Սադեղ Չուբաքի կարծիքով մինչ այժմ Յեղայթի նման Խայամի մասին ոչ ոք այդպիսի բարձրակարգ, նրբաճաշակ և խորազնին ուսումնասիրություն չի կատարել<sup>411</sup>: Յեղայթի համոզմամբ Օմար Խայամը միանգամայն պարզ ու հասկանալի, համակողմանիորեն է ընթերցողին ներկայացնում իր ասելիքը: Եվ այստեղ պատահական բան չկա: Ա. Յեղայթը համոզված էր, որ Օ. Խայամն իր ժամանակի ոգու փիլիսոփան է, այդ պատճառով է, որ գանգատներն ուղղված են երկնքին, երկրին և Աստծուն: Ա. Կոզմոյանի ամփոփ գնահատականը Խայամյան քառյակի վերաբերյալ հետևյալն է. «Քառյակի զարգացման պատմության մեջ Օմար Խայամի ստեղծագործությունը նոր որակ է, թռիչք՝ թեմաների բազմազանությունից դեպի փիլիսոփայական ազատախոհության ոլորտ: Ժանրային ձևի բարձրագույն կետը, որպիսին իրավամբ համարվում են Խայամի քառյակները, ենթադրում է երկու էական հատկանիշ: Առաջին՝ ժառանգականություն, նախորդների նվաճումների որոշակի կատարելագործում և երկրորդ՝ մի նոր, արմատական, որակական փոփոխություն: Երկու հատկանիշն էլ բնորոշ են Խայամի քառյակներին»<sup>412</sup>:

<sup>411</sup> Տե՛ս Qāsēmzādē M., նշվ. աշխ., էջ 151:

<sup>412</sup> «Մարգարտաշար. Դասական քառյակը Ուուդաքիից մինչև Զամի», էջ 19: Տե՛ս նաև՝ Կօզմօյն Ա. Կ., *Рубаи в классической поэзии на фарси (X-XII вв)*, Еր., 1981, էջ 79:

## Բ) ԿՈՄԻՏԱՍԻ ՄԾԱԿԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻ ԵՐԳԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՊԱՐՍԻՑ ԲԱԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

20-րդ դարում պարսկական և հայկական մշակույթների բնագավառում, հատկապես ժողովրդական արվեստի ասպարեզում նշանակալի իրադարձություններ են տեղի ունեցել: Իրանում մշակութային կարևորագույն առաջընթացի երախտիքը պատկանում է Սադեղ Շեղայարին, իսկ հայկական միջավայրում՝ Կոմիտասին:

Խոր ու անմիջական են երկու հեղինակների կապերը ժողովրդական երգարվեստի ոլորտում: Եթե Ս. Շեղայարի համար ժողովրդական երգարվեստի հմայքը բացահայտվել է դեռ վաղ հասակում և պայմանավորված էր նրա միջավայրի, ընտանիքի գործոններով, ապա Կոմիտաս վարդապետի դեպքում արյան կանչն է խոսել: Չմոռանանք, որ հայերենին ու հայկական մշակույթին նաև հաղորդակից է դարձել բավական հասուն տարիքում:

Դարերի խորքում պահպանված իր ժողովրդի հոգու հարստությունը Կոմիտասին փոխանցվում և նրա մեջ տպավորվում էր երգարվեստով, որի միջոցով նաև բացահայտում էր հայ ժողովրդի կյանքի գեղեցկությունն ու խորհրդավորությունը, հայի եռւթյունն ու աստվածային առաքելությունը, որոնք արտահայտում էր իր զգայուն ու տիեզերատրով սրտով, արվեստագործի իր հանճարով՝ լուսավոր պարզությամբ վերականգնելով հայոց բանիքուն երգաշխարհը: Շետևաբար՝ մեզ համար հասկանալի է հետևյալ թեավոր ասույթը. «Կոմիտասի ամեն մի երգ հայ ժողովրդի մարգարիտն է»<sup>413</sup>:

1930 թ.՝ Ս. Շեղայարը Ֆրանսիայից վերադառնալուց հետո, պարզորոշ գիտակցում է, որ իր առաջին գործը ժողովրդական բանավոր խոսքարվեստի նյութերը կորստից փրկելը պիտի լինի: Ֆրանսիայում ապրելու տարիներին նաև ուսումնասիրում է այլ ազգերի ժողովրդական երգերը, այդ թվում՝ հայկականը: Ս. Շեղայարը ժողովրդական երգերին անդրադարձել է իր «*Oսանե*» ժողովածուում և առանձին հոդվածներում: 1939 թ. գրում է մի հոդված՝ «*Թարամեհայե ամյանե*» («ժողովրդական երգեր») վերնագրով, և տպագրում «Մուսիղի» ամսագրի 6-րդ և 7-րդ համար-

<sup>413</sup> «Ավանգարդ» շաբաթաթերթ, Եր., 18 նոյեմբերի 1969 թ., N 137 (7111):

ներում: Նա, երաժշտագետ և երգահան չլինելով, քաջ գիտակցում էր պրոֆեսիոնալ երաժշտության տարբերությունը ժողովրդական երգերից և համոզված էր, որ այդ երգերը մեծատաղանդ երաժշտագետների ստեղծագործությունների ոգեշնչման աղբյուր են եղել. «Օրինակ՝ անվանի երաժիշտներ Ա. Մուսորգսկին, Ա. Բորոդինը, Ն. Ռիմսկի-Կորսակովը և Պ. Չայկովսկին, արևելյան երաժշտությունից ոգեշնչված, աշխարհահաճո երաժշտություն են ստեղծել, իրականությամբ Արևելքն Արևմուտքին շաղկապել և իրենց անունը հավերժացրել»,- գրում է Յեղայաթը<sup>414</sup>: Նա գտնում է, որ արվեստի և գեղեցկության զգացողությունը միայն բարձրակարգ և կրթված խավին չի պատկանում: Յասարակ ընտանիքներում նույնպես տաղանդաշատ մարդիկ են ծնվում, որոնք կարողանում են անկաշկանդ բառերի և երգերի միջոցով. արտահայտել իրենց զգացմունքները: Ըստ Ս. Յեղայաթի՝ մեր օրերում գիտությունը փաստում է, որ մարդը հնագույն ժամանակներում՝ նախքան հնդեվրոպական լեզվաընտանիքների տեղաշրջը, կարողացել է հնչունները քերթողական արվեստի տաղաչափական կանոններով արտաքերել, նույնիսկ հաճախ նկատվել է, որ հեռավոր երկրներում, որտեղ հաղորդակցական կապեր չեն եղել, ժողովրդական երգերն արդեն կային, որոնք ոճով և բովանդակությամբ իրար նման էին: Յետևաբար՝ ենթադրվում է, որ այդ ստեղծագործությունների նախնական կառույցը վերագրվում է այն ժամանակաշրջանին, երբ ցեղերը միասնական կյանք էին վարում:

Այդպես իրանի գավառներում ժողովրդական արվեստի նմուշների հավաքմամբ էր զբաղվում իրանցի բանագետը: Պատահական չպետք է համարել նաև էջմիածնի վանքից Կոմիտասի հաճախակի այցերը գյուղեր, որտեղ զբաղվում էր ժողովրդական երգեր հավաքելով: Բանահյուսությունը՝ որպես ազգային արժեք, բանագետներին մղում էր հետևողական ուսումնասիրությունների: «Թեկուզ պոեզիան և երաժշտությունը քաղաքակրթության հետևանքով ողջ աշխարհում առաջադիմել են, բայց ժողովրդական երգերը համարյա առանց փոփոխության պահպանվել են իրենց սկզբնական միջավայրում և քնարական ստեղծագործության հիմքն են համարվել: Այդ իսկ պատճառով արժանի են

<sup>414</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 204.

արվեստի բագինում բարձր գնահատվելու»<sup>415</sup>, - ասում է Ս. Շեղայաբը:

Ավելի հստակ է ժողովրդական արվեստին Կոմիտաս վարդապետի տված գնահատականը. «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՞ք և սովորե՞ք նրանից»<sup>416</sup>, - հորդորում է արվեստագետը:

Կոմիտաս վարդապետը 1900-ական թվականներին որոշում է Մանուկ Աբեղյանի հետ իրատարակել ժողովրդական երգերով սկսվող երգարան: Նրանք բազմաթիվ խաղեր են գրի առնում ընկերներից ու աշակերտներից: Մանուկ Աբեղյանն այդ մասին գրում է. «Ես էլ, Կոմիտասն էլ ունեինք բավական թվով քառյակներ ժողոված, ձեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից և աշակերտներից... Բայց այդ ամենը բավական չհամարելով՝ ամռանն իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական երգեր»<sup>417</sup>:

Ս. Շեղայաբը նույնպես շարունակ խրախուսել է իր հայրենակիցներին՝ բանահավաքչական աշխատանքներին նրանց մասնակից դարձնելու համար: Բանահյուսությունը՝ որպես ազգային արժեք, ինչու չէ, նաև ինքնաբուխ հակումները և պարտքի մեջ գիտակցությունը բանագետներին մղել են այս հոգեբուխ և սրտառուչ քայլին:

Ս. Շեղայաբը ժողովրդական երգերի ուսումնասիրության ժամանակ անդրադառնում է մանկական, մայրերի ու դայակների երգերին և հետաքրքիր զուգահեռներ անցկացնում ժողովրդական մի երգի պարսկական և հայկական տարբերակների միջև: Ներկայացնենք երկու արվեստագետների երկխոսության մեկ օրինակ:

«Օսանե»-ի մի հատվածում մանկական երգերի մասին Ս. Շեղայաբը հետևյալ խորիմաստ դիտարկումն է անում. «Մանկական երգերը փոքրիկների հոգու և կյանքի հետ այնքան համահունչ են, որ պահպանել են իրենց թարմությունը, և ոչինչ չի կարող դրանց փոխարինել: Նման երգերում կենդանիներն աշխա-

<sup>415</sup> Նույն տեղում, էջ 201:

<sup>416</sup> «Հայրենիքի ձայն», Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի շաբաթաթերթ, Եր., 18 նոյեմբերի 1969 թ., N 47 (226):

<sup>417</sup> Գասպարյան Գ., Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Եր., 2009, էջ 14-19:

տում են, խոսում, մարդկային գործեր անում, խաղում, և այդ ամենը՝ զվարճալի շարժուձևերով... Ագուավը արթնացնում է երեխայի հորը, շունը բռնում է գողին... Այս երգերը ստեղծվել են այնպես, որ համահունչ լինեն մանուկների հոգեկան աշխարհին: «Դա համար էլ սիրելի են նրանց»<sup>418</sup>:

Մանկական երգերի նկատմամբ Կոմիտասի նախասիրությունների մասին գրում է Տեմարանի դասախոս, արվեստաբան Գարեգին Լևոնյանը. «Դեռ աշակերտ եղած ժամանակից՝ 1885-86-ից, շրջելով Եջմիածնի գավառը, ձայնագրել-հավաքել էր մի քանի տասնյակ ժողովրդական երգեր ու այժմ (1893-94-ին) այդ երգերը մտցրել էր դպրոցական ծրագրի մեջ ու դասավանդում էր»<sup>419</sup>.

Մանուկների կյանքում երգերի դերակատարության մասին Կոմիտասը խոսում է 1912 թ. մի դասախոսության մեջ, որը տեղ է գտել Ռ. Թերլեմեզյանի գրքում. «Մանուկն ինչ զգացումի տակ վոր ըլլա, այդ զգացումը կարտահայտե վորոշ յերգերով: Յերգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտության մեկ ծեվն ե... Արդ կրնա ընթռնվիլ, թե վորքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ յերգեցողության ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը»<sup>420</sup>:

Ս. Հեղայաթը պարսկական մանկական երգերի վերաբերյալ գրում է. «Այս երգերն ընդհանրապես շատ իին են, երբեմն դրանց թեման և եղանակը փոփոխվում են, մինչև իսկ դրանց տարբերակները տեսնում ենք տարբեր ազգերի երգարվեստում»<sup>421</sup>: Ս. Հեղայաթը, արձանագրենք, Կոմիտասի մասին ակնարկում է 1930-1931 թթ. գրած «Պարսից ժողովրդական երգեր» հոդվածում: Նա անդրադառնում է հայ տաղանդաշատ վարդապետի ուսումնասիրած երգերից մեկին՝ «Գնացեք տեսեք ո՞վ է կերել այժը...», որը դասվում է գեղջկական երգերի շարքում և զուգահեռաբար ներկայացվում է պարսկական ժողովրդական մանկական երգերից մեկի հետ: Հեղայաթը մի օրինակ է ներկայացնում «Մայրեր և դայակներ» բաժնում<sup>422</sup>: Ահա այն.

<sup>418</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 164.

<sup>419</sup> Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հ. 9, Եր., 1999, էջ 13:

<sup>420</sup> Թերլեմեզյան Ռ., Կոմիտաս. հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 63:

<sup>421</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 210.

<sup>422</sup> Նույն տեղում, էջ 182:

Āb ūmad, āb ūmad Kodūm āb?  
 Hamūn kē taš xāmūš kard Kodūm taš?  
 Hamūn kē čūb sūzūndē Kodūm čūb?  
 Hamūn kē sag ro koštē Kodūm sag?  
 Hamūn kē morq o xordē Kodūm morq?  
 Ūn morqē zardē pā kūtā Sīnē sorx-e dom talā  
 Sīyāh o sēfīd gol bāqālā Sad toman dādan nadādamēš!  
 Ūn sagē moftī bordēš Sar-e pā nēšast o xordēš.

(Զուրը եկավ, ջուրը եկավ: / Ո՞ր ջուրը. / Այն, որ կրակը հանգըրեց: / Ո՞ր կրակը. / Այն, որ փայտն է այրել: / Ո՞ր փայտը. / Այն, որ շանն է սպանել: / Ո՞ր շանը. / Այն, որ հավին է կերել: / Ո՞ր հավին. / Այն դեղին, կարծ ոտով հավին: / Կարմիր կրծքով, ոսկե պոչով, / Սև ու սպիտակ բակլայի ծաղկին / Յարյուր թուման տվին, չտվեցի, / Այն շունը ձրի տարավ, / Ոտքերի վրա նստած կերավ):

Ս. Յեղայաթը, շարունակելով իր խոսքը, գրում է, որ պարսկական այս երգին բովանդակությամբ մոտ երգ գտնում ենք նաև իին հայերենում: Այնուհետև թարգմանաբար բերում է մի փոքր կտոր՝ տողատակում ծանոթագրելով աղբյուրը՝ Komitas, Chansons Rustiques<sup>423</sup>:

Ստորև ամբողջությամբ ներկայացնում ենք երգի մի տարբերակ.

Գնացեք տեսեք ո՞վ է կերել այծը.  
 Գնացին տեսան գայլն է կերել այծը:  
 Գայլըն ու այծը,  
 Այծըն ու գայլը,

<sup>423</sup> Ս. Յեղայաթն իր օգտագործած աղբյուրի ճշգրիտ տվյալները չի նշում: Ըստ նրա նշած աղբյուրի՝ որոնումներ ենք կատարել և ֆրանսերենով որևէ նյութ չենք գտել: Կան կոմիտաս վարդապետի հայերեն նամակները՝ հասցեագրված Արշակ Չոպանյանին, գրված 1902 թ. նոյեմբերի 21-ին և 1914 թ. օգոստոսի 17-ին: Առաջինում կոմիտասը հետևյալն է գրում. «Շուտով կուղարկեմ Ձեզ ժողովրդական երգեր, թէ՛ խմբի, թէ՛ մեներգի համար, խնդրելով, որ Դուք հսկեիք, որ բանագողեր չլինեին, որովհետև պատրաստում եմ տպագրութեան համար» (Կոմիտաս, Նամակներ, Եր., ԳԱԹ հրատ., 2000, էջ 120, 121), իսկ երկրորդում. «Ուղարկում եմ այսօր նամակիս հետ միաժամանակ «Յայ գեղջուկ երաժշտություն» ուսումնասիրութեան առաջին տետրը. սկսեցեք կամաց-կամաց թարգմանել, ես էլ կիասցնեմ միւսները, տետրակ-տետրակ: Ուղարկեցեք թարգմանած ժողովրդական երգերից հետևեալների ֆրանսերենը, որ տպել պետք է տամ բազմաձայն և միաձայն՝ դաշնակի նուագով, այստեղ. գերմաներէն էլ թարգմանել տուի մի հմուտ բանաստեղծի...» (նույն տեղում, էջ 160, 161):

Զեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի զատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել գայլը.  
 Գնացին տեսան արջն է կերել գայլը:  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Զեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի զատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել արջը.  
 Գնացին տեսան թուրն է կերել արջը:  
 Թուրըն ու արջը,  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Զեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի զատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել թուրը.  
 Գնացին տեսան ժանգն է կերել թուրը:  
 Ժանգըն ու թուրը,  
 Թուրըն ու արջը,  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Զեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի զատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել ժանգը,  
 Գնացին տեսան հողն է կերել ժանգը.  
 Հողըն ու ժանգը,  
 Ժանգըն ու թուրը,  
 Թուրըն ու արջը,  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Զեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի զատիկ.  
 Զեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի զատիկ<sup>424</sup>.

Ըստ Ս. Շեղայաթի՝ մանկական երգերը տարբերակներ ունեն և ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվում,

<sup>424</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1979, էջ 155:

սակայն նա իր «Ֆարհանգե ամյանե» («Ժողովրդական մշակույթ») ժողովածուում պարսկերեն միայն մի տարբերակն է ներկայացնում՝ առանց մեկնաբանության: Մենք գտել ենք պարսկերեն ևս մի քանի տարբերակ<sup>425</sup>:

Կոմիտասի երգն ունի մի քանի տարբերակ<sup>426</sup>: «Եկեք տեսեք» (կամ «Ելեք տեսեք», «Գացեք տեսեք», «Գնացեք տեսեք») երգը Բարեկենդանի ուրախ երգերից է, որը պատկանում է միջնադարյան կամ ավելի վաղ շրջանին: Յուրաքանչյուր «պատճառ» շարունակվում է «հետևանքով», այսինքն՝ «ուտողը» դառնում է «ուտվող»: Այս մասին Ռ. Աթայանն ասում է. «Երևույթների այդ փոխկապակցվածության մեջ մարդ ուզում է ենթադրել, փնտրել կամ տնտղել փիլիսոփայական մի ինչ-որ խորքի առկայություն, և համենայն դեպք գոնե մի ավելի պարզ բարոյագիտական խրատ՝ «Եթե չես ուզում որ քեզ «ուտեն», դու էլ ուրիշներին մի ուտի»<sup>427</sup>:

Ս. Յեղայաթի և Կոմիտասի մեջբերված երգերում նույնական են պատկերակառուցման, մտածողության եղանակները:

Յեղայաթ-Կոմիտաս այս առնչությունը գալիս է վկայելու, որ հայ և պարսիկ ժողովուրդները, կրոնական տարբեր դավանանք ունենալով հանդերձ, հանդես են բերում ժողովրդական մտածողության ընդհանրություններ, որոնք բխում են նրանց էթնոհոգեբանական ընդհանրությունից և մերձավոր դրացիությունից:

<sup>425</sup> Տե՛ս Qorbānī A., *Golčīn-e tarānē va š'ēr-e kūdak*, vol. I, Tehran, našr-e Māz-Gūtēnbērg, 1388, <https://bit.ly/3dpnhpE> <https://bit.ly/2Xoju6A>

<sup>426</sup> Տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1969, էջ 38, 39 և 261, 262:

<sup>427</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 2000, էջ 172, 173:

## Գ) ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՉՏՅԱՆՑ ԵՎ ՍԱՂԵԴ ՀԵՂԱՅԱԾ

### (համեմատական վերլուծություն)

Դայկական և պարսկական իինավուրց մշակույթները հնարավորություն են տալիս գիտականորեն մշակելու և կազմակերպելու բանավոր արվեստի ըմբռնման սկզբունքները: Դայ ականավոր հոգևորական, գրող ու բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը և պարսիկ գրող ու բանահավաք Սադեղ Շեղայաթը, լինելով երկու տարբեր ազգերի և հավատի գրականագետներ, բանահավաքչական աշխատանքի ասպարեզում միևնույն գաղափարի, ոճի, մտածողության ու ճաշակի կրողներն էին: Դայ ազգագրությունը և բանագիտությունը՝ իբրև գիտություն, ձևավորվել են 19-րդ դարի սկզբին և զգալի զարգացում ապրել դարավերջին: Դայ իրականության մեջ Գարեգին Սրվանձտյանցը (1840-1892) առաջինն էր, որ իր հետևողական աշխատանքով հավաքեց ու գրի առավ ժողովրդական բանահյուսությունը: Նրա անվան հետ է կապված հայոց ազգային ժողովրդական մեծ վեպի՝ «Սասունցի Դավիթ»-ի հանրայնացման փաստը<sup>428</sup>:

Իրանում բանագիտությունն ու ազգագրությունը ձևավորվել են համեմատաբար ուշ՝ 20-րդ դարի սկզբին, և իրենց տեղը զբաղեցրել մշակույթի և արվեստի համակարգում: Մինչև 20-րդ դարի սկիզբը Իրանում այս գիտություններն անտեսվել են և չեն արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Նույնիսկ ժամանակի լավագույն գրականագետների կողմից այս բնագավառում իրականացվող հետազոտություններն ու ուսումնասիրությունները քննադատվում էին և չէին արժենորվում: Սակայն պար-

<sup>428</sup> 1874 թվականից սկսած՝ հաջորդաբար իրատարակվեցին Գ. Սրվանձտյանցի ժողովածուները՝ «Գրոց և բրոց» (Կ. Պոլիս, 1874), «Դնոց և նորոց» (Կ. Պոլիս, 1874), «Մանամա» (Կ. Պոլիս, 1876), «Դամով-հոտով» (Կ. Պոլիս, 1884): 1879 թ. նրա առաջին ուղևորության արդյունքը եղավ «Թորոս աղբար Դայաստանի ծամբորդ» աշխատության առաջին հատորը, իսկ 1884 թ.՝ «Թորոս աղբար Դայաստանի ծամբորդ»-ի երկրորդ հատորը, որում ներկայացված են Արևմտյան Դայաստանի գավառների ու նահանգների նկարագրությունը և ժողովրդագրությունը:

կական գրականությունն իր պատմության ընթացքում չի անտեսել ժողովրդական բանահյուսությունն ու մշակույթը, որոնք միաձուլված են եղել նրան:

Սեփական ազգի պատմության խոր ընկալումը, անհուն սերը հայրենիքի նկատմամբ և վերջապես ստեղծված տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններն այս գիտնականներին էլ ավելի են մղել դեպի իրենց ազգանվեր գործունեությունը: Գ. Սրվանձտյանցի և Ս. Շեղայաթի ժողովածուներում զետեղված են ժողովրդական առակներ, առած-ասացվածքներ, հանելուկներ և աղոթքներ: Նրանք վերլուծել և գնահատել են հեքիաթներն ու ժողովրդական երգերը, բացահայտել դրանց բնույթն ու էությունը, անդրադարձել աշխատանքային, հարսանեկան և օրորոցային երգերին: Բանահյուսական ուսումնասիրություններ կատարելուն զուգահեռ՝ Գ. Սրվանձտյանցն ու Ս. Շեղայաթը ճամփորդել են, և նրանց ուշադրության կենտրոնում են եղել իրենց հայրենի բնաշխարհը, ժողովրդի կենցաղը, հավատալիքները, սովորույթներն ու ավանդույթները, խոսակցական լեզուն, վարքութարքը: Այդ իսկ պատճառով նրանց ուղեգրական նկարագրությունները պատմաճանաչողական կարևոր արժեք ունեն: Երկու բանագետների ուշադրությունից չի վիպել հարևան երկրների բառ ու բանը:

Երկու տաղանդաշատ գրականագետների գործունեությունը թեև տարբերվում է՝ պայմանավորված նրանց աշխարհայացքով, համապատասխան միջավայրով և զուտ անհատական մոտեցումով, բայց և ունի բազում նմանություններ:

Գ. Սրվանձտյանցը, առաջնորդական պաշտոններ վարելով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, ականատես է լինում հայ գյուղացու տանջանքներին ու տառապանքներին: Ազգի հանդեպ անսահման սերը և պայքարելու ուժը նրան մղում են անդուլ աշխատանքի, որպեսզի ինչ-որ չափով կարողանա սպեղանի դնել իր ժողովրդի վերքերին: Գ. Սրվանձտյանցն իր բոլոր իղձերն ու երազանքներն իրականացրեց հարստահարիչների, բռնության, ոճրագործության, պանդխտության, խեղճության և անուս-թերուս լինելու դեմ պայքարելու միջոցով: Նա, մոտիկից ծանոթանալով և ականատես լինելով Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տառապանքներին, ոչ միայն չէր հուսալքվում, այլև, էլ ավելի ոգևորվելով ու եռանդուն աշխատանք կատարելով, պայքարելու, դիմադրելու և դիմակայելու նոր ուժ

Էր հաղորդում իր ժողովրդին: Նա «Թորոս աղբար Շայաստանի ճամբորդ»-ի երկրորդ հատորում այսպես է դիմում իր ժողովրդին. «....խոսեցա, թե ինչքան անհնարություն, դժվարություն, կորուստ և մահ կա գաղթելու ճանապարհին վրա, և թե լավ է քիչ մը ևս սպասել, համբերել, թագավորը պիտի հիշի յուր ժողովուրդը, Աստված պիտի ողորմի վերջապես, օրեր պիտի փոխվին, չարերը պիտի պատժվին, աղեկ կառավարիչներ և արդար դատավորներ պիտի դրկե թագավորը, և զձեզ պիտի մխիթարե... Ամեն երկիր գիշեր կը լինի, խավար կունենա, բայց չէ՝ որ Աստված ամեն օր առավոտ կը բանա, լույս կուտա մեզ, ձմեռվանեն հետո կուգա գարուն...»<sup>429</sup>:

Ս. Յեղայաթը նույնպես հաստատակամ և լուրջ մտայնությամբ էր կատարում իր աշխատանքը: Նրա կարծիքով իրանը թևակոխում էր տնտեսական զարգացման նոր փուլ, և նորարարություններ էին տեղի ունենալու, իսկ հինը մի կողմ էր թողնվելու: Յեղայաթի հիմնական մտահոգությունը բանահյուսության և ժողովրդական բանարվեստի ժառանգությունները փրկելն էր: Նա ասում էր. «Որքա՞ն բանաստեղծությունների ժողովածուներ են իրատարակվել, սակայն դրանց մեր օրերում ոչ ոք չի անդրադարձնում և չի ճանաչում.... բայց այն գրական երկերը, որոնք բարձր գաղափարներ և իրական արժեք են ներկայացնում՝ չկորցնելով իրենց արդիականությունը, ավելի են արժենորվում.... Մի շարք ժողովրդական երգեր այնքան լավ ու հաճելի են, որ տարածված են ոչ միայն մեկ քաղաքում կամ գյուղում, այլև ամբողջ իրանում՝ խուլ գյուղերում ու մեծ քաղաքներում...»<sup>430</sup>: Նա համոզված էր, որ հեքիաթներն իրենց առեղծվածային ուժով մարդուն ամբողջ արարչագործության հետ են կապակցում, և միաժամանակ պայքարում էր նախապաշարումների ու սին հավատալիքների դեմ և ասում. «Եթե այսպես թողնենք, դրանք երկար ժամանակ իրենց կարևորությունը կպահպանեն, քանի որ ժողովուրդը դրանք համարում է հայտնագործություն ու Աստվածային պատգամ և փոխանցում սերնդեսերունդ»<sup>431</sup>:

Գ. Սրվանձտյանցի և Ս. Յեղայաթի գրականագիտական շնորհները երևան էին եկել դեռևս պատանեկության տարիներից:

<sup>429</sup> Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, Եր., 1982, էջ 332, 333:

<sup>430</sup> Hēdāyat S., *Farhang-e 'āmyānēyē mardom-e Irān*, p. 163-164.

<sup>431</sup> Նույն տեղում, էջ 31:

Սրվանձտյանցի գոական առաջին աշխատանքները՝ աշակերտական ուսանավորները և մի շարք հոդվածներ՝ 5-րդ դարի պատմական նշանավոր իրադարձությունների մասին, տպագրվել են «Արծուի Վասպուրական» ամսագրի էջերում, որի հիմնադիրն էր Ս. Խրիմյանը: 1863 թ. Սուրբ Կարապետի վանքում առաջին անգամ իրատարակվում է լրատար «Արծուիկ Տարօնոյ» պարբերականը: Գ. Սրվանձտյանցը փայլուն աշխատանք է կատարել որպես «Արծուի Վասպուրական»-ի փոխիմբագիր և «Արծուիկ Տարօնոյ»-ի խմբագիր: «Արծուի Վասպուրական»-ը իրատարակվում էր գրաբար, իսկ «Արծուիկ Տարօնոյ»-ը՝ աշխարհաբար, սակայն երկուսն էլ ժողովրդական լայն զանգվածներին գերազանց լրատվական ծառայություն էին մատուցում և նրանց բողոքի ձայները լսելի դարձնում:

Յեղայաթն իր դպրոցական տարիներին ընկերների համար իրատարակել է «Մեղայե ամվաթ»<sup>432</sup> («Մեռածների ձայնը») թերթը: Իսկ պարբերական մամուլը, մասնավորապես «Սոխան» և «Մուսիղի» ամսագրերը, նպաստավոր պայմաններ էր ստեղծել՝ գիտնականի հետազոտությունները հայրենակիցների շրջանում տարածելու համար: Այնտեղ երևան են գալիս ժողովրդական բանահյուսության և ազգագրության նմուշները, որոնք արդեն ուսումնասիրության նոր հեռանկարներ են բացում իրանի բանարվեստի առջև:

Գ. Սրվանձտյանցի և Ս. Խրիմյանի ակտիվ գործունեությունը կարճատև եղավ: «Այդ աշխույժ գործունեությունը երկար չի տևում: 1865 թ. Տարոնի ցեցերը և խավարամոլ հոգևորականները.... ծանր ամբաստանում են Խրիմյանին և նրա գործակիցներին... Ընդմիշտ փակվում է «Արծվիկը»...»<sup>433</sup>: Գ. Սրվանձտյանցը և Ս. Յեղայաթը այդ պարբերականներում իրատարակված իրենց հոդվածներում պաշտպանում էին ազգային-ազտագրական գաղափարները և պայքար մղում իրենց սեփական և օտարազգի հարստահարիչների դեմ:

Գ. Սրվանձտյանցը և Ս. Յեղայաթը, տիրապետելով իրենց մայրենի լեզվի նրբություններին, ժողովրդական բանահյուսության հիմքից գրական այնպիսի գանձեր հյուսեցին, որոնք մեծ

<sup>432</sup> «Sēdāyē amvāt».

<sup>433</sup> Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Եր., 2008, էջ 88:

արժեք ունեն: Գ. Սրբանձտյանցի «Երկեր»-ի առաջին հատորի նախաբանում կարդում ենք. «Ավելի ուշ՝ 1915 թ., անդրադառնալով Սրբանձտյանցին և նրա բանահյուսական, ազգագրական ժողովածուներին, Յովհաննես Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն ել համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրբանձտյանց,- գրել է նա (Յ. Թումանյանը – Ա. Յ.),- կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք, ինչպես ել կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»<sup>434</sup>: Իսկ ֆրանսիացի գրող Ժան Կաբորդը Ս. Յեղայաթի մասին հետևյալն է գրում. «Սադեղ Յեղայաթն այն ականավոր դեմքն է, որը լավատեղյակ էր Արևելքի հին գրականությանը, իսկ Արևմուտքի յուրացրած՝ Եվրոպական ծաղկանոցում աճած վարդերը հաջողությամբ պատվաստում էր Սպահանի կարմիր վարդերի հզոր թփերին»<sup>435</sup>:

Երկու տաղանդաշատ բանագետները հետազոտողներին կոչ էին անում լրջորեն, բժախնդրությամբ և գիտակցաբար մոտենալ նյութերը հավաքելու, դասավորելու, ուսումնասիրելու և ներկայացնելու, ինչպես նաև պահպանելու գործին: Գ. Սրբանձտյանցը գտնում էր, որ «Այս խնդրույն հատուկ ուշադրություն տալ պետք է. փափուկ և խորին ուշադրություն... Ասոնք ոչ միայն զվարճալի և պիտանի կը լինին ուսանողին, այլև նոր ու մեծ լույս կուտան մեր հայկական լեզվին, մեր ազգային հնագիտության ու պատմության, որք լի են թյուր հասկացողությամբ»<sup>436</sup>:

Ս. Յեղայաթն իր մեթոդական հոդվածում, համամիտ լինելով Սրբանձտյանցի հետ, նշում է, որ այս գործում ամենակարևոր ուշադիր լինելն է, ապա՝ անկողմնակալ վերաբերմունքը: Նյութերը պետք է ներկայացնել այնպես, ինչպես կան: Յեղայաթը և Սրբանձտյանցը ընթերցողներին ուղղորդում էին ոչ թե կաղապարված խոսքերով ու մեթոդներով, այլ բարի խորհուրդներով՝ օրինակներ բերելով իրենց ստեղծագործական կյանքից: Պարսիկ գրող և բանագետ Ա. Ենջավի Շիրազիի կենսագործունեության և ստեղծագործության մեջ Յեղայաթը որոշիչ դեր է ունեցել՝ բացելով նրա աշխարհայացքային հորիզոնները: Ենջավի Շիրազին իր ուսուցչի՝ Յեղայաթի անխոնջ գործունեության

<sup>434</sup> Սրբանձտյանց Գ., Երկեր, հ. 1, էջ 24, 25:

<sup>435</sup> Monty V., op. cit., p. 12.

<sup>436</sup> Սրբանձտյանց Գ., Երկեր, հ. 1, էջ 38, 39:

մասին այսպես է արտահայտվում. «Նա ջանասիրաբար մեծ աշխատանք ծավալեց՝ բազմաթիվ դժվարություններով շոշայց կատարելով թեյատրներում, իջևանատներում, կառապանների և սայլապանների կայաններում, այն սրճարաններում, որտեղ հավաքվում էին շինարարներն ու բանվորները: Նրան տեսնում ենք ամենուր՝ շուկաներում, ավաններում, գյուղերում, փոքր քաղաքներում: Նա իր ականջներով լսում էր նրանց զրույցները՝ քաղելով թևավոր խոսքեր, ասացվածքներ, թափանցելով նրանց զգացմունքային աշխարհը, կարդալով մարդկանց սրտերում եղածը և իրապես ճանաչելով նրանց, նրանց տառապանքներն ու ուրախությունները, որոնք հանճարեղորեն արտացոլված են իր ստեղծագործություններում»<sup>437</sup>:

Գ. Սրվանձտյանցի հայտնաբերած ու գրի առած բանահյուսական մեծարժեք նյութերը, գրական, ազգագրական, ուղեգրական երկերն էլ բարձր են գնահատվել հայ գրականագետմշակութաբանների կողմից: Ակադեմիկոս Արամ Ղանալանյանն այս կապակցությամբ գրում է. «Դայ բանագիտության համար Գարեգին Սրվանձտյանցը պատմական աննախադեպ և բացառիկ դեր է կատարել, հայտնագործելով հայ ժողովրդի ստեղծագոգային մեծ Վեպի առաջին պատումը»<sup>438</sup>: Գ. Սրվանձտյանցի հրատարակած ժողովածուների մասին հայագետ Գրիգոր Խալաթյանցն արտահայտել է իր կարծիքը, որը տեղ է գտել Ա. Ղանալանյանի «Դրվագներ հայ բանագիտության պատմության» գրքում. «Մեծ է այն ծառայությունը, որ Դուք մատուցիք և շարունակում եք մատուցել հայ ժողովրդական գրականության Զեր թանկագին ժողովածուներով...»<sup>439</sup>: Գ. Խալաթյանցը «Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորութիւնների» աշխատությունը ծոննել է Գ. Սրվանձտյանցին և բարձր է գնահատել նրա դերը հայ ազգագրության և բանահյուսության զարգացման գործում<sup>440</sup>:

Խորն ու անմիջական են ժողովրդական բանահյուսության

<sup>437</sup> Ēttēhād H., *Pažūhēšgarān-e mo'āsēr-e Irān*, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Farhang-e Mo'āsēr, 1387, p. 209-210.

<sup>438</sup> Ղանալանյան Ա., *Դրվագներ հայ բանագիտության պատմության*, Եր., 1985, էջ 96:

<sup>439</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>440</sup>Տե՛ս Խալաթյանց Գ., *Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորութիւնների*, Սոսկվա, 1887:

հետ Գ. Սրվանձտյանցի և Ս. Շեղայաթի ունեցած կապի թե՛ անձնական և թե՛ հասարակական-գաղափարական արմատները: Նրանց ուշադրության կենտրոնում են եղել կանանց բարոյահոգեբանական խնդիրները: Նրանք դատապարտում էին այն ավանդույթները, որոնք կանանց զրկում էին իրենց իրավունքներից: Ս. Շեղայաթի պատմվածքներում ներկայացվում է իր ժամանակաշրջանի հասարակության մեջ չհասունացած հարգալից վերաբերմունքը կանանց նկատմամբ: Նա իր հերոսներին տարբեր կերպարներով, բնավորությամբ և բարոյական չափանիշներով է ներկայացնում, իսկ կանանց ներկայությունը համարյա անխուսափելի է պատմվածքներում: Պարզ ու չքողարկված սիրո ոտնահետքեր ենք տեսնում Ս. Շեղայաթի պատմվածքներում: Թեև նրա համար առաջնայինը հայրենիքի նկատմամբ տածած սերն էր, բայց և չէր կարող անտարբեր անցնել և չպատկերել նաև կնոջ տեղն ու դերը հասարակության մեջ և հավատարմությունն ու դավաճանությունը: Նա իր ստեղծագործություններում տարբեր դասակարգերի ու խավերի պատկանող կանանց կերպարները՝ թե՛ դրականը և թե՛ բացասականը, շատ գեղեցիկ, մտածված է պատկերում, և շատ քիչ են այն պատմվածքները, որոնցում կինը բարի ու անմեղ և իրեշտակի դեմքով է հանդես գալիս, ինչպիսին է «Դաշ Աքոլ» պատմվածքում Մարջանը:

Իսկ Գ. Սրվանձտյանցը հիացմունքով է խոսում հայ կնոջ մասին և բարձր է գնահատում նրա ունեցած տեղն ու դերը հայոց պատմության մեջ: Այսպես, «*Թորոս աղբար*»-ի առաջին հատորում գրում է. «Կը զարմացնե այցելու մը, վասն զի մեր Յայատանի վանքերեն ոչ մեկուն կը նմանի. բայց իսկույն կը լուծվի զարմանքն, երբ իմանա թե վանքիս տնտեսությունն ու տեսչությունը ոչ եպիսկոպոսի, ոչ վարդապետի, ոչ քահանայի և ոչ մյութեզելիի է յանձնված, այլ ժրագլուխ տիկնոջ մը, այն է Տիկին Մարիցա Գատեմյան...»<sup>441</sup>.

Երկու հեղինակներն էլ խարազանում են հոգևորականների կատարած ոճրագործությունները, ատելությամբ և արհամարհանքով են նկարագրում նրանց կենսակերպը՝ ընդգծելով նրանց հոգու աղքատությունը, ազահությունը և կաշառակերության մոլուցը:

Ս. Շեղայաթի «Ալ բարսիաթ օլ-էսլամիաթ ֆել բելադ օլ-

<sup>441</sup> Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, Եր., 1982, էջ 235:

**ֆարանջիե»** («Իսլամի առաքելությունը Եվրոպական Երկրներում») պատմվածքը դրա վառ օրինակն է, որը շատ փոքր տպաքանակով լույս տեսավ, ապա արգելվեց: Յեղայաթը գտնում էր; որ ժողովրդի խավարամտությունն ու սնահավատությունը նպաստում էին հոգևորականների ոտնձգություններին: Գ. Սրվանձտյանցը, քննադատելով հայ հոգևորականներին, գտնում էր, որ հոգևորականները Եկեղեցին ծառայեցնում են իրենց շահերին: Այս մասին եմմա Կոստանդյանը գրում է. «Բազմաթիվ հարցեր է քննարկում «Օրուան խնդիրներ» հոդվածաշարը՝ ժողովրդի և Եկեղեցու, Եկեղեցական և Եկեղեցու կրոնական ավանդույթների և կրոնագործերի, «Պոլոժենիայի» քննադատություն»<sup>442</sup>:

Թե՛ Գ. Սրվանձտյանցը, թե՛ Ս. Յեղուն գրչի ուժով իրենց հայրենակիցներին հայրենասիրական ոգի և լուսավոր ապագայի հույսեր էին ներշնչում: Գ. Սրվանձտյանցը, չհատալով օտար տերությունների տված խոստումներին, գրում է. «Ամենեն անծանոթ և աննշան գյուղերու մեջը՝ մտած է Ամերիկայի և Անգղիո ապրանքն՝ հագնելու և կահավորելու... Շատ տխուր էին այն ձայները, որք այս և այն գավառներեն կը լսվեին, թե՛ Յայքս Անգղիացի կը դառնանք. այսինքն՝ Անգղիական Եկեղեցվո կրոնք կ'ընդունինք. թե՛ Ռուս կը դառնանք... Այս կեղծ բարերարները ոչ հայուն հորեղբայր էին, ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարափի որսորդներ ու մսագործներ...»<sup>443</sup>:

Ս. Յեղայաթը նույնապես, խիստ հայրենասիրական գաղափարներով իր ժամանակաշրջանի բռնապետական իշխանության դեմ դուրս գալով, իրանի հնագույն մշակույթն ու ժառագությունն է փառաբանում: Նրա Երգիծական ստեղծագործությունները գալիս են մերկացնելու Երկրի բարձրաստիճան պետական այրերին և օտարազգի բռնապետ տերությունների ոտնձգությունները իրանում: «Վաղ-վաղ սահաբ» պամֆլետը և «Թուփե մորվարի» («Մարգարտե թնդանոթը») պատմվածքը ամենավառ օրինակներն են:

Սրվանձտյանցի և Յեղայաթի հայտնաբերած բանահյուսական գոհարները տասնամյակներ անց գիտականորեն հաստատվեցին: Դրանք ոչ միայն ճանաչողական, այլև գեղարվեստական

<sup>442</sup> Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 134:

<sup>443</sup> Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, էջ 329 և 331:

նշանակալից արժեք ձեռք բերեցին և քննության առարկա դարձան ուսումնասիրողների և հետաքրքրասերների կողմից, բարձր գնահատականների արժանացան մշակույթի ականավոր գործիչների կողմից: Հավաքած և գրի առաջ նյութերի նկատմամբ բանագետների մոտեցման կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրանք իիմնականում հարազատ են մնացել նյութերի բուն բովանդակությանն ու էությանը և ապագա ուսումնասիրողներին նույնպես հորդորել են հետևել այդ արգասավոր մեթոդին: Սրվանձտյանց և Յեղայաթ բանագետների՝ իրենց կարծ, բայց բեղմնավոր գիտահետազոտական գործունեության ընթացքում ունեցած լավագույն ձեռքբերումներն անփոխարինելի ատաղձ են դարձել բազմաթիվ բանագետների և հետազոտողների համար: Նրանց բուն նպատակը, իրենց իսկ վկայությամբ, ժողովրդի բանահյուսական գանձերը փրկելն էր, որոնք կարող են լուս սփռել երկու ազգերի պատմության, լեզվի և գրականության վրա:

Այսպիսով, կարող ենք ասել, որ, բազմակողմանիորեն կրթված, ժողովրդական կենցաղին ու բանահյուսությանը լավ ծանոթ լինելով, այս երկու արվեստագետները՝ Գարեգին Սրվանձտյանցը և Սաղեղ Յեղայաթը, ստեղծեցին իրենց ոճն ու իրականության պատկերման գեղարվեստական եղանակը՝ թողնելով նշանակալից գրական ժառանգություն:

## ՀԱՎԵԼՎԱԾ Բ

### ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

#### Ա) ԱՆԻՇՅԱԼ ԱՄՐՈՑՈ (ԳՈԶԱՍԹԵ ԴԵԺ)<sup>444</sup>

Մեծ և ամրակուր Մաքան դոյակը երեք շրջապարհսապ և յոթ աշտարակ ուներ: Այն կրով ու կրաշաղախով էր կառուցված և Ասի Վիշեհ<sup>445</sup> մերձակա սարալանջին վեր էր հառնել դեպի կապուտակ երկինք:

Երկու հարյուր տարի առաջ այս բերդաքաղաքում կյանքը եռում էր, և այն լի էր հոյակերտ շինություններով ու տներով: Նշված ժամանակաշրջանում ամեն օր՝ իրիկնապահին, բարձրահասակ և հաղթանդամ Մաքան Կակույեն, պալատի նախամուտքում կամ բերդապարսպի ձախ կողմում հարմար դիտակետ ընտրելով, սպասում էր այնքան, մինչև գետում լողացող աղջկան տեսներ: Ի վերջո հենց այդ աղջիկն էլ Մաքանի անժամանակ մահվան պատճառը դարձավ: Իսկ դրանից հետո բնության բոլոր ավերիչ ուժերը և մարդիկ այդ պալատի կործանման գործում իրար միացան: Խոնավ պատերի տակից և ճաքած անցքերից անջրդի աճած բույսերը դանդաղ քայլայում ու ավերում էին շինությունը: Առաստաղը ճաքեր էր տվել, և սյուները տապալվել էին: Դոյակի տարածքի և շրջակա հարթավայրերի վրա ծանր լուսաւում էր իջել, որովհետև Սամի որդիների<sup>446</sup> տիրակալությունից հետո բոլոր դաստակերտներն ավերվեցին ու ամայացան: Պալատի առջևից արժաքե ժապավենի նմանվող գետակը խոխոցալով, զմրուխտագույն մարգագետնից օձապտույտ գալարումով անցնում ու դանդաղ անհետանում էր:

Այս ավերակ դոյակը մարդիկ անհջյալ ամրոց էին անվանում, և այն չարագուշակ համբավ ուներ: Բայց ոչ ոք չգիտեր, թե երբ և ինչպես ճգնավորի ու կախարդի փայլուն աչքերով նիհար մի ծերունի անցյալի այդ ողջ շքեղության փոխարեն նախընտրել էր պալատի ձախ պարսպապատում մի խորշ և ապրում էր այնտեղ: Նրան խաշթուն էին անվանում: Մինչև մայրամուտ աշտա-

<sup>444</sup> «Gojastē dēj».

<sup>445</sup> Āsī Višē – Գտնվում է Ամոլ քաղաքից չորս փարսախ հեռավորության վրա, իսկ Ամոլ քաղաքը իրանի հյուսիսում գտնվող Մազանդարան նահանգի քաղաքներից է:

<sup>446</sup> Նոյի որդիներից Սամի սերունդը:

րակից դուրս չեր գալիս: Երբ պալատից ներքև գտնվող գյուղը խոր մթության մեջ էր ընկղմվում, Խաշթունը սև վերնազգեստով փաթաթվում և պալատի ծախս պարսպապատից դուրս էր գալիս, առանց շտապելու գբունում էր պալատի մերձակա բլուրի վոա կամ չոր փայտեր հավաքում:

Խելագա՞ր էր, թե՝ խելացի, ունետ՞ր էր, թե՝ աղքատ՝ ոչ ոք չգիտեր: Գյուղացիներն աշխատում էին ամեն կերպ նրա աչքից հեռու մնալ: Բացի նրանից, տեղի բնակիչներին շատ էր վախեցնում նաև մի աղջիկ, որն ամեն իրիկուն գալիս ու պալատի հանդիպակաց գետում լողանում էր:

Մի օր՝ ուշ երեկոյան, մեղմ եղանակ էր, ու խաղաղ լրություն էր տիրում: Մի խումբ աղավնիներ ճախրում էին երկնքում՝ պտույտներ գործելով: Ոտշանաքը, իր սովորության համաձայն, պալատի մոտ՝ գետում, լողանում էր: Յանկարծ աղջիկը տեսավ վանականի նմանվող, մոխրագույն երկար մորուքով, սև վերնազգեստի մեջ փաթաթված արծվաքիթ մի մարդու, որը մոտենում էր իրեն: Աղջիկը սարսափահար վերցրեց զգեստն ու կուրծքը փակեց: Այդ մարդը դանդաղ մոտեցավ ու ժպտալով ասաց.

- Աղջիկս, այստեղ ի՞նչ ես անում:

Ոտշանաքը, որ զգեստը հագնելով էր գբաղված, ասաց.

- Լողանում էի:

- Աղջիկ ջան, դու մի՛ վախեցիր, ես քո հոր տեղն եմ:

- Յայրս շատ վաղուց է հեռացել, երբ ես շատ փոքր էի: Եշգրիտ չեմ հիշում, թե երբ էր դա, բայց սև մորուք ուներ: Ինձ սիրում և ծնկին նստեցնում էր:

- Ավա՞ղ, ես էլ մի աղջիկ ունեի:

- Դուք հենց այն անիծյալ ամրոցի կախա՞րդն եք:

- Մարդիկ են այդ անունն ինձ տվել:

- Մարդիկ իմ և մայրիկիս հետևից չարախոսում են, որովհետև տեսնում են՝ ես միայնակ լողանում եմ: Ասում են՝ աղջիկը չպետք է ...

- Այս գյուղի մարդիկ խեղճ ու կրակ են... Կենդանիներից ավելի նվաստ են: Նրանց կառավարողը նախ՝ ստամոքսն է, ապա՝ կիրքը, որը և կուրորեն ցասումով ու բարկությամբ է լցնում նրանց հոգիները: Նրանց կրթողը բռունցքն է, և նրանց դաստիարակությունը լի է չպետքեներով, որոնցով լցնում են երեխաների ականջը:

- Բայց ես ջրից չեմ կարող իրաժարվել. ես ջրի համար

գժվում եմ: Երբ լողում եմ, կարծես բոլոր թռչունները, ողջ բնությունն ինձ հետ խոսում են: Շատ կուզեի՝ բոլոր օրերս ծովի մոտ անցկացնել. Չորի կարկաչը խոսում է ինձ հետ, կանչում է ինձ ու իր մոտ տանում: Գուցե ես պետք է ծո՞ւկ լինեի:

- Մարդ արարածը աշխարհի նկատմամբ ոխակալ է: Մենք բոլոր կենդանիների խտացված տեսակն ենք. նրանց բոլոր զգացումները, կրքերը մեր մեջ կան, և դրանցից մի քանիսը մեզ համար անհաղթահարելի են: Դրանք պետք է կամ սանձահարել, կամ իսպառ վերացնել:

- Զկանը սպանելուց առաջ պետք է ինքս ինձ սպանեմ, որովհետև երբ ծովից ու ջրից հեռանում եմ, իմ էռթյան մի մասն այնտեղ՝ ջրի կոհակների մեջ, ալիքածու շարժվում և իմ անսահման տխրությունը փարատում է:

- Բայց դու այնքան ջահել ես ու դեռատի: Միայնակ կյանքը ծերերի համար է, երբ նրանք բան ու գործից, ձեռ ու ոտից ընկնում են:

- Արտանց կուզեի ծուկ լինել, լողալ, հավերժ լողալ:

- Իմ պապը նույն հակվածությունն ուներ և ի վերջո ջրախեղդ եղավ:

- Ինչպիսի՝ գեղեցիկ մահ: Մարդ մահանա և այն էլ՝ ջոում...

- Ո՞չ, նա մեկընդմիշտ, վերջնականապես չի մահացել...

Որովհետև այն, ինչ որ հոգու հավիտենություն է կոչվում, գոյություն ունի: Այսինքն՝ հանգուցյալի հոգին կամ նրա որոշ հատկանիշներ նրա երեխաների մեջ են փոխադրվում: Մեծ պապ մահանալուց առաջ երեխա ունեցավ, ուրեմն ի վերջո նա չի մահացել: Իսկ մարդու հոգին իր մարմնի հետ մեռնում է, քանի որ սնվելու կարիք ունի և մարմնի մեռնելուց հետո չի կարող ապրել: Սա մի պատուհան է, որի միջով ծնողների՝ հոր և մոր սովորությունները, բնավորությունը, ընդունակությունները, նաև հիվանդությունները երեխային են անցնում:

- Ուրեմն ձեր հայրի՝ կն էլ էր ոսկեխույզ, ոսկի՝ էր որոնում:

- Ո՞չ, նա այլ բան էր փնտրում. ոսկին բոլոր սովորական մարդիկ են փնտրում, բայց իրոք այն այդքան անհրաժեշտ է:

- Ուրեմն Դո՞ւք եք ոսկին հայտնագործել:

- Ենթադրենք՝ ոսկին գտել եմ, հետո ի՞նչ: Յոթ տարի է՝ գիշերները խոնավ հատակի վրա անքնությամբ եմ տառապում, գրքերում նախնյաց առեղծվածների բանալիներն եմ փնտրում, ծածկագրերն եմ կարդում, և զղումի, ափսոսանքի հանգույց-

ներում սիրտս բզկտվում է: Արդեն կյանքիս մայրամուտին եմ մոտենում և անդադար վերծանում եմ՝ գիշերներս ցերեկ դարձրած: Այսինքն՝ սա այն է, ինչ բարձրագույն ալքիմիա են կոչում: Այն նաև քո մեջ է, քո դյութիչ ժպիտի, քո անխարդախ ձեռքերի:

- Մինչև հիմա ոչ ոք ինձ հետ այսպես չի խոսել, այսպես չի վերաբերվել. բոլորն էլ ինձ խենք ու խելագար են համարում:

- Որովհետև քեզ, քո լեզուն չեն հասկանում: Որովհետև դու բնությանն ավելի մոտ ես, նրա լուռումունջ լեզվին գիտակ ես:

- Իրավ, ես երեխա եմ, բայց կյանքս այնքան տիսուր է: Իմ կարծիքով երբեմն Զեր խոսքերը լավ չեմ ընկալում. դրանք փոքր-ինչ վերամբարձ են: Կուզեի Զեզ հետ երկար մնալ և անվերջ լսել Զեզ, բայց մայրիկս մենակ է, իսկ գյուղացիք նրան չեն սիրում: Ինքս էլ մենակ եմ, շատ-շատ մենակ:

- Մենք ամենքս ենք միայնակ: Չպետք է խարպել. կյանքը մի բանտ է, տարբեր մարդիկ՝ տարբեր բանտերում: Բայց որոշ մարդիկ բանտի պատերն են շոշափում և այդպիսով իրենց զբաղեցնում: Ոմանք ուզում են փախչել և իրենց ձեռքերն են արնտում, իսկ ոմանք էլ վշտանում են: Բայց իրականում մենք մեզ ենք խարում: Մենք միշտ մեզ խարում ենք, և կգա ժամանակ, որ մարդն ինքն իրեն խարելուց էլ կհոգնի... Իմ կարծիքով այսօր լեզուս ինձ չի ենթարկվում, քանի որ այսքան տարի ինձնից բացի ոչ մեկի հետ չեմ խոսել, և հիմա իմ մեջ մի նոր ջերմություն եմ զգում:

Ռոշանաքը զարմացած ասաց.

- Վայ, սիրելի մայրս եկավ:

Այդ պահին բարձրահասակ, ճերմակ չաղրայով մի կին դանդաղ մոտեցավ: Նա հայացքը խաշթունին էր հառել: Յենց որ մոտեցավ, մի քանի վայրկյան իրար աչքերի մեջ նայեցին, բայց կինը կանաչ մարգագետնի վրա ուշագնաց եղավ: Աղջիկը, սովոր լինելով նման փոփոխության, տագնապով վազեց մայրիկի մոտ, նրա գլուխը դրեց իր ծնկին և սկսեց շոյել:

Խաշթունը մոտեցավ և մատով նրա ճակատը շոշափեց: Կինը ուշքի եկավ, վեր կացավ ու նստեց:

Խաշթունը հեռանում էր, և աղջիկն իր գորովալից հայացքով ուղեկցում էր նրան:

Այս կնոջ և իր ամուսնու մասին գյուղացիների բերանում զարմանալի շատ լեզենդներ կային: Ասում են, թե այս մարդու անունը Խաշթուն չէ, այլ ինքը իրեա բարուն է՝ անունը Շամուն:

Նա յոթ տարի առաջ մի դերվիշի հետ Դիլբեր Եկավ, ապա սկսեց անիջալ ամրոցի ավերակներում բնակվել: Որոշ ժամանակ անց մոլլա Շամունի ընկերն անհետացավ, և իր գլխին Եկածը չգիտենք: Խաշթունի դրությունն ու հոգեվիճակն այդ վարկածը հաստատում են: Ոմանք ասում են, թե նա ճգնավոր է, օրը մի նուշ է ուտում և ոգիների ու դևերի հետ է կապված: Ոմանք էլ հավատում են, թե նա Դեմավենդ<sup>447</sup> լեռան վրայից կարմիր ծծումք է բերել և ալքիմիայով ոսկի գտնելով է զբաղված: Ընկերոջը սպանել է և նրա գուշակությունների ու կախարդությունների գիրքն է օգտագործում: Ոմանք ասում են, թե այդ բերդապարսպում գանձ է գտել, իսկ գյուղի երկու աղջկների անհետացումը նրա ձեռքի գործն է, և համոզված են, որ ով նրա աչքերի մեջ նայի, կկախարդվի: Իսկ ոմանք էլ ասում են, թե ամբողջ օրն աղոթքով ու պաշտամունքով է զբաղված: Մի հոգի երդվում է, թե իր աչքով է տեսել, որ մոլլա Շամունը գերեզմանոցից մեռածի գլուխ է գողացել: Իսկ իրիկնապահին, երբ Խաշթունի դեմքն է բլուրի հետևից հայտնվում, մարդիկ ասում են. «Աստված, հասի՞ր օգնության»: Միակ հավաստի բանն այն է, որ ամառ թե ձմեռ դոյակի ձախ պարսպապատի ծխնելույզից շարունակ կապտավուն ծուխն է բարձրանում:

Ոոշանաքը և իր մայրը չորս ամիս առաջ էին այս գյուղ Եկել և իրենց տանը՝ անիջալ ամրոցի մոտ էին բնակվում: Այս տունը տարիներ շարունակ դատարկ ու մերժված էր մնացել, քանի որ Խորշիդի հայրը տասնմեկ տարի առաջ վատ համբավի պատճառով ստիպված լքեց տունը, որովհետև ասում էին՝ դևերն այդ տունը քարկոծել են, բայց իրականում նրանց հարևանն էր այդպես սաղրել, որպեսզի տունը էժան գնով առներ: Առ ու վաճառք, այնուամենայնիվ, տեղի չունեցավ, բայց վատ համբավը տան վրա մնաց: Ասում են, թե Մաքան դոյակն անիջալ ամրոց մականունն է ստացել, որովհետև այդ տան մոտ է գտնվում:

Խորշիդի ամուսինը ութ տարի առաջ խորհրդավոր կերպով անհետացավ, որովհետև նրան՝ որպես իրեայի, զրպարտել էին: Նեռանալով նամակ էր թողել, որում ասված էր. «Քեզ թողնում եմ մենակ, բայց իուսով եմ, որ մի օր կվերադառնամ, և բոլորը դեռ կտեսնեն...»:

<sup>447</sup> Իրանի ամենաբարձր լեռը և Ասիայի ամենաբարձր իրաբխային լեռն է: Այն գտնվում է Կասպից ծովի հարավում՝ Իրանի հյուսիսում:

Խորշիդը չորս տարի, ծանր հիվանդ, իոր տանը մնաց. նա ժամերով ուշաթափ վիճակում էր լինում: Նա այդ հիվանդությունից հետո ամեն գիշեր քնած ժամանակ վեր էր կենում և շոջում, ապա պառկում էր անկողնում: Նա լուսնահար էր: Այս տարի նրա հայրը մահացավ, և լքված տունը գյուղում նրան ժառանգություն մնաց: Խորշիդն էլ իր չնչին ամսավճարով այստեղ էր ապրում: Այս տան վատ համբավը մի կողմից և նրա լուսնու լինելը մյուս կողմից գյուղի բնակչությանը կասկածամիտ էին դարձրել, այնպես որ մորն ու աղջկան խաշթունի համախոհն էին համարում:

Այն գիշեր՝ նրանց հանդիպումից հետո, երբ ամեն մի կենդանի արարած քուն էր մտել, և դյակի ներսի բնակիչներն էլ քնել էին, խորշիդը, ըստ իր գիշերային սովորության, անկողնուց ելավ, փակ աչքերով դանդաղ գնաց, կանգնեց աղջկա գլխավերնում և հստակ լսեց նրա շնչառությունը, ապա սպիտակ չադրան գլխին գցեց և հանդարտ քայլերով տնից դուրս եկավ: Սակայն այդ գիշեր նրա ուղեծիրը փոխվեց: Փոքր-ինչ երկմտելով՝ անիջալ ամրոցի բարակ ու վտանգավոր ճամփան բռնեց ու առաջ շարժվեց: Դյակի ձախ պարսպապատի առաջ մի պահ կանգ առավ, իսկ հետո փայտե դուռը բացեց, մտավ մի մութ կամարից ու անցավ: Աջակողմյան մի ուրիշ դուռ բացեց և հինգ խոնավ աստիճաններով ցած իջավ, մտավ մի նկուղ, որտեղ օդը ծանր էր ու խոնավ: Այնտեղ փոքրիկ լապտեր էր վառվում: Խորշիդը կանգնեց սենյակի անկյունում, ձեռքերն իրար վրա դրեց և գլուխը կախեց, բայց քուրայի լույսի տակ նրա վիուկային դեմքը և աչքերի տակի կապտուկները սարսափելի կերպարանք էին տալիս նրան:

Խաշթունը՝ ցածրահասակ ու նիհար, երկար մորուքով, բարակ շրթունքներով ու կնճռոտ ճակատով, նստած էր բուխարու դիմաց: Բուխարու բոցի տակ, մի կեղտոտ վերնազգեստով փաթաթված՝ աչքերը կրակի բոցին էր հառել և երկար մատներով աջ ձեռքը ծնկի վրա դրել: Այս մարդու խորհրդավոր վիճակը, բարայրի նմանվող սենյակը, պատին կախված ժանգոտած սուրը, փորձանոթը, օդում տարածված դեղի հոտը՝ այդ ամենը համահունչ էր նրա աղքատությանը: Այնպես որ մարդ, նրանից տեղեկություն ստանալուց հուսահատ, ինքն իրեն հարցնում էր. «Այս նիհար, ջլուտ վզով, մեծ ու այտոսկրերը ցցված գլխով մարդու ճակատից անդին տեսնես ի՞նչ ցայտուն մտքեր են թևա-

ծում»:

Խորթյան մի քանի բոպեներ անցան: Խաշթունը առանց հետ դառնալու ու նոր ժամանած հյուրին նայելու վեր կացավ, դանդաղ մոտեցավ կնոջը և հրամայական տոնով ասաց.

- Յըմ, գիտեի... Այս գիշեր դատարկ ձեռքով ես եկել. նրան չես բերել: Բայց վաղը՝ գիշերը, իմ ձեռքից կենդանի դուրս չես պրծնի: Վաղը՝ գիշերը, աղջիկդ հենց որ քնի, կգրկես, չինի թե արթնանա: Նրան ուշադիր ծածկոցի մեջ կփաթաթես և այստեղ կբերես... տես հա, չպիտի արթնանա: Լավ լսեցի՞ր... Եթե ճանապարհին շարժվեց, կկանգնես, մինչև կրկին քնի, ապա նրան կբերես, այս նույն սենյակում իմ ձեռքը կհանձնես... Լա՞վ ես լսում, հը:

Խորշիդը գլուխն ավելի էր կախել, դժվարությամբ էր շնչում, և քրտինքի կաթիլներն իջնում էին քունքերից: Խաշթունը փոքր-ինչ կանգ առավ և կրկնեց.

- Լա՞վ ես լսում՝ ինչ եմ ասում: Վաղը՝ գիշերը, նրան կբերես: Դիմա հասկացա՞ր:

Կինը խզված ձայնով ասաց.

- Դա՛, հասկացա:

- Գնա՛ նույն ճամփով, որով եկել ես: Բայց չմոռանաս, վաղը՝ գիշերը, աղջկադ կբերես... Նրան կբերես այստեղ և իմ ձեռքը կհանձնես:

Խորշիդը մի պահ սպասեց, ապա դանդաղ քայլերով դրնից դուրս գնաց:

Այդ պահին Խաշթունի աչքերը՝ մոլեգնորեն փայլում էին: Նրա բարակ շուրթերին հեգնական ժախտ գծագրվեց: Նա մոտեցավ կրակարանին և հայացքը հառեց ձուլանոցի մեջ կանաչ ժանգավուն հեղուկին: Նա վերադարձավ նկուղ: Ուսկրու ձեռքերը թափ էր տալիս ու խենթի նման ասում.

- Վաղը՝ գիշերը, իմ այս ալքիմիայով՝ ոսկի ստանալու արվեստով, արյան երեք կաթիլները ոգու կփոխվեն: Կույս աղջկա երեք կաթիլ արյունը վաղը՝ գիշերը... Իմ վարպետներն արյունքրտինք թափեցին, բայց իրենց նպատակին չհասան: Դրանցից վերջինը իմ ձեռքով սպանվեց, և եգիպտական, քաղդեական ու ասորական բոլոր գաղտնիքներն ինձ մնացին... Նրանց աշխատանքի արդյունքը ես կվայելեմ... Յոթ տարի է՝ կենդանի մեռյալ եմ դարձել, բոլոր հաճույքներիս վրա խաչ եմ քաշել, գետնի տակ եմ թաղվել... Բայց վաղը... Ո՛չ, դրա հաջորդ օրը զնդանից դուրս

կգամ, և աշխարհի բոլոր հաճույքները իմը կլինեն... Այս բոլոր մարդկանց, որոնք ինձ ատում են, ոտքերիս տակ կտամ: Նրանք կցանկանան, որ ես իրենց հայիոյեմ, որ կապայիս անկյունը համբուրեն... փող... փող (քրքջում է)... Ինձ համար ոսկին մոխրից էլ անարժեք կլինի: Բոլորի աչքին ամենախելացին կթվամ, անունս բոլորի բերանում կլինի: Փող, հաճույք, կին, երկինք, երկիր և աստվածները ինձ կիպատակվեն: Այս ամենը վաղը՝ գիշերը, երեք կաթիլ արյունով, այն աղջկա վերջին երեք կաթիլ արյունով... Այո՛, ինչո՞ւ իմ ձեռքով չսպանվի: Ինչո՞ւ իմ բարձրագույն ալքիմիայի զոհը չդառնա: Իհարկե, սա ավելի լավ է, քան այս հասարակ մարդկանց կրքերի զոհը դառնա, որոնք աղջկա պրպտող ոգուն չեն անդրադառնում... Բայց նրա մարմինը՝ առանց հոգու, իմ տրամադրության տակ կմնա, իմն է... (քրքջում է): Ուսկի... Ի՞նչ ազնիվ մետաղ է, ի՞նչ հոգեպարագ գույն ունի և ի՞նչ հաճելի հոտ: Դա զորավոր կախարդ է, որի շուրջը պատուաստակամ պտտվում է ամբողջ աշխարհը, որը թափանցել է նաև հանդերձյալ կյանքի մեջ և դարձել մարդկության երազանքը, հեքիաթների հիմնական բովանդակությունը... Ուսկի... Ուսկի...

Նրա ձայնը գուրի մեջ արձագանքեց, հանկարծ քուրայի մոտ կանգնած սսկվեց և աչքը կանաչ ժանգառավուն հեղուկին հառեց, ապա կրկին թշվառ, դժբախտ դեմք ընդունեց և կծկվեց կրակարանի մոտ:

Խաշթունը հաջորդ ամբողջ օրը զբաղված էր մի երկար փայտե մահճակալ պատրաստելով: Մահճակալի ոտքերը քուրայի կրակի մոտ տեղադրեց և վրան սպիտակ ծածկոց քաշեց: Առաջին հայացքից իսկ քարայրի մեջ կատարված փոփոխությունները նկատելի էին. Նրա շուրջը տարբեր ապակիներով փորձանոթներ էին: Զիթաճրագի դիմաց դրված էր մի ձեռագիր գիրք, որի բացված էջի վրա եռանկյունաչափական պատկերներ էին գծված, և կարմիր գծերով դրանց վրա նշաններ էին արված: Սենյակի անկյունում, ժանգոտ սուրը առջևը դրած, Խաշթունն էր: Նա ուշադրությունը կենտրոնացրել էր շարժվող սպիտակ գոլորշու վրա, որը ձուլանոցի ներսի կանաչ ժանգառավուն հեղուկից էր առաջացել: Անհամբերությամբ ամեն դոպե գալիս էր դրան մոտ և դուրս նայում:

Անցյալ գիշերվա նույն ժամին դուրը բացվեց, և Խորշիդը, սպիտակ շորով փաթաթված մի քան գրկին, ներս մտավ: Խաշթունը նրան տեսնելուն պես վեր կացավ, մոտեցավ նրան ու հրա-

մայական տոնով ասաց.

- Գիտեի, որ նրան կրերես: Տուր ինձ: Դիմա ազատ ես, բայց տես, չինի թե մեկին ասես: Երկու օր շարունակ ոչ մեկի հետ չահտի խոսես: Դե հիմա տուր ինձ:

Սպիտակ կտորով փաթաթածին կնոջ ձեռքից առավ և կրակարանի դիմացի մահճակալի վրա դրեց: Խորշիդը գլուխը կախել էր կոճքին, դեմքից քրտինք էր թափում: Նա դանդաղ քայլերով մոտեցավ դուանը և դուրս գնաց:

Բայց Խաշթունի դուպեները կարծես հաշված էին: Նա շտապ սպիտակ կտորը հետ տարավ: Ոոշանաքի մազերը գզգզված էին, դեմքը՝ գունատ, երկար թարթիչներով աչքերը փակ էին, և նրա շնչառությունը համաչափ էր: Խաշթունը գլուխը մոտեցրեց նրան, նրա կանոնավոր շնչառությունը լսեց: Երեխան քրտինքի մեջ կորած էր: Խաշթունը սուրը տան անկյունից վերցրեց, քրի տակ մի բան ասաց և սրի ծայրով գետնի վրա՝ մահճակալի շուրջը, շրջան գծեց, և ինքը աղջկա գլխավերեն՝ շրջանագծի մեջ, կանգնեց: Զիթաճրագի լույսի տակ գոքի մի էջից սկսեց ընթերցել: Ընթերցելուց հետո Ոոշանաքի ձեռքերն ու ոտքերը ամուր կապեց մահճակալից, վերցրեց սուրը և ծայրը թափով խրեց Ոոշանաքի կոկորդը: Արյունը նրա կոկորդից ժայթքեց և Խաշթունի երեսին ցայտեց: Նա վերնաշապիկի թևով երեսը սրբեց: Քուրայի լույսի տակ արյունոտ երեսը, չափից լայն բացված աչքերը և կզակի տակի մորուքը խորհրդավոր տեսք էին ստացել: Կրկին խորհրդավոր ձայնով մի աղոթք մրմնջաց: Ապա Ոոշանաքն ուժգին ցնցվեց, և գլուխը կախվեց մահճակալից: Խաշթունը մահճակալի մոտից վերցրեց նեղացող բերանին լայն ձագար դրած շիշը և նրա կոկորդի տակ պահեց: Աղջիկն ավելի ուժեղ ցնցվեց, և գլուխը ծովեց: Խաշթունն ուղղեց նրա արյունոտ գլուխը: Դազվագյուտ արյան կաթիլներն այդ պահին կոկորդից կաթում էին, իսկ Խաշթունը զգուշորեն դրանք տարբեր շշերի մեջ էր լցնում: Մի ուրիշ շիշ վերցրեց, աղջկա կոկորդը սեղմեց, ապա ձիթաճրագը վերցրեց, մոտեցրեց և արյան վերջին երեք կաթիլը շշի մեջ կաթեցրեց: Բայց ձիթաճրագի դողդոջուն լույսի տակ Ոոշանաքի ճակատի վրա լուսնի խավարումից առաջացած բիծը տեսավ և իր աղջկան ճանաչեց:

Աղջկան ճանաչելուց հետո անմիջապես ձիթաճրագը սարսափահար շպրտեց, և այն հատակին ընկավ ու հանգավ, իսկ ձեռքի շիշը բարձրացրեց և գոռաց.

- Քիմիա... քիմիա... երեք կաթիլ արյուն... աղջկաս արյունը... Ռոշանաքի արյունը:

Ապա շիշն այնպես սեղմեց, որ ձեռքի մեջ կոտրվեց, և փշուրները ծուլանոթի մեջ նետեց: Զուլանոթը եռոտանու վրայից շրջվեց, և մեջի ժանգագույն հեղուկը գետնին թափվեց ու բոցավառվեց:

Մինչև առավոտ գյուղի բնակչությունը ցնծությամբ անհջալ ամրոցից բարձրացող ծուխն ու կրակն էր դիտում:

## Բ) ԿՐԱԿԱՊԱՇՏԸ (ԱԹԱՇՓԱՐԱՍԹ)<sup>448</sup>

Իրանից նոր վերադարձած Ֆլանդենը<sup>449</sup> նստել էր Փարիզի հյուրանոցներից մեկի երրորդ հարկի մի պատուհանի մոտ՝ փոքր սեղանի առջև, որի վրա մի շիշ գինի և երկու բաժակ էին դրված: Ներքևի սրճարանում նվազում էին: Ամպամած օր էր, երկինքը մթագնած էր, բարակ անձրև էր տեղում: Ֆլանդենը երկու ձեռքերով բռնած գլուխը բարձրացրեց, բաժակի գինին մինչև վերջ ըմպեց, ապա, նայելով ընկերոջը, ասաց.

- Գիտե՞ս՝ կար ժամանակ, որ ես ինձ այս ավերակների, սարերի, անապատների մեջ կորած էի համարում: Ինքս ինձ ասում էի՝ կլինի՝ մի օր, իմ հայրենիք վերադառնամ, ինարավո՞ր է՝ այս մեղեղին լսեմ: Երազանքս էր մի օր վերադառնալ: Նման մի պահի երազում էի, որ քեզ հետ միայն երկուսով այս սենյակում զրուցեինք: Բայց իհմա ուզում եմ քեզ մի նոր բան ասել. գիտեմ, որ չես հավատա: Այժմ, երբ արդեն վերադարձել եմ, փոշմանել եմ: Գիտե՞ս՝ Իրանը նորից այնպես եմ կարոտել, կարծես մի բան կորցրած լինեմ:

Նրա դեմքը շիկնած էր, երբ այդ խոսքից անտրամադիր ընկերոջ աչքերը բացվեցին: Նա ձեռքը խփեց սեղանին ու քահ-քահ ծիծաղեց.

- Ուժե՞ն, մի՛ կատակիր: Ես գիտեի, որ դու նկարիչ ես, բայց չգիտեի, որ բանաստեղծ էլ ես: Մեր ներկայությունից շա՞տ ես ձանձրացել: Ինձ ասա՝ գուցե այնտեղի կարոտությո՞ւնն ես զգում: Ես լսել եմ՝ Արևելքի աղջիկներն աշխարհում ամենագեղեցիկն են:

- Ո՛չ, ասածներիցդ ոչ մեկն էլ չե. չեմ կատակում:

- Ի դեպ, մի օր եղբորդ մոտ էի, քո մասին խոսք եղավ. Իրանին նվիրված քո ուղարկած նոր նկարներն էինք նայում: Դիշում եմ՝ բոլորը ավերակներ էին... Դա՛, ասացին՝ դրանցից մեկը կրակի պաշտամունքի մեհյան էր. մի՞թե այնտեղ կրակ են պաշտում: Այն երկիրը, որտեղ դու եղել ես, միայն գիտեմ, որ լավ

<sup>448</sup> «Ātaśparast».

<sup>449</sup> Ֆլանդենը և քեսթը երկու հայտնի իրանագետներ էին, որոնք 90 տարի առաջ Իրանի հնագույն շրջանի մասին կարևոր ուսումնասիրություններ կատարեցին: Այս հատվածը Ֆլանդենի հուշերից է:

գորգեր ունի: Ուրիշ բան չգիտեմ: Ինչ որ դու ես տեսել, մեզ հիմա պատմի՞ր: Գիտես, որ այնտեղի ամեն ինչը մեզ՝ փարիզցիներիս համար նորույթ է:

Ֆլանդենը լոեց, ապա ասաց.

- Ինձ մի բան հիշեցրիր. Իրանում մի օր ինձ համար մի անսովոր բան տեղի ունեցավ: Մինչև հիմա ոչ մեկին, նույնիսկ ընկերոջս՝ քեսթին, որի հետ եմ հիմա, բան չեմ ասել. Վախեցել եմ՝ վրաս կծիծաղի: Դու գիտես, ես ոչ մի բանի նկատմամբ հավատք չունեմ և իմ ողջ կյանքում միայն մեկ անգամ եմ անկեղծորեն, ամենայն իսկությամբ ու հավատքով Աստծուն պաշտել, այն էլ Իրանում՝ այն նույն զրադաշտական մեհյանի մոտ, որի նկարը տեսել ես: Երբ Իրանի հարավում էի և Պերսեպոլիսի պեղումներն էի անում, մի գիշեր ընկերս՝ քեսթը, հիվանդ էր, և ես մենակ «Նաղշե Ռոստամ»<sup>450</sup> էի գնացել: Այնտեղ՝ սարերի վրա, Իրանի հին արքայական դամբարանն է կառուցված: Դրա նկարը չե՞ս տեսել: Լեռան մեջ բացված խաչած մի պատկեր-տեսարան է, որի վերևի հատվածում արքայի արձանն է՝ մեհյանի առջև կանգնած ու աջ ձեռքը կրակին պարզած: Մեհյանի վերևում զրադաշտականների աստված Ահուրամազդան է: Դրանից ներքև խորանի համապատկերով քանդակված է թագավորն իր ամփոփարանում՝ քարե դամբարանի մեջ: Այսպիսի դամբարաններ այնտեղ շատ կան, որոնց դեմ հանդիման մեծ մեհյանն է՝ Զրադաշտի պաշտամունքի վայրը:

Ինչեւ, լավ հիշում եմ՝ իրիկնապահ էր, և ես չափագրում էի հենց նույն տաճարը. հոգնածությունից ու արևի տապից ուժասպառ էի եղել: Մեկ էլ տեսա՝ պարսկականից տարբերվող զգեստներով երկու հոգի ինձ են մոտենում: Երբ մոտեցան, տեսա երկու տարեց, բայց հաղթանդամ, աշխույժ ու փայլվլուն աչքերով ծերունիների, որոնք արտասովոր տեսք ունեին: Նրանց հարցումներ արեցի: Պարզվեց, որ Յազդ<sup>451</sup> քաղաքի վաճառականներ են և Իրանի հյուսիսից են գալիս: Նրանց կրոնն ու դավա-

<sup>450</sup> Նաղշե Ռոստամը գտնվում է Պերսեպոլիսից վեց կիլոմետր հեռավորության վրա: Աքեմենյան թագավոր Դարեհ Առաջինն իր դամբարանն այնտեղ՝ ժայռի մեջ, փորել է տալիս: Նրանից հետո նույն քայլին են դիմում մյուս երեք թագավորները: Այնտեղ է գտնվում նաև զրադաշտականների պաշտամունքային մի տաճար:

<sup>451</sup> Յազդ Իրանի կենտրոնում գտնվող համանուն նահանգի կենտրոնական քաղաքն է:

նանքը մյուս բոլոր յազդեցիների նման զրադաշտականությունն է, այսինքն՝ իրանի հին արքայազունների նման կրակապաշտ են: Նրանք իրենց ճանապարհը հատուկ փոխել էին դեպի այդ վայրերը, որպեսզի ուխտի գան հնագույն մեհյան: Դեռ խոսքը բերանին՝ սկսեցին ցախ, փայտի կտորներ և չոր տերևներ հավաքել, իրար վրա դիզել և այսպիսով մի փոքր կրակարան պատրաստեցին: Ես զարմացած նրանց էի նայում: Նրանք չոր փայտերը վառեցին և ինձ անծանոթ լեզվով սկսեցին աղոթքներ մրմնջալ: Դա հավանաբար նույն Զրադաշտի և «Ավեստա»-ի լեզուն էր կամ գուցե հենց այն նույն լեզուն, որը մեզ է հասել քարերին փորված սեպագիր արձանագրություններով:

Այդ պահին, երբ երկու կրակապաշտներն աղոթում էին, ես գլուխս քարձրացրի և հայացքս ուղղեցի դեպի դիմացի քարե տախտակի դամբարանը, որի վրա պատկերված էր սրբազն արարողությունը: Եվ այն արարողությունը, որ քարի վրա էր պատկերված, կենդանի կատարումով այն հանդիսության ճիշտ ընդօրինակումն էր, որ իմ առջև կատարում էին այդ ծերունիները: Տեղումս քարացա. կարծես այս երկուսը Դարեհի դամբարանի վրա դրված քարի վրայից կենդանացել և մի քանի հազար տարի հետո եկել ու իմ դիմաց իրենց աստվածային խորհրդավոր պաշտամունքն են կատարում: Զարմանում էի, թե ինչպես այսքան ժամանակ անց, երբ իսլամի հետևորդներն այնքան ջանքեր գործադրեցին այս կրոնը ոչնչացնելու, այս դավանանքը դեռ հավատացյալներ ունի, որոնք թեև գաղտնի, բայց օրը ցերեկով կրակի առջև պաշտամունք են կատարում:

Երկու հեթանոսները գնացին, աչքից կորան: Ես մնացի մենակ, բայց նրանց փոքրիկ կրակարանը դեռ բոցկլտում էր: Զգիտեմ՝ ինչպես եղավ, մի տեսակ կրոնական խորքային ցնցում ապրեցի և անսովոր հույզերով համակվեցի: Այստեղ դեռևս խորին մթություն էր տիրում. արևը ծծմբային իրագնդի նման լեռան հետևից դեռ դուրս չէր եկել, և աղամամութի գունատ լույսն էր մեծ մեհյանի կառույցը լուսավորում: Զգում էի, որ երկու-երեք հազար տարի հետ եմ գնացել: Ազգություն, անհատականություն և շրջապատս մոռացել էի: Նայեցի մոխրակույտին, որի առջև այդ երկու ծերունիները գետնատարած պաշտամունքով երկրպագություն էին անում: Դեռևս չնարած մոխրակույտից, օդում ալիքաձև շարժումներ անելով, դանդաղ քարձրանում էր կապույտ ծխի մի սյուն: Կտրտված քարաժայուրի ստվերները, երկրի չնշմարվող

եզրագծերը, լեռնահովտի խավարում գլխավերևումս շքեղ շողերով իրար աչքով անող աստղերը, այս առեղջվածային ավերակներում և հինավուրց մեհյանների դամբարաններում հանգչող բոլոր հանգուցյալների հոգիների և երկնասլաց լեռնաժայռերի խորհրդավորությունից առաջացող ուժեղ ապրումներս համակել էին ինձ մի ահրելի ներշնչանքով: Ու թեև ես ոչ մի քանի հավատք չունեի, բայց, անկախ իմ կամքից, ծնրադրեցի այս մոխրի առաջ, որից կապույտ ծուխս էր բարձրանում, և երկրպագեցի: Խոսքեր չկային, և հարկավոր էլ չէր աղոթք ու մրմունջ: Մի քանի վայրկյանից ուշքի եկա, բայց, միևնույնն է, Ահուրամազդայի խորհրդավոր պաշտամունք էի կատարել այնպես, ինչպես հնագույն իրանի թագավորներն էին կրակը պաշտում: Այդ պահին ես կրակապաշտ էի: Այժմ դու ինչ ուզում ես, մտածի՛ր իմ մասին: Միգուցե սա մարդկության տկարությունից ու անզորությունի՞ց է...

## Գ) ԱԲՈՒ ՆԱՍՐԻ ԳԱՅԸ (ԹԱԽԹԵ ԱԲՈՒ ՆԱՍՐ)<sup>452</sup>

Չիկագոյի «Մետրոպոլիտեն» թանգարանը<sup>453</sup> երկրորդ տարին էր, որ Շիրազի<sup>454</sup> մոտակայքում՝ Աբու Նասր բլոհ վրա, գիտական պեղումներ էր անում: Նրանք նեղ ու սեղմված գերեզմաններում, որոնց մեջ հաճախ մի քանի հանգուցյալների աճյուններ կային, գտել էին կարմիր կժեր, կուլաներ, բրոնզե կափարիչներ, եռասայր տեգեր, ականջօղեր, մատանիներ, մանյակազարդ ուլունքներ, ապարանջան, դաշույն, Ալեքսանդրի և Հերակլի մետաղադրամներ, որոնց մեջ, եռոտանի մի մեծ աշտանակից բացի, որևէ հատկանշական բան չկար:

Դոկտոր Վարները (Warner) հնագիտության և հնագույն լեզուների մասնագետ էր: Նա անասելի ջանքեր էր գործադրում՝ սեպագրեր, մարդու կամ կենդանու պատկերներ, խեցե ամաների նշաններ պարունակող գլանաձև դամբարանների գտածոների հիման վրա պատմական ուսումնասիրություններ կատարելու համար: Գորեստը (Gorest) և Ֆրիմանը (Freeman) նրա օգնականներն էին: Նրանք դեղնագույն ու ճմոթված հագուստներով, արևի ճառագայթներից այրված մերկ բազուկներով ու սրունքներով, կտավագործ գլխարկները գլխներին և թղթապանակները

<sup>452</sup> «*Taxtē Abū Nasr» – Աբու Նասրի պալատը կամ Աբու Նասրի գահը Իրանի հարավային քաղաքներից մեկի՝ Շիրազի արևելյան շրջանում է գտնվում: Բլուրի բարձունքին կան կառույցների մնացորդներ, մի քարե պատմեշ, աղյուսից պատեր, կավե շենքեր և վայր ընկած շքամուտքեր, նաև Պերսեպոլիսի նմանությամբ մի քանի նախշաքանդակներ: Այդ բոլոր նախշաքանդակներից մնացել է միայն սպասուհու քանդակը՝ մի աման ձեռքին: Ըստ որոշ գիտնականների՝ նախշաքանդակները Պերսեպոլիսից են բերվել և կրկին այդ վայրում տեղադրվել: 1932-34 թթ. Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանի գիտական արշավախումբն այդ վայրում պեղումներ է կատարել և խեցե իրերի նմուշներ ու քարե ամաններ հայտնաբերել Աքեմենյանների ժամանակաշրջանից, մետաղադրամներ և այլ իրեր Սելևկյանների, Արշակունիների և Սասանյանների ժամանակներից: Դավանաբար իսլամից առաջ մի քանի բերդեր են եղել նույն վայրում, որոնցից մեկը Աբու Նասրի պալատն էր: Աբու Նասրի պալատի հին անունը Աբու Նասրի գահ էր, որը գրանցված է Իրանի պատմական ժառանգության անվանացանկում: Աբու Նասրի պալատի հարևանությամբ մի սրբավայր կա, որ Դասթե Խեզր է կոչվում (<https://bit.ly/2TZk1tA>):*

<sup>453</sup> Metropolitan Museum, Chicago.

<sup>454</sup> Շիրազը Իրանի հարավային նահանգ Ֆարսի կենտրոնն է: Այն Իրանի վեցերորդ բազմաբնակ և չորրորդ մեծ քաղաքն է:

թևերի տակ, առավոտից երեկո քանվորներին ցուցումներ տալով, նոթագրելով, նկարելով ու պեղումներով էին զբաղված: Սակայն նրանց գտածոյին շարունակ միայն ապակե կոտրված գնդիկներ էին ավելանում, մինչև որ աշխատանքի եռանդը նրանց մեջ մարեց, և որոշեցին մինչև տարեվերջ մի կերպ դիմանալ, իսկ հաջորդ տարի պեղումներին չմասնակցել:

Ասում են՝ պարոնը սկզբում Ակրոպոլիսի այն քարերով ու դարպասով էր խարվել, որոնք այդտեղ էին տեղափոխվել: Կառույցի միայն մուտքի ճակատն էր սև քարերից, իսկ այն քարերի բեկորները, որոնցով շարված էին շենքի պատերն ու հիմնասյունները, հենց այնպես ընկած էին հատակին, անկյունաքարերից մեկը նույնիսկ որպես շենքի շինանյութ էր օգտագործվել: Յողի տակից դուրս ցցված մի քանի աստիճաններ էին նշմարվում այն արահետի վրա, որը բլրից դեպի ներքև էր տանում:

Դոկտոր Վարներն ամբողջ օրը դիմացի բլրի վրա գտնվող կացարաններում ընթերցանությամբ և գտած իրերի դասակարգմանբ էր զբաղված: Այդ կացարանները հատկացված էին պահեստի, խոհանոցի ու լվացարանի համար: Պատշգամբի առջև մի ընդարձակ սրահ կար, որը նախատեսված էր ընթերցանության, ճաշելու և ընդունելության համար. ձախակողմյան սենյակը որպես ննջասենյակ էր ծառայում: Ղասեմը՝ նրանց սպասավորն ու վարորդը, գնումներ անելու և ձյուն<sup>455</sup> առնելու համար հաճախակի Շիրազ էր գնում, քանի որ մոտակա՝ Եմամզադե դաստեղը<sup>456</sup> և Բարմ Դելաք<sup>457</sup> գյուղերը և ճանապարհի վրա գտնվող պանդոկը հազիվ թե կարողանային նրանց առօրյա կարիքները բավարարել:

Բարմ Դելաքը բարեխառն կլիմայով գրեթե զբոսաշրջության վայր էր, այդ իսկ պատճառով Շիրազի բնակչության ամառային զբոսավայրն էր նաև: Մարդիկ, իրենց հետ վերցնելով անհրաժեշտ իրեր, գնում և մեկ-երկու գիշեր մնում էին այնտեղ:

<sup>455</sup> Շիրազում ամռանը սառույցի փոխարեն ձյուն էին օգտագործության վայր էր, այդ իսկ պատճառով Շիրազի բնակչության ամառային զբոսավայրն էր նաև: Մարդիկ, իրենց հետ վերցնելով անհրաժեշտ իրեր, գնում և մեկ-երկու գիշեր մնում էին այնտեղ:

<sup>456</sup> Էմամզադե dast-e Xēzr – Սրբավայր, որը գտնվում է Շիրազ քաղաքի հարավարևելյան մասում՝ Թախթ Աբու Նասրի հարևանությամբ:

<sup>457</sup> Barm Dēlak – Աղբյուր, որը գտնվում է Շիրազի արևելյան մասում: Այն բնության գրկում գեղեցիկ զբոսավայր է: Աղբյուրը սկիզբ է առնում մոտակա լեռան ծերպից, որի վրա Սասանյան դինաստիայի ժամանակաշրջանից երեք որմնախորշեր են փորված:

Դոկտոր Վարները և իր գործընկերները նույնապես աշխատանքն ավարտելուց հետո զբոսանքի համար Բարձ Դելաք էին գնում կամ սրահում շախմատ էին խաղում ու երգում:

Բայց Սիմուլեի դագաղը գտնելուց հետո իրավիճակը փոխվեց: Հատկապես դոկտոր Վարների կյանքում արմատական փոփոխություն տեղի ունեցավ, որովհետև դագաղը ոչ միայն հնագիտական մեծ արժեք էր ներկայացնում, այլև նրա մեջ կարևոր փաստաթուղթ կար, որը օրեր շարունակ զբաղեցնում էր Վարների միտքը:

Ֆրիմանը մի օր սարի ստորոտում, իր մի խումբ աշխատողների հետ պեղումներով տարված, խորհրդավոր առարկաներ է հայտնաբերում: Բարձրացնելով կրաշաղախով ու ցեխով ամրացված մի քանի քարե կտորներ՝ վերջապես այդ բլոհ վրա մի գետնափորի են հասնում: Դոկտոր Վարների և Գորեստի գլխավորությամբ այդ փորվածքում մի քարե մեծ դագաղ են հայտնաբերում, որը զուգահեռանիստի տեսքով մեկ ամբողջական քարից էր պատրաստված:

Նրանք մեծ դժվարությամբ այդ դագաղը կողքի մեծ սրահը տեղափոխեցին: Համակ ուշադրությամբ և զգուշորեն բացեցին դագաղը: Դագաղի անկյունում կքանիստ վիճակում, ծնկները գրկած բարձրահասակ մի տղամարդու զմռսված մարմին էր: Գլխին երկշարք մարգարտե ժապավեններով սաղավարտ էր, և գլուխը կախ էր: Հագին ոսկեզօծ և թանկարժեք զգեստ էր՝ գոհարազարդ մի մանյակ կրծքին, և թուրք կապված էր մեջքին: Նրա համազգեստն ամբողջությամբ հատուկ յուղով էր օծված, և թափանցիկ ու նուրբ մի գործած կտոր էր գլխին:

Վարներն ամենայն զգուշությամբ նուրբ ծածկոցը մումիայի վրայից հետ քաշեց: Մետաքսի կտորը, որ մումիայի բերանի մոտ էր, կարծես ճմռթված էր և արյունով ներկված: Դեմքի մկանները այտոսկրերին էին միահյուսվել, աչքերը սոսկալի փայլ էին արծակում: Վարները, ուշադիր նայելով, տեսավ օղակաձև լարին ամրացված երկարե մի աղոթագլան, որ կարծես հետո էին մումիայի կրծքին կախել: Դոկտոր Վարները խողովակը լարից անջատեց և երբ բացեց, երկու մագաղաթ մեջից դուրս ելան: Մեկի վրա պահլավերեն գրություն կար, իսկ մյուսի վրա, որ ավելի փոքր էր, երկրաչափական գծեր և նշաններ էին արված: Վարները նախքան դագաղում եղած մյուս իրերի զննմանն անցնելը հարկ համարեց թուղթը կարդալ:

Դոկտոր Վարների ուսումնասիրություններն ու հետազոտությունները տևեցին մի քանի շաբաթ: Նա այնքան էր տարվել այդ ուսումնասիրությամբ, որ ուտելն ու խմելն էլ էր մոռացել: Սենյակում հաճախ խոսում էր ինքն իր հետ, և երբ ընկերները աշխատանքից ազատվում էին, նրանց հետ սկսում էր այդ թղթի մասին բանավիճել կամ խորհրդապաշտական էզոթերիկ գոքերի ուսումնասիրության մեջ էր խորասուզվում, որոնցից ընկերներն զլուխ չեն հանում, և նրանց նրա այս վարքագիծը մոլեգնության պես բան էր թվում:

Մի օր՝ իրիկնապահին, Ֆրիմանը, գործն ավարտելով, սրահ մտավ՝ ձեռքին կոտրտված կարմիր ապակե գնդիկներ, որոնց վրա աջից ու ձախից մուգ սրճագույն թելիկներ էին կախված: Գնդիկները դրեց սրահի մեջտեղում գտնվող մեծ սեղանին, որը ծանրաբեռնված էր օրաբերուվ, ամսագրերով ու ալբոնով: Դոկտոր Վարները՝ ծխամործը բերանի անկյունում, խոհուն, ինքնամփոփ քայլում էր: Նա մոտեցավ Ֆրիմանին ու հարցրեց.

- Որտե՞ղ է գորեստը:

- Գնացել է զբոսանքի: Պատկերացնո՞ւմ եք՝ մի շաբաթ է, ինչ նա լրիվ փոխվել է: Գուցե նա իրավացի է. չէ՞ որ մեզանից երիտասարդ է: Մերը՝ ինչ. արևի տակ, միապաղաղ կյանք, զվարճանքի բացակայություն: Նրա համար ժամանակը շատ դժվար է անցնում:

- Շիրազ են գնացել չե՞:

- Այո՛, կիրակի օրը միասին Բարմ Դելաքում էինք: Կարծես մի կնոջ պատմություն է:

- Նրան պետք է հասկացնեմ, որ իր ապրելակերպը լավ բանի չի հանգեցնի: Արյունը եռում է: Բայց մոռացա նրան ասել, որ այս գիշեր ցանկալի կլիներ՝ միասին լինեինք: Ի՞նչ ես կարծում: Այս գիշեր՝ ժամը ութն անց տասնինգին, ուզում եմ կտակի մեջ գրված հրահանգը կատարել:

Ֆրիմանը զարմացած հարցրեց.

- Ի՞նչ հրահանգ: Այն նույն աղոթքնե՞րը, որ ասում էիք, թե հատուկ պայմաններում կարդալու դեպքում մահացածը կկենդանանա:

- Գիտեմ՝ ինքներդ ներքուստ ծիծաղում եք: Մի՛ սխալվեք, ես ձեզանից ավելի անհավատ եմ, բայց ինքս ինձ պատկերացնում եմ, թե սա մի կնոջ կտակ է, որը, հարյուրամյակներ առաջ գերեզման մտնելով, հավատացած է եղել, որ իր արյունը մու-

միայի համար սննդի է վերածվելու, և հույս է փայփայել, որ մի օր իր այս թուղթը կկարդացվի: Ուզում եմ ասել՝ սրանով այն կնոջ ցանկությունն ու խնդրանքը պիտի կատարվի, որին ես պարտական եմ, պարտական եմ նրա նախանձախնդրությանը: Մեզ վրա թանկ չի նստի. միայն երկու տեսակի բռնկվող նյութեր են հարկավոր, որոնք նախօրոք պատրաստել եմ, և կրակ ու կես ժամ մեր հոգու ավյունը: Մենք այլ ջանքեր չենք գործադրելու: Քավ լիցի... Մենք դեռ նախնյաց գաղտնիքները չենք բացահայտել:

- Մի՞թե դա ծիծադրելի չէ: Ես համոզված չեմ, թե այդ պարտականությունը մեզ վրա է դրված, ու այդ գործը մեզ է հանձնարարված, և մենք համապատասխան աշխատանք պիտի տանենք ու այդ պատգամն անպայման կատարենք: Եթե այս դագաղը ոչ թե մենք, այլ մեկ ուրիշը գտներ, մի՞թե նա իրեն պիտի պարտադրեր այդ կնոջ ցանկությունը կատարել:

- Բայց քանի որ հենց մեր ձեռքն է ընկել, մենք էլ պիտի ամեն ինչ կատարենք պատգամի համաձայն: (Ցույց է տալիս մեր թվարկությունից առաջ ստեղծված այդ գնդիկները) Դուք կարծում եք, որ այդ գնդիկների օգնությամբ հնարավոր է գուշակել, թե մեր թվարկությունից չորս-հինգ հազար տարի առաջ մի հիմար արարած այս լեռան մոտ ապրել է ու այս ափսեով ճաշել, և դա էլ ընդունում եք իբր գիտական հայտնագործություն և մտածում, որ այն մեր կյանքի հետ ուղղակիորեն որևէ կապ ունի: Բայց շատ հետաքրքրական այս կտակը, որը պարունակում է մարդկային ողբերգություն, ցավ և զգացմունք, Դուք այն սնահավատություն եք համարում: Միանգամայն բնական է, որ այն բնագիտորեն հավաստի չի համարվում և թերահավատության ժպիտ է առաջ բերում: Բայց մի՞թե ճշմարտությունը միայն պաշտոնական բնական գիտությամբ է ձեռք բերվում, որը նաև եկամտաբեր է: Այո՛, այս խնդիրը գիտական չէ և միայն զվարճալի է: Ընդհակառակը, ես այն գիտական փորձաքննության առարկա եմ դարձնում, իմ անմիջական պարտականությունն է՝ անկախ այն հանգամանքից՝ դրանից դրական արդյունք կստացվի՝, թե՞ ոչ:

- Անցյալ օրն ասացիք, թե կտակի բովանդակությունն ամբողջությամբ պարզաբանված չէ, և դեռ խնդիրներ կան:


- Մնացել է միայն մի հասկացություն, մի նախադասություն, որին լավ չեմ անդրադարձել, մնացածը թարգմանվել է: Բայց քանի որ այս գիշեր լուսնի տասնչորսերորդ գիշերն է և տոմարական

օրացույցով համընկնում է կտակում նշվածին, այլևս չեմ կարող այս գործը հետաձգել: Սխալվելը շատ կարևոր չէ: Կտակի վերջում գրված է. «....նեյրանգի արարողության, այսինքն՝ խորհրդակատարության ավարտին թալիսմանը կրակը գցել», նախադասությունը այս է. «*Cēgōn danman taltam rā bēyn ātar ūgandat Sīmoyē ūrāxīzat*», այսինքն՝ իենց այս թալիսմանը կրակը գցվի, Սիմոյեն ոտքի կկանգնի: Մի՞թե իմաստն այն է, որ խորհրդակատարումից հետո եթե կրակը գցվի, նա կխաղաղվի, այսինքն՝ պարզ չէ, թե կրակը մարելուց հետո մումիան վերակենդանալո՞ւ է արդյոք: Գուցե նպատակն այն թալիսմանն է, որ երկրաչափական գծեր ունի և առանձին թղթի վրա է գրված, և պետք է կախարդակամ<sup>458</sup> արարողության վերջում այն կրակի մեջ նետել, որպեսզի Սիմոյեն ոտքի կանգնի: Սպասեք, կտակի թարգմանությունը գրպանիս մեջ է, Զեզ համար կարդամ<sup>459</sup>:

Դոկտոր Վարները գնաց և հանգիստ նստեց նստարանին, մի թուղթ գրպանից հանեց ու սկսեց կարդալ. «Հանուն Աստծո: Ես՝ Գուրանդոխտս, մոգպետ Վանդասփի աղջիկն եմ և թագավորի քույրը և Բարս Դելաքի, Շահիքասանդի և Սպիտակ պալատի մարզպետի՝ Սիմոյեի կինը: Մեր ամուսնությունը տասը տարի տևեց, սակայն այդ ընթացքում Սիմոյեի սերմից երեխա չծնվեց: Ամուսինս, ըստ ավանդույթի և հավիտենական օրենքի, մի ուրիշ կին ընտրեց, որպեսզի տղա երեխա ունենա: Բայց նրա ջանքերն ապարդյուն էին, քանի որ, բժիշկների վկայությամբ, նա ամուլ (akār = բէկար = անզոր) էր: Բայց Սիմոյեն ոչ բարեպաշտական այլ ցանկասիրության ձգտումներով մի կախարդուհու հետ խորհրդակցեց և դեղերի ներգործությամբ մի անառակ աղջկա սկսեց սիրահետել: Մեր մեջ ուխտ և պայման կար, որ կրկնակի ամուսնություն չի լինելու, բայց նա իր որոշմանը հավատարիմ չմնաց: Թողնելով իր գործերն ու պաշտոնավարությունը՝ ամբողջ օրը Սպիտակ պալատում այդ անառակ աղջկա՝ Խորշիդի հետ զվարճանալով և կերուխումով էր անցկացնում: Նա Խորշիդի

<sup>458</sup> Nēyrang.

<sup>459</sup> «*Cēgōn īn taltam rā andar āzar afkanad Sīmoyē ūr āxīzad*» (Հենց այս թալիսմանը կրակի մեջ գցվի, Սիմոյեն ոտքի կկանգնի):



մոտ ինձ վարկաբեկում ու նվաստացնում էր: Ի վերջո հարսանիքի պատրաստություն տեսավ՝ լուծարելով իր և իմ ուխտադիր դաշնությունը: Չդիմանալով անպատվությանն ու նվաստացումին՝ երդվեցի նրան կենդանի չթողնել: Վրեժս իրականացնելու համար մի կախարդ կնոջ դիմեցի: Սիմոյեի և Խորշիդի հարսանյաց խնջույքի հենց նույն գիշերը կախարդի տված նյութը Սիմոյեի գինու գավաթի մեջ լցրի և նրան իրամցրի: Նա կիսամեռ (բուշասպ<sup>460</sup>) ընկավ: Կախարդ կինը հակաթույնը և Սիմոյեին կենդանացնելու կախարդագիրն առանձին ինձ էր տվել: Բայց ես նախընտրեցի ամուսնուս հետ կենդանի գերեզման մտնել, և իմ արյունը թող նրան սնունդ դառնա: Մեր երեքի արյունն այս ստորգետնյա հարատև բնակության վայրում նա պիտի ծծի, որպեսզի Խորշիդին կնության առնելու ամոթանքն իր վրայից ջնջվի: Եղբայրս թող իմանա, որ ես հավատարիմ եմ եղել և այն թալիսմանը, որ նրան կրկին կյանք է տալու, կտակի հետ եմ դրել»:

«Ո՞վ կարդացողդ սույն կտակի, իմացի՛ր, որ Սիմոյեն չի մեռել և կիսամեռ վիճակում է: Կախարդուհու գաղտնագրով նա մումիա է դարձել և այս թալիսմանով կկենդանանա: Այդ գործի համար պետք է լուսնի տասնչորսերորդ գիշերը քո և դագաղի միջև եղած տարածությամբ բուրվառ պատրաստել, մանդալում<sup>461</sup> դնել, նրա մեջ անուշահոտ խունկ լցնել և այս բառերը բարձրածայն ասել: (Այստեղ տեքստի բովանդակությունը փազանդով<sup>462</sup> է գրված: Կարծես թե սիրիական (Syriac) են, դրանց

<sup>460</sup> Būšāsp [bwš̥asp] M bwšy̥asp, N~] (բուն, ծովություն, երազ) (տե՛ս Makenzi D. N., *Farhang-e qūčak-e pahlavī*, transl. by Mīrfaxrāyī M., Tehran, 1379, էջ 56):

Բուշասպ, բուշասփ, բուշնիստ – քուն, թմրություն կամ քնի և թմրության դեկ: Պահլավերենում՝ եստար, «Ավեստա»-ում՝ եստա, պարսկերեն բառարաններում «քուն» և «երազ» իմաստներով է արձանագրվել: Լուսաբացին, երբ աքաղաղը կանչում է, բուշասպը ջանում է ամբողջ աշխարհը քնի մեջ պահել և բարեպաշտ մարդկանց բարի մտքերից, բարի խոսքերից և բարի արարքից հեռացնել ու դրդել չարագործության (Վանդիդադ, 18, 15-17 և 23-25 հատվածներ) (տե՛ս Bahār Mēhrdād, *Ražūhēstī dar asātīr-e Irān*, 4<sup>th</sup> print, Tehran, Շնորհական Ազգային գրադարան, 1381, էջ 90):

<sup>461</sup> Mandal – «Շրջագիծ, որ օձահմաները կամ վիուկները գետնի վրա գծում և միջում նստած՝ կախարդություն էին անում» (Մանսուրեան Յ., Աշվ. աշխ. , հ. Բ, էջ 1048):

<sup>462</sup> Միջին պարսկերենի տեքստերը, որոնք «Ավեստա»-ի այբուբենով են գրված, կոչվում են փազանդ (տե՛ս Tafazolī A., Amūzgār J., *Zabān-e Pahlavī, adabyāt va dastūr-e ān*, 3<sup>th</sup> publish, Tehran, 1380, էջ 28):

իմաստը պարզ չէ, բայց պետք է անպայման ընթերցվեն, համենայնդեպս արարողության ժամանակ դրանց խորհուրդը ըմբռնելը պարտադիր չէ): Ապա հենց խորհրդակիր իրը՝ թալիսմանը, կրակը գցվի, Սիմոյեն ոտքի կկանգնի»: Այս վերջին գրության իմաստը հստակ չհասկացա, բայց, միևնույն է, տեսնում եք, որ բոլոր անհրաժեշտ կարգադրությունները նշված են:

Դոկտոր Վարները հետաքրքրությամբ հայացքը սկսեուց ֆրիմանի դեմքին, կտակը ծալեց և դրեց գրպանը:

Ֆրիմանը գլուխը շարժեց.

- Կանանց հավիտենական նախանձի պատմությունն է:

Վարներն ակնոցը հանեց, մաքրեց և կրկին դրեց.

- Բացի նախանձի արդյունք ողբերգությունից, ինձ համար կարևոր կետեր են պարզվել: Առաջին՝ մեզ համար բացահայտվում է Սասանյանների ժամանակների մի շվայտ տիրակալի ներքին կյանքը, երկրորդ՝ պարզվում է, որ Թախթե Արու Նասրը նաև Բարմ Դելաք, Շահփասանդ և Սպիտակ պալատ է անվանվել: Դասթե Խեզրը Զնդանի այգին էր (այս նյութն ուրիշ փաստաթղթերից եմ գտել): Մեզ համար բացահայտվում է նաև, որ Սասանյանների ժամանակ արյունակցական ամուսնությունը՝ *Խվիթողես*<sup>463</sup> (ազգակցին տալ), ընդունված էր կամ առնվազն իշխանների և ազդեցիկ մարդկանց մոտ ավանդույթ էր: Բայց կարևորը՝ մենք չգիտեինք, թե ինչն է պատճառը, որ յուրաքանչյուր գերեզմանում որոշակի թվով հանգուցյալների կմախքներ կան: Բնակիչներն ասում են՝ անցյալում, երբ մեկը շատ էր ծերանում և տկարանում, երիտասարդները նրան ծեսով քաղաքից դուրս էին բերում և ողջ-ողջ հանձնում հողին, որպեսզի նա իր ապրած վայրում շրջապատի համար նեղություն չդառնա: Այս սովորությունը փոքր-ինչ այլափոխված տարբերակով աֆրիկյան որոշ ցեղերի մոտ ենք հանդիպում: Մինչև հիմա այդ համոզմունքն իմ մեջ աներեր էր: Բայց այս փաստաթղթից պարզվում է, որ ամեն մի հանգուցյալի հետ նրա կանանց էլ էին կենդանի քաղում, որպեսզի այն աշխարհում նրա գրուցակիցը դառնան: Այդպիսի հավատք հին ազգերի մոտ եղել է:

Բոլորս ուշադիր նայում էինք և տեսանք, որ մումիայի բերանը ներկված էր արյան նման մի բանով: Ժողովրդական հավա-

<sup>463</sup> Xwēdōdah – Արյունակցական ամուսնություն (խվիդոդահ). Xwēdōdah [hwytw(k)ds, -d<sup>2</sup>t<sup>1</sup> =Av. x<sup>v</sup>aētwadaθa] (տե՛ս Makensi D. N., օր. cit., էջ 166):

տալիքի համաձայն, եթե մահացածն իր պատաճքը բերանն առնի, ողջերի մեջ մահ ու աղետ կլինի: Այս չարիքը կանխելու համար պետք է արյունաբրու հանգուցյալին ամբողջ գերեզմանոցում փնտրեն և երբ գտնեն նրան, նրա գլուխը մեկ հարվածով պիտի բաժանեն մարմնից: Մագաղաթի վրա գրված է. «Մեր արյունը մահացածի ուտելիք թող դառնա»: Այժմ ես չեմ ուզում հասարակության հավատալիքների մանրամասների մեջ խորանալ, բայց կարևոր այն է, որ մենք ձեռքի տակ մի իրական և պատմական փաստաթուղթ ունենք: Սիմոյեն այդ կիսամեռ վիճակում իր կանանց արյունո՞վ է սնվել: Սի՞թե այդ սնունդը մի հոգուն հարյուրավոր տարիներ կբավարարեր: Կամ գուցե այդ վիճակում մի որոշ ժամանակ անց այլևս սննդի պահանջ չե՞ն զգում: Ես սնահավատ չեմ, բայց իմ անհավատության մեջ էլ մոլեռանդ չեմ, միայն թե իին ժամանակների հավատալիքներն ինձ շատ են հետաքրքրում: Անկախ ցնորամտությունից և սնոտիապաշտությունից և դրանք մի կողմ դնելով՝ ժամանակակից գիտությունը պետք է ցանկացած հոգեզգացմունքային իրադարձություն և երևույթ մանրազնին ուսումնասիրի: Բայց...

Այդ պահին Գորեստը, մի պարեղանակ սուլելով, անսպասելի ներս մտավ, մի մեծ, սրճագույն շուն էլ՝ իր հետևից: Նա սաղավարտը գցեց սեղանին և Ղասեմին կանչեց ու իրամայեց ըմպելիք բերել:

Դոկտոր Վարներն իր խոսքն ընդհատեց և հայացքը Ֆրիմանին հառեց:

Վարները Գորեստին ասաց.

- Քիչ առաջ Ֆրիմանի հետ Զեր մասին էինք խոսում:

- Երևի իմ գովքն էիք անում:

Վարները պատասխանեց.

- Ի՞նչ եք ասում, որոշել ենք Զեր ականջը ոլորել:

- Ֆրիմանի խոսքերին մի՛ հավատա. նա Օթելլոյի պես խանդուտ է: Եկել եմ միայն ուրախ լուր հայտնելու, բախտավոր բան է եղել. այս գիշեր դուք երկուսով իմ հյուրն եք լինելու:

Շոյեց սրճագույն շան՝ ինգայի գլուխը: Վարները կրկին ծխամործը ծխախոտ լցրեց, վառեց և սկսեց հաճույքով ծխել: Ղասեմը երեք բաժակ քաղցր ըմպելիք բերեց և մատուցեց նրանց:

Գորեստն ըմպելիքը ճաշակեց ու ասաց.

- Այս գիշեր երկուսով Բարմ Ղելաքում իմ հյուրն եք: Երեք

կին էլ կան: Ուզում եմ՝ արաբական գիշերների<sup>464</sup> նման մի գիշեր անցկացնենք: Մի՞թե մենք Արևելքում չենք: Մինչև հիմա անխղճորեն մեր գլուխն այրող կիզիչ արևից և մեր աչքերի համար սուրմա դարձած հողից բացի, ուրիշ բան չի եղել մեր հասույթը: Իսկապես, այնքան ենք այս մեռած ոսկորների և բրածո իրերի մեջ ապրել, որ կենսախնդությունն ու եռանդը մեր մեջ մարել են: Դոկտոր, Դուք շատ տարօրինակ կյանք եք ընտրել Ձեզ համար: Ամբողջ օրը տաք սենյակում՝ արևի տակ, ընթերցանությամբ եք զբաղվում: Գիշերները չեք կարողանում քնել, հաճախ արթնանում և ինքներդ Ձեզ հետ խոսում եք: Ձեզ համար զբոսանքն ու զվարճանքն անթույլատրելի եք համարում, չափից շատ գոքերով եք տարված: Յավատացե՛ք՝ այսպիսի բաները մարդուն շուտ են ծերացնում:

Վարները պատասխանում է.

- Ձեր խրատներից շատ շնորհակալ եմ: Բայց ցավում եմ, որ Ձեր՝ այս գիշերվա իրավերը չեմ կարող ընդունել: Միևնույն ժամանակ կուզեի, որ իմ խոսքը լսեք: Ձեզ խորհուրդ եմ տալիս՝ այս գիշեր միասին լինենք, և Դուք ինձ փոքր-ինչ օգնեք, քանի որ մտադիր եմ Գուրանդոխտի կտակը կյանքի կոչել: Այս գիշեր Լուսնի տասնչորսերորդ գիշերն է, և մի ամսից մեր աշխատանքը ավարտին կհասնի. պետք է մեր զեկույցը պատրաստենք, իսկ զվարճանալու համար, անշուշտ, շատ ժամանակ կունենանք:

Գորեստը ծիծաղեց.

- Այդ խարդախս կնոջ կտակը բոլորիս ծաղրի<sup>°</sup> պիտի ենթարկի: Կատակո՞ւմ եք: Ես չեի կարծում՝ գործն այսքան հեռու կհասնի: Իրոք որոշել եք ծեր կապիկին կենդանացնել: Ձեզ թվում է՝ աշխարհի բնակչությունը փոքրաթի՞վ է: Ուզում եք՝ մի հոգի էլ

<sup>464</sup> «*Alēf Laylat ol Laylē*»-ը («Յազար ու մի գիշեր») կամ «Յազար ու մի գիշեր») արաբական ամենահայտնի ժողովածուներից է: Այն բաղկացած է հնդկական, պարսկական, արաբական, իրեական և եգիպտական պատմվածքներից և դարերի ընացքում, բերներերան, սերնդեսերունդ փոխանցվելով, տարածվել է տարբեր ազգերի մեջ: Ըստ ուսումնասիրությունների՝ «Յազար ու մի գիշեր» ժողովածուի հիմքը հենց պարսկական «*Hēzār Afsān*» («Յազար հեքիաթ») գիրքն է եղել, որի շատ հեքիաթներ և պատմվածքներ հնդկական աղբյուրներից են ծեռք բերվել, և 7-րդ դարում այն պահլավերենից արաբերեն է թարգմանվել: «Ալեֆ Լայլաթ ոլ Լայլե»-ն մի թագավորի և աղջկա (ասում են՝ իր ստրուկի) պատմությունն է: Վերջինս իր կյանքը փրկելու համար թագավորին ամեն գիշեր մի հեքիաթ էր պատմում (տե՛ս *Mahjūb M. J.*, նշվ. աշխ., էջ 361-363):

նրա՞նց ավելանա: Ուրեմն Նյու Յորքի հոգեհարցության ժողովը մեզ հետ գործ կունենա:

Երեքով ծիծաղեցին: Գորեստը համառեց.

- Դինգ ամիս է՝ այս անապատում շան նման աշխատում ենք և միայն այս ուշագրավ դագաղն ենք հայտնաբերել: Արդ իրավունք չունե՞նք մի քիչ զվարճանալու: Ես եմ մեղավոր, որ ձեզ համար այդքան մտածում եմ: Մեքենայով Շիրազ եմ գնացել, երեք կին և նրանց խնդրանքով երկու նվագող եմ հետո բերել: Պատկերացնո՞ւմ եք՝ մեր հայտնաբերած դագաղն ընկել է ժողովրդի բերանը և բամբասանքների տեղիք տվել: Այս կանայք էլ կարծում են, թե մենք մեծ քանակությամբ գանձ ու գոհարեղեն ենք գտել: Այնուամենայնիվ, նրանք Բարմ Դելաքում են: Վրան են խփել և այնտեղ կգիշերեն: Այնտեղ ուրիշ ոչ ոք չկա, ամեն ինչ խաղաղ է: Այն վիսկու շշերից ոչ մի բան չի՝ մնացել: Ուտելիքի իմաստով ամեն ինչ կարգին է. Ղասեմին ուղարկել եմ, ամեն բան ճարել է:

Դոկտոր Վարները լրջորեն ասաց.

- Ես համաձայն չեմ, որ պարոնի մեքենայով այսպիսի զվարճանքների գնանք: Չմոռանանք, որ մեծ պատասխանատվություն ենք ստանձնել: Մեր վարքութարքը շատ են հսկում: Նման փոքր վայրերում ջուր խմելու էլ տեսնում են: Երկու օր հետո Ղասեմը կամ այս գործավորներից որևէ մեկը կարող է մեր հասցեին հազար ու մի բան հորինել. Ես չեմ ցանկանում խայտառակվել: Զեզ կարգադրում եմ՝ սա լինի վերջին անգամ:

Գորեստը հավաստիացրեց.

- Կստահ եղեք՝ ոչ ոք մեզ չի տեսել, քանի որ նրանք քաղաքից դուրս էին եկել, բայց հետաքրքին այն է, որ այս գիշեր արևելյան սազանդար ենք ունենալու: Սազ նվագողները հրեաներ են և միայն տեղական սազեր են նվագում: Միգուցե դա այն նույն սազն է լինելու, որն այս քաղաքի կառուցման ժամանակ են նվագել, երբ Սիմոյեն իր կալվածքներում էր ապրում: Այնպես որ մենակ Զեր այս ծեր կապիկը երեք կին է ունեցել, իսկ մենք երեքս մի-մի կին ենք ունենալու: Դավատացեք, որ պետք է մի քիչ էլ ողջերի մեջ ապրենք, բայց նախապես պիտի ձեզ ասեմ, որ ամենափոքրը՝ Խորշիդ խանումը, իմն է լինելու, համաձա՞յն եք:

Վարները հանկարծակի մտասուզվեց.

- Խորշիդ խանո՞ւմ:

Գորեստը հաստատեց.

- Այո՛, խորշիդ խանում: Բարձրահասակ աղջիկ է՝ շողշողուն աչքերով, կլորավուն դեմքով և սև սաթե մազերով: Իսկական արևելյան գեղեցկուիի: Գիտեք՝ նախ ինքն է ինձ հավանել և նամակ գրել:- Դիմելով Ֆրիմանին՝ հարցնում է.- Հիշո՞ւմ ես այն կնոջը, որ Բարմ Դելաքում ինձ մատնացույց արեց:

Վարները.

- Ինչպիսի՛ տարօրինակ զուգադիպություն. Սիմոյեի վերջին կնոջ անունը խորշիդ էր:

Գորեստը.

- Կարծում էի՛ կատակում եք, բայց այս ավանդագրույցը Ձեր միտքը խիստ զբաղեցրել է: Իսկապես կարծո՞ւմ եք՝ այդ կմախքը կկենդանանա և իր այն աշխարհի պատմությունը մեզ կպատմի: Այդ դեպքում ծիծաղելի կլինի: Բայց մինչև վերակենդանացման օրը շատ ժամանակ կա: Իսկ եթե զգուշության համար զարդեղենը հանենք և նոր դրանից հետո փորձենք, մեռածը կկենդանանա՞՝, թե՞ ոչ:

Վարները՝ շատ լուրջ.

- Մումիայի մարմնին չպետք է ձեռք տալ:

Գորեստը.

- Գոնե նրան զինաթափ անեինք և թուրք վերցնեինք, որպեսզի եթե կենդանանա, մեզ չսպանի և զարդեղենն էլ հետը տանի:

Վարները ակնոցը հանեց ու նորից դրեց.

- Յարկավ, Դուք իրավացի եք, որ ինձ ձեռք եք առնում: Իսկապես, իրողությունը զարմանալի է և անհավատալի: Ես ինքս էլ շատ վստահ չեմ, բայց այս կիսամեռ վիճակը գաղտնիքներով լի է: Մենք Յին աշխարհի կախարդների արարողություններից տեղեկություն չունենք: Այս մումիայի աչքերի խորքը չե՞ք նայել: Աչքերը փայլում և կենդանի են, նայում են: Նայվածքը լի է կրքով, ատելությամբ, և միգուցե ամոթխածություն էլ կա: Կարծես դեռ կյանքից չի կշտացել: Մինչև հիմա դա չի խոստովանել, բայց կյանքի կայծը նրա աչքերի խորքում մնացել է: Այնպես որ Ֆրիմանին ասել եմ, որ եթե չկենդանանա էլ, մենք բան չենք կորցնի: Իսկ եթե կենդանացավ կամ նույնիսկ մի քիչ շարժվեց, պատկերացնո՞ւմ եք՝ աշխարհում ինչ իրաշալի իրադարձություն կլինի:

Գորեստը.

- Անիրականանալի երևակայություն է: Ես ուզում եմ իմանալ՝ հարյուր տարի անց էլ կարելի՞ է ենթադրել, որ մահացածի

զմոսված մարմինը և մարմնի անդամները, հատուկ պայմաններում պահպելով, թարմ կմնան, թե՝ այս ամենը ենթադրություն է: Այդ դեպքում մամոնտին, որ Սիբիրի ձյուների տակ ամբողջությամբ պահպանված է, կարո՞ղ են կրկին կենդանացնել: Չեր ասածի համաձայն՝ հարյուր տարի անց մումիան կարո՞ղ է արդյոք կրկին կենդանանալ:

Դոկտոր Վարները.

- Ես Զեզանից ավելի թերահավատ եմ: Բայց կիսամեռ վիճակը երևույթ է, որ այս օրերում քիչ թե շատ դիտվում է, օրինակ՝ Հնդկաստանի մունիսերը կարող են մի շաբաթից մինչև մի քանի ամիս գետնի տակ թաղված մնալ և հանելուց հետո ողջ մնալ: Նման դեպքեր հաճախ են եղել: Մյուս կողմից կարծում եմ՝ դա իրական դեպք է եղել: Այն կենդանիները, որ ձմռանը քնում են, կիսամեռ վիճակում չե՞ն արդյոք: Սիմոյեն դեղերի կամ թալիսմանի կամ անհայտ ուժերի ներգործությամբ կիսամեռ վիճակի մեջ է ընկել, ապա անհայտ եղանակով մումիա է դարձել: Այս վիճակում նրա մարմնի անդամները հիվանդության կամ ծերության պատճառով գործառնության մեջ չեն եղել ու չեն փչացել, և նա իր կենսունակ ուժերը պահպանել է: Եթե նույնիսկ դպրոցներում ուսուցանվող մարդագիտությամբ կրոնական հավատալիքներն ու սնոտիապաշտությունները խորազնին ուսումնասիրության ենթարկենք, կտեսնենք, որ կյանքում ամեն ինչ հրաշքի է նման: Այն, որ ես ու դու այստեղ նստած ենք և իրար հետ խոսում ենք, հրաշք է: Գլխիս մազերը բոլորովին չեն թափվում՝ հրաշք է, եթե ձեռքիս մեջ հյութի բաժակը շշի հետ չի գոլորշիանում, ապշեցուցիչ է: Ստույգ հրաշքները, որոնց ընտելացել ենք, մեզ համար բնական երևույթ են, և երբ, հակառակ այս հրաշքի, մի ուրիշ բնական դեպք է տեղի ունենում, որին չենք ընտելացել, դա մեզ համար հրաշք է թվում: Այսօր, եթե գիտնականներից մեկը հաջողի և իր փորձարանում կենդանի արարածին մի որոշ ժամանակ կիսամեռ վիճակում պահի և իր ցանկությամբ այդ իրավիճակը ստեղծի, ապա իր այս հավակնությունը փաստելու համար մաթեմատիկական բանաձևերով և ֆիզիկայի ու քիմիայի օրենքներին համապատասխան մի գիրք գրի, բոլորը նրան կիավատան: Քանի որ մեր օրերում մարդը իր իսկ ինքնազոհությամբ բնական հավատքը կորցրել է և իր հայտնագործությունների ու գյուտերի պատճառով ինքն իրեն ամենագետ է համարում և գտնում է, որ բնության բոլոր գաղտնիքները

հայտնաբերել է: Բայց իրականում աննշան երևույթ իսկ հայտնաբերել անկարող է: Դպարտ արարածն իր գիտելիքների պաշտամունքը փաստ է համարում և ուզում է՝ բնական այդ դեպքերը ըստ իր բանաձևումների կատարվեն: Դին ժամանակներում մարդ արարածն ավելի պարզ ու ավելի խոնարի էր և հրաշքներին ավելի էր հակված, այդ իսկ պատճառով հրաշք էր տեղի ունենում: Ուզում եմ ասել, որ նա ավելի մոտ էր բնության ու նրա օրենքներին և նրա անհայտ ուժերից ավելի լավ էր օգտվում: Չկարծեք, թե ես այս օրերի ճշգրիտ գիտության դեմ եմ, ընդհակառակը, հավատում եմ, որ մարդն ամենաանհավանական իրողությունն էլ կարող է հայտնագործել, եթե նույնիսկ դա ծիծաղելի և անհավատալի լինի:

Գորեստը, հետաքրքրված լինելով, ասաց.

- Ես Զեր ենթադրությունների հետ գործ չունեմ, միգուցե այս անհավանական հրաշքը տեղի ունենա, բայց եթե մեր այս գիտափորձը չհաջողենք, որի հավանականության աստիճանը շատ բարձր է, վաղը, մյուս օրը վարորդի և աշխատողների մոտ մեր վարկը կգտնենք, վստահությունը կկորցնենք ու կդառնանք ծիծաղի առարկա:

Վարները.

- Ես ամեն ինչ նախատեսել եմ, հատկապես վարորդին արձակել եմ: Վաղը կիրակի է, և մենք աշխատանք չունենք: Քանի որ ուզում էի՝ ինձ օգնեք, Զեր գնալու մտքին հակառակվեցի: Որովհետև, ըստ կարգի, դագաղը պետք է կողքի սենյակում լինի և վարագույրով սրահից առանձնացած, այսինքն՝ այնտեղ, որ հիմա է: Այդ ամենն անելուց հետո եթե ցանկանաք, կարող եք Զեր զվարճության վայրը գնալ: Կարող եք նաև հիմա այստեղ՝ սենյակի վերևի մասում, լուր նստել և գործողությանն ականատես լինել:

Գորեստը.

- Բայց այդ ծեսերը, որ եղել էին այն ժամանակ, հատուկ պայմաններում էին կատարում, որոնք այսօր մոռացվել են:

Վարները.

- Ես ձեռքիս տակ եղածով անհրաժեշտ ուսումնասիրությունները կատարել եմ: Գիտեմ, որ կախարդության արարողությունը շրջանագծի մեջ պետք է կատարվի, որը կախարդի ներգործությունը պահպանող ուժերի համար պատճեշ է համարվում, և այն պետք է ածուխով գտնվ, հաստատակամ և ուժեղ հա-

վատքով անել: Արարողությունը պետք է բարձրաձայն կատարվի, որովհետև կախարդանքի մեջ խոսքի ուժը և ազդեցությունը շատ մեծ են, և ինքնավստահությունը յուրահատուկ իմաստ և կարևորություն ունի, ինչպես նաև անուշահոտ խունկեր և խոտեր ծխեցնելը բնազանցական ուժերի ազդեցությունն ուժեղացնում է և համապատասխան մթնոլորտ են ստեղծում: Այդ առունով վստահ եղեք:

Գորեստը.

- Ընթացքը կռահել չեմ կարող, չեմ ել կարծում, թե լուրջ բան է, այդուհանդերձ մնալու եմ:

Ընթրիքից հետո Դոկտոր Վարները և իր ընկերները քարե դագաղը դժվարությամբ տեղափոխեցին ննջասենյակի դռան մոտ: Վարները մումիայի մոտ եղած ձիթաճրագը, որի տակ սև նյութ կար, վառեց, բրոնզե բուրվառը դագաղի միջից վերցրեց ու սրահ մտավ՝ դռան առջևի վարագույրը քաշելով: Ֆրիմանը գորգը կիսով չափ հետ տարավ, ապա բուրվառի մեջ կրակ արեց: Վարները մի բուռ խունկ, էսփանդ<sup>465</sup> և սանտալ<sup>466</sup> լցրեց նախօրոք պատրաստած կրակի մեջ: Թանձր և անուշահոտ ծուխն օդում տարածվեց, ապա գետնի վրա՝ իր շուրջը, ածուխով շրջան գծեց: Մագաղաթը գրպանից հանեց, բուրվառի առջև կանգնեց և սկսեց բարձրաձայն կարդալ մագաղաթի վրա գրված կախարդագիրը: Ֆրիմանը և Գորեստը լուր, սրահի վերջում աթոռին նստած, դիտում էին, իսկ ինգան նրանց ոտքերի առաջ քնել էր:

Վարները հմայական բառեր էր ասում, որոնց իմաստը ինքն էլ չէր հասկանում, սակայն շատ դանդաղ ու խորհրդավոր էր արտասանում: Յմայանքն ընթերցելու պահին մի ուրիշ թալիսման, որի վրա երկրաչափական գծեր էին գծված, ձեռքից սահեց, ընկավ իր առջև դրված բուրվառի մեջ ու այրվեց: Նա ուշադրություն չդարձրեց, թե ինչպես անուշահոտ ծուխն իր մեջ առանձնահատուկ զգացում առաջացրեց, գլխապտույտ ունեցավ, և մի տեսակ դող ու երկյուղ, նյարդային լարվածություն նրան համակեց, ինչից ձայնը քաշվում էր, և աչքերի դեմք՝ սևանում:

Յանկարծ քնած թվացող ինգան, որը հանգիստ էր երևում, վեր ցատկեց, դուրս նետվեց և ոռնաց: Կախարդական արարողությունը չխաթարելու համար Գորեստը նրա վզկապի շղթայից

<sup>465</sup> Սև հատիկ, որը երբ կրակի մեջ են գցում, հատուկ բույր է արձակում:

<sup>466</sup> Բույսի տեսակ:

բռնեց և ուժով տարավ, սեղանի տակ պառկեցրեց, մինչդեռ շունն անհանգիստ ցատկոտում էր և փորձում սենյակից դուրս գնալ: Վարներն այդ պահին դողդոջուն ծայնով մի քանի անհմաստ բառ արտաքերեց, բայց կարծես ոտքերը թուլացան, և, ծխի հոտից ու իր գործադրած ջանքերից ուշաթափ, հատակին ընկավ: Գորեստը և Ֆրիմանը նրան բարձրացրին ու բազմոցի վրա պառկեցրին:

Այն պահին, երբ թալիսմանը կրակի մեջ ընկավ, ծիթաճրագի լույսի դիմաց, որից քաղցր բույր էր տարածվում, մումիայի մարմնի անդամները դողացին: Նա փոշտաց, գլուխը բարձրացրեց և չոր շարժումով տեղից վեր կացավ: Դագաղից դուրս եկավ, սենյակի պատուհանի մոտ գնաց, այն պատուհանի, որը Վարները մոռացել էր ամուր փակել, բացեց այն ու դուրս ելավ: Նրա բարձր, սև ու չորացած կերպարանքը հանդարտ քայլերով Դասթե խեզը գյուղի ճամփան բռնեց:

Մեղմ քամի էր փչում, երկինքն արճե կափարիչի նման ծանր ու պարզ էր: Թվում էր՝ լուսինն իջել և իր շլացնող լուսավորությունը դամբարանաբլրի բարձունքի վրա էր տարածել, որից բնությունն անկենդանորեն գունատվում էր: Կարծես տեսարանն այսաշխարհային չէր: Աջակողմյան միջնաբերդի սևաքար դարպասը միակ կառույցն էր, որ անցյալից կանգուն էր մնացել: Իսկ մնացածը փոսեր ու գուբեր էին, որոնց մոտ հողաշերտը պարարտանյութ էր դարձել: Սիմոյեի երկար ստվերն իր հետևից քարշ էր գալիս:

Այդ պահին սրահից լսվեց ինգայի ոռնոցը: Բայց Սիմոյեն, առանց շանն ուշադրություն դարձնելու, խոշոր և հավասար քայլեր էր անում, կարծես նա մի պրկաձիգ կամ էլ թաքուն ուժի ազդեցության տակ ճամփա էր գնում: Ապշահար ու բոցկլտուն նայվածքը հառել էր գետնին, ասես նրա աչքերից լուսնկան էր ծագել. ըստ երևույթին, նրա մոտ խախտվել էր ժամանակի զգացողությունը, և անցյալը ներկա էր թվում, ներկան՝ անցյալ: Մտքերը խորշիդի ծեռքից թափված գինու նուրբ գոլորշու նման ալիքածն շարժվում էին, այն կարմիր, այրող գինու, որ խմեց և ուշագնաց եղավ:

Հեռվից Դասթե խեզը և Բարմ Դելաք գյուղերում մի քանի ճրագ էր բոցկլտում: Կարծես Սիմոյեի վերջին անգամ խմած գինու արբեցությունը դեռ չէր անցել. կյանքի վերջին ակնթարթների հուշերի մեջ էր խորասուզվել: Էր անցյալ կյանքից մնացած

հուշերի մեջ մի տեսակ հեքիաթային կյանք էր ապրում՝ վերացած և ուժով ու ջերմությամբ պարուրված: Երևակայում էր, թե իր կալվածքների մեջ է քայլում, ամբողջ միտքը խորշիդի վրա էր կենտրոնացած: Խորշիդի հետ ունեցած առաջին հանդիպման խառն ու տարտամ հուշերն ուղեղում վերապատկերվում ու նոր շունչ էին առնում: Կարծես իր կյանքը միայն այս հուշերն էին, և նրա սիրուց էր կենդանացել:

Սիմոյեն իր և խորշիդի հանդիպման առաջին տեսարանը հիշեց: Իր սպասավորներից մի քանիսի հետ որսի էր գնացել: Անապատում քաղցած ու ծարավ մի վրանի տակ ապաստան գտավ: Անապատային մի աղջիկ՝ գրավիչ ինքնատիպ դեմքով, խոշոր ու եղնիկի աչքերով, վրանին մոտեցավ: Լիմոնաձև կրծքերը կարմիր, ծալքավոր վերնաշապիկի տակից երևում էին: Երկար ու լայն տաքատը մինչև ոտքի թաթերն էին հասել, և ոսկե դրամները շարված էին գլխաշորի վրա: Խորշիդը հրապուրիչ ժայռով հորից հանեց կարկուտի պես սառը թանով լի փոքր, կաշվե դույլը և նրա ձեռքը տվեց: Երբ Սիմոյեն թանի դույլը փոխանցեց աղջկան, նրա ձեռքն իր ձեռքի մեջ առավ ու սեղմեց: Խորշիդը հմտորեն ու նուրբ շարժումով ձեռքը նրա ձեռքի միջից հանեց: Կրկին ժպտաց, սպիտակ ատամները ցուցանելով՝ ասաց. «Քո սի՞րտն էլ դողաց»: Բայց խորշիդը չգիտեր, որ իր հյուրը մարզպետ Սիմոյեն է: Այս խոսքը մինչև Սիմոյեի սրտի խորքը հասավ: Չէ՞ որ կախարդ կինը նրան սովորեցրել էր, որ զորեղանալու և երիտասարդ մնալու համար պետք է կույս աղջիկների հետ շփվի, իսկ այն բարձրաշխարհիկ աղջիկներից, որոնց ներկայացրին, նա ոչ մեկին չէր հավանել:

Այս դեպքը բավական էր, որպեսզի Սիմոյեն սիրահարվեր, և, իրոք, նրա սիրտը դողաց: Թեկուզ իր առաջին կնոջ՝ Գուրանդոխստի հետ պայմանավորվել էր, բայց այդ օրվանից հետո ամբողջ ուշքն ու միտքն այդ անապատի աղջկա վրա էր: Քանի անգամ նրան նվերներ ուղարկեց: Վերջապես, չնայած այն բոլոր զրպարտանքներին ու անվայել խոսքերին, որ նախանձից ասում էր առաջին կինը խորշիդի հասցեին, և այն սպառնալիքներին՝ իրեն սպանելու, Սիմոյեն պաշտոնապես նրա ձեռքը խնդրելու համար մարդ ուղարկեց և ճոխ հարսանյաց հանդես կազմակերպեց:

Նույն գիշերը, երբ Սիմոյեն դեպի Բարմ Ռելաք էր գնում, այնտեղ մեծ խարույկ էին վառել: Յյուրերը ցնծությամբ աղա-

ղակում, ծափահարում, գինի էին ըմպում և կրակի շուրջը պարում: Նրանց շիկացած ու հարբած երեսները կրակից բոցավառվել և սարսափելի լուսավորվել էին: Սիմոյեն, ըստ ավանդույթի, բազմության մեջ խորշիդին էր փնտրում: Վերջապես մոտեցավ մի խմբի, որտեղ նվազողները երգով ու երաժշտությամբ էին տարված: Գոհարազարդ զգեստով խորշիդը նստած էր նրանց մոտ՝ ծառի բնի վրա: Սիմոյեն ծառերի հետևից քնքշորեն երեք անգամ կանչեց խորշիդին: Խորշիդը հմայիչ շարժումով մատուցարանից մի գավաթ կարմիր գինի վերցրեց, դեպի Սիմոյեն գնաց և գավաթը նրա ձեռքը տվեց: Սիմոյեն ձեռքը գցեց նրա մեջքին, ու դանդաղ մտան եղևնիների մեջ: Ապա մի ծառի բնի հենվեց և խորշիդի բարակ ու ջերմ մարմինը գրկեց, իր լայն կրծքին սեղմեց: Խորշիդն աչքերը փակեց: Սիմոյեն այն գավաթը, որ խորշիդի ձեռքից էր վերցրել, մոտեցրեց շուրթերին ու մինչև վերջ խմեց: Գավաթը դեն նետեց և շրթունքները մոտեցրեց խորշիդի կիսաքաց բերանին: Բայց խորշիդը գլուխը հետ դարձրեց, և շրթունքները նրա վզին դիպան: Յանկարծ թունդ ու այրող գինին Սիմոյեի բոլոր երակները մտավ, և նա ուշագնաց եղավ: Ոտքերը դողացին, ձեռքերից ու ոտքերից մի տեսակ սառնություն փոխանցվեց սրտին: Այլևս չհասկացավ՝ ինչ է տեղի ունենում:

Այժմ Սիմոյեին թվում էր, թե արբեցության քնից արթնացել է, բայց հուշերն ու միտքը դեռ գինու գոլորշու սև շղարշով էին պատված: Բոլոր մտքերը գինու նուրբ ալիքների մեջ շարժվում ու եռում էին, և իր ողջ էռթյամբ խորշիդի հանդեպ այրող ու խենք սեր էր զգում: Խորշիդին էր ծարավ: Նա խորշիդի ջերմ մարմինը, գրավիչ աչքերը և բարակ կազմվածքն էր ցանկանում: Լուսավորության, թարմ օդի և սազի կարիք էր զգում: Կարծես գինովությունը դեռ չէր անցել: Յեռվից լսվող սազի կախարդիչ մի ծայն, որն իր հարսանիքին էին նվագում, ականջին գրնաց: Աղմուկ-աղաղակի մեջ դեմքերը, ծառայողների և աղախինների պարը կրակի առջև, այն ամենը, որ անհետացել ու մաքրվել էր, ծխի նման ուղեղում տեսանելի են դառնում և ապա անհետանում, հետո մի ուրիշ տեսարան էր պատկերվում, խորշիդին էր փնտրում: Նրա դեմքն աչքերի առաջ էր:

Սիմոյեի՝ զգացմունքով ու ցանկությամբ լի ուրվականը՝ չոր դիրքով, ուղիղ ու անշարժ վզով, հաշված քայլերով Դասթե խեզրից ճամփա ընկավ դեպի Բարմ Դելաք: Նրա երկար ստվերը

գետնի վրա սահում էր:

Այն երեք կանայք, որոնք Գորեստի ու նրա գործակիցների համար Բարմ Դելաք էին եկել, ծառերի տակ՝ ջրի մոտ, գորգ էին փուն: Նրանց առջև այն ուտելիքն ու ըմպելիքն էին, որ Ղասեմն էր հայթայթել: Խորշիդը ծառի բնին նստած էր: Նրանցից մեկը պակած ինքն իրեն բանաստեղծություն էր մրմնջում, և մյուսը, որ նվազողների հետ խոսելով էր զբաղված, մտահոգ անվերջ ձեռքի ժամացույցին էր նայում: Վերջապես շրջվեց ու խորշիդին ասաց.

- Սրանք չեն գալիս, ընթրիքը չվայելե՞նք, այ’ մարդ:

Խորշիդը պատասխանեց՝ դեռ ժամանակ կա:

- Սա էլ ասես Եվրոպացի լինի: Ասում են՝ ճշտապահ լինելը պետք է Եվրոպացիներից սովորել:

- Գորեսը<sup>467</sup> անպայման կգա, նա ճշտապահ է:

- Այս սոված Եվրոպացիները, որ գնդիկներ են գտնում, մարդկանց շարքում չեն ին:

Խորշիդը.

- Պա՛հ, ուրեմն չգիտե՞ս՝ անցյալ շաբաթ Մոհքարամի պնդմամբ ճանապարհին իջանք: Գնացինք այդ գնդիկ որոնողներին տեսնելու: Երեսուն-քառասուն գործավոր նրանց ձեռքի տակ աշխատում էին: Գորեսը՝ Եվրոպական տիկնիկի նման ոսկեթել մազերով, արևի տակ կանգնած էր. սիրտս վառվեց: Յիմա կգա, կտեսնես՝ չեմ ստում: Մեզ որ տեսնի, կշրջվի և երեսիս կժպտա: Գիտե՞ս՝ ես իրենց ծառայողի միջոցով նրա համար պատգամ եմ ուղարկել: Մինչև հիմա չորս անգամ է, որ հանդիպում ենք, մի անգամ խոստմնազանցություն չի արել:

- Լավ-լավ: Մենք այստեղ չենք եկել սիլի-բիլի անելու: Ուզում էի իմանալ՝ փող-մող ձեռքներում ունե՞ն, թե՞ ոչ:

- Մի՞թե քեզ չեմ ասել: Այնքան ոսկի ու գոհար են գտել, որ էլ մի ասա: Մի դագաղ են գտել, որի մեջ լիքը ալմաստ ու գոհար է եղել, յոթ քագավորական կարաս, որի վրա վիշապ է պատկերված: Կարծում ես՝ ստո՞ւմ եմ: Ուզում ես՝ Ղասեմից հարցրու:

- Եթե իմանայի, որ չեն գալու, մի ուրիշին էի խոստացել:

- Պա՛հ, ո՞ւմ էիր ուզում քերել: Քո պարոն Զավադը Գորեսի ճկույթն էլ չի լինի:

- Դու էլ քո այդ Գորեսով սպանեցիր: Են մյուս երկուսը ինչպիսի՞ն են:

<sup>467</sup> Խորշիդն այդպես էր կոչում Գորեստին:

- Նրանք էլ լավն են: Ես միայն մեկին եմ տեսել:

Գորգի վրա պառկած կինը, որ ինքն իրեն մրմնջում էր, ասաց.

- Երնե՛կ մեզ: Ինչքա՞ն համբերություն ունեք: Ուզում են՝ գան, ուզում են՝ ըսկի էլ չգան: (Երեսը դարձրեց դեպի սազ նվագողները) Ռահիմ խան, ձեռքիդ մատաղ, մի դյուզ սազ նվագի:

Կանոն նվագող կարմրադեմ Ռահիմ խանը հնազանդ կորացավ իր սազի վրա և հատուկ եղանակով սկսեց նվագել: Կարճահասակ, ծաղկատար մարդը, որ կողքին նստած էր, թմբուկը վերցրեց, նույն եղանակով մի Զահրոմի<sup>468</sup> երգ երգեց.

Bolandī sēyl-e 'ālam mīkonam man, yār jūnī,  
Nazar bar do sū došman mīkonam man, yār jūnī,  
Yēkīm šab dīgē māro nēgah dār, yār jūnī,  
Kē fardā dard-e sar kam mīkonam man, yār jūnī, mēhrabūnī,  
Bē qorbūnat mīram to kē nēmīdūnī.  
Sar dow dow mīram xūnēyē folūnī, yār jūnī,  
Sēdāyē nēy mīyād, nālīyē javūnī, yār jūnī, 'azīz-e man, dēlbar-e  
man,

Az īn gūšēyē labāt kon manzēl-e man!

(Բարձունքից աշխարհն եմ դիտում, իմ սիրելի՝ յար, / Երկու դիրքերից թշնամուն եմ հետևում, իմ սիրելի՝ յար, / Մի գիշեր էլ ինձ պահի՛ր, իմ սիրելի՝ յար, / Վաղը կգնամ, իմ սիրելի՝ յար, / Մատաղ լինեմ քեզ, դու չգիտես: / Վազով կգնամ այն մեկի տունը, սիրելի՝ յար, / Սրնգի ձայն է գալիս, ջահելների ճիչ, սիրելի՝ յար, իմ սիրելի, իմ սիրեցյալ, / Այս շրթունքիդ անկյունով իմ տանը մնա...):

Կանայք ծիծաղում և, կենաց ասելով, գինու գավաթներն իրար էին խփում: Բայց Խորշիդն իր գավաթը բարձրացրեց և, Գորեսի կենացն ասելով, միանգամից ըմպեց:

Յանկարծ ծառերի հետևից մի բարձրահասակ, ուկեհյուս զգեստով, սևամարմին մարդ երևաց: Կարծես լույսն աչքերը ցավեցնում էր. ծառի ստվերի տակ կանգնեց ու գլուխը կախեց: Ապա կոկորդային խզված ձայնով արտաբերեց. «Խորշի՛դ, Խորշի՛դ...»:

Նրա ձայնը Գորեստի ձայնի եղանակին էր նման: Խորշիդը

<sup>468</sup> Իրանի Ֆարս նահանգի քաղաքներից:


գինու գավաթը լցրեց ու դեպի ձայնը վազեց: Ենթադրեց, թե Գորեստն է ծառերի հետևում թաքնված: Բայց հենց որ սև մարմնին հասավ, տեսավ՝ մի ոսկրոտ, չոր ձեռք գավաթն իրենից առավ և ուրիշ ձեռքով մեջքը գրկեց: Խորշիդը ձեռքը նրա վզով գցեց: Այն պահին, երբ սարսափելի մարմնը չոր շարժումով գինին միանգամից խմեց, նա մեռյալի սոսկալի երեսը տեսավ, աչքերը փակեց և շրթունքն այնպես կծեց, որ սկսեց արյուն հոսել:

Արագ ու անսպասելի շարժումով Սիմոյեն ատամներով Խորշիդի կոկորդը բռնեց, կարծես ուզում էր նրա արյունը ծծել: Յանկարծ Խորշիդի աղաղակից մինչ այդ իրեն համակած ծանր հարբեցությունից և գինու ազդեցությունից սթափվեց: Կարծես մի վարագույր աչքերի առջևից ընկավ, և իր իրական դրությունն ու վիճակը գիտակցեց: Իրավամբ այդ կնոջ դեմքի վիճակը նրան սթափեցրեց, քանի որ, բացի նմանությունից, Խորշիդի այդ վիճակը նույնն էր, ինչ իր նախկին կյանքում: Երբ Խորշիդի մատները նրա վզի մանյակին էին կառչած, նրան պարզապես թվաց, թե այդ կինը վախից ու սարսափից իրեն անձնատուր է լինում: Մանյակի համար էր: Քանի որ Խորշիդն իր նախկին կյանքում իրեն սեր էր ցուցաբերել, մինչ այժմ այդ ենթադրական հույսով էր ապրում: Այդ ենթադրական սիրո հույսո՞վ էր տարիներ շարունակ դագաղում Խորշիդին սպասել...

Միանգամից Խորշիդին բաց թողեց, և կարծես այդ անհայտ ուժն իրենից պոկվեց և ծանրությամբ գետին գլորվեց:

Խորշիդը, ասես սարսափելի մղջավանջի մագիլներից ազատված, կրկին աղաղակեց ու ուշաթափվեց:

Այդ պահին Դոկտոր Վարները, Ֆրիմանը և Գորեստը ինգայի հետ մոտեցան: Երբ ուզեցին Սիմոյեին գետնից բարձրացնել, տեսան՝ ամբողջ մարմնը մի բուռ հող է դարձել. զգեստի վրա երևում էր մի մեծ կաթիլ գինի: Նրա գոհարազարդ զգեստն ու թուրք վերցրին և վերադարձան: Դոկտոր Վարներն այդ գիշեր դրանք համարակալեց ու արխիվային պահպանման համար գրանցեց:



Ա. Հեղայարի ընտանեկան տոհմածառը

## ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՍԱՐԵԴ ՀԵՂԱՎԱԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- 1903 (1281) – Ծնվել է իրանի մայրաքաղաք Թեհրանում: Ազնվական ընտանիքի զավակ էր:
- 1909 (1287) – Սկսում է տարրական կրթություն ստանալ:
- 1914 (1293) – Դպրոցում իրատարակում է «Մեղայե ամվաթ» («Մեռյալների ձայնը») պատի թերթը: Տարրական դպրոցն ավարտելուց հետո հաճախում է «Դարոլֆոնուն» (արվեստի և տեխնիկական ինստիտուտ) կոչվող դպրոցը:
- 1916 (1295) – Աչքերի հիվանդության պատճառով մի տարի բաց է թողնում դասերը, իսկ բուժվելուց հետո այլևս «Դարոլֆոնուն» միջնակարգ դպրոց չի վերադարձնում:
- 1917 (1296) – Հաճախում է ֆրանսիական «Սենթ Լուիս» դպրոց: Զբաղվում է ընթերցանությամբ և կարդում է համաշխարհային դասական գրականություն: «Օմիդ» շաբաթաթերթում լույս է տեսնում նրա առաջին հոդվածը:
- 1924 (1303) – «Վաֆա» ամսագրում (2-րդ տարի, թիվ 5 և 6) լույս է տեսնում «Զաքանե հալե յեք օլադ բե վաղթե մարգ» («Ավանակը մահվան պահին») պատմվածքը:
- Նույն ժամանակահատվածում լույս են տեսնում նաև «Էնսան վա հեյվան» («Մարդ և կենդանի») պատմվածքը և «Շոբայաթե իսայամ» գիրքը («Իսայամի քայլակները»), որը չպետք է շփոթել «Թարանեհայե իսայամ» («Իսայամի երգերը») ուսումնասիրության հետ:
- 1925 (1034) – Ավարտում է «Սենթ Լուիս» միջնակարգ դպրոցը:
- 1926 (1305) – Ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Բելգիա: Ընտանիքի ցանկությունն էր, որ նա ճարտարապետ-շինարարի մասնագիտություն ստանա և վերադառնա հայրենիք, սակայն դա այդպես էլ չի իրականանում: Բելգիա հասնելուն պես

Գենտ քաղաքում գրում է «Մարգ» («Մահ») հոդվածը, որը լույս է տեսնում Գերմանիայում՝ «Իրանշահր» ամսագրում (4-րդ տարի, թիվ 11): Ֆրանսիական «Le voile Dysis» ամսագրում (թիվ 79) հրատարակում է «Զադուգարի դար Իրան» («Կախարդությունը Իրանում») հոդվածը:

**1927(1306)** – Ավագ Եղբորը տեսնելու նպատակով մեկնում է Ֆրանսիա: Որոշում է տեղափոխվել Ֆրանսիա և ուսումն այնտեղ շարունակել, սակայն ոչ նույն մասնագիտությամբ: Եղբորը համոզում է, որ ուսումը պետք է գրականության գծով շարունակի: Վերանայում է «Ենսան վա հեյվան» («Մարդ և կենդանի») գիրքը՝ վերանվանելով «Ֆավայեդե գյահիսարի» («Բուսակերության օգտակարությունը»), և հրատարակում Գերմանիայում:

**1928 (1307)** – Նետվելով Մարեն գետը՝ ինքնասպանության վորձ է անում, բայց փրկվում է:  
Հրատարակում է «Մաղլեն» պատմվածքը և գրում է «Փարվին դոխթարե Սասան» («Սասանի աղջիկ Փարվինը») պատմական թատերգությունը:

**1929 (1308)** – Գրում է «Զենդե բե գուռ» («Կենդանի թաղվածը»), «Ասիրե ֆարանսավի» («Ֆրանսիացի գերին»), «Աֆսանեյե աֆարինեշ» («Արարչագործության առասպելը»), «Դաջի աղա», «Ալ բարսիաթ օլ-Էսլամիե ֆել բելադ օլ-Փարանջիե» («Իսլամի առաքելությունը Եվրոպական Երկրներում») ստեղծագործությունները և գլուխգործոց «Բուժե քուռ» («Քոր բուն») պատմվածքը:  
Թեհրանում «Բրոխիմ» հրատարակչությունը լույս է ընծայում նրա «Ենսան վա հեյվան» գիրքը:

**1930 (1309)** – Կրթությունը կիսատ թողնելով՝ վերադառնում է Իրան և բանկում գրասենյակային աշխատանքով զբաղվում:  
Երեք ընկերների՝ Մ. Ֆարզադի, Մ. Մինովիի և Բ. Ալավիի հետ հիմնում է գրական խմբակ՝ «Ռոբե» («Քառյակ») անունով:

Թեհրանում ավարտում է Փարիզում սկսած «Զենդե բե գուռ» (ութ պատմվածքով) ժողովա-

ծուն և «Ֆերդոսի» հրատարակչության միջոցով տպագրում:

Թեհրանում «Ֆերդոսի» հրատարակչությունում լույս է ընծայում «Փարվին դոխթարե Սասան» պատմվածքը:

Հրատարակում է առաջին երգիծական պատմվածքներից մեկը՝ «Ալ բարսիաթ օլ-Էսլամիե ֆել բելադ օլ-Փարանջիե», իսկ դրանից հետո՝ «Արջի խանում» և «Դավուդե գուժ փոշթ» («Սապատավոր Դավուդը») պատմվածքները, որոնք ընդգրկված են «Զենդե բե գուռ» ժողովածուում:

**1931 (1310)** – Հրատարակում է «Անիրան» («Ոչ իրան, ոչ իրանցի») ժողովածուն՝ բաղկացած երեք պատմվածքից, որոնցից «Սայեյե մողոլ»-ը («Մոնղոլի ստվեր») գրել է Ս. Շեղայաթը, «Ֆաթիե Էսքանդար»-ը («Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակը»)՝ Շին Փարթովը, իսկ «Դոջումե արար»-ը («Արարի հարձակումը»)՝ Բ. Ալավին:

Հրատարակում է «Օսանե» ժողովածուն (Թեհրան, «Արյան քողե» հրատ.), որը բաղկացած է ժողովրդական երգերից և մանկական հեքիաթներից:

«Մուսիհի» ամսագրում հաջորդաբար տպագրում է «Աղա մուշե» («Պարոն մկնիկը»), «Շանգուլ վա Մանգուլ» («Շանգուլը և Մանգուլը» թիվ 8), «Լազաք քուչուլույե դերմեզ» («Կարմիր գլխաշորով փոքրիկը», 2-րդ տարի, թիվ 2) և «Սամզե սարուր» («Շամբերատար քարը», 3-րդ տարի, թիվ 6 և 7) հեքիաթները:

«Սոխան» (թիվ 4) ամսագրում տպագրում է «Թարիե քոլի բարայե քավոշե ֆոլքլորե յեք մանթաղե» («Մի շոջանի (տարածական առումով – Ա. Յ.) ուսումնասիրության ընդհանուր ծրագիր») ուսումնասիրությունը:

«Աֆսանե» ամսագրում հաջորդաբար տպագրում է «Դեքայաթե բա նաթիջե» («Վերջաբանով հեքիաթ»). 3-րդ տարի, թիվ 31) հեքիաթը, Արթուր Շնիցլերի «Քուր վա բարադարաշ» («Կույրը և

եղբայրը», 3-րդ տարի, թիվ 4 և 5) պատմվածքի, Ալեքսանդր Լանժբիլանդի «Քալաղե փիր» («Ծեր ագռավը», 3-րդ տարի, թիվ 11), Անտոն Չեխովի «Թամնշքե թիղղար» («Փշոտ մորենին», 3-րդ տարի, թիվ 23) և Գաստոն Շերո «Մորդաքե Դարաշե» («Եթովպիայի ճահիճը», 3-րդ տարի, թիվ 28) պատմվածքների թարգմանությունները, «Դարդե դելե Միրզա Յաղոլա» («Միրզա Յաղոլայի սրտի ցավը», 3-րդ տարի, թիվ 28) պատմությունը:

**1932 (1311)** – Թողնում է բանկի աշխատանքը և գործունեություն ծավալում կենտրոնական առևտրական հիմնարկությունում:

Մեկնում է Սպահան: Այս ուղևորության արդյունքն է «Էսֆահան նեսֆե ջահան» («Սպահանը՝ աշխարհի կեսը») ուղեգրությունը:

ճամփորդում է Իրանի հյուսիսային նահանգներում՝ Գիլանում և Մազանդարանում, որի արդյունքներն ամփոփում է «Ռույե ջաղեյե նամնաք» («Խոնավ ճանապարհի վրա») ուղեգրության մեջ: Սակայն այս աշխատանքն անավարտ է մնում և այդպես էլ չի հրատարակվում:

Հրատարակում է «Մե դաթրե խում» («Երեք կաթիլ արյուն») ժողովածուն՝ բաղկացած տասնմեկ պատմվածքից (Թեհրան, «Մաթրան Ռոշան» հրատ.), «Էսֆահան նեսֆե ջահան» ճամփորդական ուղեգրությունը (Թեհրան, «Խավար» հրատ.), «Գերդաք» («Զրապտույտ»), «Հալե», «Մարդի քե նաֆսաշ րա քոշթ» («Իր ոգին սպանող մարդը»), «Սուրաթաքիա» («Դիմակներ»), «Ռոնժուանե Քարաջ» («Քարաջի Ռոն ժուանը») և «Չանգալ» («Մագիլ») պատմվածքները:

**1933 (1312)** – Հրատարակում է «Նեյրանգեստան» («Հրաշքների երկիր») ազգագրական ուսումնասիրությունը, որն իր ժամանակի ազգագրական առաջին ամենալուրջ և բովանդակալից աշխատանքն էր, «Ալավիե խանում», «Մորդեխարիա» («Գիշակերներ»), «Թալաքե ամորգեշ» («Թողություն հայցող-

ները»), «Աֆարինգան» («Աղոթքներ»), «Սոհալել» («Միջնորդ ամուսին») և «Արուսաքե փոշքե փարողե» («Տիկնիկը վարագույրի հետևում») պատմվածքները, «Սայե ռոշան» («Լուսաստվեր») ժողովածուն՝ բաղկացած յոթ պատմվածքներից, և «Ալ բարսիաթ օլ-էսլամիե ֆել բելադ օլ-ֆարանջիե» գիրքը:

1934 (1313)

– Յեռանում է կենտրոնական առևտրական հիմնարկից և աշխատանքի ընդունվում Արտաքին գործերի նախարարությունում:

Չեխ արևելագետ Յան Ռիպկայի միջնորդությամբ ծանոթանում է Իրանի անվանի արձակագիր Փ. Նաբել Խանլարիի հետ:

Յրատարակում է «Վաղ-վաղ սահար» պամֆլետը իր ընկեր Մասուդ Ֆարզադի համագործակցությամբ և «Թարանեհայե Խայամ» ուսումնասիրությունը («Ռոշանայի» իրատ.): Այս ուսումնասիրության մանրանկարչությունը Անդրեյ Սկրյուգինի (Անդրեյ Դերվիշ մականունով) ձեռքի աշխատանքն է:

1935 (1314) – «Վաղ-վաղ սահար» պամֆլետը գրելու համար Սադեղ Յեղայաթին կանչում են ոստիկանություն: Թողնում է աշխատանքը Արտաքին գործերի նախարարությունում:

1936 (1315) – Աշխատանքի է անցնում շինարարական մի ընկերությունում:

Մեկնում է Յնդկաստան:

Յնդկաստանում ծանոթանում է Բահրամ Գուռ Անքելսարիա անունով անվանի հնդիկ գիտնականի հետ և պահլավերեն սովորում:

Յրատարակում է Յնդկաստանում իր ձեռքով գրված ու պատճենահանված «Բուժե քուր» («Քոր բուն») պատմվածքը:

Պահլավերենից պարսկերեն է թարգմանում «Քարնամեյե Արդեշիրե Բաբաքան» («Արդաշիր Բաբաքանի վարքագրությունը») պատմական երկը:

Յրատարակում է «Միհանփարաս» («Հայրենա-

սերը») երգիծական պատմվածքը և «Դավասբազ» («Քմապաշտ») ու ֆրանսերենով գրված «Սամփինգե» պատմվածքները:

1937 (1316) – Վերադառնում է Հնդկաստանից և «Իրան» ազգային բանկում աշխատանքի անցնում:

1938 (1317) – Բանկի աշխատանքից հրաժարվում և ընդունվում է երաժշտական իիմնարկ: Համագործակցում է «Մուսիղի» ամսագրի տնօրեն Մինբաշյանի հետ, որի 3-րդ համարում տպագրում է «Թարանեհայե ամյանե» («Ժողովրդական երգեր»), 6-7-րդ համարներում՝ «Մաթալհայե ամյանե» («Ժողովրդական ասացվածքներ»), 8-րդ համարում՝ «Շիվեհայե նովին դար շեղրե ֆարսի» («Նոր եղանակներ պարսկական պոեզիայում») հոդվածը:

1939 (1318) – «Մուսիղի» ամսագրում տպագրում է պահլավերենից պարսկերեն թարգմանված «Քարնամեյե Արդեշիրե Բաբաքան» և «Գոջասթե Աբալիշ» («Անիծյալ Աբալիշ») պատմական երկերը:

1940 (1319) – Գրում է կենսագրական մի հոդված Զայկովսկու մասին՝ «Պյոտր Իլյչ Զայկովսկի» վերնագրով, որը տպագրվում է «Մուսիղի» ամսագրում (2-րդ տարի, թիվ 3):

Հրատարակում է «Աթաշփարասթ» («Կրակապաշտը»), «Թախրե Աբու Նասր» («Աբու Նասրի գահը»), «Թաջալի» («Փայլատակել»), «Բոնբասթ» («Փակուղի») և «Թարիքիսանե» («Մթասենյակ») պատմվածքները (մի մասը՝ պարսկերեն, մի մասը՝ ֆրանսերեն) և «Դար փիրամունե լողաթե ֆորսե Ասադի» («Ասադիի հանրագիտարանի մասին») հոդվածը:

Տպագրում է «Մոլա չողոնդար» («Մոլա ճակնդեղ») հեքիաթը «Մուսիղի» ամսագրում (2-րդ տարի, թիվ 10):

1941 (1320) – Տպագրում է «Շիվեհայե նովին դար թարհե աղաքի» («Նոր եղանակներ գրական հետազոտության ոլորտում») հոդվածը «Մուսիղի» ամսագրում (թիվ 11 և 12):

Տպագրում է քննադատական հոդված Յ. Ղաեմ-

յանի «Նազ» պատմվածքի մասին «Մուսիղի» ամսագրում (3-րդ տարի, թիվ 2):

Փակվում է «Մուսիղի» ամսագիրը:

Գեղագիտական համալսարանում աշխատում է որպես թարգմանիչ:

**1942 (1321)** – Յրատարակում է «Սագե Վելզարդ» («Թափառող շունը») ժողովածուն՝ ութ պատմվածքով:

«Մեհր» ամսագրում (թիվ 1-3) տպագրում է պահլավերեն գրականությունից թարգմանած «Շահրեսթանիայե Իրանշահր» («Իրանշահրի քաղաքները») ստեղծագործությունը:

Տպագրում է «Արե զենդեզի» («Կենարար ջուրը») հեքիաթը («Ֆարհանգ» իրատ.):

«Իրան» ամսագրում տպագրում է «Բուֆե քու» պատմվածքի հատվածներից:

**1943 (1322)** – Յամագործակցում է «Սոխան» ամսագրի հետ:

Յրատարակում է «Ալավիե խանում» պատմվածքը:

«Սոխան» ամսագրում տպագրում է պահլավերեն պատմական գրականությունից «Յաղեզարե Զամար»-ի («Զամասի հիշատակարան») վերջին հատվածի և «Գոզարեշե գոմանշեքան»-ի («Կասկածանքը փարատող զեկույց») թարգմանությունները:

**1944 (1323)** – Յրատարակում է «Ալավիե խանում վա վելենգարի» («Ալավիե խանում և շվայտություն») ժողովածուն՝ վեց պատմվածքով:

«Սոխան» ամսագրում տպագրում է «Ֆոլքլոր յա ֆարհանգե թուղե» («Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ»), (նմուշներ, հավաքման ծրագիր և գրանցման ցուցումներ) ուսումնասիրությունը (թիվ 3), «Զեգունե շաեր վա նեվիսանդե նաշողամ» («Ինչպես բանաստեղծ և արձակագիր չդարձա») պատմվածքը՝ Յ. Ղաեմյանի համագործակցությամբ (2-րդ տարի, թիվ 1), «Խամուշիե դարյա» («Ծովի լուրջունը») պատմվածքը (թիվ 3, հեղինակ՝ Վերքուր, թարգմանեց՝ Շահիդ Նուրյան, քննադատեց և ներկայացրեց Ս. Շեղայարը)

և Ֆրանց Կաֆկայի «Ճելոյե ղանում» («Օրենքի դեմ հանդիման») պատմվածքի թարգմանությունը (թիվ 11 և 12):

Թարգմանում է «Ուրաշիմա» ճապոնական պատմվածքը և տպագրում «Սոխան» ամսագրում (2-րդ տարի, թիվ 1):

Քննադատական հոդվածներ է գրում Գոգոլի «Բազրես» («Քննիչ») ստեղծագործության և «Մոլլա Նասրեդինը դար Բոխարա» («Մոլլա Նասրեդինը Բոխարայում») կինոժապավենի մասին, ապա տպագրում «Փայամե նո» ամսագրում:

1945 (1324) – Դ. Կոմիսարովի իրավերով մեկնում է Ուգբեկստան՝ մասնակցելու Միջին Ասիայի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակի միջոցառմանը:

Յամագործակցում է «Փայամե նո» ամսագրի (Իրան-Ռուսաստան մշակութային կազմակերպություն) հետ: Իրան-Ռուսաստան մշակութային կազմակերպության նախաձեռնությամբ Ս. Շեղայարի պատվին մեծարման երեկո է կազմակերպվում:

Յրատարակում է «Յաջի Աղա» վիպակը:

«Սոխան» ամսագրում տպագրում է «Թարիե քոլի բարայե քավոշե ֆոլքլորե յեք մանթաղե» («Մի շրջանի (տարածական առումով – Ա. Յ.) ուսումնասիրության ընդհանուր ծրագիր», 2-րդ տարի, թիվ 4) և «Ֆոլքլոր յա ֆարիանգե թուղե» («Ֆոլկլոր կամ ժողովրդական մշակույթ», 2-րդ տարի, թիվ 5-6) ծրագրերը, «Խաթե փակալավի վա ալեֆբայե սոթի» («Պահլավերեն գրերը և հնչյունային այբուբենը») ուսումնասիրությունը (2-րդ տարի, թիվ 8 և 9), պահլավերենից պարսկերեն թարգմանած «Ամաղանե շահ Բահրամ Վարջավանդ» («Շահ Բահրամ Վարջավանդի գալը») պատմական երկը (թիվ 7) և Ֆրանց Կաֆկայի «Շողալ վա առաք» («Շնագայլն ու արաբը») պատմվածքի թարգմանությունը (թիվ 5):

«Փայամե նո» ամսագրում տպագրում է «Չամու

*Առքեն դար բարեյն Վիսօ Ռամին»* («Մի քանի դիտարկում Վիսօ և Ռամինի մասին») ուսումնասիրություն-հոդվածը (9-րդ տարի, թիվ 10) և Ժան Պոլ Սարտրի «Դիվար» («Պատ») պատմվածքի թարգմանությունը (2-րդ տարի, թիվ 7 և 8):

**1946 (1325)** – «Փայամե նո» ամսագրում տպագրում է «Ֆարդա» («Վաղը») պատմվածքը (2-րդ տարի, թիվ 7 և 8), «Զենդե բե գուռ» ժողովածուից՝ «Աբջի խանում» պատմվածքը (2-րդ տարի, թիվ 6):

«Սոխան» ամսագրում տպագրում է Լաուր Մորգնշտերն «Հոնարե Սասանի դար դորֆեյն մեղալիա» («Սասանյան արվեստը մեղալների կրպակում») ուսումնասիրության (3-րդ տարի, թիվ 5) և Ֆրանց Կաֆկայի «Գրաքոսե շեքարչի» («Որսորդ Գրակոսը») պատմվածքի (3-րդ տարի, թիվ 1) թարգմանությունները և «Ղեսեյե քաղու» («Ղեմի հեքիաթը») հեքիաթը (3-րդ տարի, թիվ 4): «Սոխան» ամսագրում տպագրվում է ֆրանսիացի իրանագետ Ուժե Լեսկոյի «Սաղեղ Շեղայաթ» (3-րդ տարի, թիվ 1 և 2) հոդվածները:

Ս. Շեղայաթի ընկերոջ՝ Յ. Շահիդ Նուրայիի նյութական միջոցներով իրատարակվում է «Աֆսանեյե աֆարինեշ» հեքիաթը (Ֆրանսիա, «Էդին մեզոն» իրատարակչություն):

**1948 (1327)** – Քրատարակում է «Փայամե Քաֆքա» («Կաֆկայի պատգամը») գրական-քննադատական հոդվածը, որը տեղ է գտնում Ֆրանց Կաֆկայի գրքի՝ «Դատապարտվածների խումբը» թարգմանության նախաբանում: Թարգմանությունը կատարել էր Յ. Ղաեմյանը:

Գրում է «Թուփե մորվարի» («Մարգարտե թնդանոթ») երգիծական պատմությունը և այն ուղարկում Ֆրանսիայում գտնվող իր ընկերոջը՝ Շահիդ Նուրայիին:

**1950 (1329)** – Քրատարակում է Ֆրանց Կաֆկայի «Մասին» («Կերպարանափոխություն») պատմվածքը (թարգմանել են Ս. Շեղայաթը և Յ. Ղաեմյանը): Մեկնում է Ֆրանսիա, հանդիպում ֆրանսիացի

արևելագետ Հանրի Մասսեի հետ:

- 1951 (1330) – Ապրիլի 9-ին Ֆրանսիայում՝ Շամպիոնե փողոցում  
իր վարձակալած տանը, ինքնասպան է լինում:  
Նրան հողին են հանձնում Պեր Լաշեզ գերեզ-  
մանատանը:
- 1953 (1332) – Քետմահու իրատարակվում է «Թուփե մորվարի»  
երգիծական պատմվածքը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ա) ՀԱՅԵՐԵՆ

1. «Արտա Վիրապ նամակ», թարգմ.՝ Աբրահամյան Ռուբեն, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 165 էջ:
2. Բայբուրոյան Վահան, Իրանի պատմություն, Եր., «Զանգակ» հրատ., 2005, 783 էջ:
3. Բդոյան Վարդ, Հայ ազգագրություն, Եր., ԵՊՀ հրատ., 1974, 287 էջ:
4. Բուղաջյան Արամ, Մովսիսյան Հրայր, Շեխոյան Լաուրա, Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 274 էջ:
5. Գասպարյան Գուրգեն, Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Եր., 2009, 445 էջ:
6. Գրիգորյան Գրիգոր, Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., «Լույս» հրատ., 1980, 471 էջ:
7. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., «Հայաստան» հրատ., 1970, 255 էջ:
8. Թերլեմեզյան Ռուբեն, Կոմիտաս. հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, 198 էջ:
9. Թումանյան Հովհաննես, Բանաստեղծություններ, քառյակներ, պոեմներ, լեզենդներ և բալլարներ, կազմեց՝ Կ. Ժ. Սաֆրազյան, Եր., 1986, 383 էջ:
10. Թումանյան Հովհաննես, Հեքիաթներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1978, 294 էջ:
11. Թումանյան Հովհաննես, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6. քննադատություն և հրապարակախոսություն (1887-1912), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 670 էջ:
12. Խառատյան-Առաքելյան Հրանուշ, Հայ ժողովրդական տոները, Եր., «Զանգակ» հրատ., 2005, 355 էջ:
13. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, կազմեց, Խմբագրեց և ծանոթագրեց՝ Աթայան Ռոբերտ, Եր., 2000, 214 էջ:
14. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1969, 304 էջ:
15. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1979, 208 էջ:
16. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1999, 208 էջ:
17. Կոմիտաս, Նամակներ, Եր., ԳԱԹ հրատ., 2000, 222 էջ:
18. Կոստանդյան Էմնա, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 200 էջ:
19. Հակոբյան Գրիգոր, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., «Հայաստան» հրատ., 1974, 459 էջ:

20. Հարությունյան Սարգիս, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2006, 500 էջ:
21. ՀՄՀ, հ. Ա, Եր., 1974, 720 էջ:
22. ՀՄՀ, հ. Դ, Եր., 1987, 720 էջ:
23. ՀՄՀ, հ. ԺԲ, Եր., 1986, 752 էջ:
24. Ղանալանյան Արամ, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 293 էջ:
25. Մանսուրեան Հայդուկ, Պարսկերէն-հայերէն բառարան, հ. Ա և Բ, Թեհրան, «Խախի» հրատ., 2005, 1205 էջ:
26. «Մարգարտաշար, Ղասական քառյակը Ռուդաքիից մինչև Զամի», կազմեց, պարսկերէնից տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց՝ Կոզմոյան Արմանուշ, Եր., 1990, 237 էջ:
27. Սովսիսյան Հրայր, Շեխոյան Լաուրա, Ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ (1941-1978), Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 331 էջ:
28. Նիցշե Ֆրիդրիխս, Այսպես խոսեց Զրադաշտը, գերմաներէնից թարգմ.՝ Հակոբ Մովսես, Եր., ԻԻԿ, 2008, 560 էջ:
29. Չարենց Եղիշե, Երկեր, Եր., «Լույս» հրատ., 1985, 478 էջ:
30. Սուրբ Գրիգոր Խարեկացի, Մեկնություն Երգ Երգոցի, Ս. Էջմիածին, 2007, 235 էջ:
31. Սուրբ Գրիգոր Խարեկացի, Խարեկ աղօթամատեան, թարգմ.՝ Աշոտ Պետրոսյան, Եր., «ՎՄՎ-Պրինտ» հրատ., 2013, 640 էջ:
32. Սրվանձտյանց Գարեգին, Երկեր, հ. 1, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 668 էջ:
33. Սրվանձտյանց Գարեգին, Երկեր, հ. 2, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 563 էջ:
34. Օմար Խայամ, Քառյակներ, Եր., 1959, էջ 8:
35. Օմար Խայամ, Բաբա Թահէր և զանազան, թարգմանեց բնագրից՝ Միրզաեանց Յ., Թեհրան, «Սոդերն» հրատ., 1923, 156 էջ:

## բ) ՊԱՐՍԿԵՐԵՆ

1. **Amīnī Amīr Qolī**, Folklor-e Īrān- dāstānhāyē amsāl, vol. I-II, Īsfahān, 1351, 542 p.
2. **Amīnī Amīr Qolī**, Sī afsānē az afsānēhāyē mahalīyē Īsfahān, Īsfahān, 1339, 209 p.
3. **Āmūzgār Žälē and Tafazolī Ahmad.**, Zabān-e Pahlavī adabyāt o dastūr-e ān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Mo'īn, 1380, 165 p.
4. **Āmūzgār Žälē and Tafazolī Ahmad**, Ostūrēyē zēndēgīyē Zartošt, 4<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Čēsmē, 1380, 200 p.
5. **Āryanpūr Yahyā**, Az Nīmā tā rūzēgār-e mā, vol. 3, 5<sup>th</sup> print, Tehran,

- ēntēš. Zavār, 1387, 638 p.
6. **Bahār Malēkolšo’arā**, Pažūhēšī dar asātīr-e Īrān, 4<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Āgāh, 1381, 555 p.
  7. **Bolūkbāšī Alī**, Mo’arēfī va naqd-e āsārī dar adabyāt-e mardomshēnāsī, Tehran, ēntēš. Daftar-e Pažūhēshāyē Farhangī, 1377, 238 p.
  8. **Bolūkbāšī Alī**, Dar farhang-e xod zīstan va bē farhang-e dīgarī nēgarīstan, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Golāzīn, 1389, 610 p.
  9. **Dēhbāšī Alī**, Yādnāmēyē sēyēd Abolqāsēm Īnjavī Šīrāzī, Tehran, ēntēš. Soxan, 1381, 643 p.
  10. **Elwell Sutton Laurence Paul**, Afsānēhāyē Irānī, tr. A. Javāhēr kalām, Tehran, ēntēš. ’Ēlmī va farhangī, 1379, 111 p.
  11. **Īnjavī Šīrāzī Abolqasēm**, Farhang-e mardom va tarz-e gērdāvarī va nēvēstan-e ān, Tehran, ēntēš. Farhang, 1346, 80 p.
  12. **Īnjavī Šīrāzī Abolqasēm**, Jān-e ’āryat- Farhang-e ’āme, Pažūhēshāyē adabī, Mardomshēnāsī, ed. Sēdāqatpīshē M., Tehran, ēntēš. Farzān, 1381, 542 p.
  13. **Īnjavī Šīrāzī Abolqasēm and Zarīfyān Mahmūd**, Gozarī va nazarī dar farhang-e mardom, Tehran, ēntēš. Īsparg, 1371, 379 p.
  14. **Ēttēhād Hūšang**, Pažūhēshgarān-e Mo’āsēr-e Īrān, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Farhang-e Mo’āsēr, 1387, 1177 p.
  15. **Farzānē Mostafā**, Sādēq Hēdāyat dar tār-e ’ankabūt, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Markaz, 1384, 285 p.
  16. **Farzānē Mostafā**, Āšnāyī bā Sādēq Hēdāyat, 7<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Markaz, 1387, 525 p.
  17. **Harīryān Mahmūd, Mīrsāīdī Nādēr, Malēk Šahmīrzādī Sādēq, Āmūzēgār Žalē.**, Tārīx-e Īrān-e bāstān, vol. 1, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Samt, 1380, 157 p.
  18. **Hēdāyat Jahāngīr**, Yēksad sālēgīyē Sādēq Hēdāyat dar Īrān va Jahān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Donyāyē danēš, 1384, 255 p.
  19. **Hēdāyat Sādēq**, ’Alavīyē xānom, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Jāvīdān, 2536 šāhanšāhī, 138 p.
  20. **Hēdāyat Sādēq**, Būf-e Kūr, Tehran, ēntēš. Jāvīdān, 2536 šāhanšāhī, 87 p.
  21. **Hēdāyat Sādēq**, Haštād o do nāmē bē Hasan Šahīd Nūrāyī, Moqadamēyē Nāsēr Pākdāman, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Čēšmandāz, 1379, 321 p.
  22. **Hēdāyat Sādēq**, Farhang-e ’āmyānēyē mardom-e Īrān, 6<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Čēsmē, 1385, 458 p.
  23. **Hēdāyat Sādēq**, Majmū’eyī az āsār-e Sādēq Hēdāyat, gērdāvarandē Bahārlū M., 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Tarh-e nōw, 1372, 756 p.
  24. **Hēdāyat Sādēq**, Nēvēstēhāyē parākandē, ed. H. Qāēmyān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Āzādmēhr, 1385, 615 p.
  25. **Hēdāyat Sādēq**, Tarānēhāyē Xayām, našr-e Jāvīdān, Tehran, 2536, 98 p.
  26. **Homāyūnī Sādēq**, Farhang-e mardom-e Sarvestān, Tehran, daftar-e

- markazī Farhang-e mardom, 1348, 555 p.
27. **Hūšīdarī Jahāngīr**, Dānēshnāmēyē Mazdīsnā, Tehran, našr-e Markaz, 1383, 515 p.
  28. **Jamālzādē Mohamad Alī**, Farhang-e loqāt-e 'āmyānē, Tehran, ēntēš. Soxan, 1341, 592 p.
  29. **Justinian Morier James**, Sargozašt-e Hājī Bābāyē Īsfahānī, tarjomēyē Habīb Īsfahānī, bē kūsēš-e Jamālzādē, Tehran, 1348, 386 p.
  30. **Katīrāyī Mahmūd**, Kētāb-e Sādēq Hēdāyat, Tehran, ēntēš. Ašrafī, 1357, 399 p.
  31. **Katīrāyī Mahmūd**, Zabān o farhang-e mardom, Tehran, ēntēš. Joharī, 1357, 187 p.
  32. **Katīrāyī Mahmūd**, Sādēq Hēdāyat dar būtēyē naqd o nazar, gērdāvarandē Dānāyī Borūmand, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Mo'alef, 1377, 290 p.
  33. **Kātūzyān Mohamad Alī Homāyūn**, Sādēq Hēdāyat va marg-e nēvīsandē, Tehran, ēntēš. Markaz, 1384, 189 p.
  34. «Kētāb-e Gātā», transl. E. Pūrdāvūd, Tehran, ēntēš. Asātīr, 1384, 127 p.
  35. **Kūhī Kērmanī Hosēyn**, Haftsad tarānē az trānēhāyē rūstāīyē Īrān, Tehran, ēntēš. Kētābxānēyē mēlī, 1347, 224 p.
  36. **Lorimer David Lockhart Robertson**, Farhang-e mardom-e Kērmān, ed. F. Vahman, Tehran, ēntēš. Bonyād-e farhang-e Irān, 1353, 240 p.
  37. **Mahjūb Mohamad Jafar.**, Adabyāt-e 'āmyānēyē Īrān, 3<sup>rd</sup> print, Tehran, ēntēš. Čēsmē, 1386, 1338 p.
  38. **Makenzi David Nail**, Farhang-e qūčak-e pahlavī, transl. by Mīrfaxrāyī M., Tehran, 1379, 428 p.
  39. **Mojavēzī Pāksīmā**, Rūyē dīgar-e sēkēyē Hēdāyat, 6<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Hēzārēyē sēvom andīšē, 1386, 370 p.
  40. **Montiel Vincent**, Sādēq Hēdāyat va āsār-e ū, tr. H. Qāēmyān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Ostūrē, 1382, 216 p.
  41. **Qāēmyān Hasan**, Darbārēyē Hēdāyat va Hēdāyat az nēgāh-e orūpāīyān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Āzādmēhr, 1384, 93 p.
  42. **Qāsēmzādē Mohamad**, Rūyē jādēyē namnāk, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Kārūn, 1387, 297 p.
  43. **Qorbānī Ahad**, Golčīn-e tarānē va š'ēr-e kūdak, vol. I, Tehran, našr-e Māz-Gūtēnbērg, 1388.
  44. **Rajāyī-Boxārāyī Ahmad Alī**, Mazdāpūr Katāyūn, Bargozidēyē Šāhnāmē Fērdosī, Tehran, ēntēš. Pažūhēsgāh-e 'olūm-e ēnsānī, 1381, 150 p.
  45. **Rastēgār Fasāyī Mansūr**, Pēykargardānī dar asātīr, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Pažūhēsgāh-e 'olūm-e ēnsānī va motālē'āt-e farhangī, 1383, 483 p.
  46. **Šakūrzādē Ībrāhīm**, 'Aqāyēd va rosūm-e 'āmēyē mardom-e Xorāsān (bē ēnzēmām-e pārēī aš'ār va loqāt, amsāl va afsānēhā va fālhā va do'ā va mo'amāhā), Tehran, ēntēš. Bonyād-e farhang-e Irān, 1346, 560 p.

47. Saršār Mohamad Rēzā, Rāz-e šohrat-e Sādēq Hēdāyat, 5<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Kānūn-e andīshēyē javān, 1388, 199 p.
48. Sobhī Mohtadī Fazlolāh, Afsānēhā, vol. 1, Tehran, 1998, 241 p., vol. 2, Tehran, 1998, 225 p.
49. Sobhī Mohtadī Fazlolāh, Afsānēhāyē Īran-e bāstān va majār, Tehran, 1332, 128 p.
50. Sobhī Mohtadī Fazlolāh, Afsānēhāyē AbūAlī Sīnā, Tehran, 1349, 99 p.
51. Sobhī Mohtadī Fazlolāh, Afsānēhāyē kohan, vol. 1-2, Tehran, 1380, 256 p.
52. Tafazolī Ahmad, Āmūzgār Jālē, Tārīx adabyāt-e Īrān pīš az Ēslām, 4<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Mahārat, 1383, 452 p.
53. Xānsārī Āqā Jamāl, 'Aqāyēd ol nasā yā Kolsūm nanē, bē kūšēš-e Katīrāyī, Tehran, 1349, 136 p.

#### **գ) ՈՂԻՍԵՐԵՆ, ԱՎԳԼԵՐԵՆ ԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆ**

1. Камю Альбер, Миф о Сизифе, Эссе об Абсурде // Сумерки богов, М., издательство политической литературы, 1990, с. 222-319.
2. Кисляков Николай, Садека Хедаят. фольклор или народные знания, «Советская этнография», М.-Л., 1949, N 2, с. 230-234.
3. Козмоуан Армануш, Рубаи в классической поэзии на фарси (Х-XII вв) Ер., 1981, 110 с.
4. Комиссаров Данийл, О жизни и творчестве Садека Хедаята, «Советское востоковедение», М., 1956, N 4, с. 56-70.
5. Оранский Иосиф, Введение в иранскую филологию, М., «Наука», 1988, 389 с.
6. Розенфельд Анна, Садек Хедаят, «Восточный альманах», Сборник, Выпуск первый, М., 1957, с. 237-250.
7. «Садек Хедаят. Нейрангестан. Перевод с персидского, предисловие и комментарии Н. А. Кислякова», «Переднеазиатский этнографический сборник», т. 1, М., АН СССР, 1958, с. 259-336.
8. Шопенгауэр Артур, Мир как воля и представление, М., 1999, 1405 с.
9. Ходжимурадов Олим, Поэтика Садека Хедаята, Дониш, Дошанбе, 1991, 125 с.
10. Humbach Helmut, The heritage of Zarasthushta (A new translation of his Gatas), Universitaverlag C. Winter, Heridelberg, 1994, 107 p.

11. Masse Henri, Contes en Populaire, Paris, 1925.
12. Masse Henri, Croyances et Coutumes Persanes, vol. 2, Paris, 1938, 539 p.
13. Masse Henri, Litteraturs populaires de toutes les nations, vol. 1, Paris, 1938, p.15.
14. Tylor Edward, Civilisation Primitive, vol. 1, Paris, 1920, 584 p.

## ՄԱՍՈՒԼ

1. «Ավանգարդ» շաբաթաթերթ, Եր., 18 նոյեմբերի 1969, N 137 (7111):
2. «Իրան-նամէ», գիտամշակութային, հասարակական-քաղաքական հանդես, հուլիս 1993, N 2:
3. «Իրան-նամէ», գիտամշակութային, հասարակական-քաղաքական հանդես, Եր., նոյեմբեր 1993, N 6:
4. «Իրան-նամէ», գիտամշակութային, հասարակական-քաղաքական հանդես, Եր., 1999, N 32-34:
5. «Դայրենիքի ծայն», Եր., Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի շաբաթաթերթ, 18 նոյեմբերի 1969, N 47 (226):
6. «Նարցիս» գրական-գեղարվեստական մշակութային հանդես, Եր., 2006, N 1, էջ 69-73:
7. «Rūznāmēyē Ēttēlā'āt», Tehran, 1354, no. 14938, p. 21.
8. «Māhnāmēyē Armaqān», Tehran, 1346, vol. 36, no. 7, p. 35
9. «Majalēyē mardom», Tehran, 1382, sāl-e aval, no. 1.
10. «Majalēyē Farhang-e Mardom», Tehran, 1382, vol. 2, no. 1, p. 10-21.
11. «Majalēyē Mūsīqī», Tehran, 1318, vol. 1, no. 6-7.
12. «Majalēyē Mūsīqī», Tehran, 1318, sāl-e aval, no. 6-8.
13. «Majalēyē Mūsīqī», Tehran, 1318, sāl-e aval, no. 8.
14. «Majalēyē Mūsīqī», Tehran, 1318, vol. 1, no. 9, p. 25-26.
15. «Majalēyē Mūsīqī», Tehran, 1319, sāl-e dovom, no. 2.
16. «Majalēyē Mūsīqī», Tehran, 1320, vol. 2, no. 6-7.
17. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 5, p. 16-17.
18. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 11, p. 14-15.
19. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 13, p. 8-9.
20. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 14, p. 10-11.
21. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 15, p. 8-9.
22. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 32, p. 8-9.
23. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1346, vol. 15, no. 33, p. 18-19.
24. «Majalēyē Sēpīd o sīyāh», Tehran, 1351, vol. 15, no. 35, p. 5.
25. «Majalēyē Soxan», Tehran, 1323, vol. 2, no. 3, p. 179-184.
26. «Majalēyē Soxan», Tehran, 1324, vol. 2, no. 4, p. 265-275.

27. «Majalēyē Soxan», Tehran, 1324, vol. 2, no. 5, p. 337-342.
28. «Majalēyē Soxan», Tehran, 1324, vol. 2, no. 6, p. 420-424.

## ՀԱՄԱՑԱՅԻՆ

1. <https://bit.ly/2TZk1tA>
2. <https://bit.ly/3dpnhpE>
3. <https://bit.ly/2Xoju6A>

## ՏԱՐԱՎԻՇՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՄԱԿ

Աա	A a	ا	Մմ	Mm	م
Աա	Ā ā	اً	Յյ	Y y	ای
Բբ	B b	ب	Նն	N n	ذن
Գգ	G g	گ	Շշ	Š š	شش
Դդ	D d	د	Ոո	V v	واو/و
Եե	Y y	ې	Չչ	Č č	چ
Զզ	Z z	ڙڻڻ	Պպ	P p	پ
Էէ	Ē ē	إ	Ջջ	J j	ج
Ը	'ə	ءا	Ռր	R r	ر
Թթ	T t	ت	Սս	S s	ڻس
Ճճ	Ž ž	ڙ	Վվ	V v	واو/و
Իի	Ī ī	اًي	Տտ	T t	ت
Լլ	L l	ل	Րր	R r	ر
Խխ	X x	خ	Ցց	Ts ts	س
ԾԾ	Ts/ts	س	Ուռւ	Ӯ ū	او
Հհ	H h	ه	Փփ	P p	پ
ՁՁ	Dz/dz	ذ	ՔՔ	K k	ک
Ղղ	Q q	غ	Օօ	O o	أ
ՇՇ	Tch/tch	چ	Ֆֆ	F f	ف

## Անձնանունների ցանկ

### Ա

- Աբեղյան Մանուկ – 184  
Աբրահամյան Ռուբեն – 102  
Աթայան Ռոբերտ – 188, 244  
Աթար (Նիշաբուրի) – 122, 177, 219, 241  
Ալան Պո Էդգար – 35, 160  
Ալ-Ֆարաբի – 165  
Աղա Մուհամմադ Խան Ղաջար – 13  
Աղայան Էդվարդ – 126, 167  
Ամինի Էսֆահանի Ամիր Ղոլի – 79  
Անատոլ Ֆրանս – 34  
Անդերսեն Յանս Քրիստիան – 141  
Ասատրյան Գառնիկ – 101  
Ավիցենա – 165, 176  
Արյանփուր Յահյա – 9  
Աֆշար Իրազ – 9, 77

### Բ

- Բահար Մուհամմադ Թաղի – 26, 29  
Բայբուրոյան Վահան – 12, 28, 244  
Բդոյան Վարդ – 101, 112, 123, 139, 140, 244  
Բեհջաթ Մոստաֆա – 95, 108  
Բոզորգ Ալավի – 23, 24, 31, 35, 47, 50, 235  
Բոլուքքաշի Ալի – 75, 77, 161  
Բորոդին Ալեքսանդր – 183  
Բուղայան Արամ – 9, 29, 34, 50, 244  
Բրիկը – 145

### Գ

- Գալոն – 145  
Գասպարյան Գուրգեն – 184, 244  
Գաստոն Շերո – 237

Գի Դը Մոպասան – 35, 160

Գյորե Յոահին – 171

Գորգանի Ֆախրեդուհին – 59, 95, 108, 120

Գորկի Մաքսիմ – 29, 34

Գրիգոր Նարեկացի – 87, 137, 172, 245

Գրիգորյան Գրիգոր – 64, 244

Գրիմ Եղբայրներ – 141

### Դ

Դեհխողա Ալի Աքբար – 78, 79, 82, 85, 95

Դյումա Ալեքսանդր – 34

Դոդե Ալֆոնս – 34

### Ե

Եփրեմ Խան – 12

### Զ

Զարուբին Իվան – 145

Զաքարիա Ռազի Մուհամմադ Ալի – 126, 176

Զիվար Մոլոք – 13

### Է

Էլվել Սաթըն Լ. Փ. – 75

Էղբալ Աբաս – 26

Էնայա թ Մահմուդ – 41

Էնջավի Շիրազի Աբոլղասեմ – 9, 78, 81, 84, 89, 90, 91, 97, 161, 193

Էնջավի Շիրազի Զամալ ադ Դին Յոսեյն Էբն Ֆախրեդուհին Յասան 95, 108, 120

Էպիկուր – 171, 172

Էսֆահանի Միրզա Յաքիբ – 76, 142

**Թ**

- Թաքարի Եհան – 30, 158  
 Թալեբով Աբդոլ Ռահիմ – 10  
 Թեյլոր Էդուարդ – 100, 249  
 Թերլեմեզյան Ռուբեն – 185, 244  
 Թումանյան Հովհաննես – 58, 154,  
     160, 175, 193, 244  
 Թուսի Մուհամմադ Էբն Մահմուդ  
     Էբն Ահմադ – 95, 126

**Ժ**

- Ժուկովսկի Վասիլի – 74, 145, 169

**Ի**

- Իբն-Սինա – 33, 165, 176

**Լ**

- Լազար Ժիլբեր – 63  
 Լենորմանդ Ֆ. – 102  
 Լեսքո Ռոժե – 50, 148, 161, 242  
 Լևոնյան Գարեգին – 185  
 Լորիմեր Դեյվիդ Լաքհարք – 74,  
     145

**Խ**

- Խալաթյանց Գրիգոր – 194  
 Խալաֆ Թաքրիզի Մուհամմադ  
     Էբն – 95, 108, 120  
 Խաղանի – 142, 177  
 Խանսարի Աղա Զամալ – 76, 142  
 Խաչեր Խաչիկ – 7  
 Խառատյան Հրանուշ – 112, 244  
 Խրիմյան Մկրտիչ – 192

**Կ**

- Կաբորդ Ժան – 193  
 Կամյու Ալբեր – 73, 248  
 Կաֆկա Ֆրանց – 3, 5, 35, 50, 56,  
     160, 161, 241, 242  
 Կիսլյակով Նիկոլայ – 9, 74, 92, 95  
     96, 103, 116, 123, 248

- Կոզմոյան Արմանուշ – 2, 165,  
     177, 181, 245, 248  
 Կողբացի Եգանիկ – 123, 244  
 Կոմիսարով Դանիել – 9, 14, 30,  
     74, 87, 241, 248  
 Կոմիտաս – 9, 137, 138, 182, 183,  
     184, 185, 186, 187, 188, 244  
 Կոստանդյան Էմմա – 192, 196,  
     244

**Յ**

- Յակոբյան Գրիգոր – 118, 119,  
     244

- Յամդոլահ Մոսթոֆի – 95, 108

- Յափեզ – 59, 177, 178, 180

- Յարությունյան Սարգիս – 100,  
     101, 110, 114, 115, 121, 122,  
     245

- Յեղայաք Ղոլի Խան – 13

- Յեղայաք Զահանգիր – 133

- Յյուգո Վիկտոր – 34

- Յովեյդա Ֆերեյդուն – 50

- Յովհաննիսյան Հրայր – 7

- Յովհաննիսյան Նունե – 7

- Յումբախ Յելմութ – 9

**Ղ**

- Ղաեմյան Հասան – 9, 57, 85, 97,  
     239, 240, 242

- Ղանալանյան Արամ – 194, 245

- Ղաջարյան – 76

- Ղասեմզադե Մուհամմադ – 9

**Մ**

- Մալքոմ Խան – 10

- Մահջուբ Մուհամմադ Զաֆար – 9,  
     75, 91, 161

- Մանսուրեան Հայդուկ – 49, 53,  
     60, 62, 64, 65, 68, 98, 101, 106,  
     110, 116, 118, 120, 245

- Մասուդի Ալի Էբն Հոսեյն – 95

Մասսե Յանրի – 9, 75, 78, 80, 95, 145, 449  
Մարաղեի Զեյն օլ-Աբեդին – 10  
Մինբաշյան Ազամ – 24, 80, 239  
Մինովի Մոջթաքա – 18, 24, 26, 85, 98, 180, 235  
Մինորսկի Վլադիմիր – 86, 87  
Միրզաեանց Յովսէփ – 170  
Մոզաֆար Էդ Դին շահ – 14  
Մոլավի – 108, 129, 177  
Մողադամ Յասան – 78  
Մողադամ Մուհամմադ – 24  
Մողադամ Զալալ – 142  
Մոնտի Վանսան – 9  
Մոսթոֆի Յամդոլահ – 95, 108  
Մովսիսյան Յրայր – 9, 29, 34, 36, 40, 50, 244, 245  
Մորիեր Զեյմս – 74, 76  
Մուհամմադ Ալի շահ – 13  
Մուհամմադ շահ – 13  
Մուսորգսկի Մոդեստ – 183

### Յ

Յան Ռիփքա – 74, 238  
Յովաննիսեան Աղասի – 7  
Յուշիջ Նիմա, 80

### Ն

Նաթել Խանլարի Փարվիզ – 24, 30, 31, 80, 82, 148, 158, 238  
Նահապետ Քուչակ – 162  
Նաղաշ Յովնաթան – 162  
Նաջմեդին Ռազի – 164, 165, 166  
Նասեր Էդ Դին շահ – 10, 57, 76  
Նաֆիսի Սահիդ – 26, 95  
Նիզամի – 142  
Նիցշե Ֆրիդրիխ – 131, 245  
Յովիաննիսյան Նունե – 7  
Նուշին Աբդուլ Յոսեյն – 24, 31, 46, 80

### Ծ

Ծահիդ Նուրայի Յասան – 54, 56, 57, 69, 80, 84, 92, 240, 242  
Ծամս Էդ Դին Ղեյս ալ-Ռազի – 177  
Ծեխոյան Լառիք – 9, 29, 34, 36, 50, 244, 245  
Ծեքսպիր – 171  
Ծին Փարթով Ազամ – 23, 24, 35, 236  
Ծիրազ Յովիաննես – 162  
Ծոպենհաուեր – 115, 171, 174

### Չ

Չայկովսկի Պյոտր – 183, 239  
Չարենց Եղիշե – 31, 162, 175, 176, 245  
Չեխով Անտոն – 29, 34, 160, 161, 237  
Չուբաք Սադեղ – 181

### Պ

Պուշկին Ալեքսանդր – 34

### Զ

Զամալզադե Մուհամմադ Ալի – 19, 35, 79, 87  
Զամի – 165, 170  
Զավահեր Քալամ Ալի – 7, 75  
Զարիր Թաբարի – 95, 252  
Զաֆար Ղոլի Խան – 14  
Զոյս Զեյմզ – 50

### Ռ

Ռազավի Թաղի – 35, 37, 57, 173  
Ռամասկեկիչ – 145  
Ռաշիդ Յասամի – 9, 26, 77  
Ռեզա Ղոլի Խան – 13, 108  
Ռեզա Ղոլի Խան Յեղայաք Բաշի – 108  
Ռեզա շահ – 18, 28, 47, 49, 54, 55, 67, 68, 69  
Ռոգենֆելդ Աննա – 9, 32, 74,

Ռումի Զալալ աղ Դին – 59, 129,  
142, 165

## Ս

Սաադի Մոսլեհեղին – 59, 104,  
108, 177  
Սայաթ-Նովա – 162  
Սանայի – 165  
Սանթիվ Փառլ – 147  
Սարշար Մուհամմադ Ռեզա – 9,  
69  
Սարտր Ժան Պոլ – 161, 242  
Սոբի Մոհքադի – 79, 80, 83, 84,  
153  
Սորուշ Ալի Ասղար – 80  
Սրվանձտյանց Գարեգին – 114,  
115, 116, 117, 121, 189, 190, 191,  
192, 193, 194, 195, 196, 197, 244,  
245

## Վ

Վոլտ Դիսնեյ – 141  
Վոլտեր – 34

## Տ

Տոլստոյ Լև – 29, 34

## Փ

Փակավի Մուհամմադ Ռեզա – 9,  
28, 68, 69  
Փականյան Հովհաննես – 7  
Փաքաման Նասեր – 57  
Փաքսիմա Մոջավեցի – 9

## Ք

Քաթեր Էսֆահանի Էմաղեղին –  
163  
Քաթիրայի Մահմուդ – 85, 97, 128,  
161, 180  
Քաթուզյան Յոմայուն – 26  
Քաթուզյան Մուհամմադ – 9, 37  
Քորբոն Ջանրի – 158  
Քուիի Քերմանի – 74, 78, 79, 145  
Քրիստենսեն Արթուր – 74, 75, 78,  
86, 145

## Օ

Օմար Խայամ – 3, 59, 107, 161-  
181, 245  
Օրանսկի Իոսիֆ – 9

## Ֆ

Ֆալսաֆի Նոսրաթոլահ – 26  
Ֆարազմանդ Թուրազ – 69  
Ֆարզադ Մասուդ – 18, 24, 26, 44,  
45, 235, 238  
Ֆարզանե Մոստաֆա – 20, 50,  
53, 54, 55, 72  
Ֆիրդուսի – 59, 95, 180  
Ֆիզջերալդ Էդուարդ – 163  
Ֆորուզանֆար Բադիոլզաման –  
26  
Ֆորուհար Զահանգիր – 86, 87,  
94, 129, 153  
Ֆորուղի Մուհամմադ Ալի – 79, 90

## ՅԱՐՅԱՄԱՍԻԴԻ ԱՆԱՐԻՏ

ՍԱՂԵԴ ՀԵՂԱՎԱԹ  
ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Դամակարգչային էջադրումը՝ Վ.Պապյանի

Դրատ. պատվեր 1047

Ստորագրված է տպագրության՝ 30.10.2020թ.  
Չափսը՝ 60 x 84  $\frac{1}{16}$  – 16 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչության տպարան,  
Երևան – Մարշալ Բաղրամյան պող. 24:





[2500р.]

ԳԱԱ Եկմանարար գիտ. գրադ.  
  
FL0638085

۱۰۶۶۶۴



سایه روشن

علویه خانم

واری

## ԱՆԱՀԻՏԻՎԱՆԻ ՅԱՀՅԱՄԱՍԻՒՀԻ

Ծնվել է Թեհրանում:

1984թ. ավարտել է Թեհրանի Ալլամե Թաքաթաբայի անվան պետական համալսարանը՝ անգլերեն լեզվի թարգմանության գծով ստանալով բակալավրի աստիճան:

1993թ. ավարտել է Թեհրանի հայոց թեմի հայրենագիտական երեկոյան եռամյա դասընթացները:

1993-2005թթ. հայոց լեզու, գրականություն, պատմություն և կրոն է դասավանդել Թեհրանի հայոց ազգային դպրոցներում:

1994-2006թթ. եղել է Թեհրանի Հայոց կրթական խորհրդին կից ուսումնադաստիարակչական հանձնախմբի, իսկ 2002-2006թթ.՝ Քրիստոնեական դաստիարակության բաժանմունքի անդամ:

2006թ. ավարտել է Թեհրանի ազատ համալսարանի իրանի իին լեզուների և մշակույթի ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2014թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Դեղինակ է մոտ երկու տասնյակ գիտական հոդվածների:

Զբաղվում է թարգմանությամբ: Պարսկերեն է թարգմանել Արտակ Մովսիսյանի «Սրբազն լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում» աշխատությունը (լույս է տեսել 2016թ.):